

Ընդամենը մէկ հնգամեակ է անցել այն օրից, երբ հայ ժողովուրդը մեծ հանգիստաւորութեամբ Հայրենիքում եւ Սփիւռքում նշեց քրիստոնէութեան պետական կրօն հռչակուելու 1700-ամեակը: Թուում է, թէ բոլոր պատմական հարցերը ճշտուած են, եւ 301 թ. Մեծ Հայքի թագաւորութիւնն, անտարակոյս, ընդունել է նոր վարդապետութիւնը, որն այնքան անհրաժեշտ էր աւատատիրական հասարակարգ թեւակոխած մեր Հայրենիքին: Այսուհանդերձ, պատմագիտութեան մէջ յայտնուած իրարամերժ տեսակէտերը, որոնք բոլորն էլ զարմանալիօրէն յենուում են սկզբնաղբիւրների միեւնոյն հաղորդումների եւ տեղեկութիւնների վրայ, ստիպում են մտածել, որ այս խնդիրը պատմագիտութեան մէջ ցայտօր իր վերջնական լուծումը չի ստացել եւ անգամ մեր օրերում շարունակում է մնալ գիտական բանավէճերի առարկայ: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ մենք եւս երկար ժամանակ եղել ենք a priori 301 թ. կողմնակից եւ երբեք չենք անդրադարձել այդ խնդրին: Սակայն 1999 թ. Վիեննայում կայացած «Կովկասի քրիստոնէացումը» գիտաժողովի ժամանակ մեզ դիտողութիւն արեց պրոֆ. դոկտոր Վերներ Ջայբաթը, որ իբր չգիտենք անգամ, թէ քրիստոնէութիւնը Հայաստանում 301 թ. չէր կարող հռչակուել պետական կրօն (հանգամանք, որը չենք թաքցնում, խորապէս վիրաւորեց մեր արժանապատուութիւնը), եւ այդպիսով դրդեց անդրադառնալու քրիստոնէութեան ընդունման տարեթուին ու, ի զարմանս մեզ, համոզուելու, որ այն իրօք չէր կարող լինել 301-ը: Ուսումնասիրութեան ընթացքում (որին ձեռնարկելու համար մեր խորին շնորհակալութիւնն ենք

յայտնում պրոֆ. դոկտոր Վ. Ջայբաթին, այդ խնդրի վրայ մեր ուշադրութիւնն աւանայ հրաւիրելու համար) միաժամանակ պարզ դարձաւ, որ յարգարժան բիւզանդագէտի կողմից պաշտպանուած 314/315 թ. նոյնպէս որոշ խնդիրներ է առաջացնում աղբիւրագիտական հիմնաւորութեան տեսակէտից:

Հայաստանում քրիստոնէութեան ընդունումը, որչափ մեզ յայտնի է, առաջին անգամ 301-ով է թուագրել Ստեփանոս Ասողիկը: Անդրադառնալով հայոց տոմարի կարգադրմանը, պատմիչը գրում է, որ Մեծէժ (իմա՝ Մծէժ - Բ. Յ.) Գնունու 7-րդ տարում հայրապետական աթոռ բարձրացած Բագրեւանդ գաւառի Աշտարակք գիւղից տէր Ներսէսն իր աթոռակալութեան չորրորդ եւ Մեծէժի իշխանութեան 10-րդ տարում Դուինում ժողով է գումարում եւ կարգում Հայոց թուականը՝ «...ի ԺԴ-ն Յուստինիանոսի կայսեր, որ զսուրբն Սոփիա շինեաց, եւ ԻԴ-ն Խոսրովայ, որդւոյ Կաւատայ Պարսից արքայի: Յորում ամի սուրբն Յեղիտրուզիտ կատարեցաւ ի Քրիստոս: Եւ Հայք յայդմ ամի եւ յայդմ ժամանակի ի բաց կացին ի Յունաց հաղորդութենէ: Եւ էր Յունաց թուականն ՅԴ յէ ամէն Փիլիպպոսի կայսեր: Ժողովի ամենայն ժամանակն ի ծննդենէ Փրկչին մինչեւ ցժողովն Դունայ եւ ցթուականն Հայոց ամք ՇԾԳ եւ ի լուսաւորութենէ սրբոյն Գրիգորի, որ է սկիզբն աստուածածնութեան աշխարհիս Հայոց՝ ամք ՄԾԲ»¹:

1 Ստեփանոսի Տարոնացոց Ասողիկան Պատմութիւն տիեզերական, երկրորդ տպագրութիւն, Ա. Պետերբուրգ, 1885, էջ 82-83

Բերուած հաղորդումից պարզուում է, որ Քրիստոսի ծննդից մինչեւ Դուինի ժողովն անցել է 553 տարի, իսկ Գրիգորի «լուսաւորութիւն»-ից (ինչպէս պատմիչի կողմից բնորոշուում է Հայոց դարձը)՝ 252 տարի, հետեւաբար, եթէ մենք Քրիստոսի ծնունդը դնում ենք մ.թ. 1 թ., ապա քրիստոնէութեան ընդունումն ընկնում է 301 թ. (553 - 252): Դեռեւս մի պահ վերանանք այն իրողութիւնից, որ Քրիստոսի ծնունդը դնում են բոլորովին այլ թուականի, եւ արձանագրենք, որ այս հաղորդումը ժամանակագրական մի քանի տուեալներ էլ ունի, որոնք բացատրութեան կարիք են զգում: Ասողիկի երկի հրատարակիչ Ստ. Մալխասեանցը ժամանակին տուել է իր մեկնաբանութիւնները, որոնք մենք միանգամայն տեղին ենք համարում ներկայացնելու ընթերցողին: Անդրադառնալով «Եւ էր Յունաց թուականն ՅԴ (304) յէ (7) ամէն Փիլիպպոսի կայսեր» տեղեկութեանը՝ նա իրաւացիօրէն ցոյց է տալիս, որ երկրորդ թիւը վրիպակ է եւ զբնի տգիտութեան արդիւնք, քանի որ Փիլիպպոս կայսրն իշխել է 244-249 թթ., այսինքն՝ 5 կամ ծայրայեղ դէպքում՝ 6 տարի, հետեւաբար «յէ ամէն» արտայայտութիւնը պէտք է կարգաւ «յե ամէն» շփոթ, որ յաճախ է հանդիպում հայկական ձեռագրերում՝ բոլորովին էլ եւ Ե տառերի նմանութեան պատճառով: Հեղինակը նաեւ համաձայն չէ Մ. Էմինի սրբագրութեանը, որով յիշեալ հատուածը ստացել էր «307-րդ ի Փիլիպպոսի կայսերէ» տեսքը, եւ իբր դրանով թուականն արդարեւ զուգադիպում է 553 թ.: Ստ. Մալխասեանցը փաստարկուած ցոյց է տալիս, որ Մ. Էմինի սրբագրութիւնը միայն էլ աւելի է խաթարում բնագիրը, քանի որ, 243-ին գումարելով 307, ստացուում է ոչ թէ 553, այլ 550: Ըստ որում, միաժամանակ անբացատրելի է մնում «թուականն Յունաց 304» արտայայտութիւնը, որը Մ. Էմինի սրբագրութիւնից յետոյ ընդհանրապէս անիմաստ է

դառնում: Շարունակելով իր միտքը զարգացնել՝ փորձառու հայագէտը տալիս է տուեալ արտայայտութեան իր բացատրութիւնը: Յայտնի է, որ այս «Յունաց», սակայն իրականում՝ Հռոմէական, թուականը պէտք է հաշուել Հռոմի հիմնադրումից, որն, ըստ Վարրոնեան (Վառոնեան) հաշուարկի, համապատասխանել է մ.թ.ա. 753 թ.: Մ.թ. 247 թ., ըստ այդ հաշուարկի, Փիլիպպոս կայսեր իշխանութեան չորրորդ տարում լրացաւ Յունաց թուականի 1000 տարին, եւ այն համարուեց «Առաջին հազարամեակ», հետեւաբար 248 թ. սկսուում էր երկրորդ հազարամեակը կամ 1001 թ.: Սակայն հայ պատմագիրները չէին հաշուում 1001, 1002, ... 1100 եւ այլն, այլ տարեթուերը ներկայացնում էին 1, 2, ...100 եւ հետագայ տարիներով, աւելացնելով, որ հաշուարկը կատարուում է Փիլիպպոս կայսեր 5-րդ տարուանից²: Այսպիսով, գումարելով 304 եւ 247 թթ.՝ ստանում ենք փրկչական թուականով մեր տոմարի հաստատման 551 տարին կամ Քրիստոսի ծննդից յետոյ 553 թ.³: Այժմ կարելի է անդրադառնալ նաեւ Քրիստոսի ծննդեան թուականի խնդրին, քանի որ այն սովորաբար դնում են մ.թ.ա. 2 թ.:

Հակառակ թուացեալ ներդաշնակութեանը, այնուամենայնիւ, սոյն հաղորդման մէջ կան տեղեկութիւններ, որոնք հակասութեան մէջ են վերը բերուած թուականների հետ: Այսպէս, Յուստինիանոս Ա կայսեր 14-րդ տարին, որը կառուցեց Ս. Սոփիայի տաճարը, 541 թ. է, իսկ Խոսրովի 24-րդ տարին՝ 554/555 թ.: Եւ, եթէ Խոսրովի 24-րդ տարին կամ 554 թ. համապատասխանում է Դուինի ժողովի հրաւիրման տարեթուին, ապա միւսի ԺԴ-ն ԻԴ սրբագրելու դէպքում էլ տալիս է ոչ թէ ժողովի,

2 Ան, էջ 343-345: E. Dulaurier, Recherches sur la Chronologie arménienne technique et historique, t. 1, Paris, 1859, էջ 49-50, 173-174, 282
3 Ասողիկ, ծնթ. 71, էջ 345

այլ տոմարի տարին, այսինքն՝ 551 թ.: Սակայն այս խնդիրներին անդրադառնալը ոչ մի իմաստ չունի, քանի որ չեն առնչվում Հայոց դարձի թուականին:

Ժամանակագրական առումով քրիստոնեությունից ապետական կրոն հռչակվելու տարեթուին յաջորդն անդրադարձել է վենետիկեան մխրթարեան Միքայել Չամչեանը, որը՝ թուականը ճշտելիս, յենևում է ՊատմաՎարդապետ արժեքաւոր հաղորդումների վրայ: Մովսէս Խորենացին, յիշատակելով Տրդատ Մեծի գահակալութիւնը, գրում է. «Քանզի ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան, վասն որոյ եւ մանրախոզիւ քննեալ գտաք զԹագաւորելն Տրդատայ յերրորդ ամի Դիոկղետիանոսի...»⁴, իսկ անդրադառնալով Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեանը՝ նշում է, որ՝ «Յեօթն եւ ի տասներորդի ամի թագաւորութեանն Տրդատայ գտաք նստեալ յաթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի զհայրն մեր Գրիգորիոս եւ ըստ Աւետարանի ծնող»⁵: Հիմք ունենալով Տրդատ Գ-ի Դիոկղետիանոսի երրորդ տարում թագաւորելու փաստը՝ Մ. Չամչեանը Հայոց Տրդատ թագաւորի գահակալութիւնը թուագրում է 286-ով, հռիփսիմեան կոյսերի նահատակութիւնը եւ Գրիգոր Լուսաւորչի Խոր Վիրապից դուրս գալը՝ 301-ով, Գրիգոր Լուսաւորչի եւ հայ մեծամեծերի ուղեւորութիւնը կեսարիա եւ եպիսկոպոսապետ ձեռնադրելը՝ 302-ով, թագաւորի, նախարարների, զօրքի ու ժողովրդի մկրտութիւնը՝ 302-ով եւ Վաղարշապատի Ս. Էջմիածնի շինութիւնը՝ 303-ով⁶:

4 Մովսիս Խորենացոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութեանեան, Տիպիս, 1913, գիրք Բ, գլ. ԶԲ
5 Աճ, գիրք Բ, գլ. ՂԱ
6 Միքայել Չամչեան, Պատմութիւն Հայոց, հտ. Ա, Վենետիկ-Ս. Ղազար, 1784, էջ 373, 384, 386-387, 393-394, 395: Հ. Պ. Աճաճեանը մեզ համար բոլորովին անհասկանալի ձևով գրում է, թէ

Հայոց դարձի թուականին անդրադարձել է Հայոց Եկեղեցու պատմութեան մեծ երախտաւոր Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանը, որի համար կրկին հիմք են ծառայել ՊատմաՎարդ վերոբերեալ հաղորդումները: Սակայն նա, ի տարբերութիւն Մ. Չամչեանի, Տրդատ Գ-ի գահակալութեան սկիզբը դնում է 287 թ., բնակաւարտ, նոյն տարեթուով նաեւ՝ Գրիգոր Լուսաւորչի բանտարկուելը Խոր Վիրապում: Հռիփսիմեան կոյսերի նահատակութիւնը նա, այնուամենայնիւ, դնում է 301-ին, Խոր Վիրապից Գրիգոր Լուսաւորչի դուրս գալը Տրդատի գահակալութեան 13-րդ տարում, որը, հեղինակի կարծիքով, տեղի է ունեցել նոյն՝ 301 թ.: Շարունակելով իր տեսակէտերը զարգացնել՝ Մ. Օրմանեանը գտնում է, որ Գրիգոր Լուսաւորչի բժշկութիւնները կատարուել են 301 թ. նոյեմբերի 26-ից մինչեւ 302 թ. յունուարի 25-ը, նրա ձեռնադրութիւնը՝ 302 թ. առաջին ամիսներին (քանի որ մէկ տարի անց Հռոմէական կայսրութիւնում սկսուեցին քրիստոնեաների հալածանքները Դիոկղետիանոս կայսեր կողմից), իսկ Տրդատ Գ-ի մկրտութիւնը՝ 303 թ. յունուարի 6-ին⁷:

Դժուար չէ տեսնել, որ, չնայած որոշ տարբերութիւններին, երկու հեղինակների մտայնութիւններն ընդհանուր առմամբ իրար նման են: Սակայն XX դարի 30-50-ական թթ. ծնունդ առան նոր տեսակէտեր ու հարցադրումներ, որոնք բոլորովին նորովի էին մտնում Հայոց դարձի թուագրմանը: Հայ պատմագիտութեան մեծավաստակ երախտաւոր Նիկողայոս Ադոնցի կարծիքով, քրիստոնեութիւնը պետական կրոն էր

իբր Մ. Չամչեանը հայոց դարձը թուագրել է 304-ով (Հ. Պ. Աճաճեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, Վենետիկ-Ս. Ղազար, 1960, էջ 5):
7 Մ. արքեպ. Օրմանեան, Ազգապատմ, հտ. Ա, Էջմիածին, 2001, էջ 75, 78, 84, 99

հռչակուել 288 թ.⁸: Ստեփանոս Մալխասեանցը այն դնում է 279 թ., Հ. Ն. Ակինեանը՝ 219-ին, Ե. Քատունին՝ 294-ին, իսկ ակադ. Յակոբ Մանանդեանը, նրան հետեւող Հ. Պ. Անանեանը եւ „История Древнего мира“, աշխատութեան⁹ հեղինակները՝ 314-315-ին: Առաջարկուած տեսակէտերը մանրակրկիտ քննութեան է առել Հ. Պ. Անանեանը, որը թուականների առատութիւնն ամէնից առաջ արդիւնք է համարում սկզբնաղբիւրների անբաւարար տեղեկութիւնների: Ըստ հեղինակի՝ Հայոց դարձի գլխաւոր աղբիւրը՝ Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ն, ըստ էութեան, բառիս իսկական իմաստով ժամանակագրութիւն չունի: Հնարաւոր չէ այդ աշխատութեամբ պարզել ոչ միայն 3-րդ դարի առաջին կէսի քիչ թէ շատ վստահելի ժամանակագրութիւնը, այլեւ Տրդատ Գ-ի ծնունդը, «Յունաց» կողմերում նրա գտնուելու ժամանակահատուածը, գահակալութեան սկիզբը, Խոր Վիրապից Գրիգոր Լուսաւորչի դուրս գալու տարին, ձեռնադրութեան ու Հայոց դարձի տարեթուերը¹⁰:

Մ. Լ. Շոմոնի կարծիքով՝ «Ամէն ղէպքում այդ տարօրինակ դարձը կարող էր տեղի ունենալ Դիոկղետիանոսի հրաժարականից բազում տարիներ անց»¹¹, այսինքն՝ 305 թ. մայիսից շատ յետոյ: Վերջերս Հայոց դարձի թուագրման նոր տարբերակով հանդէս եկան Էդ. Գիւլբեկեանը եւ անտիկագէտ Ռ. Մանասէրեանը, որոնց կարծի-

8 N. Adontz, Les vestiges d'un ancien culte en Arménie, "Mélanges Franz Cumont", 1936, էջ 513:
9 История Древнего мира, под редакцией И. М. Дьяконова, В. Д. Героносовой, И. С. Свенцицкой, изд. третье, Москва, 1989, т. III, с. 279. Միս աշխատութիւնները չենք նշում, քանի որ դրանց անդրադասուելու ենք:
10 Հ. Պ. Աճաճեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը... էջ 10-12
11 M. L. Chaumont, Sur l'origine de Saint Gregoire d'Arménie, "Le Muséon", 1989, t. 102, f. 1-2, էջ 129

քով, ամենայն հաւանականութեամբ, դա կարող էր տեղի ունենալ, համապատասխանաբար 305-307 եւ 304-306 թթ. միջոցին¹²: 2001 թ. Հայոց դարձի թուականին նուիրուած յօդուածով հանդէս եկաւ Գ. Բրուտեանը, որը փորձում է պարզել, թէ յիշեալ տարեթուի մասին ինչ պատկերացումներ կան միջնադարեան հայ մատենագիրների նիւթերում: Հեղինակը գալիս է այն եզրակացութեան, որ եթէ Աթանաս Տարոնացին Հայոց դարձը դրել է 299/300 թ., ապա Անանիա Շիրակացին այն թուագրել է Դիոկղետիանոս կայսեր գահակալութեան ամբողջ շրջանով (284-305 թթ.), Ստեփանոս Ասողիկը՝ 299/300 թուով, Յովհաննէս Կողբունը՝ 276-ով, Յովհաննէս Սարկաւազը՝ 298-ով, Սամուէլ Անեցին՝ 303-ով եւ Յակոբ Ղրիմեցին, ամենայն հաւանականութեամբ՝ 298-ով¹³: Միանգամայն չենք, որ եթէ Ռ. Մանասէրեանը նոր ուժեղ կոուսներ չի բերում, անգամ չի էլ նկատել որոշ ուշագրաւ հաղորդումներ, սակայն նրա տրամաբանական կառոյցը բաւականին ամուր է, ապա Գ. Բրուտեանի քննութիւնը կարող է օգտակար լինել միայն յիշեալ հեղինակների ժամանակագրական համակարգն ուսումնասիրելու համար, եւ ինչքան էլ մեկնաբանենք կամ լուսաբանենք նրանց երկերում պարունակուող տոմարական տուեալները, պէտք է ընդունենք, որ վերջիններս կա՛մ նորութիւն չեն պարունակում, կա՛մ էլ բացայայտ աղաւաղուած են: Տեսանք, օրինակ, որ Ասողիկի երկն ամբողջութեամբ, եթէ չհաշուենք աննշան տարբերութիւնները, հետեւում է ՊատմաՎարդ աշխատութեանը,

12 Ռ. Մանասէրեան, Հայաստանը Արտաւազից մինչեւ Տրդատ Մեծ, Երեւան, 1997, էջ 196-201: Ed. Gulbekian. The Date of King Trdat's Conversion, «Հանդէս Ամսօրեայ», 1991, թիւ 1-12, էջ 75-87
13 Գ. Բրուտեան, Հայոց դարձի թուականի մասին, «Հանդէս Ամսօրեայ», 2001, էջ 181-228, որոշակիացում՝ էջ 217-218

եւ հասկանալի է, որ նրա հաղորդումները զուրկ են ինքնուրոյնութիւնից, ուստի փորձել միայն դրանց հիման վրայ պարզել Հայոց դարձի թուականը, արդարացուած է:

Այժմ փորձենք համառօտակի անդրադառնալ վերն արտայայտուած կարծիքներին, քննութեան առնենք խնդիրն իր ամբողջութեան մէջ եւ աշխատենք ճշտել Հայոց դարձի թուականը՝ հնարաւորութեան շրջանակներում հետազօտութեան մէջ ներգրաւելով նոր նիւթեր, որոնք զարմանալիօրէն ցայսօր չեն արժանացել ուսումնասիրողների յաւուր պատշաճի ուշադրութեանը: Ասենք, որ խնդրիս մէջ պարզութիւն են մտնում Պատմահօր վերը բերուած հաղորդումները Տրդատի գահակալութեան սկզբի եւ Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան տարեթուերի մասին, որոնք՝ հաշուի առնելով եւս մի քանի իրողութիւններ, միանգամայն խօսուեն են դառնում Ագաթանգեղոսի երկի տուեալների հիման վրայ:

Պատմահօր հաղորդումների համաձայն՝ հիմք ընդունելով Տրդատ Գ արքայի գահակալութեան սկիզբը 286/287 թ.՝ կարելի է Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութիւնը դնել 302, 303 եւ անգամ՝ 304 թթ.: Այսուհանդերձ, ինչպէս ճիշտ նկատել է Ռ. Մանասէրեանը, մտածելու տեղիք է տալիս մի շատ կարեւոր հանգամանք, թէ որքանով են վաւերական Պատմահօր հաղորդումները, որովհետեւ յայտնի է, թէ զրանք քաղուած են մի ինչ-որ հին եւ վստահելի աղբիւրից, թէ հեղինակի ինքնուրոյն քննութեան արգասիքն են¹⁴: Յամենայն դէպս, այն հանգամանքը, որ խորենացու երկի քաջագիտակներէց մէկը՝ Ստ. Մալխասեանցը, եկել է այն եզրակացութեան, թէ Պատմահօր մօտ Դիոկղետիանոսի գահակալութեան սկիզբն ընկնում է

14 Ռ. Մանասէրեան, Հայաստանը Արտասագից միջնա Տրդատ Մեծ, էջ 13

260-ին, ուստի եւ Տրդատ Գ-ի գահակալութեան սկիզբը եւ Հայոց դարձը պէտք է թուագրել համապատասխանաբար 263 եւ 279 տարեթուերով¹⁵, խորհելու տեղիք է տալիս: Անգամ այն տեղեկութիւնը, թէ Գրիգոր Լուսաւորչին ձեռնադրուել է Տրդատի 17-րդ տարում, որն ուսումնասիրողների մեծ մասի կարծիքով, պէտք է վաւերական լինի, կարող է որոշակի տարեթուի վերածուել միայն այն դէպքում, եթէ վերջնականապէս ճշտուի Տրդատ Գ-ի գահակալութեան սկիզբը: Այսուհանդերձ, ինչպէս առաջիկայում կը համոզուենք, ձեռնադրութեան համար բերուած Տրդատի 17-րդ տարուայ տեղեկութիւնը մեծապէս արժանի է ուշադրութեան, քանի որ հանդիպում է ոչ միայն խորենացու, այլեւ մի քանի այլ հեղինակների երկերում:

Պատմահայրը Տրդատ Գ-ի գահակալութիւնը դրել է Դիոկղետիանոսի երրորդ տարում, սակայն ժ դարի վերջի պատմիչ Ուխտանէսի հաղորդմամբ՝ Տրդատը թագաւորել է հռոմէական Պոռթոս կայսեր օրօք՝ տեղեկութիւն, որը նա քաղել է Ջենոբ պատմիչի Պատմութիւնից, ինչպէս նաեւ Կայսերաց գրքից¹⁶: Ինչպէս ճիշտ նշում է Հ. Պ. Անանեանը, Ուխտանէսի օգտագործած Ջենոբի Պատմութեան ձեռագիրը հազիւ թէ նոյնական է մեզ ծանօթ Ջենոբ Գլակի երկի հետ (Յովհան Մամիկոնեանի «Տարօնի պատմութեան» կազմում, որովհետեւ մեզ հասած ձեռագրերում այս տեղեկութիւնը բացակայում է¹⁷: Հասկանալի

15 Ստ. Մալխասեանց, Ե՞րբ եմ հայերն ընդունել քրիստոնէութիւնը, «Էջմիածին», 1944, Ա, էջ 22-28
16 Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 111
17 Հ. Պ. Անանեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը..., էջ 14: Հ. Պ. Անանեանը նշում է նաեւ, որ, ինչպէս ցոյց են տուել դեռեւս Ա. Անանիանի եւ Յ. Մանանդեանը, Ուխտանէսի աղբիւրի տեղեկութեան հիմքում հաւանաբար ընկած է եղել այն պատմական փաստը, որ 298 թ. Մծբինի հաշտութիւնը Դիոկղետիանոս

է, որ ուսումնասիրողները չէին կարող անցնել նշուած տեղեկութեան կողքով, որը եւ պատճառ է դարձել, որպէսզի որոշ հետազօտողներ Տրդատ Գ-ի թագաւորութեան սկիզբը թուագրեն Պոռթոս կայսեր (276-282) երրորդ տարով, այսինքն՝ 278-ով, եւ դրա արդիւնքում Հայոց դարձը դնեն 291 թ., ինչպէս արել է Ե. Քասունիին¹⁸: Տրդատ Գ-ի, այսպէս կոչուած, առաջին գահակալութեան տարեթուին մի փոքր այլ կերպ է մօտեցել ակադ. Ս. Երեմեանը, որը, հետեւելով Մ. Օրմանեանին¹⁹, այն դնում է 274-ին եւ գտնում, որ 276-ին Տրդատ Գ-ը պարսիկների ռազմական ճնշման ներքոյ ստիպուած է եղել թողնել Հայոց թագաւորութիւնը²⁰: Ս. Երեմեանը յիշեալ թուականը փորձում է հիմնաւորել նաեւ Պատմահօր այն տեղեկութեամբ, թէ Տրդատ Գ-ը թագաւորել է 56 տարի²¹, եւ, եթէ նա մահացել է 330 թ., ինչպէս իրաւացիօրէն ենթադրում է ուսումնասիրողների մեծ մասը, ապա նրա թագաւորութեան առաջին տարին պէտք է համապատասխանէր 274 թ.²²:

Առաջացած քառսն էլ աւելի է խորացնում Սեբէոսի երկի Գ գլխում պահպանուած այն տեղեկութիւնը, թէ՛ «Յամին ԼԲ-երորդի Արտաշրի, հնգետասաներորդի Դիոկղետիանոսի, կայսերակերպ շքեղութեամբ Տրդատիոս ելանէ ախոյեան ընդդէմ արքային Գդաց: Եւ անդէն ձեռքաւարարեալ զախոյեանն անարի զթագաւորն Գդաց՝ ածեալ կացուցանէ յանդիման կայսեր»:

կայսեր անունից Նարսէ արքայից արքայի հետ կնքել է ոմն Սիկորիոս Պոռթոսը (նոյն տեղում):
18 Ե. Քասունի, Ժամանակագրական ճշտումներ հեթանոս հայ Արշակունցաց պատմութեան, «Ակօս», ԺԳ (1953), թիւ 3-7
19 Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա, էջ 74-75
20 Հայ ժողովրդի պատմութիւն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հտ. Բ, Երեւան, 1984, էջ 60
21 Մովսէս Խորենացի, գիրք Բ, գլ. ԴԲ
22 Հայ ժողովրդի պատմութիւն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հտ. Բ, էջ 60

սերն Դիոկղետիանոսի. եւ անդէն ի նմին ամի թագաւորեցուցանէ Դիոկղետիանոս զՏրդատ ի վերայ աշխարհիս Հայոց: Գումարէ ի ձեռս սորա զաւրս բազումս եւ արձակէ յիւրական իշխանութիւն աշխարհիս Հայոց: Որ տիրէ ամենայն քաջութեամբ եւ բարեպաշտութեամբ ամս Հ: Եւ է այսպէս. Արտաշիր՝ ԼԲ. Դիոկղետիանոս՝ ԺԵ: Տրդատի հաջորդն է Պարսից Արտաշիր թագաւորի իշխանութեան 32-րդ տարուայ համապատասխանութեան խնդիրը, որը ջուր վերցնող հարց է եւ տուեալ դէպքում ոչնչով չի օժանդակում մեր քննութեանը, եւ նշենք, որ Դիոկղետիանոս կայսեր 15-րդ տարին համապատասխանում է 298 թ., իսկ այդ դէպքում Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութիւնը (Տրդատի 17-րդ տարում), կամայ թէ՛ ակամայ, ստիպուած ենք թուագրել 314/315 թ., ինչին յանգել են Յ. Մանանդեանը, Հ. Պ. Անանեանը եւ ուրիշներ:

Հ. Պ. Անանեանը քննութեան է առել արտայայտուած կարծիքների մեծ մասը՝ ցոյց տալով իւրաքանչիւրի առաջընթացական կողմաները եւ խոցելի կամ ուժեղ կողմերը²⁴: Ելնելով խնդրի շահեկանութիւնից՝ մենք այժմ համառօտակի կ'անդրադառնանք յիշեալ եւ միւս տեսակէտերի ու կարծիքների ոչ միայն հիմնաւորման հարցին, բերուած փաստարկներին, այլեւ կը փորձենք համակողմանի քննութեամբ պարզել դրանց ընդունելի կամ ոչ ընդունելի լինելը:

Այլեւս չանդրադառնալով Մ. Չամչեանի եւ Մ. Օրմանեանի հաշուարկներին, որոնց հիմքում ընկած էր Տրդատի գահակալութիւնը Դիոկղետիանոս կայսեր իշ-

23 Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրութեամբ Գ. Վ. Արգարեանի, Երեւան, 1979, էջ 58 (այսուհետեւ՝ Սեբէոս)
24 Հ. Պ. Անանեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը..., էջ 20-73

խանութեան երրորդ տարով եւ Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութիւնը՝ Տրդատ արքայի աթոռակալութեան 17-րդ տարով թուագրելը, անցնենք բաւական կուռ թուացող Ստ. Մալխասեանցի առաջարկած 279 թ.: Հիմք ունենալով Մովսէս Խորենացու վերոբերեալ հաղորդումները՝ ճանաչուած հայագէտը ընթացել է քննութեան մէկ այլ ճանապարհով: Նրա հաշուարկների համաձայն, որոնք խարսխուած են Պատմահօր ժամանակագրական աղիւսակների վրայ՝ Տրդատ Գ-ի գահակալութիւնից մինչեւ Հայ Արշակունիների թագաւորութեան անկումը կազմել է 165, իսկ Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութիւնից մինչեւ Սահակ կաթողիկոսի մահը կաթողիկոսների աթոռակալութեան ընդհանուր տեւողութիւնը՝ 160 տարի: Ըստ այդմ, ելնելով այն իրողութիւնից, որ Հայ Արշակունիների հարստութիւնն ընկել է 428 թ., իսկ Սահակ Պարթեւ կաթողիկոսը մահացել է 438 թ. (իրականում՝ 439-ին - Յ. Բ.), նա Տրդատ Մեծի գահակալութեան սկիզբը դնում է 263 թ. (428-165=263), իսկ Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութիւնը՝ 279-ին (438-160=279)²⁵: Հեղինակը 263 թուականն ստանում է նաեւ մէկ այլ ճանապարհով: Հաշուարկն սկսելով պարթեւական Արտաւան Ե թագաւորի սպանութիւնից, որ, ըստ նրա, ճշգրիտ ժամանակագրութեամբ տեղի է ունեցել 226-ին, դրան յաւելելով Հայոց Խոսրով թագաւորի՝ Արտաշիր Պապականի դէմ մղած կռիւների 10 տարին (այսինքն՝ մինչեւ նրա սպանուելը Անակի կողմից), Հայաստանում պարսկական տիրապետութեան 26 տարիները Արտաշիրի եւ մէկ տարին Շապուհ Ա-ի օրօք (226+10+26+1) նա կրկին ստանում է 263 թ.: Անկախ այն հանգամանքից, թէ որքան յաջող են կատարուած հաշուարկները, պարզ է մի բան, որ, ինչպէս նշում է Հ. Պ. Անանեանը, նման մօտեցումը ոչ մի կերպ

չի համադրում Պատմահօր այն տեղեկութեանը, թէ Տրդատ Մեծը սկսել է թագաւորել Դիոկղետիանոսի իշխանութեան երրորդ տարուանից²⁶: Ծիշտ է, Ստ. Մալխասեանցը փորձում է այդ անհարթութիւնը վերացնել՝ հռոմէական ու բիւզանդական կայսրերի ժամանակագրութիւնը Պատմահօր կողմից իրականից 23-26 տարով յետ տանելը նշելով, սակայն խնդիրը դրանով չի լուծուում: Ի պատիւ հեղինակի պէտք է ասել, որ նա Դիոկղետիանոսի գահակալութեան սկիզբը համարուող 260 թ. ստանում է նաեւ Սեբէոսի ցանկերից: Վերջինիս համաձայն՝ «Յամի երեքտասաներորդի Կենարարին եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի թագաւորէ Դիոկղետիանոս»²⁷: Յոյց տալով, որ Կենարարին կոչուած թուականը իրականում Յունաց կոչուող տոմարն է, որի հազարամեակը լրանում էր 247 թ.՝ նա 247 թ. գումարում է 13 եւ ստանում Դիոկղետիանոսի գահակալութեան համար 260 թ.: Ինչպէս ճիշտ գրում է Հ. Պ. Անանեանը, հայերը սխալմամբ կարծում էին, որ Դիոկղետիանոսը իշխել է Յունաց թուականի 13-րդ տարում, որը եւ չփոթութեան մէջ է գցել հանճարեղ Պատմահօրը²⁸: Բարձր գնահատելով հանդերձ Ստ. Մալխասեանցի կատարած հաշուարկները, մտքի սրութիւնը, այնուամենայնիւ, մխիթարեան միաբանը նշում է, որ՝ օգտագործելով հանդերձ Խորենացու տեղեկութիւնները, չի կարելի լուծ նրան վստահել եւ անտեսել այլ պատմագիրների ժամանակագրական տուեալները, քանի որ, ընդունելով Տրդատի գահակալութեան սկիզբը 263-ին եւ Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութիւնը 279-ին, ստիպուած ենք Արիստակէսի հայրապետութիւնը դնել 308-315

26 Հ. Պ. Անանեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը..., էջ 22-23
 27 Սեբէոս, էջ 157
 28 Հ. Պ. Անանեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը..., էջ 23

25 Այս հաշուարկին մենք դեռ կ'անդրադառնանք:

թթ.²⁹: Սակայն այդ դէպքում նա չէր կարողանայ մասնակցել Նիկիայի 325 թ. ժողովին՝ իրողութիւն, որ հաւաստում են ոչ միայն հայկական, այլեւ օտար աղբիւրները³⁰:

Անշուշտ, միայն այս հանգամանքը բաւական է, որպէսզի Ստ. Մալխասեանցի առաջարկած վարկածը մենք մերժենք անվերապահօրէն: Սակայն ճանաչուած հայագէտը թոյլ է տուել եւս մի, առաջին հայեցքից աննշան, բայց իրականում լուրջ սխալ, որի պատճառն այն է, որ նա Մեծ Հայքի թագաւորութեան փաստական բաժանումից յետոյ երկուսուկէս տարի իշխած Արշակ Գ-ի ժամանակը հաշուարկել է միաժամանակ իշխած Խոսրով Գ-ի տարիների հետ մէկտեղ՝ փոխանակ այն հաշուարկից դուրս թողնելու: Այդ իրողութիւնը ցոյց տալու համար Ստ. Մալխասեանցի պէս կրկին բարձրացնենք Պատմահօր ժամանակագրական տուեալները: Ըստ Մովսէս Խորենացու՝ դրանք ներկայացնում են ներքոյիշեալ պատկերը. Տրդատ Մեծ - 56, Խոսրով Կոտակ - 9, Տիրան - 11, Արշակ Բ - 30, Պապ - 7, Վարազդատ - 4, Արշակ Գ եւ Վաղարշակ - 8, Խոսրով Վերջին - 5, Վաւառապուհ - 21, Խոսրով Վերջին՝ երկրորդ անգամ - 1, Շապուհ Պարսից արքայորդի - 4, անիշխանութեան շրջան - 3, Արտաշէս կամ Արտաշիր - 6, այսինքն՝ ընդամէնը 165 տարի: Հայ կաթողիկոսների ժամանակագրական ցանկն ունի հետեւեալ ժամանակագրական տուեալները - 30, Ապատկերը - 7, Վրթանէս - 15, Յուսիկ - 6, Փառնեբսեհ - 4, Ներսէս Մեծ - 34, Սահակ (Շահակ) - 4, Զաւէն - 4, Ասպուրակէս - 5, Սահակ Պարթեւ - 51, այսինքն՝ ընդամէնը

29 Ան, էջ 24-25
 30 Sanctum Concilium Nicaenum Primum Generale; տե՛ս Joannes Dominicus Mansi, Sacrorum Conciliarum Nova et Amplissima Collectio, vol. 2, Graz, 1960, էջ 694

160 տարի³¹: Հետեւաբար, ըստ Մովսէս Խորենացու, Դիոկղետիանոսի գահակալութեան սկիզբն ընկնում է ոչ թէ 260-ին, այլ 262-ին, քանի որ այդ հաշուարկով Տրդատի գահակալութիւնն ընկնում է ոչ թէ 263-ին, այլ 265-ին (428 - 163): Այս կարծես թէ աննշան սխալը, որ թւում է, թէ ոչնչով չպէտք է ազդի ընդհանուր տրամաբանական եզրակացութեան վրայ, իրականում իր մէջ շատ կարեւոր գաղտնիք է պարունակում, որին կ'անդրադառնանք ստորեւ:

Ն. Ադոնցի տեսակէտին չենք անդրադառնում, քանի որ այն մեր քննութեանը առանձնապէս նպաստ չի բերում: Առաւել կարեւոր ենք համարում անդրադառնալ Երուանդ Քաստենու տեսակէտին³², որի համաձայն՝ Հայոց դարձը կատարուել է 291, իսկ Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութիւնը՝ 294 թ.: Ուսումնասիրողի եզրակացութիւնները հիմնուած են Ուխտանէսի այն հաղորդման վրայ, որի համաձայն՝ Տրդատին թագադրել է Պոռթոս կայսրը: Յենուելով Ագաթանգեղոսի տուեալների վրայ եւ Խոսրով Մեծի մահը դնելով 251 թ., երբ Շապուհ Ա-ը, յաղթելով Փիլիպպոս կայսրին, ռազմակալեց Միջագետքն ու Հայաստանը՝ հեղինակն այնուհետեւ հետեւում է Պատմահօր ժամանակագրութեանը եւ, 251-ին յաւելելով վերջինիս յիշատակած օտար իշխանութեան 27 տարին, Տրդատի գահակալութեան սկիզբը դնում է 278-ին: Այս մօտեցման դէպքում, անտարակոյս, Ուխտանէսի հաղորդումը Տրդատի՝ Պոռթոսի կողմից թագադրուելու մասին, կարծես թէ, հիմնաւորում է ստանում, քանի որ Պոռթոսն իշխել է 276-282 թթ., եւ

31 Մովսէս Խորենացի, Խորհրդանշաններ, Գերա-ծութիւնը եւ ծանօթագրութիւնները ակադեմիկոս Ստ. Մալխասեանցի, Երեւան, 1968, էջ 383-396
 32 Ե. Քասունի, Ժամանակագրական ճշտումներ հեթանոս հայ Արշակունեաց պատմութեան, «Ակոս», ԺԳ (1953), թիւ 3-7

Կոստանդինոսի եւ Տրդատ Գ-ի միջեւ կնքուած դաշինքը: Հետեւաբար, օգտագործելով հանդերձ 298 թ. պատերազմի նկարագրութեան որոշակի դրուագներ, եթէ պատմիչն աչքի առաջ ունենար 298 թ. դէպքերը, ապա ոչ մի դէպքում էջը յիշի Կոստանդինոս կայսեր անունը⁴²: Ի մի բերելով իր եզրակացութիւնները՝ Հ. Պ. Անանեանն ի վերջոյ յանգում է այն մտքին, որ Փաւստոս Բուզանդն իրար է խառնել երկու տարբեր ժամանակների դէպքերը՝ ծնելով խառնակ եւ հակասական ժամանակագրութիւն, ուստի եւ նրա աշխատութիւնը որեւէ ձեւով չի կարող հիմք ծառայել Հայոց թագաւորների եւ կաթողիկոսների ժամանակագրութիւնը յեղաշրջելու համար⁴³: Ասուածն, անշուշտ, ճիշտ է, սակայն չմոռանանք, որ յիշեալ խնդիրը միանգամայն իւրօրինակ բացատրութիւններ է ստանում Սեբէոսի հաղորդումների լոյսով, որին շուտով կ'անդրադառնանք:

Հ. Պ. Անանեանն առանձնակի ուշադրութիւն է դարձնում Յ. Մանանդեանի տեսակէտին, որը նա հանգամանալից քննութիւնից յետոյ կիսում է: Այնուամենայնիւ, եթէ ճիշտը խոստովանենք, այն աւելի վաղ առաջ էր քաշուել Ալեքսանդր Աննինսկու կողմից դեռեւս 1899 թ.⁴⁴: Մեծանուն հայագէտը, քննութեան առնելով Գ դարի եւ Դ դարի սկզբի պատմութիւնը, այլ խօսքով՝ Տրդատ Բ-ից մինչեւ Տրդատ Գ-ի գահակալութեան շրջանը, ընդհանուր առմամբ ընդունել է Ա. Աննինսկու տեսակէտերը՝ գալով այն եզրակացութեան, որ

Հայոց դարձի թուականը կարելի է ճշտել Սեբէոսի «Պատմութեան» մէջ հանդիպող Անանունի եռաշարք ժամանակագրական աղիւսակների տուեալների միջոցով: Անանունի մի տեղեկութեան համաձայն՝ Խոսրով Քաջն սպանուել է Դիոկղետիանոս կայսեր չորրորդ տարում, իսկ նրա որդին՝ Տրդատը, գահ է բարձրացել Դիոկղետիանոսի 15-րդ տարում⁴⁵: Եւ քանի որ Դիոկղետիանոսի 15-րդ տարին համապատասխանում է 298/299 թ., իսկ Գրիգոր Լուսաւորիչն էլ, համաձայն ՊատմաՏօր, հայրապետական աթոռ է բարձրացել Տրդատ Գ-ի 17-րդ տարում, ապա նրա ձեռնադրութեան թիւն էլ ընկնում է 315 թ.: Ըստ որում՝ ելնելով իր իսկ կռահումից, Յ. Մանանդեանը գտնում էր, որ Տրդատ Գ-ը կարող էր քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակած լինել միայն Միլանի 313 թ. էդիկտից յետոյ, որով այն կայսրութեան տարածքում դարձել էր միւս կրօններին իրաւահաւասար: Նման եզրակացութեան շարժառիթը պարզ է, քանի որ Մեծ Հայքի թագաւորութիւնը՝ գտնուելով Հռոմի քաղաքական ազդեցութեան ոլորտում եւ սերտորէն կապուած լինելով կայսրութեանը այլեւայլ կապերով, հազիւ թէ կարող էր խուսափել նրա թելադրանքից այնպիսի մի կարեւոր հարցում, ինչպիսին քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելն էր⁴⁶:

Հ. Պողոս Անանեանը, քննարկելով Յ. Մանանդեանի առաջ քաշած տեսակէտը, իրաւացիորէն ընդգծում է, որ վերջին հաշուով Հայոց դարձի թուականը, ինչ ձեւով էլ որ այն հետազօտենք, անմիջականորէն կախուած է Տրդատ Գ-ի գահակալութեան սկզբի յստակեցումից: Եւ քանի որ, անուանի հայագէտի եզրակացութեամբ, Տրդատ Գ-ի գահակալութիւնը պէտք է

45 Սեբէոս, էջ 58
46 Յ. Մանանդեան, Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, հտ. Բ, մասն Ա, Երեւան, 1957, էջ 127

42 Անդ, էջ 44
43 Անդ, էջ 44-45
44 А. Аннинский, Древние армянские историки как исторические источники, Одесса, 1899. Ա. Աննինսկիի հոփիսիմեանց գալուստը դնում է 315-316 թթ., Տրդատի գահակալութեան սկիզբը՝ 302-ից, իսկ հայերի դարձը՝ 315-ից յետոյ՝ 325 թուից ոչ շատ առաջ (էջ 52, 72, 86): Աննինսկու կառոյցը խախտու է, քանի որ Դիոկղետիանոս կայսրը ինքնասպանութիւն է գործել դեռեւս 313-ից:

դնել 298-ին, Հ. Պ. Անանեանը նպատակաւորմար է գտնում անդրադառնալու Յ. Մանանդեանի կողմից Հայոց պատմութեան Գ դարի շրջանի ընկալմանը⁴⁷: Քանի որ Յ. Մանանդեանի ընկալումով են բացատրուում Գ դարի մանուածապատ շատ իրադարձութիւններ, իսկ շատ հարցեր էլ պարզապէս պատասխան չեն ստանում կամ էլ սխալ են մեկնաբանուում, մենք եւս գտնում ենք, որ նրա առաջ քաշած ժամանակագրութիւնը կարիք ունի մանրամասն քննութեան, որին, սակայն, մենք կ'անդրադառնանք մի այլ աշխատութեան մէջ:

Որչափ մեզ յայտնի է, Հայոց դարձի թուականին արմատական կարգով ամենավերջինն անդրադարձել են էդ. Գիւլբեկեանը եւ Ռ. Մանասէրեանը⁴⁸: Առաջինը՝ օգտնուելով «Narratio de Rebus Armeniae»-ից եւ այլ աղբիւրներից, ինչպէս նշուեց, Հայոց դարձը թուագրում է 305-307 թթ. միջոցին⁴⁹, իսկ երկրորդը՝ անդրադառնալով քրիստոնէութեան պետական կրօն հռչակմանը՝ նա գրում է. «Հարկ է կանգ առնել արդէն աւանդական դարձած եւ մեր համոզմամբ, իրականում փակուղային մօտեցման վրայ, որը քրիստոնէութեան համոզմամբ Հայաստանում կապում է ընդունումը Հայաստանում կապում է Հռոմի կայսրերի կրօնական քաղաքականութեան հետ, կոնկրետ կախման մէջ է դնում 313 թ., այսպէս կոչուած, միլանեան հրովարտակից»⁵⁰: Դժուար չէ տեսնել, որ Մանանդեանի եւ նրա հայեացքները կի-

սող Հ. Պ. Անանեանի տեսակէտը: Ռ. Մանասէրեանը համարում է, որ Հայոց դարձին անդրադարձած ուսումնասիրողները «միանգամայն աչքաթող են անում նման կարեւոր քայլի համար Հայաստանում ինքնուրոյն ներքին պատճառների հասունացումը, հեռու են նրանց մասին հարցադրումից եւ, այսպիսով, անտեսում են Հայոց թագաւորի կողմից սեփական քաղաքականութեան անցկացումը»⁵¹: Զարգացնելով իր միտքը՝ նա նշում է, որ տարբեր էին Հռոմի կայսեր եւ Հայոց թագաւորի ձեռնարկած քայլերը, որոնցից առաջինը թոյլատրում էր քրիստոնէական պաշտամունքը, ճանաչում էր նրա գոյութեան իրաւունքը՝ չսահմանափակելով հեթանոսութիւնը եւ անձնապէս հեթանոս մնալով, իսկ երկրորդը անվերապահօրէն արգելում էր հեթանոսութիւնը, քրիստոնէութիւնը հռչակում պետական կրօն, եւ ինքն էլ դառնում քրիստոնեայ: Ռ. Մանասէրեանը մէջտեղ է բերում մի նոր կարեւոր կռուան եւս, այն է՝ Հայաստանի քրիստոնէացման նշանակութիւնը Հայոց թագաւորի ու ընդհանրապէս արքայատոհմի եւ Հռոմի կայսեր աւանդաբար ոչ իրաւահաւասար փոխյարաբերութիւնների զարգացման համար⁵²: Չի կարելի չհամաձայնել հեղինակի հետ, որ 313 թ. քրիստոնեաներին հովանաւորող Կոստանդինոսը (իմա՝ Կոստանդինոսը - Յ. Բ.) անձամբ շարունակում էր պաշտել Արեգակին. Հռոմէական կայսրութեան արեւելեան մասում (Յունաստան, Փոքր Ասիա, Սիրիա, Եգիպտոս) կառավարած կայսրերը՝ Գալբերիոսը (305-311) եւ Մաքսիմիանոս Դայեան (միահեծան՝ 311-313), ջերմեռանդ հեթանոսներ էին. 313 թ. Մաքսիմիանոս Դայեային Ադրիանուպոլսի մօտ ջախջախած եւ Արեւելքի կայսր դարձած Լիկինիոսը (313-324) համոզուած հեթանոս էր, Տրդատի անմիջա-

47 Հ. Պ. Անանեան, Ս. Գրիգոր Լուսատրչի ձեռնարկութեան թուականը..., էջ 56
48 Գ. Բրոտեանի աշխատութեանը, որ ժամանակագրութեան անվի ուշ է հրատարակուել, մենք այլևս չենք անդրադառնում, որովհետեւ, ինչպէս արդէն մշտ եմք, հարցիս քննութեան համար անանիս հետաքրքրութիւն չի ներկայացնում:
49 Ed. Gulbekian. The Date... էջ 75-87
50 Ռ. Մանասէրեան, Հայաստանը Արտասագից միջնա Տրդատ Մեծ, էջ 177

51 Անդ, էջ 178
52 Անդ, էջ 178-179

կան հարեւանը եւ 315 թ. շարունակում էր պաշտել Իւպիտերին⁵³: Լիկինիոսի օրօք պետական պաշտամունքի վերածուեց Sol Conservator-ի՝ Արեգակ-փրկչի երկրպագութիւնը, իսկ 320 թ., Կոստանդիանոսի հետ յարաբերութիւնների լարմանը զուգընթաց, նա հրաժարուեց քրիստոնեաների նկատմամբ ունեցած հանդուրժողական վերաբերմունքից⁵⁴: Հռոմէական կայսրութեան արեւելեան մասում քրիստոնեաների դէմ հալածանքները դադարեցին Կոստանդիանոսի կողմից պարտութեան մատնուելուց յետոյ, սակայն վերջինիս Անտիոքում հատած սուլիդները, այնուամենայնիւ, ձօնուած են եղել Արեգակին⁵⁵:

Ռ. Մանասէրեանը Գալերիոս, Մաքսիմինոս Դայեա եւ Լիկինիոս կայսրերի հեթանոսութիւնը եւ Տրդատ Գ-ի կողմից քրիստոնէութեան պետական կրօն հռչակումը դիտարկում է Հայոց արքայի եւ Հռոմէական կայսեր միջեւ հաստատուած աւանդական յարաբերութիւնների զարգացման տեսանկիւնից: Նրա կարծիքով, «Քրիստոնէութեան ընդունումը խզում էր նշանակում արքայի՝ այսուհետեւ քրիստոնեայ արքայի, հեթանոս կայսեր հետ (անկախ այն բանից, թէ կայսրը հանդուրժողակա՞ն էր, թէ՞ հալածական քրիստոնեաների հանդէպ): Ժխտուեցին Հռոմէական կայսրից Հայոց թագաւորի կախուածութիւնը, Հայաստանի նկատմամբ կայսրութեան գերակայութեան կրօնազաւթարական հիմքերը: Քրիստոնեայ արքան Հռոմէական կայսրին չէր կարող ճանաչել իբրեւ վեհագոյն աստուածային ատեան, որն ի զօրու էր նրան թագաւոր դարձնել, շնորհել նրան թագաւորական արժանաւորութիւն: Հայաստանում Արշակունիների

տոհմի հեղինակութիւնը վերահաստատուելու խնդիրը Տրդատից պահանջում էր վերացնել կայսերահպատակի, կայսերակարգի իր վիճակը եւ անմիջապէս մտնել նոր եւ ամենակալ Աստոնոյ իշխանութեան ներքոյ: Ի տարբերութիւն նախկին, այսուհետեւ մերժուող աստուածների՝ Միհրի, Վահագնի, նոր Աստուածը բացառում էր կայսեր ճանաչումը՝ իբրեւ գերագոյն աստուածութեան, տուեալ դէպքում՝ իբրեւ Արեգակի արտայայտման մարմնաւորում»⁵⁶: Հետեւաբար, ըստ հեղինակի, քրիստոնէութեան ընդունմամբ թագաւորական իշխանութիւնը Հայաստանում վերականգնեց իր աստուածակարգ, աստուածատուր հաստատութեան բնոյթը⁵⁷: Տեսական առումով, ինչ խօսք, ասուածը խիստ տրամաբանական է, սակայն կեանքը մնում է կեանք: Կայսեր եւ Հայոց թագաւորի յարաբերութիւններում առաջինի նշուած դիրքը ոչ այնքան արդիւնք էր հեթանոսութեան ընձեռած հնարաւորութեան, որքան կայսրութեան ուժի եւ հզօրութեան: Յամենայն դէպս, Պապի կամ Վարազդատի գահակալութիւնը, որքան էլ նրանք իրենց իշխանութիւնը աստուածատուր համարէին, էապէս պայմանաւորուած էր կայսրութեան օժանդակութեամբ, ուստի հեղինակի այն միտքը, որ «քրիստոնէութեան ընդունմամբ, կայսեր աստուածային բնոյթի մերժմամբ գաղափարաբանական հիմք էր ստեղծուած արքայական իշխանութիւնը ժառանգականի վերածելու համար»⁵⁸, հազիւ թէ կարելի է ընդունելի համարել: Այն իրողութիւնը, որ, Վաղարշ Բ-ից սկսած, թագաւորական իշխանութիւնը Մեծ Հայքում փոխանցուած էր հօրից որդուն, հաւաստում է, որ առանց քրիստոնէական գաղափարախօսական հիմքի էլ, այն արդէն վերածուել էր

53 Աճո, էջ 179
 54 Աճո, տե՛ս Գաեռ A. Chastagnol, L'Évolution politique, sociale et économique du monde romain de Dioclétien à Julian, P., 1982, էջ 122-124
 55 Ռ. Մանասէրեան, Հայաստանը Արտաւազդից մինչեւ Տրդատ Մեծ, էջ 179-180

56 Աճո, էջ 180
 57 Աճո, էջ 180
 58 Աճո, էջ 180-181

ժառանգականի: Եւ վերջապէս, մի կարեւոր իրողութիւն եւս: Արշակունիների ժառանգական իշխանութեանը Հայաստանում ոչ այնքան խանգարում էր կայսրութիւնը կամ անձամբ կայսրը, որքան Պարթեւական թագաւորական արքունիքը, որին բացարձակապէս ձեռք չէր տալիս Մեծ Հայքում ժառանգական արքայատոհմի, թէկուզեւ՝ Արշակունիներից սերող իշխանութեան հաստատումը: Ընդհակառակը, ամէն անգամ նոր գահակալ ուղարկելով Մեծ Հայք, պարթեւական արքաները հնարաւորութիւն էին ունենում իրենց ազդեցութեան ոլորտում պահելու Հայոց թագաւորութիւնը, որն Արշակունիների հարստութեան համակարգում, շնորհիւ իր մեծութեան եւ բազմամարդութեան, զբաղեցնում էր երկրորդ տեղը, իսկ Հայոց թագաւորը համարուում էր անգամ Պարթեւ Արշակունիների թագաւորութեան երկրորդը:

Մենք անհրաժեշտութեան դէպքում Ռ. Մանասէրեանի իրօք որ կարեւորութիւն ունեցող մի շարք հարցադրումներին դեռ կ'անդրադառնանք, ուստի այժմ լոկ կ'անդրադառնանք, թէ ինչպէս է հեղինակը որդեանարկեց, թէ ինչպէս է հեղինակը որդեան Հայոց դարձի թուականը: Ընդունելով, որ մեզ հասած սկզբնաղբիւրները ժամանակագրական ուղղակի եւ անվիճելի ցուցումներ չեն պարունակում, ինչին իր հարկէ մենք բոլորովին համաձայն չենք, նա գտնում է, որ հաստատօրէն հնարաւոր է ուրուագծել այդ իրադարձութեան ժամանակագրական ընդհանուր շրջանակը՝ 298-311 թթ., այսինքն՝ Մեծ Հայքում Տրդատի իշխանութեան հաստատուելու պահից մինչեւ Մաքսիմինոս Դայեայի դէմ նրա տարած յաղթանակի տարին, երբ, ըստ հեղինակի, Հայոց թագաւորն արդէն բաւական ջերմեռանդ քրիստոնեայ էր⁵⁹: Նրա տեսակէտով, «փաստի ժամանակի՝ տարեթուի որոշումը դրա ճշգրիտ տեղաւորում է նշանակում միջազգային կոնկրետ իրա-

59 Աճո, էջ 196-197

դարձութիւնների համատեքստում»⁶⁰, որը միանգամայն ընդունելի դրոյթ է: Ռ. Մանասէրեանը կատարում է մի շարք ուշադրաւ դիտարկումներ, որոնք չի կարող անտեսել յիշեալ հարցի քննութեանն անդրադարձող ամէն մի ուսումնասիրող: Այսպէս, նա միանգամայն անընդունելի է համարում Հայոց դարձը 315-ով թուագրելը, որովհետեւ նման եզրակացութիւնը հակասում է Եւսեբիոս Կեսարացու այն տեղեկութեանը, թէ 311 թ. աշնանը կամ 312 թ. գարնանը Մաքսիմինոս Դայեա կայսրը պատերազմել է քրիստոնէութիւն ընդունած հռոմէացիների դաշնակից հայերի դէմ (եթէ վերջիններիս տակ հասկանանք Մեծ Հայքի բնակչութեանը) եւ չարաչար պարտուել է⁶¹: 287 թիւը որպէս Տրդատ Գ-ի գահակալութեան մեկնակէտ ընդունելով, բայց ո՛չ Հայոց թագաւորութեան վրայ իշխանութեան իրագործում՝ հեղինակի կարծիքով, Տրդատ Գ-ը թագադրուել է մի քանի անգամ. առաջին անգամ 282-ին, որին 17 տարի գումարելով կարելի է ստանալ 299-300 թթ., այսինքն՝ Հայոց դարձի առաջարկուող թուականներից մէկը: Սակայն այս տարեթիւը չի համապատասխանում պատմիչների տուեալներին, որովհետեւ պարզուում է, որ, հակառակ սկզբնաղբիւրների, Տրդատի հակաքրիստոնեայ քայլերը կատարուել են ինքնուրոյնաբար՝ կապուած չլինելով Դիոկղետիանոս կայսեր հալածանքների քաղաքականութեան հետ⁶²: 287 թուականը համարելով Տրդատի երկրորդ թագադրման տարի՝ հեղինակը Հայոց դարձի հաւանական թուական է համարում 304-ը, որը Տրդատ Գ-ի գահակալութեան 17-րդ եւ Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրման տարին է: Յայտնի է, որ դիոկղետիանոսեան հալածանքներն սկսուեցին 303 թ. եւ շարունակուեցին

60 Աճո, էջ 197
 61 Աճո, էջ 198
 62 Աճո, էջ 198-199

մինչեւ նրա իշխանութիւնից հեռանալը 305 թ., հետեւաբար 304 թուականն ընկնում է հալածանքների ժամանակահատուածի մէջտեղը⁶³: Շարունակելով իր միտքը զարգացնել՝ նա գալիս է այն եզրակացութեան, որ կայսրութիւնում քրիստոնեաների դէմ հալածանքների շրջանում (303-305 թթ.) Տրդատի հնարաւոր հակաքրիստոնէական միջոցառումները պէտք է վկայէին իր հովանաւորներ Դիոկղետիանոսից եւ Գալերիոսից այդ ժամանակ ունեցած կախումներէն զգալի աստիճանը եւ, իհարկէ, անուղղակիօրէն՝ սասանեանամէտ հայ աւագանու ընդդիմութեան ուժը: Սակայն, այսուհանդերձ, նա անկարելի է համարում լիովին բացառել Տրդատի կողմից հակահռոմէական, հակակայսերական քայլի դիմելու հնարաւորութիւնը հէնց 304-305 թթ. ժամանակահատուածում, առաւել եւս, որ Հայոց թագաւորի հալածանքներին, եթէ ելնենք Ագաթանգեղոսի տուեալներից, զոհ են գնացել ընդամէնը 37 մարդ: Ի մի բերելով իր քննութեան արդիւնքները՝ հեղինակը գրում է, որ՝ «Կարելի է կարծել, որ 304 թուականը, տեղ թողնելով հարցերի եւ լրացուցիչ փաստարկումների համար, կարող է գիտութեան մէջ գոյութիւն ունենալ՝ որպէս դարձի ոչ բացառուող տարեթուերից մէկը»⁶⁴: Այնուամենայնիւ, մինչեւ վերջ վստահ չլինելով իր առաջարկած թուականի սպառիչ լինելուն՝ նա քննութեան է առնում կայսրութիւնում Դիոկղետիանոսի իշխանութիւնից հեռանալու հետեւանքով ձեւաւորուած կացութիւնը եւ Հայոց դարձի ժամանակը հնարաւոր է համարում սահմանափակել 304-306 թթ.⁶⁵:

Ամփոփենք: Ռ. Մանասէրեանի առաջարկած տարբերակը, որ անկասկած տրամաբանական բաւականաչափ կուռ կառոյց

63 Աճ, էջ 199
64 Աճ
65 Աճ, էջ 201

է, ունի ինչ-ինչ խոցելի կողմեր եւ փաստական առումով՝ հիմնաւորուածութեան լուրջ կարիք: Հեղինակը յոյս ունի, որ նոր տուեալների չբացառուող յայտնագործութիւնը, ինչպէս նաեւ ժամանակագրական հետազայ պրպտումները հնարաւորութիւն կը տան առաւել ճշգրիտ արտայայտուել Հայոց դարձի տարեթուի առթիւ⁶⁶:

Իրականութիւնն այն է, որ, չնայած նոր տուեալների յայտնագործութիւնների տեսական հնարաւորութեանը, դատելով վերջին երկու հարիւրամեակների ընթացքում նման յայտնագործութիւնների ոչ մեծ թուից, առաջիկայում մեր աղբիւրագիտական բազան հազիւ թէ լուրջ տեղաշարժեր ապրի: Այլ բան է եղած տեղեկութիւնների առաւել խորացում քննութեան հեռանկարը Հայոց դարձի թուականը ճշգրտելու համար: Հայ պատմիչների տուեալները, որոնք ուսումնասիրողների կողմից շատ յաճախ յայտնուում են կասկածելիների ցուցակում, մեր կարծիքով, յունահռոմէական հեղինակների հաղորդումներին զուգակցուած, հնարաւորութիւն են տալիս համակողմանի քննութեան եղանակով նորովի վեր հանել շատ իրողութիւններ: Յամենայն դէպս, Սեբէոսի երկի ժամանակագրական ցանկերը, որոնք հիմնական կուռնան են դարձել Յ. Մանասէրեանի համար՝ Հայոց դարձը 315-ով թուագրելու, պարունակում են այնպիսի տուեալներ, որոնք ոչ միայն համահունչ են Մովսէս Խորենացու եւ Ագաթանգեղոսի ժամանակագրական հաղորդումներին, այլեւ մեծ չափով խնդրառու են դարձնում հետազոտողի՝ առաջին հայեացքից խիստ կուռ տեսակէտը: Ընթերցողի դատին յանձնելով մեր քննութեան արդիւնքները Հայոց դարձի թուականի մասին՝ մենք բնաւ էլ չենք բացառում մասնաւորապէս Գ դարի ժամանակագրութեան նորովի մեկնաբանութիւնների հնարաւորութիւնը:

66 Աճ

Թերեւս հայ ժողովրդի հարիւրամեակների պատմութեան մէջ բոլորովին էլ էական չէ, թէ Հայոց դարձը տեղի է ունեցել 301-ին, 304-ին կամ 315-ին, քանի որ անգամ 314/315 թ. դէպքում Մեծ Հայքի թագաւորութիւնը շարունակում է մնալ քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակած մեզ յայտնի առաջին երկիրը: Հետեւաբար խնդիրն ամէնից առաջ զուտ գիտական է, որը, եթէ անգամ մենք էլ չբարձրացնենք, մեր օրերում թէ ապագայում անպայման կը գտնուի մէկը, որ սկզբնաղբիւրների յամառ ճնշման ներքոյ ստիպուած կը լինի ուսումնասիրել եւ նորովի պարզաբանել այն:

Հայոց դարձի թուականի յստակեցման համար ամենակարեւոր հանգամանքը, ինչպէս նշել են գործնականում բոլոր ուսումնասիրողները, Տրդատ Գ Մեծի գահակալութեան տարեթուի ճշգրտումն է: Այն հնարաւորութիւն է տալիս պարզելու, թէ որքանով են ճիշտ Ագաթանգեղոսի, Պատմահօր եւ միւս հեղինակների երկերում պահպանուած ժամանակագրական տուեալները, եւ թէ արդեօ՞ք արդարացի են մինչ օրս էլ նշանակալից թիւ կազմող այն հետազոտողները, ովքեր Գրիգոր Լուսաւորչի՝ Խոր վերապում 15 տարի գտնուելու կամ Տրդատ Մեծի գահակալութեան 17-րդ տարում ձեռնադրուելու մասին վկայութիւնները համարում են ձեւական եւ ոչինչ չասող:

Ինչպէս վերը նշեցինք, դեռեւս Ստ. Մալխասեանցը պարզել էր, որ, ըստ Պատմահօր ժամանակագրութեան, Դիոկղետիանոսի գահակալութիւնն ընկնում է 260 թ., իսկ Տրդատ Գ Մեծինը՝ 263 թ.: Ըստ որում, հաշուարկները կատարելիս նա մոռացել էր հաշուի առնել, որ Դ դարի վերջում Արշակ Գ եւ Խոսրով վերջին թագաւորները միաժամանակ են իշխել 2,5 տարի, հետեւաբար կէս տարին կլորացնելու դէպքում Տրդատ Մեծի գահակալութիւնը կ'ընկնի ոչ թէ

263-ին, այլ 265-ին: Ստացւում է նաեւ, որ Հայոց թագաւորն իշխել է ոչ թէ Դիոկղետիանոս կայսեր երրորդ տարում, ինչպէս հաւաստում են Մովսէս Խորենացու երկի բոլոր ձեռագրերը, այլ 5-րդում: Հասկանալի է, որ եթէ 5-րդ տարին համապատասխանում է պատմական ճշմարտութեանը, ապա արմատապէս փոխուում է Գ դարի վերջի եւ Դ դարի սկզբի մինչ օրս, կարծես թէ քաղաքացիութիւն ստացած ժամանակագրութիւնը: A priori կարելի է մտածել, որ Պատմահօր «Քանզի ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան, վասն որոյ եւ մանրախուզիւ քննեալ՝ դտաք զթագաւորելն Տրդատայ յերրորդ ամի Դիոկղետիանոսի»⁶⁷ տեղեկութեան մէջ գուցէ տեղ է գտել շփոթ եւ «յերրորդ»-ը պէտք է լինէր «յե-րորդ», այսինքն՝ 5-րդ եւ այդ դէպքում՝ յիշեալ հատուածն իր բովանդակութեամբ կը համապատասխանի Պատմահօր երկի ժամանակագրական համակարգի տրամաբանութեանը: Բարեբախտաբար, իրականութեան մէջ պատմութիւնը որոշակի փաստեր է պահպանել ասուածը՝ որպէս գիտական ենթադրութիւն, հիմնաւորելու համար: Այսպէս, մեծ մասամբ Պատմահօրը հետեւող Ուխտանէսի «Պատմութիւն Հայոց»-ում երկու անգամ խօսուում է Տրդատի գահակալութեան սկզբի մասին: Երկի Կէ գլխում ասուած է. «Իսկ ապա ի գալն Տրդատայ ի Հայք յսկզբան թագաւորութեան իւրոյ, յորժամ թագաւորեաց յերրորդ ամի Դիոկղետիանոսի կայսեր Հռովմայեցոց»⁶⁸. Իսկ ՀԶ գլխում գրուած է. «Գրեցաք ի մերումս պատմութեան միանգամ եւ երկիցս յաղագս Տրդատայ թագաւորելոյն, թէ ե՞րբ եւ յոր՞ւմ ժամանակս եղեւ: Բայց ոչ միաբանէին ընդ միմեանս Ձենոբ եւ Մովսէս վասն նորա. զի Ձենոբ ի Պոռպայ ասէ թա-

67 Մովսէս Խորենացի, գիրք Բ, գլ. ԶԲ
68 Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, էջ 95

զաւորեալ Տրդատայ. եւ թագաւորեալ յորժամ զԳլթացն արար ձերբակալ զթագաւորն. եւ նա երախտահատոյց լեալ Տրդատայ՝ թագ եղեալ թագաւորեցոյց զնա, եւ առաքեաց զօրօք իւրովք ի Հայս: Իսկ Մովսէս ի Դիոկղետիանոսէ՝ ասէ թագաւորեալ. վկայէ եւ այսմ զիրք Կայսերացն: Բայց Մովսէս ստուգաբանեալ՝ ասէ այսպէս: Քանզի ոչ է վկայութիւնն ճշմարիտ ասէ՝ առանց ժամանակագրութեան, վասն որոյ մանրախուզիւ քննեալ գտաք զթագաւորելն Տրդատայ յերորդ ամի Դիոկղետիանոսի կայսեր՝ եւ զայ այսր Հանդերձ մեծաւ զօրով: Դարձեալ այլ ստուգաբանեն. նախ քան զայս սկսեալ ի ժամանակէն Պոռբայ մինչեւ ի թագաւորելն Դիոկղետիանոսի՝ Յունաց թագաւորէ՝ ասէ՝ Պոռբոս, եւ խաղաղութիւն արարեալ ընդ Արտաշրի՝ բաժանէ զաշխարհս մեր սահմանագրութեամբ փոս գործելով: Եւ դարձեալ զմահն յայտ առնէ, թէ ի պատերազմելն Պոռբայ ընդ Գոթս՝ յարեան ի վերայ նորայ զօրքն իւր եւ սպանին զնա: Եւ թագաւորեաց զկնի նորա Կարոս Կարինաւ Հանդերձ եւ Նոմերիանոսիւ. եւ պատերազմեալ ընդ արքային Պարսից յեզր Եփրատով՝ մեռաւ Կարոս. եւ Կառինոս ի Կուռնակայ սպանաւ յանապատին: Ընդ նոյն աւուրս եւ Նոմերիանոս լինի սպանեալ ի Թրակիէ. եւ փոխանորդեալ զթագաւորութիւնն Դիոկղետիանոս. եւ այսպէս կարճ ի կարճոյ զկնի միմեանց զմահն նոցա եւ ի միջոցի այժմ զրուցաց առաջի եւ զկնի նոցա պատմէ եւ զքաջութիւն Տրդատայ»⁶⁹:

Պոռբոսի հետ կապուած խնդիրներին մենք դեռ կ'անդրադառնանք, սակայն այժմ լուր նշենք, որ Ուլտանէսն, իր իսկ խոստովանութեամբ, Տրդատ Մեծի՝ Դիոկղետիանոս կայսեր երրորդ տարուս զահակալելու տեղեկութիւնը հաստատապէս վերցրել է Պատմաճօր երկից, եւ, եթէ ի նկատի ունենանք, որ նա օգտուել է շատ

աւելի անաղարտ օրինակից, քան մեզ հասածն է՝ դարերի ընթացքում զանազան խմբագրութիւնների ենթարկուած, ապա մնում է արձանագրել, որ ժ դարի պատմիչի մօտ երկու անգամ հանդիպող «յերորդ» արտայայտութիւնը, թերեւս, բնաւ էլ անիմաստ ու պատահական է: Եթէ այն հանդիպելը ընդամենը մէկ անգամ, ապա կարելի էր ենթադրել, որ եղածը ընդամենը ուղղագրական սխալ է: Սակայն երկու անգամ «յերորդ» ձեւի առկայութիւնը, որ հասկանալի է, թէ իր վաւերացումն ունի Ուլտանէսի ձեռագրերում, ցոյց է տալիս, որ այստեղ պարզապէս ուղղագրական կանոնի խախտման մասին խօսք չի եղել չի կարող: Հաւանական է, որ Մովսէս Նորեմացու երկում գրուած է եղել «յԵ-րորդ ամի», այսինքն՝ 5-րդ տարում, սակայն հետագայում գրիչները, այն ընկալելով որպէս «յԵրորդ ամի»-ի սխալ գրութիւն, «յԵ-րորդ»-ը սկզբում դարձրել են «յերորդ», ինչպէս հանդիպում է Ուլտանէսի երկում, իսկ ապա նաեւ՝ «յերորդ»:

Սակայն մեր ենթադրութիւնը հաստատող ամենաարժէքաւոր կուռնանը պահպանել է Սեբէոսի «Պատմութիւն»-ը: Նրա առաջին գլուխների ժամանակագրական տուեալների մէջ կայ հետեւեալ տեղեկութիւնը. «Յամի Իէ-երորդի Կոստանդիանոսի կայսեր, ի Զ ամի Տիրանայ արքայի Հայոց՝ թագաւորէ Ներսէս որդի Շապուհի ի վերայ Պարսից ամս Թ: Կոստանդիանոս՝ Իէ: Տիրան՝ Զ: Ներսէս՝ զառաջինն»⁷⁰: Ինչպէս յաճախ, այս դէպքում էլ համաժամանակեայ (սինքրոն) աղիւսակի հոմոէական շարքի ներկայացուցիչ Կոստանդիանոսի տուեալները չեն համապատասխանում միւս երկուսին, սակայն վերջիններս արտակարգ արժէքաւոր են եւ հետաքրքիր:

70 Սեբէոսի Եպիսկոպոսի Պատմութիւն, բաղդատութեամբ ձեռագրաց հանդերձ առաջաբանի եւ ծանօթութեամբք ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երեւան, 1939, գլ. Գ, էջ 17 (այսուհետեւ՝ Սեբէոս Եպիսկոպոս). տե՛ս նաեւ Սեբէոս, գլ. Ե, էջ 59

69 Ա.Ար., էջ 111-112

Յայտնի է, որ Սասանեանների արքայատոհմում թագաւորել է ընդամենը մէկ Նարսէ կամ Ներսէս՝ 293-302 թթ., հետեւաբար Սեբէոսի ցանկում յիշատակուած Ներսէսը, որն իշխել է 9 տարի, չի կարող շփոթուել որեւէ մէկ այլ գահակալի հետ: Այդ դէպքում նրանից 6 տարի առաջ Մեծ Հայքի թագաւորութիւնում պէտք է գահ բարձրացած լինէր Տիրանը: Դա համապատասխանում է 288 թ., հետեւաբար այն պարզաբանումը, որ Պատմաճօր երկում Տրդատ Գ-ի գահակալութիւնը պէտք է դրուած լինէր Դիոկղետիանոսի ոչ թէ 3-րդ, այլ 5-րդ տարում, ստանում է նոր հիմնաւորում: Մնում է, անշուշտ, Տիրան անուան խնդիրը, որին, սակայն, մենք դեռ կ'անդրադառնանք:

Սեբէոսի մէկ այլ տեղեկութեամբ՝ «Յամի ԺԲ-երորդի Տիրանայ արքայի Հայոց թագաւորեն Կոստանդիան եւ Կոստաս, որդիք Կոստանդի Բարեպաշտի՝ ամս ԺԴ: Տիրան ամս ԺԲ: Ներսէս՝ է: Կոստանդիան եւ Կոստաս՝ զառաջինն»⁷¹: Միւս տեղեկութեամբ՝ «Յամին ԺԲ-երորդի Տիրանայ, եւ է-երորդ ամի Ներսէսի արքային Պարսից, եւ Ա ամի Կոստանդի եւ Կոստասայ, որդւոց Կոստանդիանոսի Բարեպաշտի Հռովմայ՝ եկն ի վերայ նորա ի Բասեան գաւառի ի գեաւղն Յոսիսայ, մինչ դարձուցանել նմա զՏիրան արքայ ամենայն գերութեամբն հանդերձ, եւ զորդի նորա Արշակ թագաւորեցուցանել եւ արձակել ի Հայս: Ներսէս՝ զութերորդն: Կոստանդիան եւ Կոստաս՝ զԲ: Արշակ՝ զառաջինն»⁷²: Առաջին իսկ հայեացքից պարզ է, որ թէ՛ մէկ եւ թէ՛ միւս տեղեկութեան մէջ դէպքերը կատարուած են Տիրան արքայի 12-րդ տարում, որը համապատասխանում է Ներսէսի թագաւորութեան 7-րդ տարուն: Ինչպէս նախորդ դէպքում, այնպէս էլ այս հազոր-

դումներում Կոստանդիանի եւ Կոստասի մասին ժամանակագրական տուեալները հաշուի չեն առնուած, քանի որ որոշակի տարբերութիւններ ունեն համաժամանակեայ միւս տուեալներից: Եւ եթէ, ինչպէս վերը պարզեցինք, Տիրանի գահակալութեան տարին 288-ն է, ապա Տիրանի իշխանութեան 12-րդ տարին համապատասխանում է 300 թուականին: Նոյնը կարելի է ասել նաեւ Ներսէսի համար, որ 293 թ. գահ բարձրացած Ներսէսի 7-րդ տարին նոյնպէս համապատասխանում է 300 կամ էլ ծայրայեղ դէպքում՝ 299 թ.: Սակայն չպէտք է մոռանալ, որ այս հաշուարկները մենք կատարում ենք՝ ելնելով ուսումնասիրողների կողմից պարզուած այն իրողութիւնից, որ Ներսէսն իշխել է 293-302 թթ.: Պատմաճօր երկում Դիոկղետիանոսի իշխանութեան 5-րդ տարին 3-րդ տարուայ վերածուելն, անշուշտ, կատարուել է շատ վաղուց, ուստի եթէ մի պահ Տիրանի գահակալութեան սկիզբը դնենք 286 թ., ապա Տիրանի գահակալութեան 12-րդ տարին կը համապատասխանի 298 կամ էլ՝ իրողութիւն, որ աւելի հաւանական է, 297 թ.: Այդ դէպքում Ներսէսի իշխանութեան 7-րդ տարին կը համապատասխանի 298 կամ 297 թ.: Անտարակոյս յիշեալ երկու թուերից նախապատուութիւնը պէտք է տալ երկրորդին, քանի որ, ամէն ինչից դատելով, հէնց այդ թուականին էլ տեղի ունեցաւ Ոսիսայի ճակատամարտը⁷³, որը վկայուած է (թէեւ ոչ անուանապէս) յուռահոմէական աղբիւրներում: Վերը բերուած Սեբէոսի վերջին հաղորդման մէջ, ինչպէս տեսանք, հէնց Տիրանի 12-րդ եւ

73 Փաւստոս Բուգանդը՝ պապուելով Ոսիսայի ճակատամարտը դնում է Խոսրով Կոստակի որդի Տիրան արքայի ձերբակալութիւնից յետոյ, սակայն յուռահոմէական աղբիւրներն այն յստակ դնում են 297 թ., այլ խօսքով՝ Մծբնի հաշտութեանը նախորդող տարում: Տե՛ս այդ կապակցութեամբ Eutropius, Breviarium, IX, 24-25; Rufus Festus, Breviarium, XXV; Aurelius Victor, Caesares, XXXIX:

71 Սեբէոս Եպիսկոպոս, գլ. Գ, էջ 17. տե՛ս նաեւ Սեբէոս, գլ. Ե, էջ 60
72 Ա.Ար.

Ներսեսի 7-րդ տարում է տեղի ունեցել Ոսխայի ճակատամարտը, այսինքն՝ ըստ վերը կատարուած հաշուարկի՝ 297 թ.: Սակայն կան երեք հանգամանքներ, որոնց բացատրութիւնից չենք կարող խուսափել: Առաջինը՝ Տիրան անունն է, որը փաստորէն համընկնում է Տրդատին շատ չափորոշիչներով: Երկրորդն այն է, որ Փաւստոս Բուզանդը ճակատամարտը դնում է Խոսրով Կոտակի որդի Տիրանի ձեռքակալութիւնից յետոյ, եւ վերջապէս երրորդը՝ նոյն Սեբէոսի տեղեկութիւնն է Տրդատ Մեծի՝ Դիոկղետիանոս կայսեր 15-րդ տարում թագադրուելու մասին:

Հարցիս շահեկանութիւնից ելնելով՝ քննութիւնն սկսենք երրորդ հաղորդումից, որտեղ ասուած է. «Յամին ԼԲ-երորդի Արտաշրի, Հնգետասաներորդի Դիոկղետիանոսի, կայսերակերպ շքեղութեամբ Տրդատիոս ելանէ ախոյեան ընդէմ արքային Գդաց: Եւ անդէն ձեռքակալ արարեալ զախոյեանն անարի զթագաւորն Գդաց՝ ածեալ կացուցանէ յանդիման կայսերն Դիոկղետիանոսի. եւ անդէն ի նմին ամի թագաւորեցուցանէ Դիոկղետիանոս զՏրդատ ի վերայ աշխարհիս Հայոց: Գուժարէ ի ձեռս սորա զաւրս բազումս եւ արձակէ յիւրական իշխանութիւն աշխարհին Հայոց: Որ տիրէ ամենայն քաջութեամբ եւ բարեպաշտութեամբ ամս Հ: Եւ է այսպէս. Արտաշիր՝ ՀԲ: Դիոկղետիանոս՝ ԺԷ: Տրդատէս՝ զառաջինն»⁷⁴: Հարցը մի փոքր էլ բարդանում է, երբ ծանօթանում ենք Սեբէոսի եւս մէկ հաղորդմանը, ըստ որի՝ «Յամի Ի-երորդի առաջնորդի Արտաշրի Պարսից արքային ի չորրորդում ամի Դիոկղետիանոսի կայսեր՝ մեռանի Քաջն Խոսրով ի վատանուն Անակայ: Եւ տիրէ ի վերայ աշխարհիս Հայոց Արտաշիր արքայ Պարսից ամս ԺԱ: Դիոկղետիանոս՝ զչոր-

րորդն»⁷⁵: Ստացւում է, որ Տրդատ Գ-ի հայր Խոսրով Քաջը սպանուել է Անակի կողմից, այն է՝ Դիոկղետիանոս կայսեր 4-րդ տարում կամ 287/288 թ., որին ուղիղ 11 տարի անց յաջորդել է Տրդատ Գ-ը Դիոկղետիանոսի 15-րդ տարում կամ 298/299 թ.: Բայց այս տեղեկութիւնը պարզապէս անյարիր է հէնց Սեբէոսի վերը բերուած տուեալներին, երբ 286/288 թուականից (Ներսէս Սասանեանից 7 տարի առաջ) Մեծ Հայքի թագաւոր է յիշուում Տիրան արքան: Մեր կարծիքով, տեղին է հետեւեալ մեկնաբանութիւնը. Համաձայն Սեբէոսի տուեալների՝ Հայոց պատմութեան մէջ տեղ է գտել ոչ թէ Տիրան-Տրդատ շփոթը, այլ այն կարեւոր իրողութիւնը, որ սկզբնաղբիւրներն ուղղակիօրէն չեն արձանագրել, թէ Տրդատ Գ Մեծ արքան մինչեւ 298 թուական հաւանաբար անուանուել է Տիրան, իսկ Տրդատ անունը վերցրել է միայն 298 թուականի թագադրութեան ժամանակ: Այլ խօսքով՝ 288 թուականից թագաւորած Տիրանը ըստ երեւոյթին նոյն Տրդատն է, եւ, որ ոչ պակաս կարեւոր է, Գ դարի վերջի Տիրան - Ներսէս Պարսից թագաւոր զոյգը շփոթուել է Դ դարում թագաւորած Տիրան արքայ եւ Հայաստան ներխուժած Ներսէս զօրավար զոյգի հետ⁷⁶:

Անշուշտ, կարելի է հեշտութեամբ մերժել այս կամ այն պատմիչի հաղորդումը, ցոյց տալ, որ Տիրանին վերագրուող մի շարք իրադարձութիւններ իրականում առնչուում են Տրդատ Մեծի իշխանութեան շրջանին, ինչը հայագիտութիւնը վաղուց

75 Անդ
76 Հմմտ. Հ. Պ. Անանեան, Ս. Գրիգոր Լուսատրչի ձեռնարկութեան թուականը..., էջ 35-36: Փաւստոս Բուզանդի եւ Սեբէոսի առաջին գլուխների զուգորդող տեղեկութիւնների մանրակրկիտ քննութիւնը վերջին անգամ տե՛ս Հ. Պ. Անանեան, Սեբէոսի Պատմութեան գրքի մասին քա՜նի մը լուսաբանութիւններ, Վեներտիկ-Ս. Ղազար, 1972, էջ 71-80

74 Սեբէոս Եպիսկոպոս, գլ. Գ, էջ 15. Սեբէոս, գլ. Ե, էջ 58

պարզել է, սակայն, այնուամենայնիւ, այն հարցին, թէ ինչու են պատմիչները երկու թագաւորների գործունէութիւնը իրար հետ շփոթել, երբ անունները տարբեր են, առաւել հաւանական պատասխանը մէկն է. իրօք գոյութիւն են ունեցել Տիրան-Ներսէս երկու զոյգեր, որի հետեւանքով պատմիչները երկրորդ զոյգին վերագրել են իրողութիւններ, որոնք տեղ են գտել առաջին զոյգի օրօք: Շատ կարեւոր է արձանագրել, որ Տիրան-Ներսէս առաջին զոյգն իրականում Տրդատ-Ներսէս զոյգն է: Սեբէոսի ժամանակագրական հաղորդման առաջին մասում խօսքը յստակ գնում է Տիրան-Տրդատի Թ Ոսխայի ճակատամարտի մասին, սակայն այնքան ուժեղ է Փաւստոս Բուզանդի ազդեցութիւնը⁷⁷, որ Բասենի դաշտի Ոսխայի ճակատամարտից յետոյ պատմուում է Տիրանին գերութիւնից ազատելու եւ Արշակ Բ-ի գահ բարձրանալու մասին:

Կայ մի հանգամանք եւս. Տրդատ-Տիրանը ամենայն հաւանականութեամբ թագադրուել է մի քանի անգամ, սակայն բոլոր ուսումնասիրողները չէ, որ կարողացել են ընկալել այդ իրողութիւնը: Այսպէս, են ընկալել այդ իրողութիւնը: Համաձայն Սեբէոսի, իշխել է Դիոկղետիանոսի 15-րդ տարում, այսինքն՝ 298 թ., ստիպել է Յ. Մանանդեանին ենթադրելու, թէ Տրդատ Գ-ի գահակալութիւնն սկսուել է 298 թուից⁷⁸: Անտարակոյս է թւում, որ Տրդատ Մեծը թագադրուել է 298 թ., սակայն Պատմաճօր, Սեբէոսի եւ Ուխտանէսի տուեալները մեզ իրաւունք են տալիս ենթադրելու, որ նա թագադրուել է առնուազն եւս երկու անգամ, ընդ որում՝ Տիրան անունով (եւ միայն երրորդ անգամ՝ 298-ին՝ որպէս Տրդատ): Առաջին անգամ Տիրան-Տրդատը թագաւոր է հռչա-

կուել հաւանաբար 274/275 թ., ինչպէս երեւում է Ուխտանէսի եւ Պատմաճօր տեղեկութիւններից: Ըստ վերեւում բերուած Ուխտանէսի վկայութեան, որն օգտուել էր Ջենոբի երկի մեզ չհասած տարբերակից՝ Տրդատ Մեծին Հայոց թագաւոր է հռչակել Պոռթոսը (գոթերի թագաւորին ձեռքակալելու դիմաց՝ որպէս վարձատրութիւն) եւ զօրքով ուղարկել է Հայաստան⁷⁹: Համաձայն Պատմաճօր տուեալների՝ Տրդատ Մեծն իշխել է 56 տարի⁸⁰, ուստի եթէ Պոռթոսը նրան գահ է բարձրացրել դեռեւս զօրավար եղած ժամանակ, ապա նրա գահակալութիւնը պէտք է դնել 274 թ., քանի որ ուսումնասիրողները Հայոց թագաւորի մահը սովորաբար եւ իրաւացիօրէն դնում են 330-ին: Սակայն Պոռթոսը (Marcus Aurelius Probus [232-282]) կարող էր Տրդատ Մեծին գահ բարձրացնել կայսր դառնալուց յետոյ, այսինքն՝ 276-282 թթ.⁸¹, հետեւաբար, եթէ դա լինէր անգամ կայսեր առաջին տարում՝ 276 թ., ապա Տրդատի մահը կ'ընկնի 331/332 թ. (ըստ որում, դատելով բոլոր տուեալներից, 332 թուականը բացառուում է): Համեմատութեան մէջ դնելով այս երկու հնարաւորութիւնները՝ մենք գալիս ենք, այնուամենայնիւ, այն եզրակացութեան, որ եթէ Պոռթոս կայսեր կողմից թագադրուելու մասին Ուխտանէսի աղբիւրի վկայութիւնը համարենք հաւաստի (այլ ոչ թէ շփոթի արդիւնք Դիոկղետիանոսի պատուիրակ Սիկորիոս Պոռթոսի հետ), ապա այդ կայսրը կարող էր Տրդատին թագ շնորհել մինչեւ իր գահ բարձրանալը, Աւրելիանոս կայսեր օրօք՝ 274 թ.:

Տիրան-Տրդատը, հաւանաբար, անգամ հռոմէական օգնական ուժերով չկարողացաւ Հայաստանում կայուն հաստատուել

79 Ուխտանէս, գլ. ԼԶ, էջ 111
80 Մովսէս Խորենացի, գիրք Բ, գլ. ՂԲ
81 Советская историческая энциклопедия. т. 11, Москва, 1968, էջ 574

77 Փաւստոս Բուզանդ, դպր. Գ, գլ. ԻԱ
78 Յ. Մանանդեան, Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, հտ. Բ, մասն Ա, էջ 104

եւ ստիպուած եղաւ վերադառնալ կայսրութիւն: Սակայն, անկախ դրանից, նա արդէն 274 թ. Համարում էր թագաւոր, եւ Մովսէս Խորենացին նրան յատկացնում է Հէնց 56 տարուայ իշխանութիւն: Եթէ Հաւաստի Համարենք Մովսէս Խորենացու երկի միւս տեղեկութիւնը Դիոկղետիանոս կայսեր կողմից իր իշխանութեան 5-րդ տարում Տրդատին թագադրելու մասին, ապա կարելի է մտածել, որ Հայոց արքային վերստին յաջողուեց տիրել իր երկրում, կամ նրա տարածքի մեծ մասում 288 թ.: Միաժամանակ, ինչպէս Հաւաստում են իրանական վիճակագիր արքեպիսկոպոստ Մեծ Հայքի թագաւորութեան գոնէ արեւելեան շրջաններում մինչեւ 293 թ. շարունակեց իշխել Ներսէս Սասանեանը, որը 293-ից գահակալեց Պարսկաստանում՝ որպէս արքայից արքայ⁸²: Մեզ Հաւանական է թւում, որ Հէնց այդ՝ 288 թուականից պէտք է հաշուել Տրդատի փաստական անթոնակալման սկիզբը՝ ենթադրելով, թէ Ներսէս Սասանեանը, որը մինչ 288-ը գահակալում էր Մեծ Հայքի ողջ տարածքում որպէս Հայաստանի Մեծ թագաւոր, ստիպուած է եղել սկզբնաղբիւրների տեսադաշտից ինչ-որ պատճառով դուրս մնացած Հռոմէացիների ճնշման տակ քաշուել թագաւորութեան միայն արեւելեան շրջանները եւ Հանդուրժել Տրդատ Մեծի թագաւորութիւնը երկրի մեծ մասում: Գուցէ Հնարաւոր է նաեւ ենթադրել, որ 293 թ. ծրագրելով տիրել Սասանեան գահին, թիկունքն ամրապնդելու նպատակով Ներսէսն իր տիրոջին նոյնպէս յանձնեց Տրդատին՝ պահելով թերեւս միայն Անդրտիգրիսեան կոչուող երկրամասերը: Սակայն քանի որ նա բնաւ էլ չէր հրաժարուել Մեծ Հայքի թագաւորութեան նկատմամբ իր յաւակնութիւններից՝ քիչ թէ շատ ամրապնդելով իր դիրքը Պարսկաստանում,

82 Տե՛ս Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. Բ, էջ 62-65

նում, նորաթուխ արքայից արքան մեծ պատերազմ սկսեց Հայոց թագաւորութեան ու Հռոմի դէմ՝ Մեծ Հայքին լիարժէք տիրանալու նպատակադրումով (հարկ է նշել, որ 296-298 թթ. այդ պատերազմի սկզբնաւորման հանգամանքները որեւէ սկզբնաղբիւրում նկարագրուած չեն): Պատերազմը, սակայն, աւարտուեց Ներսէսի խայտառակ պարտութեամբ, եւ Ոսխայի ճակատամարտից յետոյ, երբ պարսկական բանակները ջախջախուեցին, իսկ կանանոցը գերի ընկաւ, նա ստիպուած եղաւ Մծբինի պայմանագրով ճանաչել Տրդատ Մեծի իշխանութիւնը Մեծ Հայքի թագաւորութիւնում: Եւ ինչպէս Հաւաստում է Սեբէոսը, դա տեղի ունեցաւ կրկին Դիոկղետիանոսի օգնութեամբ, նրա իշխանութեան 15-րդ տարում:

Ի միջի այլոց, թերեւս բացատրութիւն է ստանում նաեւ այն իրողութիւնը, թէ ինչու է Սեբէոսը սխալմամբ Խոսրով Քաջի գահ բարձրանալը դնում Դիոկղետիանոսի 4-րդ տարում: Խոսրովն այն է, որ Խոսրով Քաջը (այդ մասին առաւել հանգամանօրէն կը խօսուի, երբ մենք անդրադառնանք Գ դարի ժամանակագրութեանը) նոյնանում է Տրդատ Բ-ին, որն, ըստ յունահռոմէական աղբիւրների, երկար կռուել է պարսիկների դէմ, իսկ Ագաթանգեղոսը այդ կռիւների տեւողութիւնը համարում է 11 տարի⁸³: Համաձայն Ագաթանգեղոսի՝ Տրդատ Գ-ը Խոսրով Քաջի որդին է, եւ Հնարաւոր է, որ Սեբէոսը, շփոթելով Տրդատ Գ-ին Տրդատ Բ-ի հետ, երկրորդին վերագրուող 11 տարիների կռիւների ժամանակը հանում է 298 թ. երրորդ անգամ թագադրուած Տրդատ Գ-ին նախորդած

83 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, գլուխ Բ, § 23. «Եւ ամս մետասան ստեպ ստեպ զայս օրինակ ասար առեալ՝ աւերէին զամենայն երկիր սահմանացն, որ ընդ Պարսից թագաւորութեամբն եւ ընդ իշխանութեամբն էր»:

շրջանից՝ ըստ այդմ Խոսրով Մեծի իշխանութեան գալը դնելով Դիոկղետիանոս կայսեր չորրորդ տարում:

Ինչեւէ, եթէ այժմ մենք ունենք ելակէտը, այն է՝ Տրդատ Մեծի գահակալութեան սկիզբը Դիոկղետիանոսի իշխանութեան 5-րդ տարում՝ 288 թ., ապա կարելի է փորձել նրա նկատմամբ ստուգել Ագաթանգեղոսի եւ ՊատմաՅօր միւս հաղորդումների ժամանակագրական տուեալները (որոնց հետ որոշ ուսումնասիրողներ, ցաւօք, պարզապէս հաշուի չեն նստել):

Ագաթանգեղոսը ոչինչ չգիտէ կամ գոնէ ոչինչ չի ասում Տրդատ Մեծի առաջին թագադրման մասին: Նա ՊատմաՅօր նման Տրդատի գահակալութիւնն սկսում է Դիոկղետիանոսի օգնութեամբ Մեծ Հայքում հաստատուելու պահից (որը համարում ենք 288 թ.): Չանդրադառնալով այն անցքերին, թէ ինչպէս Տրդատը հաստատուեց իր Հայրենի թագաւորութիւնում, մեր քննութիւնն սկսենք այն պահից, երբ նա իր իշխանութիւնը հաստատեց Մեծ Հայքի թագաւորութեան մեծ մասում, իսկ Ներսէսն ենթադրաբար ստիպուած էր քաշուել թագաւորութեան արեւելեան շրջանները՝ շարունակելով իշխել այնտեղ «Հայաստանի Մեծ թագաւոր» տիտղոսով: Քաղաքական այսպիսի իրադրութիւնը, բնականաբար, չէր կարող ձեռք տալ ո՛չ մէկին եւ ո՛չ միւսին, սակայն երկուսն էլ ստիպուած էին հաշտուել ստեղծուած կացութեան հետ, թէկուզեւ ժամանակաւորապէս, եւ սպասել առաւել յաջող պահի՝ ամբողջ երկրին տիրելու համար: Ըստ որում, եթէ Տրդատ Գ-Տիրանը դրան պատրաստուած էր՝ որպէս երկրի օրինական տիրակալ, ապա Ներսէսը, կարող ենք ենթադրել՝ պատրաստ էր վերածուել Հայ Սասանեանի եւ Հիմք դնել Հայկական արքայատոհմի, քանի որ մինչեւ 293 թուականը նրա առաջ փակել էին դէպի Պարսից գահ տանող ճանապարհը:

Համաձայն Ագաթանգեղոսի՝ «Յառաջին ամին Տրդատայ արքայութեանն Հայոց Մեծաց, խաղացին եկին Հասին յեկեղեաց գաւառ, ի գեւղն Երիզայ, ի մեհեանն Անահտական, զի անդ զոհս մատուցեն, եւ իբրեւ կատարեցին զգործն անարժանութեան՝ իջին բանակեցան առ ափն գետոյն, զոր Գայլն ասեն»⁸⁴: Այստեղ, չնայած թագաւորի բոլոր յորդորներին, Գրիգոր Պարթեւը կամ ապագայ Գրիգոր Լուսաւորիչը հրաժարուեց պսակներ ու ծառերի թաւ ոստեր դնել բազնի Անահտական պատկերին⁸⁵ եւ, ինչպէս եւ կարելի էր սպասել, Հեթանոսական աստուածութեանը չպաշտելու համար ենթարկուեց հաւաք տանջանքների⁸⁶, իսկ թագաւորն էլ՝ յոյսը կորցնելով, թէ նա կը հրաժարուի քրիստոնէական դաւանանքից, եւ իմանալով, որ նա Անակ Պարթեւի՝ իր հօրն սպանողի որդին է, կարգադրեց նրան տանել Այրարատ եւ բանտարկել Արտաշատ քաղաքի բերդում գտնուող ներքին վիրապում, որ այնտեղ էլ մեռնի: Ագաթանգեղոսը գրում է. «Եւ եղեւ նա յայնմ վիրապի ամս արեւտաւսն: Եւ ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ի ձմեռոց յԱյրարատ գաւառ, ի վաղարշապատ քաղաք, ի Հայոց աշխարհ յարեւելս»⁸⁷: Այս դէպքերի առնչութեամբ ուշադրութիւն է գրաւում այն հանգամանքը, որ Տրդատը, զարմանալով (իրողութիւն, որ յարիր չէ պատմիչի նախկին հաղորդմանը, թէ նա գիտէր Գրիգորի քրիստոնեայ լինելու մասին), ասում է. «Այսչափ ամբ են, զի տեսի ես զքեզ, եւ յամենայն զօրութենէ քումմէ ծառայեցեր դու ինձ միամտութեամբ, եւ ես գոհ էի զվաստակոց քոց եւ ունէի ի մտի կեցուցա-

84 Ագաթանգեղոս, գլ. Ե, § 48
85 Անդ, գլ. Ե, § 49
86 Անդ, գլ. Ը, §102-121
87 Անդ, գլ. ԺԱ, § 122

նել զքեզ. ընդէ՞ր ոչ առնես զկամս իմ»⁸⁸: Եւ դրան ի պատասխան Գրիգորը, հրաժարուելով թագաւորի կամքը կատարել, ասում է, թէ ինքը հնազանդ է իր մարմնաւոր տիրոջը, սակայն «... զԱստուծոյ զպատիւն եւ զպաշտօն ոչ ումեք վայել է տալ. զի նա միայն է արարիչ երկնից եւ հրեշտակաց, որ փառաւորիչք են մեծութեան նորա, եւ երկրի եւ մարդկան, որ ի նմանէ են ստեղծեալ. որոց պարտ է պաշտել զնա եւ առնել զկամս նորա...»⁸⁹:

Եւ մինչ Գրիգորը բանտարկուած էր, Տրդատն իր թագաւորութեան ամբողջ ընթացքում «...աւերէր քանդէր զերկիրն Պարսից թագաւորութեանն եւ զաշխարհն Ասորեստանի, աւերէր եւ հարկանէր ի հարուածս անհնարինս: Վասն այսորիկ պատշաճեցան բանքս այս ի բանս կարգի առակաց, թէ՛ «Իբրեւ զսէզն Տրդատ, որ սիգալովն աւերեաց զթուճքս գետոց, եւ ցամաքեցոյց իսկ ի սիգալն իւրում զյորձանս ծովուց»: Վասն զի սէգ իսկ էր առ հանդերձս եւ այլ ուժով պնդութեան, հարստութեամբ, բուռն ոսկերօք եւ յաղթ մարմնով, քաջ եւ պատերազմող անհնարին, բարձր եւ լայն հասակաւ. որ զամենայն ժամանակս կենաց իւրոց պատերազմեալ եւ առնէր մարտիցն յաղթութիւն: Մեծ անուն պարծանաց քաջութեան անձին ստանայր, եւ զհոյակապ շքեղութիւն յաղթութեան ընդ ամենայն աշխարհ կացուցանէր. հարկանէր ի հարուածս զթշնամիսն, եւ խնդրէր զքէնս վրիժուց իւրոց հայրենեացն. առնոյր աւար բազում ի կողմանցն Ասորոց, եւ թափէր կապուտ սաստիկ

անհնարին ի նոցանէն: Արկանէր ի սուր զզօրս Պարսից, եւ թափէր կողոպուտ անհնարին. լինէր առաջնորդ առն եւ ճիոյ զօրացն Յունաց, եւ մատնէր նոցա զբանակս նոցա, հանէր զզօրս Հոնաց սաստիկ յոյժ, եւ գերէր զկողմանս Պարսից»⁹⁰: Այս տեղեկութիւնը, ամէն ինչից դատելով, վերաբերում է, եթէ չհաշուենք Տրդատ Գ-ի յաղթ մարմին, քաջ ու պատերազմող լինելու մասին տուեալը, խոսքով Մեծ-Տրդատ Բ-ին: Նրան է վերաբերում ոչ միայն Պարսից երկիրը եւ Ասորեստանի աշխարհը աւերելու ու քանդելու տեղեկութիւնը, այլեւ՝ «Իբրեւ զսէզն Տրդատ, որ սիգալովն աւերեաց զթուճքս գետոց, եւ ցամաքեցոյց իսկ ի սիգալն իւրում զյորձանս ծովուց»-ը⁹¹, «...խնդրէր զքէնս վրիժուց իւրոց հայրենեացն»-ը, «հանէր զզօրս Հոնաց սաստիկ յոյժ, եւ գերէր զկողմանս Պարսից»-ը: Ազգաթանգեղոսի վարքի խմբագրման ընթացքում, հաւանաբար, «ի կողմանցն Ասորեստանեայց»-ն աղաւաղուել եւ վերածուել է «ի կողմանց Ասորոց»-ի, քանի որ Տրդատ Բ-ը եւ առաւել եւս՝ Տրդատ Գ-ը չէին կարող աւարի առնել Ասորոց կողմերը, սակայն խոսքով Մեծ-Տրդատ Բ-ը իրօք աւարի է առել Ասորեստանի կողմերը:

Հարկ է ուշադրութիւն դարձնել այն պարագային, որ Գրիգորը, ըստ Ազգաթանգեղոսի հաղորդման, բանտում մնում է տասներեք տարի (մի այլի կին ամէն օր մի նկանակ է նետում ինոր Վիրապ, որով նա կերակրւում է): Դրան կ'անդրադառնանք մի փոքր ուշ: Ինչ վերաբերում է թագաւորին, ապա նա հրովարտակ է արձակուած բոլոր մեծամեծերին, իշխաններին ու նախարարներին, գործակալներին ու իր իշ-

88 Անդ, գլ. Ե, § 51: Ազգաթանգեղոսը միանշեւ Տրդատի գահակալութիւնը նշում է, որ «իբրեւ զգացեալ Տրդատիս վասն Գրիգորի, թէ Քրիստոնէական պաշտամանն հաղորդ է՝ սկսեալ այնուհետեւ պատուհասակոծ առնէր զնա եւ ազգի ազգի արհաւիրս արկանէր ի վերայ նորա. բազում անգամ ի բանս եւ ի կապուս տանջանք մեղեր զնա՝ թողոյ ի բաց լինել մմա յերկրպագութեանն Քրիստոսի...» (գլ. Գ, § 38):

89 Անդ, գլ. Ե, § 52

90 Անդ, գլ. ԺԱ, § 123

91 Որոշ ուսումնասիրողներ այս բանահիւսական հատուածը հակուած են վերագրելու Տրդատ Ա-ին, սակայն այն իրողութիւնը, որ Տրդատ Ա-ը հայ իրականութեանը ծանօթ է միայն Արտաշէս ամուսնով, խիստ կասկածելի է դարձնում այդ տեսակետը:

խանութեան տակ գտնուող մարդկանց՝ ազատներին ու զինուորներին, որ հոգան աշխարհի շինութիւնը, պատուեն աստուածների բազինները նոր շինութիւններով ու զոհաբերութիւններով, նուէրներով ու ընծաներով, ճոխ ու ջերմեռանդ պաշտամունքով, որ յանկարծ խաժամուծ մարդիկ իրենց տգիտութեան պատճառով հաւատը չարհամարհեն⁹²: Գրիգորի՝ բանտում եղած տարիներին, պատմիչի խօսքերով, Հայոց թագաւորը ոչ միայն սաստիկ խստութեամբ պատերազմում էր պարսիկների դէմ, այլեւ արձակում է մէկ այլ հրովարտակ, որով նախարարներին, զօրքին եւ շինականներին յայտնում էր՝ «Դուք ինքնին գիտէք, զիարդ ի բնէ ի նախնեացն իսկ յաղթութիւն խաղաղութեան բազում էր շնորհեալ մեզ դիցն օգնականութեամբ, եւ կամ թէ որպէս զամենայն ազգս նուաճեալ էր, եւ ի հնազանդութեան ունէաք: Իսկ յորժամ զդիսն ոչ մարթացաք հաճել պաշտամամբն, զկամս նոցա քաղցրացուցանել ընդ մեզ՝ հանին մերժեցին: Ի ցասմանն իւրեանց զմեզ ի մեծ տերութեանէն: Մանաւանդ վասն աղանդին քրիստոնէից պատուիրեալ ձեզ, զի հազար եւ բիւր դէպ է եթէ գտցի ոք, զի նոքա անհնարին լինին խափան դիցն պաշտամանն, զայնպիսին թէ գտցեն եւ վաղվաղակի ի մէջ ածցեն՝ յարքունուստ պարգեւք եւ պատիւք նոցա լիցին շնորհեալ՝ որ զնոսայն յայտնեացեն: Ապա թէ ոք չյայտնեսցէ զայնպիսին, կամ թագուցէ, եւ գտցի՝ այսպիսին ընդ մահա-

պարտս համարեալ լիցի, եւ ի հրապարակ արքունի եկեալ մեռցի, եւ տուն նորա յարքունիս երթիցէ»⁹³: Հրովարտակում նաեւ նշուում էր, որ ինքը չի խնայել անգամ իրեն ծառայութիւններ մատուցած իր սիրելի Գրիգորին⁹⁴:

Ազգաթանգեղոսի շարադրանքի հերթականութիւնից կարելի է միայն ենթադրել, որ վերը բերուած տեղեկութիւնը վերաբերում է արդէն 303 թ. փետրուարի 23-ից սկսուած դիոկղետիանոսեան հալածանքների, սակայն մինչեւ հռիփսիմեան կոյսերի՝ Մեծ Հայք գալն ընկած ժամանակին: Երկում մահապատիժների եւ այլ հալածանքների մասին տուեալների բացակայութիւնը նաեւ յուշում է, որ թերեւս հրովարտակն ընդունուել էր արտաքին ճնշման պայմաններում եւ ինչ-որ չափով ցուցադրական բնոյթ էր կրում հռոմէացիներին հանգստացնելու համար, թէ Հայոց թագաւորութիւնում նոյնպէս պայքարում են քրիստոնեաների դէմ:

Ազգաթանգեղոսի Պատմութեան համաձայն՝ այդ ժամանակներում Դիոկղետիանոս կայսրն իր համար կին է փնտրում եւ այդ նպատակով տէրութեան տարբեր կողմերն է ուղարկում պատկերազորների, այսինքն՝ նկարիչներին, որոնք թեկնածուներին նկարում էին տախտակների վրայ՝ կայսրին ներկայացնելու համար: Պատկերազորները Հռոմայեցոց քաղաքի կուսանաց մի արգելափակում, որի գլխաւորի անունն էր Գայիանէ, հանդիպում են թագակալ տոհմից սերող Հռիփսիմէ կոյսին, պատկերում են նրան եւ նկարը մատուցում կայսրը: Դիոկղետիանոսը որոշում է նրա հետ ամուսնանալ: Այդ բանը թոյլ չտալու համար Գայիանէն, Հռիփսիմէն եւ միւս կոյսերը փախչում են Հայաստան՝ «յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քա-

92 Անդ, գլ. ԺԱ, § 124, գլ. ԺԲ, § 125-130: Հարկ է նշել, որ § 127-ում հանդիպում է «իմաստութիւն Յունաց հասցէ դաստակերտիոյ կայսերաց» արտայայտութիւնը, որը Ս. Երեմեանը փորձում է բացատրել որպէս Մեծ Հայքի հոռութեամբ հատուածի կայսերական դաստակերտ լինելով, սակայն չ. Բարթիկեանը միանգամայն հիմնատարուած ցոյց է տուել, որ այս հատուածում իրատուում եղել է «դաստակերտիոյ ի կայսերաց», իսկ «ի» նախդիրը հետագայում ընկել է (տե՛ս «Դաստակերտ կայսերաց»-ը ֆանտաստիկորիա, ՊԲՀ, 1988, թիւ 4, էջ 104-107):

93 Անդ, գլ. ԺԲ, § 132-135

94 Անդ, գլ. ԺԲ, § 136

դաք, զոր եւ Նորաքաղաքն կոչեն, ի նիստս թագաւորացն Հայոց: Այնուհետեւ եկեալ մտանէին ի հնձանայարկս այգեստանուոյն, որ կան շինեալ ի հիւսիսոյ յարեւելից կուսէ. եւ կերակրէին ընչիւք իւրեանց ի վաճառաց քաղաքին...»⁹⁵:

Մինչ հռոմէացի կոյսերը գտնուում էին Հայաստանում եւ, ինչպէս յստակ երեւում է Ագաթանգեղոսի երկի շարադրանքից, ոչ մի ձեւով հալածանքների չէին ենթարկուում, Դիոկղետիանոսն ամէն ինչ անում է փախստականներին յայտնաբերելու համար եւ իր հետախոյզներից լուր է ստանում, որ հռիփսիմեան կոյսերը փախել են Հայաստան: Ինչպէս հաւաստում է հայ պատմիչը, կայսրը նամակ է գրում իր «սիրելի եղբայր աթոռակից» Հայոց թագաւորին եւ խնդրում գտնել փախստականներին, ըստ որում, որքան էլ տարօրինակ լինի, Հռիփսիմէին սիրահարուած լինելով հանգերձ՝ նա առաջարկում է Տրդատին՝ Հռիփսիմէին հաւանելու դէպքում իրեն պահել: Թագաւորի հրամանով փնտրում են կոյսերին եւ ի վերջոյ յայտնաբերում Վաղարշապատ մայրաքաղաքում⁹⁶:

Ամենայն հաւանականութեամբ, Դիոկղետիանոսը նամակով պահանջում էր ոչ միայն գտնել փախստականներին, այլեւ ընդհանրապէս հալածել քրիստոնեաներին, քանի որ, ինչպէս Ագաթանգեղոսն է գրում. «Արդ՝ գտեալ լինէին (Հռիփսիմեան կոյսերը - Յ. Բ.) նոքա ի հնձանս շինուածոցն: Քանզի իբրեւ եկին հասին հրամանք հրովարտակացն ի մեծ թագաւորէն Յունաց առ Տրդատ արքայն Հայոց Մեծաց՝ ոչ սակաւ ինչ խռովութիւն եղեւ ի մէջ աշխարհին Հայոց. զի պահէին զամենայն անցս ճանապարհաց պողոտայիցն եւ գա-

95 Ա.Աղ., գլ. ԺԳ, § 150
 96 Ա.Աղ., գլ. ԺԴ, § 151-156, գլ. ԺԵ, § 157-164: Տե՛ս գլ. ԺԴ, § 152. «Ինքնակալ կայսր Դիոկղետիանոս, առ սիրելի եղբայր աթոռակից մեր Տրդատ, ողջոյն»:

մենայն գաւառացն. ի կողմանս կողմանս յուզախնդիրք ելեալ քննէին: Իսկ ուրումն տեսեալ՝ պատմեաց զնոցանէ»⁹⁷:

Բերուած տեղեկութիւնների լոյսով որոշ բացատրութիւն է ստանում այն փաստը, թէ ինչո՞ւ պատմիչը մինչ այժմ խօսում է Գրիգոր Պարթեւի 13-ամեայ բանտարկութեան մասին: Ուսումնասիրողներին շփոթութեան մէջ է գցել այն իրողութիւնը, որ Ագաթանգեղոսը մի դէպքում գրում է Գրիգոր Պարթեւի 13-ամեայ, իսկ այլ կապակցութեամբ՝ 15-ամեայ բանտարկութեան մասին: Խնդիրն այն է, որ, չնայած պատմիչն այդ մասին ուղղակի չի յայտնում, սակայն սահմանաբաժան գիծը թերեւս Հռիփսիմեան կոյսերի Հայաստան գալն է, որը տեղի է ունեցել Գրիգոր Պարթեւի բանտարկութեան 13-րդ տարում կամ 301 թ. (հաշուած 288-ից): Այդ դէպքում նրանց փախուստը միանգամայն պատմական իրողութիւն կարող է դառնալ՝ տեղի է ունեցած մինչեւ Դիոկղետիանոս կայսեր կողմից կայսրութեան ամբողջ տարածքում քրիստոնեաների նկատմամբ հալածանքներ սկսելը:

Տրդատը կարգադրում է Հռիփսիմէին պալատ բերել եւ դրա համար ոսկեպատ գահաւորակ ու գեղեցիկ հանդերձներ է ուղարկում: Սակայն Հռիփսիմէն հրաժարուում է գնալ, իսկ թագաւորը կարգադրում է ուժով բերել: Տեսնելով կոյսի աննկարագրելի գեղեցկութիւնը՝ Տրդատը որոշում է նրան կնութեան առնել եւ ուժով տիրանալ, սակայն, չնայած իր ամբհի ուժին, չի կարողանում դա անել: Կայսեր սէրը մերժած Հռիփսիմէն կարողանում է տեղի չտալ Հայոց հեթանոս թագաւորի սիրոյ կամ կրքի առաջ: Այդ ժամանակ փորձ արուեց Հռիփսիմէի վրայ ազդել Գայիանէի միջոցով, սակայն վերջինս Հռիփսիմէին կոչ արեց ամուր մնալ Քրիստոսի հաւա-

97 Ա.Աղ., գլ. ԺԵ, § 161

տին: Դրա համար քարերով ջարդում են նրա ատամները, սակայն այդպէս էլ չեն կարողանում հասնել իրենց նպատակին: Աւելին՝ Հռիփսիմէին զարմանալիօրէն յաջողում է բզկտուած հագուստներով փախչել պալատից եւ գնալ դէպի քաղաքի Արեգ դուռը՝ դէպի հնձանները, որտեղ նրանց վանքն էր: Լուր տալով իր ընկերուհիներին՝ նա շարժում է քաղաքից դէպի հիւսիս «ի տեղի մի յարեւելս կոյս, ի սարաւանդակ ի բարձրաւանդակ յաւազին տեղի մի, մօտ ի բուն պողոտայն, որ երթայր յԱրտաշատ քաղաք»⁹⁸: Տրդատ թագաւորի հրամանով կոյսին բռնում են ու տանջամահ անում՝ նրա հետ մէկտեղ սպանելով եւս 33 հոգու: Թագաւորն, այսպիսով, չնայած իր ուժին ու հզօրութեանը, չնայած պատերազմներում ցուցաբերած իր քաջութեանը եւ օլիմպիականերում հուշակուելուն, Եփրատից այն կողմ Տաճկաց կողմերում մղած կռիւներին ու խիկաց կողմերում մղած կռիւներին եւ խիկաց կողմերում մղած կռիւներին ու խիկաց կողմերում մղած կռիւներին եւ խիկաց կողմերում մղած կռիւներին ու խիկաց կողմերում մղած կռիւներին⁹⁹: Այս ամէնի պատճառով նա միայն խստացնում է հալածանքները նոր վարդապետութեան հետեւորդների դէմ: Սպանում են նաեւ հետեւորդների զէմ: Սպանում են նաեւ Գայիանէին՝ քաղաքից դուրս հանելով հարաւային դռնով, դէպի Մեծամօրի կամուրջը տանող պողոտայի կողմերում՝ մի ճահճախուտ վայրում, որտեղ սովորաբար սպանում էին մահապարտներին¹⁰⁰: Նրա հետ սպանւում են եւս մի քանի կոյսեր, եւ նահատակները թիւը հասնում է 37-ի¹⁰¹: Պատմիչի խօսքերով, Հռիփսիմէն նահատակում է իր 33 ընկերուհիների եւ ընկերների հետ Հոռի ամսի 26-ին, իսկ Գայիանէն՝ 27-ին՝ իր երկու ընկերուհիների

98 Ագաթանգեղոս, գլ. ԺԵ, § 164-172, գլ. ԺԶ, § 173-179, գլ. ԺԷ, § 180-192
 99 Ա.Աղ., գլ. ԺԷ, § 197-201, գլ. ԺԸ, § 202
 100 Ա.Աղ., գլ. ԺԸ, § 205-206
 101 Ա.Աղ., գլ. ԺԸ, § 209

հետ¹⁰²: Թագաւորը, վեց օր մեծապէս տրտմելով Հռիփսիմէին կորցնելու համար, որսի է դուրս գալիս «ի դաշտն Փառական Շեմակաց»¹⁰³: Պատմիչի խօսքերով, մինչ նա պատրաստում էր կառք նստել քաղաքից դուրս գալու համար, արքային Աստծոյ կողմից, թէկուզեւ ուշացած, պատիժ է հասնում՝ դարձնելով վայրի խոզերի նման¹⁰⁴: Մի կողմ թողնելով այս հրաշապատումները, որոնք ինչպէս դժուար չէ տեսնել, յօրինուել են շատ աւելի ուշ՝ լուհնէնք, որ, պատմիչի խօսքերով, Տրդատի քոյր Խոսրովի դուստրն Աստուած երագում յայտնում է, թէ միայն Արտաշատում բանտարկուած Գրիգորը կարող է եղբօրը բուժել: Երբ այդ մասին նա յայտնում է արքունիքում, բոլորը ծիծաղում են եւ ասում. «Եւ դու ուրեմն մոլեգնեցար. դեւ ուրեմն հարաւ ի քեզ: Զիւ՞րդ է, զի այս հնգետասան ամ է, զի ընկեցին զնա յանհարին խոր վիրապն, եւ դու ասես եթէ կենդանի է. արդ եւ ոսկերոտին իսկ ո՞ւր իցեն. զի նոյն օրին, իբրեւ իջուցին զնա անդր՝ յօճիցն իսկ տեսնէն նոյնժամայն սատակեալ իցէ»¹⁰⁵: Սակայն տեսիլը կրկնւում է, եւ նախարարներն ի վերջոյ Օտտա անունով իրենցից մէկին ուղարկում են Արտաշատ, որը Խոր վիրապից հանում է Գրիգոր Պարթեւին, լողացնում, հանդերձաւորում եւ բերում Վաղարշապատ: Սակայն տեղ հասնելով, նա յայտարարում է, որ ինքն էլ սովորական մարդ է, մահկանացու, ուստի պէտք է դիմել Արարչին, որն ստեղծել է երկինքը եւ երկիրը, արեւը, լուսինը եւ աստղերը, ծովն ու ցամաքը, եւ նա կը կարողանայ արքային բուժել¹⁰⁶:

102 Ա.Աղ., գլ. ԺԸ, § 210
 103 Ա.Աղ., գլ. Ի, § 211
 104 Ա.Աղ., գլ. Ի, § 212. «... ելեալ ըստ մարդկային բնութիւնս արտաքս՝ ի մամուրիսն վայրեցի խոզաց, իբրեւ գնոսս ընդ գնոսս ի մէջ անցա երթեալ բնակէր»:
 105 Ա.Աղ., գլ. Ի, § 215-216
 106 Ա.Աղ., գլ. Ի, § 216-222

Այս ընթացքում Գրիգորը նահատակ կոյսերի մարմինները հողին է յանձնում այնտեղ, ուր նրանք սպանուել էին, եւ սկսում է քարոզել Աստծոյ խօսքը՝ կոչ անելով հաւատալ Քրիստոսին եւ հրաժարուել սուտ եւ սնտի հեթանոսական քարեղէն, փայտեղէն, արծաթեղէն ու ոսկեղէն, պղնձաձոյլ աստուածներէն¹⁰⁷: Ազաթանգեղոսի մեզ հասած պատմութեան 259-715 պարագրաֆները մատուցում են նոր վարդապետութիւնը, որն ստեղծուել է Գրիգոր Լուսաւորչի վարքը խմբագրողներէ կողմից եւ, բանասէրներէ միահամուռ կարծիքով՝ սկզբնական յունական բնագրում գոյութիւն չի ունեցել, ինչը երեւում է նաեւ վարքի տարբեր լեզուներով թարգմանութիւններէ: Պատմիչի հետագայ շարադրանքից պարզուում է, որ Գրիգորն անդադրում քարոզում է 65 օր, իսկ 66-րդ օրը թագաւորը՝ իշխաններով ու նախարարներով, կանանցով, երեխաներով եւ խառնիճազանճ ամբոխով, խնդրում է Աստծոյ դատաստանից փրկուել: Այնժամ Հայոց լուսաւորիչը մատուցում է կառուցում նահատակուածների գերեզմանին՝ երեք վկայարաններ, որոնցից մէկը քաղաքի հիւսիսարեւելեան կողմում, որտեղ սպանուել էին Հովհաննէս եւ նրա 32 ընկերակիցներն ու ընկերները, միւսը՝ նրանից դէպի հարաւ, ուր վկայել էին Գայիանէս եւ իր ընկերակիցները, իսկ երրորդը՝ այգուհնձանում, որտեղ նրանց վանքն էր գտնուում: Այնուհետեւ Գրիգորը բուժում է թագաւորին ու այլեւայլ հիւանդներին եւ իրաւունք ստանում նոր վարդապետութիւնը քարոզելու: Պատմիչի խօսքերով՝ «Որոց եւ ինքեանք իսկ ի կողմանց կողմանց եւ ի գաւառաց գաւառաց Հայաստան աշխարհին՝ յորդեալք եւ դրդեալք հասանէին ի բացեալ աղբիւրն շնորհաց գիտութեանն Քրիստոսի: Քանզի յԱյրարատեան գաւառին, ի թագաւորանիստ կա-

յեանսն, բղխեցին Հայոց տանն Թորգոմայ շնորհք քարոզութեան Աւետարանին պատուիրանացն Աստուծոյ»¹⁰⁸:
 Ինչպէս երեւում է աղբիւրից, թագաւորի հրամանով եւ բոլորի հաւանութեամբ Գրիգորն իրաւունք է ստանում վերացնելու հեթանոսութիւնը: Ինքը թագաւորը զօրքով վաղարշապատից գնում է Արտաշատ եւ աւերում է այնտեղ «... զբազինսն Անահտական դիցն, եւ որ յերազմոյն տեղիսն անուանեալ կայր: Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազահան պաշտաման Տրի դից, դպրի գիտութեան քրմաց, անուանեալ Դիւան գրչի Որմզդի, ուսման ճարտարութեան մեհեան. նախ ի նա ձեռն արկեալ՝ քակեալ այրեալ աւերեալ քանդեցին»¹⁰⁹: Տիր աստծոյ սպասաւորները փախչում են Անահտական մեհեան, փորձում դիմադրել, սակայն պարտուում են եւ փախչում «ի բնակիչս լերինն Կաւկասու, ի կողմանս հիւսիսոյ»¹¹⁰: Մեհեանի դաստակերտները, սպասաւորներին՝ նրանց ունեցած հողերով ու կալուածքներով, նուիրում են եկեղեցուն¹¹¹: Գրիգոր Լուսաւորիչը Հայաստանի բոլոր քաղաքներում, գիւղերում, աւաններում եւ ագաւակներում որոշում է եկեղեցու կառուցման տեղերը: Սակայն պատմիչի ասելով, նա եկեղեցիներ չէր հիմնում, որովհետեւ քահանայութեան պատիւ չունէր, այլ լոկ այդ վայրերը քարերով պարսպում էր եւ տէրունական խաչի նշանն էր դնում: Այդ նշանը նա կանգնեցնում է նաեւ ճանապարհների ելքերում եւ մուտքերում, փողոցներում եւ հրապարակներում, ճանապարհներին կից ամրոցներում եւ այլուր¹¹²: Գրիգորն սկսում է քարոզել նոր վարդապետութիւնը թագաւորին եւ Արշա-

108 Ա.Աղ. գլ. ԺԷ, § 773-776
 109 Ա.Աղ. գլ. ԺԸ, § 778
 110 Ա.Աղ. գլ. ԺԸ, § 779-780
 111 Ա.Աղ. գլ. ԺԸ, § 781
 112 Ա.Աղ. գլ. ԴԸ, § 712

107 Ա.Աղ. գլ. ԴԹ, § 716-759

կունեաց տոհմի երեւելիներին, եւ՝ իր հետ վերցնելով թագաւորին, գնում է Դարանաղեաց գաւառը, որտեղ Թորգոմայ գիւղում կործանում է «մեհեան անուանեալ սպիտակափառ դիցն Բարշամինայ», ջարդում է Հաստծոյ արձանը, իսկ մեհեանի գանձերը բաժանում աղքատներին եւ գիւղն՝ իր բոլոր դաստակերտներով ու սահմաններով, նուիրում եկեղեցուն¹¹³: Քրմերը փախչում են Խաղտեաց կողմերը, իսկ իրենք ժամանում են Անի թագաւորական կայեանը, որտեղ արքունական հանգստարանն էր, եւ կործանում են Արամազդի կամ Զեւսի բազիլիկ՝ տէրունական նշանը կանգնեցնելով¹¹⁴: Այնուհետեւ անցնում են հարեան եկեղեցաց գաւառ եւ աւերում Հայոց մեծ եւ բուն մեհեանը՝ Անահտական բազիլիկ, Երէզ կոչուած աւանում՝ կոտրելով քրմերի դիմադրութիւնը: Փշրում են Անահիտ աստծոյ ոսկէ արձանը, կողոպտում մեհեանի ոսկին ու արծաթը եւ, անցնելով Գայլ գետը, թիւ աւանում կործանում Արամազդի դստեր մեհեանը, որ Նանէական էր կոչուում¹¹⁵: Ամէնուրեք թագաւորը կարգադրում էր հաւատալ Քրիստոսի վարդապետութեանը: Այնուհետեւ Դերջան գաւառում աւերում են Արամազդի որդուն նուիրուած Մրհաւան մեհեանը Բագայանի գիւղում, մեհեանի գանձերը բաժանում են աղքատներին, իսկ կալուածքները նուիրում եկեղեցուն¹¹⁶:

Տրդատն այնուհետեւ, միաբանութեամբ կնոջ՝ Աշխէնի եւ բրոջ՝ Խոսրովի հետ, հաւաքուել զօրքին, մեծամեծերին եւ կուսակալներին, գաւառակալներին, պատուաւորներին, պատուականներին, զօրավարներին, պետերին եւ իշխաններին, նախարարներին եւ ազատներին, դատաւոր-

113 Ա.Աղ. գլ. ԺԸ, & 783, գլ. ԺԹ, § 784
 114 Ա.Աղ. գլ. ԺԹ, § 785
 115 Ա.Աղ. գլ. ԺԹ, § 786
 116 Ա.Աղ. գլ. ԺԺ, § 789-790

ներին ու զօրագլուխներին եւ նրանց առաջարկում Գրիգորին Եկեղեցու հովիւ կարգել¹¹⁷: Պատմիչի խօսքերով՝ «Յայնժամ թագաւորն վաղվաղակի փութով եւ երկիւղիւ եւ մեծաւ խնդութեամբ՝ հոգացեալ, դումարեաց զգլխաւորս նախարարացն եւ զկուսակալս աշխարհացն. առաջին՝ իշխանն Անգեղ տան. երկրորդ՝ իշխանն Աղձնեաց, որ է բղեաշխն մեծ. երրորդ՝ իշխանն մարդպետութեան իշխանութեանն. չորրորդ՝ իշխանն թագակապ իշխանութեան ասպետութեանն. հինգերորդ՝ իշխանն սպարապետութեան, զօրավար Հայոց աշխարհին. վեցերորդ՝ իշխանն Կորդովտաց աշխարհին. եօթներորդ՝ իշխանն Ծոփաց աշխարհին. ութերորդ՝ իշխանն Գուգարացոց աշխարհին, որ միւս անուանեալ բղեաշխն. իններորդ՝ իշխանն Ռշտունեաց աշխարհին. տասներորդ՝ իշխանն Մոկաց աշխարհին. մետասաներորդ՝ իշխանն Սիւնեաց աշխարհին. երկուսասաներորդ՝ իշխանն Ծաղկէից աշխարհին. երեքուսասաներորդ՝ իշխանն Ուտիացոց աշխարհին. չորեքուսասաներորդ՝ իշխանն Շահապ Զարաւանդ եւ Հեր գաւառի. հնգուսասաներորդ՝ իշխանն մաղխազութեան տանն. վեշտասաներորդ՝ իշխանն Արծրունեաց:

Այս իշխանք են ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազարաւորք, բիւրաւորք ի մէջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ, զոր դումարեաց թագաւորն Տրդատ եւ առաքեաց զնոսս ի կողմանս Կապուտկացոց, ի քաղաքն Կեսարացոց, զոր ըստ հայերէն լեզուին Մոթաք կոչեն. զի տարեալ զԳրիգորն՝ քահանայապետ կացուցեն իւրեանց աշխարհին»¹¹⁸: Թագաւորի հրովարտակով Հայոց յիշեալ մեծամեծերը ներկայանում են Կեսարիայի Ղեւոնդիոս արքեպիսկոպոսին՝ հիւրընկալութիւն գտնելով ճանապարհին կայսրութեան՝ ի-

117 Ա.Աղ. գլ. ԺԺԱ, § 791-792
 118 Ա.Աղ. գլ. ԺԺԲ, § 795-796

րենց երթուղու վրայ գտնուող, քաղաքներում¹¹⁹: Կեսարիայում նրանք եւս լաւ ընդունելութիւն են գտնում, եւ Ղեւոնդիոսը «Սրբով Աւետարանիւն եղին ի վերայ նորա ձեռս ժողովք եպիսկոպոսացն»¹²⁰: Յետ վերադառնալիս հայկական պատուիրակութիւնը կաթողիկոսի կամ եպիսկոպոսակետի հետ միասին ջերմ հիւրընկալութիւն է գտնում Սեբաստիայում, որտեղ Գրիգոր Լուսաւորիչը կարողանում է բազմաթիւ հաւատակիցներին՝ ամենայն հաւանականութեամբ գերակշիռ մասով հայերի, համոզել իր հետ գալու Մեծ Հայք՝ քահանայութիւն անելու համար: Դրանից յետոյ նրանք վերադառնում են այլեւայլ վայրերում օթեւանելուց յետոյ «ի Հայաստան աշխարհ»¹²¹:

Պատմիչի հետագայ շարադրանքից պարզւում է, որ Գրիգոր Լուսաւորիչը, հասնելով Հայոց սահմանները, լսում է, որ երկրի ութերորդ նշանաւոր մեհեանը, որ գտնուում էր Տարօնի երկրում ու Վահեվանեան անունն էր կրում կամ Վիշապաքաղ Վահագնի կոչւում եւ Հայոց թագաւորներ զոհաբերութեան վայրերից էր Քարքէլեռան սնարին՝ Եփրատ գետի վրայ, Տաւրոս մեծ լեռանը յանդիման, շարունակում է պահպանուել: Պաշտամունքային այդ կենտրոնը, որ առաւելապէս Աշտիշատ էր կոչւում, բաղկացած էր երեք բազիլիկներից՝ առաջինը Վահեվանեան մեհեանն էր, երկրորդը՝ Ոսկեմօր Ոսկեծին աստուածուհունը, եւ բազիլիկ էր կոչւում էր Ոսկեհատ Ոսկեմօր աստուածուհու մեհեան, եւ երրորդը՝ նուիրուած Աստղիկ աստուածուհուն, կոչւում էր Սենեակ Վահագնի¹²²: Գրիգոր Լուսաւորիչն, իր հետ ունենալով Յովհաննէս Մկրտչի եւ նահատակ Աթա-

նագինէսի¹²³ նշխարքները, գալիս է աւերելու երկրի ութերորդ նշանաւոր մեհեանը: Երբ հասնում են մեհեանին հանդիպակաց մի վայր՝ Եփրատ գետի մօտ, եւ Լուսաւորիչը մտադիր էր բարձրանալ մեհեան՝ կործանելու բազիլիկները եւ շինելու վկայատուն, սպիտակ շորիները չեն կարողանում կառքը մի փոքրիկ ձորակի գետակով անցկացնել, իսկ Աստծոյ հրեշտակը նրան յայտնում է, որ Տէրը հաճեցաւ բնակուել այս վայրում: Այստեղ մատուռ են շինում եւ այնուհետեւ Գրիգոր Լուսաւորիչի հրամանով կործանում են մեհեանը ու կառուցում եկեղեցի: Անցկացնելով այստեղ 20 օր՝ Լուսաւորիչը մկրտում է տասնինը բիւր մարդու, կարգում է տարբեր վայրերում քահանաներ եւ այնուհետեւ շարժւում դէպի Բագաւան քաղաքագիւղ¹²⁴:

Տրդատն էլ, լուր ստանալով Գրիգոր Լուսաւորիչի գալստեան մասին, վերցնելով իր հետ Աշխէն տիկնոջը, Խոսրովիդուխտ քրոջը եւ զօրքը, գալիս է Բագաւան եւ շուրջ մէկ ամիս սպասում նրան այնտեղ: Ընդառաջ գալով նրան՝ թագաւորը հանդիպում է Հայոց հայրապետին Եփրատի ափին, եւ Հայոց իշխանները նրան են յանձնում «Ղեւոնդէս արքեպիսկոպոս մետրոպոլիտ Մեգաղէ Կեսարու»-ի պատասխան նամակը¹²⁵: Հաւաքուածները կաթողիկոսի հրամանով մէկ ամիս պաս են պահում եւ աղօթում: Պասն աւարտուելուց յետոյ Գրիգոր Լուսաւորիչը, վերցնելով զօրքը, թագաւորին, Աշխէն թագուհուն, Խոսրովիդուխտ քրոջը եւ բոլոր մեծամեծերին, մտնում է Եփրատ գետը եւ մկրտում

123 Մեգ է հասել ճշտօրէն Աթաճագնէսի անուանակութեան օրը: Նա ողջակիզուել է 303 թուականի յուլիսի 17-ին, հետեւաբար Գրիգոր Լուսաւորչի ուղեորութիւնը Կեսարիա եւ ձեռնարկութիւնը պարզապէս հնարատր չէին մինչեւ այդ թուականը:
124 Ագաթանգեղոս, գլ. ԾԺԴ, § 810-811, գլ. ԾԺԵ, § 812-816
125 Անդ, գլ. ԾԺԶ, § 817-819

119 Անդ, գլ. ԾԺԲ. տե՛ս Պատճէն հրովարտակին, § 797-801, գլ. ԾԺԳ, § 802-804
120 Անդ, գլ. ԾԺԳ, § 805
121 Անդ, գլ. ԾԺԳ, §§ 806-808
122 Անդ, գլ. ԾԺԴ, § 809

նրանց¹²⁶: Այդ օրը մկրտում են տասնհինգ բիւր մարդիկ¹²⁷: Եթէ հաւատանք պատմիչին, ապա հետագայ եօթ օրերի ընթացքում մկրտում են եւս չորս հարիւր բիւր մարդիկ¹²⁸: Սահմանում է եկեղեցական տօն, եւ պատմիչի հաղորդմամբ՝ «Եւ գլխատակս վկայիցն բերելոց ժամադրեաց ի տօն մեծ հռչակել, սնոտեացն պաշտաման ի ժամանակի՝ դիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոց տօնին, Հիւրընկալ դիցն Վանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղուջ պաշտէին յուրախութեան նաւասարդ աւուր: Զի ժողովեալ ի յիշատակ մեծի երանելոյն Յովհաննու եւ սրբոյ վկային Աստուծոյ Աթանագինէի՝ յայնմ աւուր խմբեալ ի նմին յաւանին տօնեսցեն»¹²⁹: Մինչ Հայոց կաթողիկոսը եկեղեցիներ էր շինում թագաւորութեան բոլոր աշխարհներում, գաւառներում, քաղաքներում, աւաններում, շէներում, գիւղերում եւ ագարակներում, Հայոց արքան կարգադրում է եկեղեցուն տալ «չորս չորս հողս երդոյ յամենայն ագարակ տեղիս, հողս երդոյ յամենայն ագարակ տեղիս, ի ծախս յաւանսն եօթն եօթն հող երդոյ՝ ի ծառայութիւն սպասաւորութեան քահանայութեանն, նուէր պտղոյ Տեառն մատուցանէր»¹³⁰: Գրիգորը թագաւորի հաւանութեամբ բազմաթիւ մանուկներ է հաւաքում եւ վարժեցնում դպրութեան արուեստի մէջ նրանցից վարդապետեր կարգելու համար: Մասնաւորապէս հաւաքում են եւ քրիստոնէութեան ոգով դաստիարակում քրմատոններին՝ մի մասին վարժեցնելով ասորական, իսկ միւսներին՝ յունական դպրութեան մէջ¹³¹:

Հայոց կաթողիկոսը, ժամանելով Վարդապատ, ճանապարհին Արտաշատում

126 Անդ, գլ. ԾԺԷ, § 828-831, գլ. ԾԺԸ, § 832
127 Անդ, գլ. ԾԺԸ, § 833
128 Անդ, գլ. ԾԺԹ, § 835
129 Անդ, գլ. ԾԺԹ, § 836
130 Անդ, գլ. ԾԺԹ, § 837
131 Անդ, գլ. ԾԺԹ, § 838, գլ. ԾԻ, § 839-840

եւ ամէնուրեք եկեղեցիներ է շինում եւ քահանաներ կարգում: Եւ պատմիչի խօսքերով՝ «Եւ այսպէս ընդ ամենայն երկիրն Հայոց, ի ծագաց մինչեւ ի ծագս, ձգտէր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն եւ աւետարանութեանն. ի Սատաղացոց քաղաքէն մինչեւ առ աշխարհաւն Խաղտեաց, մինչեւ առ Կաղարջօք, մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչեւ ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից, ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց. եւ յԱմդացոց քաղաքէն մինչեւ առ Մծբին քաղաքաւ, քերէր առ սահմանօքն Ասորոց առ Նոր Շիրական երկրաւն եւ առ Կորդուօք մինչեւ յամուր աշխարհն Մարաց, մինչեւ առ տամբն Մահքը-Տան իշխանին մինչեւ յԱտրպատական ձգտէր տարածանէր զաւետարանութիւնն իւր»¹³²: Քրմերի զաւակներից շատերին հոգեւորական է ձեռնադրում, իսկ տասներկուսին եպիսկոպոսութեան աստիճան շնորհում, որոնք էին՝ «Աղբիանոս անուն, որ ապա կողմանցն Եփրատական գետոյն լինէր վերակացու. երկրորդին՝ Եւտաղիոս, որ ի կողմանս վայրացն Բասնոյ կացեալ լինէր հովիւ. երրորդն՝ Բասոս. չորրորդն՝ Մովսէս. հինգերորդն՝ Եւսեբիոս. վեցերորդն՝ Յովհաննէս. եօթներորդն՝ Ագապէս. ութերորդն՝ Արտիթէս. իններորդն՝ Արսուկէս. տասներորդն՝ Անտիոքէս. մետասներորդն՝ Տիրիկէս. երկուսասներորդն՝ Կիւրակոս: Այսք՝ որ յորդուց քրմացն ընտրեցան լինել եպիսկոպոսք կողմանց կողմանց, աճեցուցանել զքարոզութիւնն: Եւ զայլոցն անուանս թէ եւ կամիցի ոք՝ ոչ կարացցէ շարել»¹³³: Աղբիանոսը, որի տոհմը հետագայում հասաւ կաթողիկոսական աստիճանի, վերակացու է թողնւում «արքունական դրան բանակին»¹³⁴: Մէկ այլ հաղորդմամբ, Գրիգոր

132 Անդ, գլ. ԾԻ, § 841-842
133 Անդ, գլ. ԾԻԱ, § 845
134 Անդ, գլ. ԾԻԱ, § 846

Հուսաւորիչը «բազմացոյց կացոյց տեսուչս եպիսկոպոսս յամենայն գաւառս Հայոց իշխանութեան իւրոյ. եւ որ յաստիճան եպիսկոպոսութեան ձեռնադրեցան ի նմանէ՝ աւելի քան զչորեքհարիւր եպիսկոպոս, որք կացին տեսուչք տեղեաց տեղեաց: Իսկ կարգք երիցանց կամ սարկաւագաց կամ անագնովսաց, եւ որ այլ եւս ի պաշտօն Տեառն կացին՝ անթիւք էին ի բազմութենէն»¹³⁵:

Ագաթանգեղոսի Պատմութեան յունական նորայայտ խմբագրութիւնը (Վարք), որը յայտնաբերեց եւ հրատարակեց Ժ. Գարիտը¹³⁶, հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում վերոյիշեալ եպիսկոպոսների մասին. «[Գրիգորը] շտապում էր Մեծ Հայքի այլ շրջաններում եւս եպիսկոպոսներ նշանակել, Աղբիւնոսին՝ Բագրեւանդում եւ Արածանի գետի մօտ ապրող բնակիչների համար. սա նախկինում քուրմ էր, բայց անցնելով ճշմարիտ հաւատքի եւ աստուածածանութեան կողմը, իր մեծ առաքինութեամբ եւ համեստութեամբ արժանացաւ առաքելական աթոռին: [Գրիգորը], որպէս եպիսկոպոս, Բասէն ուղարկեց Եւթաղիոսին, Բասիոսին՝ Կոտայք, Մովսէսին՝ Եկեղեաց գաւառը եւ Դերջան, Եւսեբիոսին՝ Դարանաղեաց գաւառը, Յովհաննէսին՝ Կարնոյ գաւառը, Ագապիոսին՝ Սպեր, նահանգի իշխան սպարապետի (ἀσπαραπέτη-ն Գ. Գարիտը իրաւացիորէն սրբագրում է ἀσπέτη, ուստի սպարապետի փոխարէն պէտք է լինի ասպետ – Յ. Բ.), Աղբիւնոսին՝ սպարապետական տունը, որը պատկանում էր Մամիկոնեան-

ների տոհմին: Սրանք իրենց նախարարի՝ մեծ զօրավարի եւ սպարապետի հետ միասին միշտ թագաւորի հետ էին, դրա համար էլ սուրբ Գրիգորը հրամայեց, որ Աղբիւնոս միշտ թագաւորի մօտ լինի եւ իր [Գրիգորի] տեղը գրաւի մշտական քարոզչութեան եւ վարդապետութեան, ... կրթութիւն էր ստացել եւ քաջածանօթ էր Աստուածաշունչ գրքերին: Նա Տարօնի եւ Տայքի եպիսկոպոսն էր: Արտիթանին [Գրիգորը] եպիսկոպոս ձեռնադրեց եւ Խորխոռունեաց նախարարի հետ Մաղխաղաց [գաւառն] ուղարկեց, Արսուկանին՝ Շիրակ, Անտիօքոսին՝ Կորդուաց աշխարհը, Տիրիկիոսին՝ Վանանդացոց, Աբեղեանց եւ Գաբեղեանց [երկիրը]: Մի ուրիշին՝ Կիրակոսին, Արշամունեաց գաւառը: Ահա այսպէս ճշմարտութեան խօսքը քաջալերելու ընդունակ բազմաթիւ եպիսկոպոս եւ քրեպիսկոպոս ձեռնադրելով ուղարկեց զանազան վայրեր եւ շրջաններ»¹³⁷: Վարքում ասւում է նաեւ, թէ Գրիգորը «Անգեղտուն, Աղձնիք, Մեծ Ծովք, Փոքր Ծովք, Հաշտեանք, Սիւնիք, Արծն, Մոկաց երկիր եւ Մարդպետական, բոլոր իշխանութիւններում եւ նահանգներում եպիսկոպոսներ նշանակեց եւ ուղարկեց այնտեղ իրենց իշխանների հետ»¹³⁸, իսկ Այրարատում՝ Վաղարշապատում, Արտաշատում եւ Դուինում, մշտական եպիսկոպոսարաններ է կառուցում եւ յիշեալ քաղաքներն իր աթոռին ենթարկում¹³⁹:

Տեղին է նշել, որ ինչպէս երեւում է ուշադիր քննութիւնից, Ագաթանգեղոսի յունարէն թարգմանութեամբ պահպանուած Վարքի մի շարք տեղեկութիւններ պարզապէս հակասական բնոյթի են: Սկսենք այն հանգամանքից, որ Գրիգոր Հուսաւորչի ժամանակակից Աղբիւնոս եպիսկոպոսը շփոթուած է Պապ թագաւորի

135 Անդ, գլ. ԾԻԳ, § 856
 136 G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange, Citta del Vaticano, MCMXLVI: Հայերէն թարգմանությունը տե՛ս Ագաթանգեղոսի պատմութեան յունական նորայայտ խմբագրությունը (Վարք), թարգմանություն յունարէն բնագրից՝ Հ. Բարթիկեանի, առաջաբան ու ծանօթագրություններ՝ Ա. Տէր-Ղեւոնդեանի, «Էջմիածին», 1966, թիւ 7, էջ 46-51, թիւ 8, էջ 79-87

137 Տե՛ս «Էջմիածին», 1966, թիւ 8, էջ 85
 138 Անդ
 139 Անդ

շրջանում հովուապետած Աղբիւնոսի հետ, քանի որ առաջինը թերեւս երբեք չէր կարող արժանանալ առաքելական աթոռին, այլ խօսքով՝ Հայոց կաթողիկոսութեանը: Տարօրինակ է, որ Գրիգոր Հուսաւորչի առնչութեամբ յիշատակում է Դուինը, որն իբրեւ քաղաք կարող էր հանդէս գալ միայն Խոսրով Բ Կոտակի օրերում: Յունարէն Վարքը Ագաթանգեղոսի պատմութեան հայերէն տարբերակի համեմատութեամբ աւել է յիշատակում Աղբիւնոս եպիսկոպոսի անունը, որը դարձաւ Մամիկոնեանների տոհմի եպիսկոպոսը: Տարբերութիւնը բացատրել դժուարանում ենք, քանի որ հարցը լուսաբանող այլ տեղեկութիւններ չեն պահպանուել: Այսուհանդերձ, կամենում ենք ընդգծել, որ եթէ հայկական Ագաթանգեղոսը Աղբիւնոսին է վերագրում արքունական բանակի դրան վերակացութիւնը, ապա յունական Վարքը այդ իրաւունքը վերապահում է Աղբիւնոսին, հանգամանք, որ մի կողմից՝ կարծես ցոյց է տալիս ուշ ժամանակների ազդեցութիւն, իսկ միւս կողմից՝ մտածել տալիս, թէ Աղբիւնոսի անունն է պարզապէս աղաւաղուել ու վերածուել Աղբիւնոսի, իսկ այնուհետեւ միացուել քրմական ընտանիքներից սերած 12 եպիսկոպոսների ցուցակին: Վերջինիս հետ կապուած առաւել քան կասկածելի է Բասիոսին Կոտայք ուղարկելը (եթէ այդ անունը չի առաջացել թարգմանութեան ժամանակ մէկ այլ՝ հաւաստի տեղանուն աղաւաղման արդիւնքում), երբ վերջինս կարող էր ձեւաւորուել միայն Հայաստանի՝ Բիւզանդական կայսրութեան եւ Պարսկաստանի միջեւ 591 թ. բաժանումից յետոյ: Նոյն կերպ՝ Մովսէսին՝ Եկեղեաց գաւառ ու Դերջան, Եւսեբիոսին՝ Դարանաղեաց գաւառ, Յովհաննէսին՝ Կարնոյ գաւառ ուղարկելն է, քանի որ, ինչպէս Ստեփանոս Օրբէլեանն է գրում¹⁴⁰,

Գրիգոր Հուսաւորչի կողմից ստեղծուած եպիսկոպոսութիւնների թիւը 36 էր, եւ հազիւ թէ դրանցից երեքը նշանակուէին Եփրատի վերին հոսանքի աւազանի ոչ մեծ տարածքում: Թւում է, թէ Ագաթանգեղոսի Վարքի բնօրինակում տեղեկութիւններ չեն եղել այն մասին, թէ քրմական ընտանիքներից սերող եպիսկոպոսները որ գաւառներն են ուղարկուել, եւ յունական Վարքը իր վրայ կրում է ուշ ժամանակների իրողութիւնների ազդեցութիւնը:

Որոշ ժամանակ հովուապետելուց յետոյ Գրիգոր Հուսաւորչի հեռանում է անպատ վայրեր, իսկ Տրդատ արքան զօրքի սպարապետ Արտաւազդին, Աշոցքի իշխան Տաճատին եւ արքունի Կարապետ Դատին ուղարկում է Կապադովկիա, որտեղից նրանք բերում են Գրիգորի գաւառներ Վրթանէսին, որն աշխարհական էր, եւ Արիստակէսին, որը, հոգեւորական ձեռնադրուելով, հաստատուել էր տեղի մեծաստաններից մէկում¹⁴¹: Տրդատի հրամանով գալիս է նաեւ Գրիգորը, որը ձգնում էր Դարանաղեաց գաւառում, Մանեայ Այրք կոչուող լեռան քարանձաւներից մէկում: Թագաւորի խնդրանքով նա իր կրտսեր որդի Արիստակէսին ձեռնադրում է եպիսկոպոս:

կարգէ եւ սուրբ Գրիգոր գեկեղեցական դաս, զգաւ եւ պատիւ. եպիսկոպոսաց. եւ հրամայէ բազմել ընդ ինքեան աթոռով եւ ոսկեակար բարձու 36 եպիսկոպոսաց՝ 18 յաջմէ եւ 18 յախեկէ. յաջմէ առաջինն Հարքայ եպիսկոպոսն. եւ յախեկէ առաջինն Բասեանոյն, իսկ զՍիւնից յաջ կողմանն յեթանորդ գաճունն նստուցանէ. եւ ցուցանէ զայս Սամուէլ Կամրջաձորեցի:

Այս հարցի մասին մանրամասն տե՛ս Babken Harutyunyan, Die Diözesen-Gliederung der Armenischen Kirche in der Zeit Gregors des Erleuchters, տե՛ս "Die Christianisierung des Kaukasus", Wien, 2002, էջ 81-94: Տե՛ս նաեւ H. ԱՃՈՍԻ, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, էջ 328-329:

141 Ագաթանգեղոս, գլ. ԾԻԳ, § 858-860, գլ. ԾԻԳ, § 861

140 Ստեփանոս Օրբէլեան, Պատմություն անհայտ գիւմ Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 25. «... ապա

Յայտնի է, որ Ագաթանգեղոսի երկը մեզ անաղարտ չի հասել, իսկ մեր տրամադրութեան տակ եղածը ընդամենը Եղարի խմբագրութիւնն է, ուստի շատ դէպքերում պարզապէս դժուար է ստուգել ասուածի ստուգութիւնը: Սակայն մի բան, մեր կարծիքով, անտարակոյս է. այդ ամէնը հազիւ թէ կարող էր տեղի ունենալ Տրդատի գահակալութեան 15-րդ տարում (հաշուած 288-ից), երբ կայսրութիւնում քրիստոնեաների նկատմամբ հալածանքները գնալով ծաւալուում էին: Նոյնքան անհաւանական է, որ հէնց այդ նոյն տարում թագաւորը կարգադրեր ակերել Արտաշատում Անահիտ աստուածուհու բազիլիկները, որոնք գտնուում էին Երազամոյն կոչուող վայրում, Տիրի մեհեանը եւ այլն, քանի որ դատելով Ագաթանգեղոսի հետագայ եւ Պատմահօր հաղորդումներից, մեզ թուում է, որ Տրդատը թէեւ ազատեց բանտից Գրիգոր Պարթեւին, սակայն մկրտուեց միայն երկու տարի անց, իր գահակալութեան 17-րդ տարում¹⁴², այլ խօսքով՝ միայն քրիստոնեաների նկատմամբ Դրոկղետիանոսի ձեռնարկած հալածանքների դադարից յետոյ:

Ուշադրութիւն է գրաւում մի ոչ պակաս կարեւոր տեղեկութիւն եւս: Թագաւորը՝ Այրարատում մեհեաններն ակերելուց յետոյ, Վաղարշապատ քաղաքից գնում է Դարանաղեաց գաւառ՝ կործանելու համար Բարչամինա սպիտակափառ աստուծու մեհեանը Թորդանում: Հեթանոս քրմերին խաղտեաց կողմերը քշելուց յետոյ ոչնչացնում են Անիի Արամազդ աստծոյ բազիլիկը, յետոյ Անահիտ աստուածուհու մեհեանը Երեզն աւանում, Նանէական մեհեանը՝ Գայլ գետի ափին գտնուող Թիլ աւանում, Մրհական մեհեանը Դերջան գաւառի Բագայառիճ գիւղում եւ այլն: Թուում է, թէ պիտի հակառակը լինէր, այսինքն՝ Հայոց թագաւորը պէտք է, որ մայր

րաքաղաքից սկսելով, մեհեանները ակերելով հասնէր մինչեւ երկրի սահմանը, սակայն կատարուում է հակառակը, եւ թագաւորը սկսում է ակերել մեհեանները աշխարհագրական հակառակ հերթականութեամբ եւ այն էլ իբր Գրիգոր Լուսաւորչի հետ մէկտեղ: Կարծում ենք, որ այս իրողութիւնն անկասկած բացատրութեան կարիք ունի:

Այսպէս՝ Ագաթանգեղոսի այն հաղորդումը, որ Գրիգոր Լուսաւորիչը Հայոց 16 մեծամեծ իշխանների հետ ուղարկուեց Կեսարիա քաղաքը ձեռնադրուելու, չի յստակեցնում, թէ ե՞րբ է տեղի ունեցել դա, սակայն փոխարէնն առաւել քան յստակ է Պատմահօր տեղեկութիւնը, որից օգտուել են նաեւ հետագայ պատմիչները: Ինչպէս արդէն ցոյց ենք տուել, Մովսէս Խորենացին այդ իրադարձութիւնը դնում է Տրդատի թագաւորութեան 17-րդ տարում, այլ խօսքով՝ ըստ մեր քննութեան (հաշուելով 288-ից), 305 թ., եւ ուրեմն՝ դիոկղետիանոսեան հալածանքների վերացումից յետոյ, որը տեղի ունեցաւ նշուած թուականի մայիսին: Եթէ փորձենք խորանալ դէպքերի մէջ, ապա կարող ենք տեսնել, որ հակառակ Ագաթանգեղոսի ուղղակի պնդման՝ բանտարկութեան 15-րդ տարում իւր Վիրապից հանուելուց եւ Հռիփսիմեան կոյսերի գերեզմաններին երեք վկայարաններ կառուցելուց ու յարգանքի տուրքը մատուցելուց յետոյ Գրիգոր Պարթեւը դժուարութիւն էր կրելու Տրդատի հետ միասին անմիջապէս Այրարատում հեթանոսական մեհեանների ոչնչացումը ձեռնարկելիս¹⁴³:

143 Եթէ դա իրօք այդպէս լինէր, ապա ստացում է, որ քրիստոնէութիւնը հաստատապէս պետական կրօն է հռչակուել արդէն 303 թ., ինչը, մեր կարծիքով՝ անհնարին պէտք է լինէր դիոկղետիանոսեան հալածանքների շրջանում: Ուստի, ամենայն հաւանականութեամբ, իր խոզակերպ ճիւղաճիւղութեան բուժման կամ ինչ-որ այլ պատճառով Գրիգոր Պարթեւին բանտից ազատած եւ նրան երախտապարտ Տրդատ թագաւորը թերեւս պէտք է չըտապէր մկրտուել կամ

142 Մովսէս Խորենացի, գիրք Բ, գլ. ՂԱ

Թագաւորը պէտք է երախտապարտ լինէր Գրիգոր Պարթեւին, սակայն միայն այդքանը: Եթէ անգամ նա վճռել էր քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակել, ապա խոհեմօրէն պէտք է սպասէր ակերի յարմար ժամանակի, քանի որ նման ձեռնարկը կարող էր յանգեցնել պատերազմի Մեծ Հայքի թագաւորութեան եւ հօր Հռոմի միջեւ, որն այդ ժամանակ՝ յանձինս Դիոկղետիանոս կայսեր, Հռոմի ամբողջ տարածքում չլսուած հալածանքներ էր իրականացնում քրիստոնեաների նկատմամբ (որոնց թուում էին, որքան էլ զարմանալի լինի, կայսեր կինը եւ դուստրը):

Հետեւաբար, թերեւս միայն 305 թ. մայիսից յետոյ պէտք է դնել Տրդատի եւ Գրիգոր Պարթեւի կողմից մեհեանների ակերումը Այրարատում: Ելնելով այսպիսի հարցադրումից՝ միանգամայն այլ բացատրութիւն կարող է ստանալ մեհեանների ակերումը Մեծ Հայքի թագաւորութեան արեւմտեան սահամանագլխից սկսած դէպի արեւելք ընկած շրջանում: Ծիշտ է, Տրդատը Կեսարիա չգնաց, սակայն պէտք է ենթադրել, որ նա Գրիգոր Պարթեւին ուղեկցեց մինչեւ հայ-հռոմէական սահմանը: Եւ երբ հայ մեծամեծերի պատուիրակութիւնը Գրիգոր Պարթեւի հետ մեկնեց Կեսարիա, թագաւորը վերադարձաւ Վաղարշապատ՝ ճանապարհին ոչնչացնելով Դարանաղի գաւառից սկսած բոլոր մեհեանները: Միայն այսպիսի, քիչ թէ շատ բանական բացատրութիւն կարող է ստանալ այդ անիմաստ աշխարհագրական հերթականութիւնը: Աւելին՝ այս բացատրութեան լոյսով կարելի է տեսնել, որ Գրիգոր Լուսաւորիչը Կեսարիա մեկնեց Դարանաղի վրայով, սակայն վերադարձաւ Սեբաստիայի ճանապարհով եւ երկիր մուտք գործեց ոչ թէ Դարանաղիի, այլ Գայլ գետի (ներկայումս՝ Բելքիթ) աւազանից Եկե-

ղեաց գաւառի վրայով¹⁴⁴: Նման մեկնաբանութեան դէպքում հասկանալի է դառնում Ագաթանգեղոսի մէկ այլ հաղորդումն այն մասին, թէ Գրիգոր Պարթեւը՝ երկիր վերադառնալիս, իմանում է, որ դեռ գոյութիւն ունի Աշտիշատի նշանաւոր ութերորդ մեհեանը, ուստի՝ փոխանակ վերադառնալու Վաղարշապատ, ինչը կարծես միանգամայն տրամաբանական կը լինէր, երթուղին փոխելով՝ շարժուում է Տարօն եւ Աշտիշատի մեհեանը ակերելուց յետոյ միայն գնում թագաւորին ընդառաջ եւ հանդիպում Բագարանում:

Հետաքրքրական են Ագաթանգեղոսի տուեալները մկրտուողների թուի վերաբերեալ: Եթէ Տարօնում Գրիգոր Լուսաւորիչը կանգ առաւ 20 օր եւ մկրտեց 19 բիւր մարդու, որոնց մի մասը իրեն Կեսարիա ուղեկցած մեծամեծ նախարարներն էին, ապա Բագաւանում թագաւորին հանդիպելուց յետոյ նա Եփրատի (իմա՝ Արածանիի) ջրերում մկրտում է թագաւորին, Աշխեն թագուհուն, Խոսրովի դուստր քրոջը, երկրի մեծամեծերին ու բոլոր ազատներին եւ աշխարհաբանակ զօրքը՝ ընդամենը 15 բիւրից ակերի մարդու: Անշուշտ չպէտք է կարծել, որ Ագաթանգեղոսի յաջորդ հաղորդումը, թէ նա այնուհետեւ հետագայ եօթ օրերի ընթացքում մկրտեց «յարքունական բանակէ անտի՝ ընդ այր եւ ընդ կին եւ ընդ մանուկ ակերի քան զչորեքհարիւր բիւր»¹⁴⁵, կրկին վերաբերում է Բա-

144 Մենք ժամանակին կարծում էինք, որ հայոց մեծամեծերի պատուիրակութիւնը Գրիգոր Պարթեւին ձեռնադրելու համար մեկնել է Կեսարիա Երիզա-Նիկոպոլիս-Սեբաստիա-Կեսարիա երթուղով (տե՛ս «Հայաստանի պատմութեան ատլաս», Ա մաս, Երեւան, 2004, էջ 44-45): Սակայն այժմ գտնում ենք, որ այն իրականացուեց Դարանաղի գաւառ-Սեբաստիա-Կեսարիա երթուղով, իսկ վերադարձը՝ Կեսարիա-Սեբաստիա-Նիկոպոլիս-Երիզա երթուղով: Այս դէպքում է հնարատր միայն, որ թագաւորը Դարանաղից սկսած ակերէր բոլոր մեհեանները եւ վերադառնար Վաղարշապատ:

145 Ագաթանգեղոս, գլ. ԾԺԹ, § 835

մկրտել ողջ ժողովրդին: Նրա մէջ առաջինը պէտք է խուէր քաղաքական գործիչը:

գաւանեան մկրտութեանը: Կատարեալ միամտութիւն է կարծել, թէ երկրի ամբողջ բնակչութիւնը, իսկ այդ տուեալների համաձայն երկրի բնակչութիւնը կազմել է աւելի քան 4 միլիոն 340 հազար մարդ, հաւաքել են Բագաւանում եւ մկրտել Եփրատի (իմա՝ Արածանի - Յ. Բ.) ջրերում: Մնացածներին անշուշտ մկրտեցին իրենց բնակավայրերում, եւ ժողովուրդը բռնի կամ խաղաղ միջոցներով քրիստոնեացուեց:

Գրիգոր Լուսաւորչի եւ Տրդատ թագաւորի ջանքերով քրիստոնէութիւնը լայնօրէն տարածուեց Հայաստանում, չնայած շատերը շարունակում էին գաղտնի երկրպագել հեթանոսական աստուածներին: Ազգաթանգեղոսի մեզ հասած երկր տեղեկութեան համաձայն՝ նոր հաւատը տարածուեց ոչ միայն ողջ Հայոց աշխարհում (Սատաղացոց քաղաքից մինչեւ Խաղտեաց աշխարհը եւ Կաղարջքի սահմանները մինչեւ Կասպից աշխարհի սահմաններն ու Փայտակարան արքունի քաղաքը, Ամրացոց քաղաքից մինչեւ Մծբին քաղաքը՝ քերելով Ասորոց սահմանները նոր Շիրական երկրի եւ Կորդուքի շրջանում, Մարաց Ամուր աշխարհում, մինչեւ Մահաբրտուն եւ Ատրպատական), այլեւ մինչեւ Մասքթաց սահմանների աւարտը, մինչեւ Ալանաց դռները¹⁴⁶: Սակայն, ամէն ինչից դատելով՝ քրիստոնէութիւնը հաստատուեց Վիրքում, Աղուանքում, որն այդ ժամանակ նոյնանում է Մասքթաց թագաւորութեանը, Հայաստանի համեմատութեամբ անհամեմատ ուշ, հետեւաբար այս հաստատուած թերեւս սրբագրուել է Ե դարի հայ խմբագիրների կողմից, որոնք արդէն արձանագրում էին իրենց ժամանակների կացութիւնը: Յամենայն դէպս Փաւստոս Բուզանդի եւ Պատմահօր տեղեկութիւնները Գրիգոր Լուսաւորչի թող Գրիգորիսի այդ

կողմերում կատարած անյաջող քարոզչութեան մասին այդ եւն ապացուցում:

Յունական Վարքի տեղեկութիւնների համաձայն՝ 16 հայ մեծամեծների հետ Գրիգոր Լուսաւորչին Կեսարիա եւ ուղեկցել նաեւ Հագերի, Վրաց եւ Աղուանից թագաւորները¹⁴⁷, որը, մեր կարծիքով, պէտք է կասկածելի համարել: Նախ, եթէ Տրդատը կամենար էլ չէր կարող հրաւիրել Հագերի թագաւորին, որը կայսեր հպատակն էր եւ չէր ցանկանայ իր վրայ հրաւիրել վերջինիս գայրոյթը: Մեր համոզմամբ՝ սկզբնական բնագրում, որին հարագատ է մնացել հայկական Ազգաթանգեղոսը, յիշատակութիւն չի եղել նաեւ Վրաց եւ Աղուանից թագաւորների մասին, իսկ նրանց անունները յունարէն թարգմանութեան մէջ յայտնուել են հետագայում քաղաքական ու եկեղեցական նկատառումներով:

Հայոց դարձի մեր կողմից փաստարկուող ժամանակը (305 թ. մայիսից յետոյ ընկած շրջան) հիմնաւորող մի տուեալ է պահպանել, ի միջի այլոց, նաեւ "Narratio de rebus Armeniae" անուանուող, յունարէն թարգմանութեամբ մեզ հասած երկը, որը հայ-քաղկեդոնական սկզբնաղբիւր է¹⁴⁸: Այն յայտնում է. «Ամենաստուածասեր եւ սուրբ Կոստանդինի ժամանակ տեղի ունեցաւ Նիկիայի ժողովը ուղղուած Արիոսի դէմ, Տրդատի ԼԴ (34 տարին) եւ սուրբ Գրիգորի Խոր Վիրապից դուրս գալու 20-րդ տարին, սուրբ Արիստակէսի եպիսկոպոսութեան օրերին, նրա հօր կենդանութեան

147 Ազգաթանգեղոսի պատմութեան յունական անորայայտ խմբագրութիւնը (Վարք), տե՛ս Հ. Բարթիկեան, Հայ-բիզանդական հետազոտութիւններ, հտ. Ա, հայերէն յօդուածներ, Երեւան, 2002, էջ 172
 148 Հայերէն թարգմանութիւնը տե՛ս Հ. Բարթիկեան, "Narratio de rebus Armeniae" յունարէն թարգմանութեամբ մեզ հասած մի հայ քաղկեդոնական սկզբնաղբիւր, «Բանբեր Մատենադարանի», թիւ 6, 1962, էջ 457-470: Տե՛ս նաեւ Հ. Բարթիկեան, Հայ-բիզանդական հետազոտութիւններ, հտ. Ա, էջ 97-110

146 Ա.Ար. Գլ. ԸԴ, § 842

ժամանակ: Այդ ժողովին մասնակցեց նա (Արիստակէսը)»¹⁴⁹: Նիկիայի ժողովը տեղի է ունեցել 325 թ., հետեւաբար "Narratio"-ն Հայոց դարձը դնում է 305 թ.: Անշուշտ ակնյայտ է, որ աղբիւրն այն դնում է Գրիգոր Լուսաւորչի Խոր վիրապից դուրս գալու տարում, ինչպէս եւ Ազգաթանգեղոսը: Կարծում ենք՝ պատճառը նոյն Ազգաթանգեղոսի երկի տարտամ շարադրանքն է Հայոց դարձի մասին, ըստ որի՝ այն կարծես թէ տեղի ունեցաւ հէնց Գրիգորի ելքից անմիջապէս յետոյ: Սակայն, թուում է, թէ "Narratio"-ի հեղինակը յստակ իմացել է քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակելու թուականի մասին եւ դրա հիման վրայ էլ թուագրել է Հայոց դարձը Նիկիայի ժողովից 20 տարի առաջ: Աւելի դժուար է բացատրել Նիկիայի ժողովը Տրդատ Մեծի թագաւորութեան 34-րդ տարով թուագրելը: Այն չի համապատասխանում ո՛չ արքայի առաջին, ո՛չ երկրորդ, եւ ո՛չ էլ երրորդ թագաւորութեան թուականներին: Թողնելով հարցի ամբողջական քննութիւնն ապագային՝ նշենք, որ մեր կարծիքով, այստեղ խնդիրը վերաբերում է Տրդատ Մեծի կողմից Ներսէհ թագաւորի հեռանալուց յետոյ, ամբողջ երկրում թագաւորելու թուականին, որը 293-ն է: Անտարակոյս է, որ "Narratio"-ն ունեցել է տարակոյս է, որ "Narratio"-ն ունեցել է հայերէն բնագիր եւ Տրդատի թագաւորութեան 34-րդ տարուայ համընկնումը Նիկիայի ժողովին ծագում է նրանից: Սակայն այդ դէպքում էլ Տրդատի գահակալութեան սկզբի թուականը՝ ըստ "Narratio"-ի, ընկնում է 291/292 թ., որը, բնականաբար ճիշտ տարեթիւ է: Սակայն չմոռանանք, որ հայերէնում «Գ» եւ «Դ» տառերի յաճախ հանդիպող շփոթի հետեւանքով յունարէնը կարող էր բնագրական իրօք 33 տարին վերածել 34-ի: Իսկ այդ

դէպքում Տրդատի գահակալութեան սկիզբն ընկնում է 292/293 թ.:

Այստեղ միանգամայն նպատակահարմար ենք համարում կրկին անդրադառնալ Ռ. Մանասերեանի տեսակէտին: Աղբիւրների հիման վրայ չկարողանալով բացայայտել քրիստոնէութեան պետական կրօն հռչակման որոշակի թուականը, նա եզրակացնում է, որ 260-298 թթ. բացառում է Մեծ Հայքի թագաւորութեան քրիստոնեացումը: Շարունակելով իր միտքը զարգացնել հեղինակը հակուած է կարծելու, որ դա հնարաւոր չէր 298 թուից անմիջապէս յետոյ, երբ դեռ խախուտ էին Տրդատի դիրքերը Հայաստանում, եւ առաւել եւս, դրանից առաջ, օրինակ 287թ., եթէ ենթադրենք, որ այդ ժամանակ Տրդատն ինչ որ իշխանութիւն պահպանեց Հայաստանի հիւսիս-արեւմուտքում: Սակայն, հեղինակի կարծիքով, դա կը հակասի Ազգաթանգեղոսին, որի վաւերական հաղորդումներում քրիստոնէութեանն ուղղուած առաջին միջոցառումներն ընդգրկեցին Վաղարշապատն ու Արտաշատը¹⁵⁰: Հեղինակն ընդհանուր առմամբ ճիշտ է մեկնաբանում, սակայն միանգամայն անհիմն կարծում է (անշուշտ՝ հետեւելով Ս. Երեմեանին), որ 287 թ. սկսած նա ինչ-ինչ իշխանութիւն է պահպանել միայն Հայաստանի հիւսիսարեւմտեան մասում: Վերը մենք աւելի հաւանական համարեցինք մտածել, թէ արդէն 288 թ. Տրդատը հաստատուել էր Այրարատում ու նրա շրջակայքում՝ թողնելով Ներսէհի իշխանութեան ներքոյ միայն Մեծ Հայքի արեւելեան մի քանի աշխարհներ, հաւանաբար, Ուտիքը, Արցախը, Կասպքը, Մարդապետականը եւ թերեւս նաեւ Պարսկահայքը¹⁵¹: Եթէ դա ընդունելի է, ապա 288 թուական

149 Հ. Բարթիկեան, "Narratio de rebus Armeniae" ... մի հայ քաղկեդոնական սկզբնաղբիւր, էջ 100: Տե՛ս նաեւ Հ. Բարթիկեան, Հայ-բիզանդական հետազոտութիւններ, հտ. Ա, էջ 460

150 Ռ. Մանասերեան, Հայաստանը Արտաշատից մինչեւ Տրդատ Մեծ, էջ 197
 151 Բ. Յ. Յարութիւնեան, Հայաստանի պատմութեան աղյուս, Ա մաս, քարտէզ 38-39

նից յետոյ Վաղարշապատն ու Արտաշատը կարող էին հանդիստ յիշատակուել՝ կապուած Տրդատ Մեծի գործունէութեան հետ: Ռ. Մանասէրեանի կարծիքով՝ ջերմեռանդ հեթանոս եւ մոլի հակաքրիստոնեայ Գալերիոսը 296-298 թթ. պատերազմում պաշտպանելով Տրդատի գահակալական իրաւունքները, վստահ է եղել իր հայ դաշնակցի հաւատարմութեանը Հռոմի կայսրին, հետեւաբար բացառուած է նրա կողմից մինչեւ 298 թուականը քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելը, ինչպէս կատարուած են Ստ. Մալխասեանցը (279 թ.) կամ Ն. Ադոնցը¹⁵²: Յաւելենք, որ նման ենթադրութիւններին անդրադառնալն անգամ անիմաստ է, քանի որ թեկուզ այն փաստը, որ Աթանազիոսը նահատակուեց 303 թ.-ի յուլիսի 17-ին¹⁵³, իսկ Գրիգոր Լուսաւորիչը նրա մասունքները բերեց Հայաստան, բացառուած են դրանք¹⁵⁴: Հեղինակն անդրադառնում է նաեւ Մովսէս Խորենացու ժամանակագրական երկուցուցումներին, որոնց համաձայն Տրդատը թագաւորեց Դիոկղետիանոսի (284-305) գահակալութեան երրորդ տարում, ըստ հեղինակի՝ 287 թ., իսկ Գրիգոր Լուսաւորիչը ձեռնադրուեց Տրդատի իշխանութեան 17-րդ տարում (մէկ այլ տարբերակում՝ 18-րդ): Հեղինակն այդ թուերն ընդունում է քննադատաբար, քանի դեռ դրանց իսկութիւնը չի հաստատուել կոնկրետ փաստերի հետ համադրման միջոցով¹⁵⁵: Միաժամանակ նա մերժում է Յ. Մանանդեանի եւ նրան հետեւողների տեսակէտը, որոնք 298 թ. դնելով Տրդատի

գահակալութիւնը եւ դրան գումարելով 17 տարի՝ ստանում են որպէս դարձի թուական՝ 315-ը: Զուտ տրամաբանօրէն նա միանգամայն իրաւացիօրէն արձանագրում է (ճիշտ է, չքննարկելով Հ. Պ. Անանեանի արդէն կատարուած փաստարկումները), որ նման եզրակացութեան կարելի է գալ միայն Եւսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմութեան» մէջ յիշատակուած Մաքսիմիոս Դայեա կայսեր՝ քրիստոնէութիւն ընդունած հայերի դէմ ձեռնարկած արշաւանքի կապը Մեծ Հայքի հետ բացառելու դէպքում¹⁵⁶:

Յենուելով Պայկուլիի արձանագրութեան վկայութիւնները վրայ՝ կապուած 293 թ. Հայաստանում Նարսէսի (իմա՝ Ներսէս) տիրակալման հետ, Ռ. Մանասէրեանը գտնում է, որ ըստ երեւոյթին, դրանք անհիմն են դարձնում Մովսէս Խորենացու նշած 287 թուականը որպէս Տրդատի գահակալման տարի¹⁵⁷: Հեղինակի կարծիքով՝ Հայաստանի որեւէ մասում Տրդատի իշխելու մասին տեսակէտը պատկանում է չապացուցուած վարկածների բնագաւառին: Հետեւաբար, եզրակացնում է նա, կարելի է համաձայնել Մովսէս Խորենացու այն հաղորդման հետ, թէ Տրդատը թագաւորեց 287 թուականից, միայն եթէ դրա տակ հասկանանք ոչ թէ Հայաստանի վրայ իշխանութեան իրագործումը, այլ այդ տարում տեղի ունեցած թագադրութիւնը, նրան Հայոց թագաւորի տիտղոսի շնորհումը՝ ասենք Կապադովկիայում Հայ Արշակունիների ունեցած կալուածքում¹⁵⁸: Որ Տրդատը կարող էր մի քանի անգամ թագադրուել, եղած փաստերի առկայութեան դէպքում ոչ մի կասկած չի յարուցում: Սակայն, ինչպէս վերը ցոյց տրուեց, իհարկէ ոչ թէ 287, այլ 288 թուականից Տրդատ Մեծը հաւանաբար իշխեց

152 Ռ. Մանասէրեան, Հայաստանը Արտաւազդից մինչեւ Տրդատ Մեծ, էջ 197. տե՛ս նաեւ N. Adontz, Les vestiges d'un ancien culte en Arménie, "Mélanges Franz Cumont", 1936, էջ 513
 153 Հ. Պ. Անանեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնարկները թուականը..., էջ 147-148
 154 Ա.Ա.Պ., էջ 148
 155 Ռ. Մանասէրեան, Հայաստանը Արտաւազդից մինչեւ Տրդատ Մեծ, էջ 197-198

156 Ա.Ա.Պ., էջ 198
 157 Ա.Ա.Պ.
 158 Ա.Ա.Պ.

երկրի մեծ մասում, ուստի թերեւս չի կարելի խօսել նրա ձեւական իշխանութեան մասին: Յատկապէս, եթէ ի նկատի ունենանք, որ Մովսէս Խորենացին օտարերկրեայ տիրապետութիւնը կամ անտերունչ շրջանը համարում է 27 տարի, իսկ մեր հաշուարկներով այն համապատասխանում է 261-288 թուերի միջոցին, ապա 288 թուականից Տրդատ Մեծի Մեծ Հայքի մեծագոյն մասում թագաւորելը կարող է լիովին ընդունելի համարուել:

Ագաթանգեղոսի հաղորդումն այն մասին, թէ Հռիփսիմէն եւ Հռիփսիմեանք Հայաստան են փախչում՝ փրկուելով Դիոկղետիանոսի սիրային հաւակնութիւնից, հեղինակը համարում է (յենուելով ժան-Պիեռ Մահէի ուսումնասիրութեան վրայ¹⁵⁹) Դիոկղետիանոսի հալածական քաղաքականութեան արտացոլում¹⁶⁰: Անշուշտ դրանում Դիոկղետիանոսի հալածանքների քաղաքականութեան արտացոլումը պէտք է տեսնել, որովհետեւ, ինչպէս վերը ցոյց տրուեց, Հռիփսիմեանց հանդէպ հալածանքներ սկսուեցին ոչ թէ գալու հալածանքներ 301 թ., այլ միայն 303 թ. փետրուարի 23-ից յետոյ նրանք ենթարկուեցին հալածանքների Տրդատի կողմից, անտարակոյս Դիոկղետիանոսի ճնշման ներքոյ:

287 թ. գումարելով 17 տարիներ հեղինակն ստանում է 304 թիւը, այսինքն՝ ստացուած տարեթիւն ըստ նրա ընկնում է 303-ից 305 թթ. Հռոմէական կայսրութիւնում քրիստոնեաների դէմ ծաւալուած զանգուածային հալածանքների ժամանակահատուածի ուղիղ մէջտեղը¹⁶¹: Սխալ հաշուարկները նրան բերում են այն

մտքին, որ կայսրութիւնում քրիստոնեաների դէմ հալածանքների աւելի քան երկամեայ շրջանում Տրդատի հնարաւոր հակաքրիստոնեայ միջոցառումները պէտք է վկայէին իր հովանաւորներ Դիոկղետիանոսից եւ Գալերիոսից այդ ժամանակ նրա կախուածութեան զգալի աստիճանի մասին եւ միաժամանակ ցոյց տային՝ անուղղակիօրէն, սասանեանամէտ աւագանու ընդդիմութեան ուժը¹⁶²: Ասենք, որ սկզբնաղբերների սխալ ընկալումը ծնել է սխալ եզրակացութիւն: 288 թուից երկրորդ անգամ թագաւորած Տրդատի 17-րդ տարին ոչ թէ 304 թուականն է, այլ 305-ը: Հետեւաբար հալածանքների ողջ շրջանում Տրդատն ամբողջութեամբ պաշտպանել էր Դիոկղետիանոսի քաղաքականութիւնը եւ առանձնապէս տեղի չէր տուել սասանեանամետ աւագանուն, որը Մծբինի 298 թուականի 40-ամեայ հաշտութիւնից յետոյ, ըստ ամենայնի, ընկճուած էր: Արդէն այն հանգամանքը, որ 303 թ. բանտից ազատելով Գրիգոր Պարթեւին, Տրդատն, ըստ մեր ենթադրութեան, հաւանաբար չչտապեց քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակել, եւ դրան ձեռնամուխ եղաւ միայն 305 թ., երբ հալածանքները դադարեցին կամ թուլացան, ցոյց է տալիս, որ Հայոց թագաւորը բոլորովին միտք չունէր ընդհարուել Դիոկղետիանոսի եւ կայսրութեան հետ: Հետեւաբար, դժուար է համաձայնել հեղինակի հետ այն հարցում, թէ անկարելի է լիովին բացառել Տրդատի կողմից հակահռոմէական, հակակայսերական քայլի դիմելու հնարաւորութիւնը Հէնց 304-305 թթ. ժամանակահատուածում¹⁶³: Կայսեր ճնշման ներքոյ քրիստոնեաների նկատմամբ հալածանքներ կիրառուեցին եւ այն էլ ոչ թէ երկրի քրիստոնեաների, այլ Հռիփսիմեան կոյսերի եւ նրանց ընկերակցողների նկատմամբ, որի

159 Ժան-Պիեռ Մահէ, Ագաթանգեղոսի «Պատմութիւնը» եւ յունահռոմէական վէպը, «ՊԲՀ», 1997, թիւ 1, էջ 163-164
 160 Ռ. Մանասէրեան, Հայաստանը Արտաւազդից մինչեւ Տրդատ Մեծ, էջ 199
 161 Ա.Ա.Պ.

162 Ա.Ա.Պ.
 163 Ա.Ա.Պ.

Թիւնը մասնակիցների բերուած թուով (30 հազար) հազիւ թէ հնարաւոր էր անգամ 314 թ.: Միաժամանակ արձանագրենք, որ այս արտաքուստ կուռ կառոյցի շատ կարեւոր խոցելի կողմն է մնում Եւսեբիոսի տեղեկութիւնը, ըստ որի՝ Հռոմի դաշնակից հայերը (թէկուզ եւ չի ասուում՝ Մեծ Հայքի) քրիստոնէութիւն ընդունելու համար 311-ին յարձակման են ենթարկուել Մաքսիմիանոս Դայեա կայսեր զօրքերի կողմից, որոնք չարաչար պարտութիւն են կրել:

Հ. Պ. Անանեանի մեկնաբանութեամբ՝ ս. Գրիգորի յունարէն նորագիւտ վարքի մէջ կայ մի կարեւոր յիշատակութիւն, որը կարող է վճռական դեր կատարել Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը յստակեցնելու հարցում: Յունական Ագաթանգեղոսում ասուում է, որ Կեսարիայում Հայոց քահանայապետի ձեռնադրութեան առիթով 20 եպիսկոպոսների ժողով է գումարուել: Ըստ բնագրի՝ «Արքեպիսկոպոս Ղեւոնդիոսը ոմանց ուղարկեց մինչեւ Բիւթանիայի Քաղկեդոն [քաղաքը] իրեն ենթակայ եպիսկոպոսներին եւ մետրոպոլիտներին հրաւիրելու. երբ եպիսկոպոսներն ու մետրոպոլիտները հաւաքուեցին՝ թուով քսան հոգի, նրանց տրուեց Տրդատ թագաւորի նամակը»¹⁶⁸: Հ. Պ. Անանեանի կարծիքով, նման հանդիսաւորութիւնը եպիսկոպոսական ձեռնադրութեան համար զարմանալի չպէտք է դիտուի, քանի որ մի ամբողջ թագաւորութիւն իր ողջ ժողովրդով դառնում էր քրիստոնեայ, իսկ Կեսարիայից Հայաստան ուղարկուած առաքեալ Գրիգոր Պարթեւը վերադառնում էր հարազատ քաղաքը՝ հայոց 16 իշխանների եւ 30 հազար հեծեալների ուղեկցութեամբ, բազմած արքայական կառքի մէջ¹⁶⁹:

168 Ագաթանգեղոսի պատմութեան յունական նորայայտ խմբագրութիւնը (Վարք), տե՛ս Հ. Բարթիկեան, Հայ-բիզանդական հետազոտութիւններ, հտ. Ա, 133, էջ 175
169 Հ. Պ. Անանեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը ..., էջ 151

Շարունակելով իր տեսակէտը զարգացնել՝ Հ. Պ. Անանեանը գտնում է, որ յիշեալ 20 եպիսկոպոսները չհաւաքուեցին լոկ ձեռնադրութեան համար, հետեւաբար պէտք է որ Կեսարիայում եկեղեցական ժողով գումարուած լինէր: Որպէս ասուածի կուռնան՝ նա բերում է յունարէն վարքի մէջ պահպանուած յիշատակութիւնը, թէ ս. Գրիգորը Սիւնհոգոսի թուղթը տարաւ Սեբաստիայի Պետրոս եպիսկոպոսին: Հետեւում է հարցադրումը. եղե՞լ է արդեօք կամ յիշու՞մ է պատմութեան մէջ Կեսարիայում կայացած եկեղեցական ժողով, եւ ե՞րբ է այն տեղի ունեցել¹⁷⁰: Եւ պարզուում է, որ Կեսարիայում, իրօք, եկեղեցական ժողով գումարուել է¹⁷¹ եւ այդ ժողովի ընդունած կանոններում էլ ասուում է. «...ժողովեալ ի Կեսարիա եպիսկոպոսք քսան»¹⁷²: Աւելին, «Կանոնագիրք Հայոց»-ում պահպանուած մէկ այլ՝ Նէոկեսարիայի ժողովի կանոններում ասուած է նաեւ, որ այն տեղի է ունեցել Կեսարիայի (նաեւ՝ Անկիւրայի) ժողովից յետոյ, սակայն մինչեւ Նիկիայի նշանաւոր ժողովը. «Այս կանոնք յետոյ եղան քան որ յԱնկիւրայն կամ ի Կեսարիայն, բայց քան զՆիկիայն յառաջագոյն»¹⁷³: Կեսարիայի ժողովի կանոնները պահպանուել են միայն հայերէն եւ ասորերէն թարգմանութիւններով, ինչն ուսումնասիրողներին ենթադրել է տուել, թէ դրանք կեղծ են¹⁷⁴: Սակայն, դեռեւս 1938 թ. բելգիացի պատմաբան Ժ. Լըբոնը հիմնաւոր կերպով ցոյց տուեց, որ Անկիւրիայի եւ Նեոկեսարիայի ժողովների միջեւ ընկած շրջանում իրօք գումարուել է Կեսարիայի ժողովը¹⁷⁵:

170 Ան, էջ 152
171 Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, աշխատասիրութեամբ՝ Վ. Յակոբեանի, Երեւան, 1964, էջ 168-176
172 Ան, էջ 169
173 Ան, էջ 179
174 Հ. Պ. Անանեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը..., էջ 152-153

սարիայի եկեղեցական ժողովը¹⁷⁵: Ուշագրուութիւն է գրաւում նաեւ այն փաստը, որ Նիկիայի ժողովի կանոնական որոշումների միայն հայերէն թարգմանութեան մէջ է պահպանուել Կեսարիայի ժողովին մասնակցած եպիսկոպոսների հետեւեալ անուանացանկը՝ «Եւ որք ի Կեսարիայն ժողովեցան» վերտառութեամբ. «Եւստաղիոս, Սակտոս, Ղուպոս, Վաղենտինոս, Ղեւոնդիոս, Նարկիսոս, Պասիղես, Դակասիոս, Գրիգորիոս, Աղփքոս, Գոգիանոս, Գերմանոս, Հերակլիոս, Գերանտիոս, Ամփիոպն, Ստեփանոս, Սաեղոս, Սաղամինէոս, Էրիթրիոս, Ղեւոնտիոս»¹⁷⁶: Ինչպէս իրաւացիօրէն նկատել է Հ. Պ. Անանեանը, անուանացանկը տրուած է առանց եպիսկոպոսների աթոռանիստ քաղաքների յիշատակութեան, իսկ Ժ. Լըբոնը եզրակացրել է, որ յիշեալ ցանկը վերաբերում է Կեսարիայի ժողովին մասնակցած եպիսկոպոսների, ըստ որում այն հանուած է իր տեղից եւ գետեղուած Նիկիայի ժողովին մասնակցած եպիսկոպոսների անուանացանկում՝ նպատակ ունենալով եպիսկոպոսների թիւը հասցնել 318-ի, սակայն անուաններն ընդամենը 223 են: Մեր կողմից անուաններն ընդամենը մէջբերեցինք նախ նշենք, որ այս ցուցակի մէջբերելը Նիկիայի ժողովի որոշումները ստորագրածների ցանկում իրօք անմաստ է, քանի որ Կեսարիայի ժողովի մասնակիցներից երկուսը կրում են Ղեւոնտիոս անունը, հետեւաբար նրանցից մէկը Կեսարիայի Ղեւոնտիոսն է, որն արդէն յիշատակուած է Գամիւրքի հատուածում. «Ղեւոնտիոս ի Կեսարէ»¹⁷⁷: Թւում է, թէ Կեսարիայի ժո-

175 J. Lebon, Sur un concile de Césarée, "Muséon", 51 (1938) էջ 89-132
176 Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, էջ 150: Վերջին անունից յետոյ գրուած է Նիկիայի ժողովին վերաբերող՝ «Այս են անեմայն ՅԺԸ» արտայայտութիւնը:
177 Ան, էջ 140

ղովը գումարողը Կեսարիայի Ղեւոնտիոսն է, սակայն նրա անունը ցուցակում ընդամենը հինգերորդն է կամ ամենավերջինը: Թէ ո՞վ է եղել Կեսարիայի ժողովի մասնակիցներից առաջինը յիշատակուած Եւստաղիոսը, յայտնի չէ, սակայն, ամէն ինչից դատելով, նա եղել է ժողովի ղեկավարը, հետեւաբար մինչեւ վերջ համոզիչ չեն հնչում Հ. Պ. Անանեանի այն խօսքերը, թէ՛ «Այդ ժողովքին կանոնները եւ անոր մասնակցող եպիսկոպոսներու անունները պահուած են հայ կանոնագրքերու մէջ. իսկ հոն տեղի ունեցած՝ ս. Գրիգորի ձեռնադրութեան պատմութիւնն ալ պահուած է յունարէն նորագիւտ վարքին մէջ, որ նախնական հայերէն Ագաթանգեղոսի թարգմանութիւնն է. ուստի բոլորն ալ հայկական աղբիւրներու մէջ մնացած»¹⁷⁸:

Որ Ժ. Լըբոնը ս. Գրիգորի յունարէն վարքի հրատարակութիւնից տասնմէկ տարի առաջ կարողացել էր ցոյց տալ, թէ Կեսարիայում իրօք ժողով է գումարուել, այն էլ՝ Անկիւրիայի (314) եւ Նէոկեսարիայի (319) ժողովների միջեւ ընկած շրջանում, ոչ մի կասկած գոնէ այսօր չի յարուցում, քանի որ այդ տեղեկութիւնները ժողովի կանոնների հետ միասին պահպանել է «Կանոնագիրք Հայոց»-ը: Աւելին՝ հեղինակը եկել է այն եզրակացութեան, որ Կեսարիայի ժողովը տեղի է ունեցել 314-ի ամռանը¹⁷⁹: Ս. Գրիգորի նորագիւտ վարքի հրատարակիչ պրոֆ. Ժ. Գարիտը ծանօթագրութիւնների մէջ ցոյց է տալիս, որ վարքում յիշատակուած Կեսարիայի ժողովի փաստը հաստատում է Ժ. Լըբոնի ենթադրութիւնը: Հիմնաւորումն այն է, որ երկու տեղում էլ ժողովի պարագաները նոյնն են: Ս. Գրիգորի վարքը յիշում է քսան եպիսկոպոսների մասին եւ 20 եպիսկոպոս են Կեսարիայի ժողովի մասնակիցները:

178 Հ. Պ. Անանեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը..., էջ 155
179 J. Lebon, Sur un concile de Césarée, էջ 128

Համաձայն յունարէն նորագիւտ վարքի՝ Սեբաստիայի Պետրոս եպիսկոպոսը մնում է Սեբաստիայում եւ չի մասնակցում Կեսարիայի ժողովին, որն ապացուցուում է Կեսարիայի ժողովի մասնակիցների ցուցակում Պետրոս եպիսկոպոսի անունն բացակայութեամբ: Հետեւում է նոր եզրակացութիւնը, որ Ժ. Լըբոնը Կեսարիայի ժողովը դնում է Անկիւրիայի ժողովից անմիջապէս յետոյ, 314-ի ամառը, եւ որ Ս. Գրիգորը Կեսարիա է գնում Կոստանդիանոս կայսեր կողմից 313 թ. Միլանի էզիկտով քրիստոնէութիւնը հաւասարագոր կրօն ճանաչելուց յետոյ¹⁸⁰: Եւ քանի որ Կեսարիայի ժողովը յաջորդել է Անկիւրիայի 314 թուականի ժողովին, Ժ. Լըբոնը տրամաբանական է գտնում Կեսարիայի ժողովի հրահրումը նոյն թուականի ամռանը:

Բելգիացի հետազօտողը կատարել է նաեւ Կեսարիայի ժողովի մասնակիցների անուանացանկի քննութիւնը, քանի որ քսան եպիսկոպոսների աթոռանիստերի յիշատակութիւնը չի պահպանուել: Նա ցոյց է տալիս, որ ըստ Անկիւրիայի ժողովի մասնակիցների ցուցակի հետ այդ անուանացանկի համեմատութեան՝ Վիտաղիոսը Անտիոքի եպիսկոպոսն է, Ղուպոսը՝ Տարսոնի, Նարկիսոսը՝ Ներոնիատի, Բասիլիոսը՝ Ամասիայի, եւ Հերակլէսը՝ Զելայի: Սրան հետեւում է յաջորդ հետեւութիւնը, որ Անկիւրիայի ժողովի մասնակիցները վերադարձին, անցնելով Կեսարիայով, որով անցնում էր գլխաւոր ճանապարհը հարաւ եւ արեւելք, ըստ երեւոյթին կանգ են առել այնտեղ՝ մի քանի կանոններ հաստատելու համար, հետեւաբար դա կարող էր լինել նոյն 314 թուականի ամռանը: Հ. Պ. Անանեանին նման ենթադրութիւնը միանգամայն համոզիչ է թուում՝ ելնելով միւս մասնակիցների սեփական քննութիւնից: Նրա հետազօտութեամբ պարզուում է, որ Անկիւ-

րիայի ժողովի մասնակիցներից 11-ը եղել են Կեսարիայի ժողովում եւ դրանք եղել են կայսրութեան արեւելեան ու հարաւային պրովինցիաների եպիսկոպոսներ: Հեղինակը նաեւ աւելի հաւանական է գտնում, որ Կեսարիայի ժողովը տեղի ունեցած լինի 314-ի աշնանը¹⁸¹: Այս կապակցութեամբ նա յենում է Հեֆելէի կողմից Անկիւրիայի ժողովի տարեթիւը ճշտելու հետ կապուած այն մտքի վրայ, որ, նոյն ժողովի վեցերորդ կանոնի համաձայն, ժողովը գումարուել է առաքելական կանոնների համաձայն, իսկ ըստ դրանցից մէկի (իմա՝ Բ Առաքելականք կամ Կղեմայ կանոնք, յօդուած ԼԵ)՝ եպիսկոպոսները պէտք է ամէն տարի Զատիկի չորրորդ կիրակի օրը եւ աշնանը ժողով գումարէին¹⁸²: Հեֆելէն եզրակացնում է, որ Անկիւրիայի ժողովը գումարուել է քրիստոնեաների հալածանքներն անմիջապէս դադարեցնելուց յետոյ, 314 թ. Զատիկի չորրորդ կիրակի օրը, հետեւաբար, ըստ Հ. Պ. Անանեանի, Կեսարիայի ժողովն էլ եղել է 314 թ. աշնանը¹⁸³: Անտարակոյս շահեկան է հեղինակի քննութիւնը՝ կապուած Կեսարիայի ժողովի մասնակիցների աթոռանիստերի ճշտման հետ՝ համաձայն Անկիւրիայի եւ Նիկիայի ժողովների տուեալների: Ըստ հեղինակի համադրական տուեալների՝ Կեսարիայի ժողովի մասնակիցներից Եւտաղիոսն Անտիոքի եպիսկոպոսն էր (313-319), Սակտոսը (գուցէ՞ Մարկեղոս - Հ. Պ. Ա.)՝ Անկիւրիայի, Ղուպոսը՝ Տարսոնի, Ղեւոնտիոսը՝ Կեսարիայի, Նարկիսոսը՝ Ներոնիատայի (Կիլիկիա), Պասիղեւսը՝ Ամասիայի, Գրիգորիոսը՝ Բիւրիտոնի՞ (Փիւնիկիա), Դաւա-

181 Հ. Պ. Անանեան, *Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնարկային թուականը...*, էջ 157
 182 *Կանոնագիրք Հայաստանեայց Եկեղեցւոյ*, հտ. Ա, Կանոնք Առաքելականք, Հրատ. Հ. Հ. Կետիկեան, Վեներաբիլ-Ս. Ղազար, 1941, էջ 57: Տե՛ս նաեւ *Կանոնագիրք Հայոց*, հտ. Ա, էջ 84-85:
 183 Հ. Պ. Անանեան, *Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնարկային թուականը...*, էջ 157-158

180 G. Garitte, *Documents pour l'étude du livre d'Agathange*, էջ 131

սիրոսը՝ Տաւոսի (Գաղատիա), Աղիբրոսը (իմա՝ Աղիբրոս Ապամեայից - Հ. Պ. Ա.)՝ Կոյլեսիւրիայից, Գոգիանոսը (իմա՝ Գորգոնիոս ի Կինոնէ - Հ. Պ. Ա.)՝ Գաղատիայից, Գերմանոսը՝ Նէպոլիսի (Պաղեստին), Հերակլէոսը՝ Զելայի, Գերանտիոսը՝ Լարոսի (Կոյլեսիւրիայից), Ամփիոզը՝ Եպիփանիայի (Կիլիկիա), Ստեփանոսը՝ Բարտանիայի (Իսաւրիայից), Սաէտոսը՝ Եգեսիայի (313-324), Սաղամիսէոսը՝ Գերմանիկէի (Կոյլեսիւրիա), Երիթրիոսը՝ Կողովնայի (Կապադովկիայից), Ղեւոնտիոսը (գուցէ՞ Ղոնկինոս - Հ. Պ. Ա.)՝ Նէոկեսարիայի (Պողեմոնական Պոնտոսից): Սրանցից ցուցակում 1, 2, 3, 5, 6, 7, 12, 13, 15, 18, 20 տեղերն զբաղեցնողները¹⁸⁴ մասնակցել են Անկիւրիայի ժողովին, եւ նրա անուանացանկից էլ քաղուած են եպիսկոպոսների աթոռանիստ քաղաքների անունները: Մնացածները յիշեալների հետ միասին մասնակցել են Նիկիայի ժողովին, որի անուանացանկի համաձայն էլ ստացուել են աթոռանիստերը: Անտիոքի Վիտաղիոս եպիսկոպոսը մասնակցել է միայն Անկիւրիայի ժողովին, մասնակիցների ցուցակում 17-րդն է, չի մասնակցել ոչ Անկիւրիայի եւ ոչ էլ Նիկիայի ժողովներին (երկրորդի ժամանակ նա արժանացել էր ժողովին, Հ. Պ. Անանեանի կարծիքով, Կեսարիայի ժողովին մասնակցել է, քանի որ Հայաստանի դարձը եւ կաթողիկոսի կամ Հայրատանի ձեռնադրութիւնը նրան, անշուշտ, պետի ձեռնադրութիւնը նրան, անշուշտ, հետաքրքրել է¹⁸⁵:

Հեղինակի յաջորդ եզրակացութիւնն այն է, որ Կեսարիայի ժողովին մասնակցել են գլխաւորապէս այն պրովինցիաները, որոնք կամ գաւառների եպիսկոպոսները, որոնք

չըջապատուում են Կապադովկիան. Գաղատիա, Դիոսպոնտոս, Պողեմոնական Պոնտոս, Կիլիկիա, Իսաւրիա, Սիրիա եւ Միջագետք, ինչպէս նաեւ հեռաւոր Պաղեստին¹⁸⁶: Տողատակում արդէն նշեցինք, որ Հ. Պ. Անանեանին չի յաջողուել պարզել Վաղենտինոսի աթոռանիստը, այժմ աւելացնենք, որ չի կարողանում վստահելի բացատրութիւն գտնել Գրիգորիոս եպիսկոպոսի ժողովին մասնակցելու համար, քանի որ հեղինակը հակուած է նրան նոյնացնելու Բիւրիտոնի կամ Բեյրութի եպիսկոպոսի հետ: Քննարկելով եպիսկոպոսների յիշատակութեան կամ ստորագրութեան հերթականութիւնը՝ հեղինակը գրում է, որ այն պատշաճում է նրանց աթոռների պատուի կարգին, որտեղ Անտիոքն առաջինն է, Անկիւրիան՝ երկրորդը, Տարսոնը՝ երրորդը, չորրորդն անձանթ է, իսկ Կեսարիան՝ հինգերորդը, քանի որ նախորդների համեմատ Կեսարիայի աթոռն աւելի նոր էր¹⁸⁷:

Հ. Պ. Անանեանը Կեսարիայի ժողովի հանդիսաւորութիւնը բացատրում է Հայաստանի դարձի եւ նրա եպիսկոպոսի ձեռնադրութեան կարեւորութեամբ, ինչպէս նաեւ՝ որ Հայոց դարձով ոչ միայն Կեսարիայի աթոռն էր հետաքրքրուած, այլեւ արեւելեան պրովինցիաների եպիսկոպոսները եւ որ Գրիգոր Լուսաւորչին՝ իմանալով այդ մասին, հէնց այդ ժամանակ կամեցաւ Կեսարիա դնալ ձեռնադրութիւն ստանալու համար: Հեղինակը հակուած է կարծելու, որ Կեսարիայի ժողովը, որտեղ հաւաքուել էր Արեւելքի (հռոմէական) եպիսկոպոսների մեծ մասը, իբր ցոյց է տալիս, թէ նրանք Կեսարիա էին հաւաքուել

186 Պաղեստինի եպիսկոպոսի մասնակցութիւնը Կեսարիայի ժողովին Հ. Պ. Անանեանը հակուած է բացատրելու նրա՝ Անկիւրիայի ժողովին մասնակցութեամբ, որը հազի թէ ուժեղ կոտան է, քանի որ այդ սկզբունքով տեսակաւորէն ուրիշներն էլ կարող էին մասնակցել:
 187 Հ. Պ. Անանեան, *Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնարկային թուականը...*, էջ 160-161

184 Կեսարիայի ժողովի մասնակիցներից չորրորդի՝ Վաղենտինոսի անունը մեզք պարզապէս մէջ չբերեցինք, քանի որ Հ. Պ. Անանեանը չի կարողացել պարզել նրա աթոռանիստը:
 185 Հ. Պ. Անանեան, *Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնարկային թուականը...*, էջ 158-160

ոչ միայն լուկ ձեռնադրութեան արարողութիւնը կատարելու համար, այլ նաեւ իրաւական սահմաններ որոշելու նպատակով¹⁸⁸: Մեր կողմից անմիջապէս նշենք, որ Կեսարիայի ժողովի կանոնները նման հեռուն զնացող եզրակացութեան համար հական փաստեր չեն պարունակում: Ժողովի մասնակիցները կանոններ են սահմանել կանանց կատարած ինչ-ինչ անօրինութիւնների համար¹⁸⁹: Հետեւաբար այն իրողութիւնը, որ Հայոց հայրապետները, ինչպէս հաւաստում է Փաւստոս Բուզանդը, ձեռնադրուել են Կեսարիայի մետրոպոլիտների կողմից, հազիւ թէ կարելի է կապել Կեսարիայի ժողովի ընդունած որոշումների հետ: Ինչպէս յայտնի է, մինչեւ Գրիգոր Լուսաւորիչը Հայաստանում եղել են եպիսկոպոսներ, որոնցից Մեհրուժանին յիշատակում են նաեւ յունահռոմէական աղբիւրները: Պատմութիւնը ոչինչ չի ասում այն մասին, թէ Մեծ Հայքում մէկ եպիսկոպոս է եղել, թէ երկիրն ունեցել է մի քանի եպիսկոպոսներ: Ենթադրաբար առաւել հաւանականն այն է, որ Հայաստանն ունեցել է ընդամէնը մի եպիսկոպոս, իսկ այդ դէպքում նոր եպիսկոպոսի ձեռնադրութիւնը երկրի ներսում պարզապէս հնարաւոր չէր, քանի որ եպիսկոպոսի ձեռնադրութիւնը կարող էր կատարուել, որպէս կանոն, երեք, իսկ որոշ դէպքերում՝ երկու եպիսկոպոսի մասնակցութեամբ: Դրանից ինքնըստինքեան բխում է, որ Մեծ Հայքի եպիսկոպոսը կամայ թէ ակամայ, պէտք է ձեռնադրուէր այլ երկրում, եւ պատմականօրէն այնպէս ստացուեց, որ այդ երկիրը դարձաւ Կապադոկիան իր Կեսարիայի մետրոպոլիտով: Այսինքն՝ սրբագործուել էր մի կարգ, անկախ այն հանգամանքից, թէ դա ինչքանով էր համապատասխանում Մեծ Հայքի թագաւորութեան քաղաքական շահերին, երբ ար-

դէն երկար ժամանակ Հայոց եպիսկոպոսները ձեռնադրութիւն էին ստանում Կեսարիայի եպիսկոպոսների կամ մետրոպոլիտների կողմից: Յայտնի է, որ քրիստոնէական Եկեղեցին պահպանողական աւանդոյթների յայտնի կրող է, ուստի, հաշուի առնելով, որ Մեծ Հայքում, եթէ անգամ մէկ եպիսկոպոս էլ կար, Գրիգոր Պարթեւին ձեռնադրելը հնարաւոր չէր, եւ աւանդոյթի ուժով նա պէտք է միւսների պէս զնար ձեռնադրուելու Կեսարիա:

Ճիշտ է արդեօք Հ. Պ. Անանեանն իր եզրակացութիւնների մէջ: Խորապէս յարգելով հայագիտութեան անխոնջ երախտաւորի վաստակը, այնուամենայնիւ, ստիպուած ենք արձանագրելու, որ նրա, ըստ էութեան Յ. Մանանդեանից ժառանգած տեսութիւնը դժուար է լիովին ընդունելի համարել մի շարք պատճառներով: Կասկածի ենթակայ չէ, որ հայկական Ագաթանգեղոսը մեզ է հասել բաւականին փոփոխութիւններով, հետեւաբար դժուար է շատ լուրջ դատողութիւններ անել նրա սկզբնական, անշուշտ յունարէնով գրուած բնագրի մասին: Սակայն, ինչպէս ընդունուած է դասական հայագետների աշխատանքներում, էական, այդ թւում՝ լուրջ խմբագրական փոփոխութիւններով է մեզ հասել նաեւ յունական Վարքի տարբերակը, որն ինքը սերում է մեզ չհասած մի հայկական բնագրից: Մեզ չի կարող բաւարարել այն հանգամանքը, որ Հ. Պ. Անանեանի մօտ հեշտութեամբ մոռացուած է մի իրողութիւն, որ հայկական Ագաթանգեղոսը Գրիգոր Պարթեւի բանտարկութեան գոնէ 13-րդ տարին փաստօրէն ղնում է Դիոկղետիանոս կայսեր օրօք: Հարց է ծագում, իսկ ի՞նչն էր խանգարում Ագաթանգեղոսին, եթէ իրականութիւնն այլ էր, Դիոկղետիանոս կայսեր փոխարէն յիշատակելու քրիստոնեաներին հալածող մէկ այլ կայսեր անունը: Անշուշտ, ոչինչ: Ընդ որում, անգամ յունական Վարքը Գրիգոր Պարթեւի ձեռքակալութեան տա-

188 Աճ, էջ 162-163
189 Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, էջ 169-176

րինների խնդրում, ինչպէս նաեւ հռիփսիմեան կոյսերի նահատակութեան հետ կապուած Դիոկղետիանոսի հարցում ոչնչով չի հակասում հայկական Ագաթանգեղոսին: Կեսարիայի ժողովի մասնակիցների ցուցակի քննութիւնը, որ, պէտք է խոստովանել, յաջողութեամբ կատարել է Հ. Պ. Անանեանը, ինչպէս վերը տեսանք, ցոյց է տալիս, որ դրան մասնակցել են կայսրութեան արեւելեան եւ Փոքր Ասիայից դէպի հարաւ եւ հարաւ-արեւելք ընկած պրովինցիաների եպիսկոպոսները, սակայն յունական Վարքը յայտնում է եւ, կարծում ենք, որ դա պէտք է հաւաստի լինի, թէ արքեպիսկոպոս Ղեոնդիոսը մարդիկ է ուղարկել անգամ մինչեւ Բիւթանիայի Քաղկեդոն քաղաքը, այլ խօսքով հրաւիրել է փոքրասիական ողջ թերակղզու եպիսկոպոսներին ու մետրոպոլիտներին: Անշուշտ ճիշտ չէ յունական Ագաթանգեղոսի խմբագիրը, թէ Ղեոնդիոսը մարդիկ էր ուղարկել իրեն ենթակայ եպիսկոպոսներին ու մետրոպոլիտներին, քանի որ նրա իշխանութիւնը երբեք չի տարածուել մինչեւ Խանութիւնը երբեք չի տարածուել մինչեւ Քաղկեդոն, սակայն այն հանգամանքը, որ Գրիգոր Պարթեւի ձեռնադրութեանը մասնակցել են մեծ թուով եպիսկոպոսներ ամբողջ Փոքր Ասիայից, կայսրութեան վերը յիշուած այլ պրովինցիաներից, ցոյց է տալիս, որ Կեսարիայի ժողովը թերեւս առնչութիւն չունի դրա հետ: Մեծ Հայքի թագաւորութիւնում քրիստոնէութեան պեղաւորութիւնում քրիստոնէութեան պեղաւորական կրօն դառնալը եւ Գրիգոր Պարթեւի ձեռնադրութիւնը ղիոկղետիանոսեան հալածանքներից յետոյ այնքան կարեւոր իրադարձութիւն էր, որ կայսրութեան շատ եպիսկոպոսներ, յատկապէս արեւելեան պրովինցիաներից, կ'ուզեային դրան անձամբ մասնակցել:

Մեր կարծիքով՝ հայկական եւ յունական Ագաթանգեղոսներում պահպանուած Տրդատի՝ Ղեոնդիոս արքեպիսկոպոսին ուղղուած նամակի բնագրերի բովանդակութիւնների քննութիւնը ցոյց է տալիս,

որ մենք թերեւս գործ ունենք Հայոց թագաւորի երկու տարբեր նամակների հետ, որոնցից մէկն ուղարկուել է Ղեոնդիոսին 305 թ.՝ Գրիգորի ձեռնադրութեան առիթով, իսկ երկրորդը՝ Կեսարիայի ժողովի կապակցութեամբ: Յունական Ագաթանգեղոսի խմբագիրը՝ չփոթելով Գրիգոր Պարթեւի ձեռնադրութեան առնչութեամբ Կեսարիայում եպիսկոպոսների հաւաքը Կեսարիայի 314 թ. ժողովի հետ եւ ձեռքի տակ ունենալով երկու նամակները, մեր կարծիքով, ձեռնադրութիւնը ղնում է Կեսարիայի ժողովի ժամանակ յայտարարելով, թէ Ղեոնդիոսի հրաւերով հաւաքուեցին 20 եպիսկոպոսներ Գրիգոր Պարթեւին ձեռնադրելու համար, ինչը եւ Հ. Պ. Անանեանին մտածել է տուել, թէ Հայոց հայրապետի ձեռնադրութիւնն իրօք տեղի է ունեցել 314 թուականի աշնանը: Համաձայն մեր քննութեան՝ յունական Ագաթանգեղոսում միահիւսուել են Հայոց թագաւորի 305 եւ 314 թթ. գրուած նամակները, եւ նրանում առաւելապէս արտացոլուած է 314 թ. նամակի բովանդակութիւնը, որը տեղ-տեղ միջնորդաւորուած է 305 թ. նամակի որոշ հատուածներով: Յամենայն դէպս, յունական Ագաթանգեղոսում թագաւորի նամակի սկզբի «Տրդատ թագաւորը Հայոց Մեծաց, իմ կենակից Աշխէն թագուհի, քոյր Խոսրովիդուխտ եւ համայն Հայաստան առ Կապադոկիայի հովուպետ արքեպիսկոպոսն, ամբողջ սուրբ կղերն, մեծափառ իշխանները եւ համայն քրիստոնեաներն» արտայայտութիւնը պէտք է վերաբերի թագաւորի 314 թ. գրած նամակին, որովհետեւ այն կարծես, թէ չի համապատասխանում հայկական Ագաթանգեղոսում պահպանուած «Պատճէն հրովարտակին» նամակի համապատասխան բաժնին («Վասն այսորիկ եւ մեր պատան եղեալ յօգնականութիւն ընդունելութեան աղօթից ձերոց եւ սրբութեանդ, Ղեոնդիոս արքեպիսկոպոս Կեսարու եւ ամենայն ուխտ քահանայութեանդ սրբոյ

Սակայն որո՞նք են շարժառիթները: Հետագայ տեղեկություններից մեզ յայտնի է, որ Հայոց Հայրապետը Կեսարիայում ձեռնադրուելու համար պէտք է ունենար Փոքր Հայքի եպիսկոպոսների երաշխաւորական նամակները¹⁹⁶: Յունական վարքի խմբագիրը թերեւս փորձել է այդ հանգամանքն արտացոլել յիշեալ հատուածում:

Վերջում նշենք, որ Հ. Պ. Անանեանն անդրադարձել է նաեւ Հռիփսիմեան կոյսերի Հայաստան գալու ժամանակին, որը նա համարում է 313 թուականը եւ հակուած է կարծելու, թէ իր առաջարկած թուագրումը մեծ նպաստ է բերելու Հարցի լուսաբանութեանը¹⁹⁷: Այս խնդրի մասին մենք խօսեցինք վերեւում, ուստի, այնուամենայնիւ, մտադիր չենք նրան ի նորոյ անդրադառնալ: Տեղին յիշենք միայն, որ տարիներ առաջ Վաղարշապատի Ս. Հռիփսիմէ եկեղե-

ցու հարեւանութեամբ կատարուած պեղումները ի յայտ բերեցին, այսպէս կոչուած, քոյրական գերեզմանոց, որը ոչ մի կասկած չի թողնում, որ Հռիփսիմեան կոյսերի նահատակութիւնը ոչ թէ առասպել է, այլ իրականութիւն, ուստի եւ հազիւ թէ կարելի է լրջօրէն քննարկել Մ. Աբեղեանի այն տեսակէտը, թէ՛ «Դժուար է թէ որեւէ իրական պատմական բան լինի, բայց եթէ այն, որ իրօք Վաղարշապատում նահատակուած են եղել կոյսեր»¹⁹⁸:

Մենք փորձեցինք համակողմանիօրէն քննարկել Մեծ Հայքի թագաւորութիւնում քրիստոնէութեան պետական կրօն հռչակման խնդիրը: Եզրակացութիւնը միանշանակ է. քրիստոնէութիւնը Հայաստանում հռչակուեց պետական կրօն 305 թ. մայիսից յետոյ ընկած շրջանում, ամենայն հաւանականութեամբ, ամռանը:

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՓԱԽՍՈՍ
ԲՈՒԶԱՆԴԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ»

Յակոբ Յարութիւնեան

Արշակունեաց Հայաստանի վարչատարածքային հարցերի ուսումնասիրութիւնը եղել եւ այժմ էլ մնում է հայագիտութեան կարեւորագոյն խնդիրներից մէկը: Նրանով զբաղուել են մի շարք նշանաւոր հայագէտներ, որոնց թւում են Հ. Ղ. Ինճիճեանը, Հ. Հիւբշմանը, Ե. Մարկուարտը, Բ. Պատկանեանը, Յ. Մանանդեանը, Ս. Երեմեանը եւ Բ. Յարութիւնեանը, որոնք կատարել են կարեւոր եւ ուշագրաւ ուսումնասիրութիւններ այդ խնդրի տարբեր տեսանկիւնների շուրջ¹: Լուծումների համար գլխաւորապէս հիմք են ընդունում մեր մատենագիրներից Անանիա Շիրակացու (կամ, ըստ ուրիշների, Մովսէս Խորենացու) «Աշխարհացոյց»-ի տուեալները որին շատ դէպքերում լրացնելու է գալիս Փաւստոս Բուզանդն՝ իր «Հայոց պատմութեամբ», երբ խօսք է գնում Դ. դարի վերաբերեալ: Ներկայ աշխատանքում մենք հանգամանօրէն կ'անդրադառնանք Դ. դարի Արշակունեաց Հայաստանի պետական եւ երկրի ներսում գոյութիւն

ունեցած վարչատարածքային սահմանների արժարժման խնդրին:

Երբ ամենայն մանրամասնութեամբ զննում ենք Բուզանդի երկասիրութիւնը՝ «Հայոց պատմութիւնը», ապա միանգամից աչքի է զարնում մի օրինակափութիւն: Պատմիչն առաւել շատ ուշադրութիւն է յատկացնում երկրի չորս կողմերից երկուսին՝ արեւմուտքին եւ յատկապէս հարաւին, որն առաջնակարգ դեր եւ նշանակութիւն ունէր: Իսկ ի՞նչ հանգամանքով է դա պայմանաւորուած: Մեր կարծիքով պատասխանն առաւել քան պարզ է եւ յստակ. երկրի չորս կողմերից ամենաանհանգիստը, ինչպէս ցոյց է տուել պատմութեան ողջ ընթացքը, հանդիսացել է հարաւը, հակառակ որին արեւելքն աչքի է ընկել յարաբերական հանգստութեամբ, իսկ հիւսիսն ու արեւմուտքը այս երկուսի միջեւ զբաղեցրել են միջանկեալ դիրք: Վերջին երկուսից դժուար է որեւէ մէկին նախապատուութիւն տալը, բայց այս դատողութիւնների լաւագոյն փաստարկ կարող է հանդիսանալ Արտաշէս Ա արքայի կողմից (Բ. ա. 189-160 թթ.) Մեծ Հայքը միաւորելու ընթացքում վարած քաղաքականութիւնը: Այդ միաւորումը, ինչպէս յայտնի է, նա սկսեց արեւելքից, ապա շարժուեց հիւսիս: Ողջ այս ընթացքում Հայոց արքան հետապնդում էր մէկ հիմնական նպատակ, այն է՝ ստեղծել իր համար պլացդարմ (մարտայնանդաշտ, ռազմայնանդաշտ)՝ դէպի արեւմուտք եւ հարաւ արշաւելու համար: Արեւմուտքում գտնուում էր դէպի արեւելք ձգտող Հռոմէական հանրապետութիւնը, իսկ հարաւում հոգեվարք ապրող Սելեւկեաններն էին: Արտա-

196 Կասկած չկայ, որ որոշակի շարժառիթներով Փոքր Հայքի եպիսկոպոսներին նման իրաւունք վերապահել էր Կեսարիայի մետրոպոլիտը, քանի որ նա՝ մի կողմից օրինակաւորութիւն էր հաղորդում ձեռնադրութեանը, իսկ միւս կողմից՝ մետրոպոլիտի եւ կայսեր անհամաձայնութեան դէպքում Փոքր Հայքի ոչ մի եպիսկոպոս կաթողիկոսական թեկնածուին երբեք երաշխաւորական նամակ չէր տալ:

197 Հ. Պ. Անանեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը..., էջ 175

198 Մ. Աբեղեան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, հտ. Ա, Երեւան, էջ 172

1 Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեաց աշխարհի, հտ. Գ, Վեներիկ, 1835. Հ. Հիւբշման, Հին հայոց տեղւոյ անունները, Թարգ. Հ. Բ. Պիլէգիկեանի, Վիեննա, 1907. Jos. Markwart, *Südarmerien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen*, Wien, 1930. К. Патканов, *Армянская география VII-го века по р. Хр.*, СПб, 1877. Я. А. Манандян, *Когда и кем была составлена «Армянская география», притисываемая Моисею Хоренскому*, - "Византийский временник", М., 1947, сс. 127-143. Ս. Ս. Երեմեան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963. Բ. Յարութիւնեան, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա (արեւմտեան եւ հարաւային աշխարհներ), Եր., 2001:

Վուամշապուհի գահակալութեան տարուայ վերջերին:

Հայոց գրերի գիւտը իրաւացիօրէն զննելով 393-ին, պէտք է արձանագրել, որ այն հնանում է 12 տարով, ուստի Հայոց գրերի գիւտի 1600-ամեակը պէտք էր նշել որպէս դարակազմիկ իրադարձութիւն արդէն 1993 թուականին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Կորիւն, Վարք Մեսրոպայ վարդապետի, տե՛ս - Մատենագիրք Հայոց, հտ. Ա (Ե դար), էջ 257:
- 2 Տե՛ս Կորիւն, Վարք Մաշտոցի, Երեւան, 1981, էջ 330:
- 3 Անդ, էջ 94-103:
- 4 Անդ, էջ 85:
- 5 Անդ:
- 6 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, գիրք Գ, գլ. Ծ, - Մատենագիրք Հայոց, հտ. Բ (Ե դար), էջ 2074-2075:
- 7 Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, դրուագ Ա, գլ. Թ, - Մատենագիրք Հայոց, հտ. Բ, էջ 2211
- 8 Անդ:
- 9 Անդ, գլ. Ժ, էջ 2212:
- 10 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, գիրք Գ, գլ. Ծ, - Մատենագիրք Հայոց, հտ. Բ, էջ 2075:

- 11 Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց..., դրուագ Ա, գլ. Թ, - Մատենագիրք Հայոց, հտ. Բ, էջ 2211:
- 12 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, գիրք Գ, գլ. ԾԵ, - Մատենագիրք Հայոց, հտ. Բ, էջ 2084
- 13 Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց..., դրուագ Ա, գլ. ԺԱ, - Մատենագիրք Հայոց, հտ. Բ, էջ 2216: Ղազար Փարպեցին իր հերթին թիրիմացութիւն է թոյլ տալիս՝ յայտարարելով, որ Վուամշապուհի մահից յետոյ մահանում է պարսից Ծապուհ թագաւորը, եւ հայերը նրան յաջորդած Վուամ Կրմանին խնդրում են Հայաստանում կրկին գահ բարձրացնել Խոսրով Գ-ին (դրուագ Ա, գլ. ԺԲ): Սակայն Վուամ Դ-ն մահացել է 399 թուին եւ ժամանակագրական առումով ոչ մի կերպ չէր կարող յաջորդել Վուամշապուհին:
- 14 Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 73-74:
- 15 Անդ, էջ 74:
- 16 Մովսէս Խորենացի, գիրք Գ, գլ. ԾԲ
- 17 Յ. Մանանդեան, Բնական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, հտ. Բ, մասն Ա, Երեւան, 1957, էջ 245:
- 18 Սամուէլի քահանայի Անեցոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 68:
- 19 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, գիրք Գ, գլ. ԿԷ, - Մատենագիրք Հայոց, հտ. Բ, էջ 2110

ՀՈՄԱՆԻԾՆԵՐԻ ԶԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Նազիկ Յովհաննիսեան

«Միջնադարեան Հայաստանի բառարանագրական յուշարձանները» երկհատոր աշխատութեան էջերում Հ. Ամալեանը հաւաստում է, որ այդ շրջանում գրուած, թարգմանուած, ամենատարբեր գիտութիւններին վերաբերող աշխատութիւններում, այլեւայլ ստեղծագործութիւններում հանդիպող անհասկանալի բառերի մեկնութիւններն ու բացատրութիւնները սկզբնապէս կցուել են բնագրերին: Հետագայում ստեղծուել են բացատրական, ուղղագրական, թարգմանական, մասնագիտական բառարաններ, որոնք, սակայն, ինչպէս վկայում է հեղինակը, փոքրածաւալ են եղել, չեն արտացոլել լեզուի բառային ամբողջ կազմը: Այդուհանդերձ դրանք անչափ կարեւոր են եղել գիտութեանը անհասկանալի գործին նպաստելու առումներով: Այդ է վկայում նաեւ հէնց քննուող ձեռագիր բառարանների վերնագիրը՝ «Հանդէս բանաստեղծաց փառանուար ստորոգիլ նորավարժիցն զանունաբար»¹, ասել է՝ օգտագործելով միջնադարեան ձեռագիր բառարանների բացատրութիւնները՝ նորավարժների՝ դեռակիրթների, համբակների, աշակերտների խօսքը կատարելագործելու, բառապաշարը հարստացնելու ձեռնարկ: Բառարանի գործնական բնոյթով են պայմանաւորուած եւ բառարաններում առկայ հետեւեալ ծանօթութիւններն ու յղումները. «եթէ պիտոյ իրցէ», «եթէ պիտոյ իցէ դնի եւս», «եթէ պիտոյ իցէ տես», «եթէ յարմար իցէ բանին. դիր եւս...», «վասն շինութեան Աստուծոյ», «վասն ծուլութեան», «վասն որոնեծոյ», «վասն հպարտութեան» եւ այլն (տե՛ս Մաշտոցի անուան Մատենագրարանի

թիւ 566, 3110, 5995, 6762 ձեռագիր բառարանները):

«Հանդէս բանաստեղծաց...»-ը, ըստ Հ. Ամալեանի, հնագոյն բառարաններից է՝ վկայուած XII դարից: Նրա հաւաստմամբ՝ «բառարանի նախագաղափար օրինակը չի պահպանուել, գրութեան ստոյգ ժամանակը, տեղը եւ հեղինակը անյայտ են»²:

Հարկ է նշել, որ XII-XVIII դդ. վկայուած ձեռագիր այս բառարանները Մատենագրարանի ձեռագրացուցակներով³ 66-ն են՝ ըստ դարերի հետեւեալ բաշխումով՝

- XII-XIII դդ. - մէկ՝ թիւ 5596.
- XIII դդ. - մէկ՝ թիւ 4612.
- XIV դդ. - եօթ՝ թիւ 530, 1654, 2371, 3937, 4149, 5919, 8198³
- XV դդ. - չորս՝ թիւ 266, 2335, 5925, 7117.
- XVI դդ. - եօթ՝ թիւ 532, 538, 2372, 3197, 5126, 7250, 8106.
- XVII դդ. - երեսունինը⁴
- XVIII դդ. - եօթ՝ թիւ 566⁵, 843, 3110, 3450, 6762, 9166, 9992:

Բառարանի ամբողջական վերնագրի մասին խօսելիս Հ. Ամալեանը նշում է, որ «բառ է գեղջուկը» արտայայտութիւնն աւելացուել է հետագայում «...վերնագրի վերջից»⁶, աւելի ստոյգ՝ XIV դարում: Թերեւս, հարկ է յաւելել, որ XII-XVI դդ. վկայուած ձեռագիր բառարաններն ունեն հետեւեալ վերնագրերը (նոյն վերնագրի տարբերութիւնները տրւում են ա, բ, ... համարակալումով)

1. Հանդէսք բանաստեղծաց փաղանուննաբար ստորոգիլ նորավարժիցն. ձեռագիր թիւ 4149, 8106.

2. Հանդէս բանաստեղծաց փաղանուննաբար ստորոգիլ նորավարժիցն սակս. ձեռագիր թիւ 266, 532, 538, 3197, 3937, 5596, 7250, 8198(I).

2. ա. Հանդէսք ... ձեռագիր թիւ 4612.

3. Հանդէս բանաստեղծաց փաղանուննաբար ստորոգիլ սակս նորավարժիցն բառ է գեղջուկ. ձեռագիր թիւ 530, 5126.

4. Հանդէս բանաստեղծաց փաղանուննաբար ստորոգիլ նորավարժիցն սակս բառ է գեղջուկ. ձեռագիր թիւ 1654, 2371, 2372, 7117.

4. ա. ... բառ գեղջուկ. ձեռագիր թիւ 2335, 5919.

4. բ. ... բառեր գեղջուկք. ձեռագիր թիւ 5925.

5. Բառք նորավարժ. ձեռագիր թիւ 8198(II):

Հետաքրքիր է, որ միեւնոյն վերնագրով կան բառերի ե՛լ կոպիտ այբբենական, ե՛լ ոչ այբբենական դասաւորութեամբ ձեռագրեր, ինչպէս՝ թիւ 530 եւ թիւ 5126 ձեռագրերը 3-րդ վերնագրով, թիւ 2335 եւ թիւ 5919-ը՝ 4-ա. վերնագրով:

XVII դարում գերակշռում են 4-րդ վերնագրով ձեռագիր բառարանները. այս վերնագրով կան բառերի ե՛լ այբբենական (թիւ 268, 537, 2431(I), 3170, 3261), ե՛լ ոչ այբբենական (թիւ 267, 516, 536, 2330, 2331, 2370, 2381, 2431(II), 3257, 3488, 5008, 5995, 7004, 7014, 7995, 8563) դասաւորութեամբ բառարաններ⁷:

Բացի թուարկուած վերնագրերից (2. - ձեռագիր թիւ 2281, 2291(I), 6097, 6624. 3. - ձեռագիր թիւ 265, 537, 3468, 8606, 10223. 4. ա. - ձեռագիր թիւ 529, 2369, 3200) XVII դ. վկայուած բառարաններն ունեն նաեւ հետեւեալ վերնագրերը՝

1. ա. Հանդէս ... ձեռագիր թիւ 2295.

3. ա. ... նորավարժից բառ. ձեռագիր թիւ 533, 3824.

3. բ. ... բառ գեղջուկք. ձեռագիր թիւ 540.

3. գ. ... բառ գեղջուկ. ձեռագիր թիւ 545, 682:

Հանդիպում է երկու անվերնագիր ձեռագիր բառարան՝ թիւ 2019 եւ 3286 (երկուսն էլ բառերի ոչ այբբենական դասաւորութեամբ). թիւ 8533 բառարանը սկսւում է նմանութիւն յենաբառով (փաստօրէն I էջը չկայ), եւ 129ա էջում չկայ 60 յենաբառ (հոմանիշային շարքերի թիւը 71-ն է, բառերի ընդհանուր քանակը՝ 960). թիւ 2291(II) ձեռագիր բառարանին անդրադարձ արդէն եղել է:

XVIII դ. վկայուած ձեռագիր բառարաններից երկուսն ունեն «Հանդէս բանաստեղծաց փաղանուննաբար ստորոգիլ նորավարժիցն սակս» (թիւ 843, 9992), եւ երկուսը՝ թիւ 3450-ը եւ 9166-ը, «Հանդէս բանաստեղծաց փաղանուննաբար ստորոգիլ նորավարժիցն բառ է գեղջուկ» եւ «... նորավարժիցն սակս...» վերնագրերը՝ համապատասխանաբար բառերի ոչ այբբենական եւ այբբենական դասաւորութեամբ:

Թիւ 3110 բառարանի վերնագիրն է «Հաւաքումն բառից որք նշանակութեամբ նոյն կամ մերձաւորք են» (էջ 75ա-112ա):

Թիւ 566 բառարանների վերնագրերն արդէն նշուել են:

Թիւ 6762 բառարանը վերնագիր չունի: Ձեռագրերի համեմատութիւնից պարզուեց, որ վերջինս եւ թիւ 566-ի «Նշանաքումն նոյնանշան բառից...» վերնագրով բառարանը որոշ տարբերութիւններով նոյնն են:

Ըստ բառերի դասաւորութեան՝ բառարանները, ինչպէս արդէն նշուեց, ոչ այբբենական եւ կոպիտ այբբենական են: Առաջինները սկսւում են Պարտ յենաբառով⁸, աւարտւում Գիծ(ք) յենաբառով հո-

մանիշային շարքերով: Այդպիսին են XII-XVI դ.դ. վկայուած ձեռագիր բառարաններից 15-ը՝ թիւ 266⁹, 530, 532, 538, 1654, 2371, 2372, 3197, 3937, 4612, 5596, 5919, 7117, 7250, 8198(I):

Թիւ 2355, 4149, 5126, 5925, 8106, 8198(II) բառարանները, որոնցից ամենահինը XIV դ. վկայուած թիւ 4149-ն է, բառերի կոպիտ այբբենական դասաւորութեամբ են: Սկսւում են Անհաս, աւարտւում Քաջամիտ. յենաբառերով հոմանիշային շարքերով:

Երբեմն հոմանիշային շարքերը կրկնւում են, այսինքն՝ ե՛լ առանձնացւում են ըստ բառերի այբբենական դասաւորութեան, ե՛լ պահպանւում բառերի ոչ այբբենական դասաւորութեամբ բառարանների նման: Այսպէս՝ թիւ 4149-ում Անպարհ յենման: Այսպէս՝ թիւ 4149-ում առկայ է նաբառով հոմանիշային շարքում առկայ է Մոսկ յենաբառով հոմանիշային շարքը (էջ 353ա), ինչպէս թիւ 2371 ձեռագրում է (էջ 288ա), իսկ բառարանի 562ա էջում արդէն Մոսկ յենաբառով հոմանիշային շարքն առանձնացուած է: Թիւ 5925 բառարանում կոճոպել յենաբառով հոմանիշային շարքը ե՛լ առանձնացուած է (էջ 95բ), ե՛լ ներկայացուած Ձղջանալ յենաբառով հոմանիշային շարքում (էջ 93ա), ինչպէս թիւ 5596 ձեռագրում է (էջ 223բ)¹⁰:

Ինչպէս արդէն նշուել է, ըստ Մատենադարանի ձեռագրացուցակների՝ ամենահինը թիւ 5596 ձեռագիրն է (XII-XIII դ.դ.)՝ բաղկացած 135 հոմանիշային շարքից: Բառերի ոչ այբբենական դասաւորութեամբ ձեռագիր բառարաններում հոմանիշային շարքերի թիւը տատանւում է 128¹¹-141-ի սահմանում՝ ընդգրկելով 3-45 բառ իւրաքանչիւր շարքում (այսինքն՝ միայն բազմանդամ). բառերի ընդհանուր քանակն է 1481-1526:

Բառերի կոպիտ այբբենական դասաւորութեամբ, Անհաս յենաբառով բառարանների (թիւ 4149, 5925, 8106, 8198(II))

հոմանիշային շարքերի թիւն է 141-162 իւրաքանչիւրում՝ 2-58 բառ (ասել է՝ երկանդամ եւ բազմանդամ): Ապարանք յենաբառով բառարանում (թիւ 2335)՝ համապատասխանաբար 139 եւ 3-35 բառ: Աստուածազան յենաբառով բառարանում (թիւ 5126)՝ 132 եւ 3-43 բառ: Այս բառարաններում բառերի ընդհանուր քանակն է համապատասխանաբար 1541-1579, 1091, 1360:

Անհաս յենաբառով բոլոր ձեռագիր բառարաններում առկայ են հոմանիշային շարքեր, որոնք չկան բառերի ոչ այբբենական դասաւորութեամբ ձեռագիր բառարաններում. այսպէս՝ Է(ն), Ընդ ձեռամբ, Ժամանակ, Ժառանգ¹², Հակաճառք¹³, Ղամբար (բառն առկայ է նաեւ Բոց յենաբառով հոմանիշային շարքում), Ուր, Որպէս, Չարչարել, Ռահ, Ռակա, Տեճչալ, Յմախ, Յուպ, Յրել, Քահանա, Քաջամիտ, Քեցել, Իխսել. ընդգծուածներն արձանագրուած են բառերի ոչ այբբենական դասաւորութեամբ ձեռագիր բառարաններում՝ համապատասխանաբար Հնազանդ, Խազմ, Բոց, Ջնջել, Քարքել/Պիտալ, Յարել/Օարել յենաբառերով հոմանիշային շարքերում (սրանք կան բառերի կոպիտ այբբենական դասաւորութեամբ ձեռագիր բառարաններում): Այդպէս էլ Արեգակ, Անդոյր, Մաւալ յենաբառերով հոմանիշային շարքերն արձանագրուած են բառերի կոպիտ այբբենական դասաւորութեամբ միայն մէկ-երկու ձեռագիր բառարանում (թիւ 4149, 5925, 8106, 8198 (II))¹⁴ եւ միւս ձեռագիր բառարաններում նշուած են Լոյս, Մազք, Խրոխտանալ յենաբառերով հոմանիշային շարքերում:

XVII դ. վկայուած թիւ 268¹⁵, 533, 537, 540, 545, 682, 2291(II), 2431(I), 3170, 3261, 3468, 3824, 8606, 10223 ձեռագիր բառարանները բառերի կոպիտ այբբենական դասաւորութեամբ են. սկսւում են Աստուածազան, աւարտւում Փոփոխել յենաբառերով հոմանիշային շարքերով

(ինչպէս արդէն նշուած թիւ 5126 ձեռագիր բառարանը): Հոմանիչային շարքերի թիւն է 132 իւրաքանչիւրում՝ 3-47 բառ. բառերի ընդհանուր քանակը՝ 1500-1622:

Բառերի ոչ այբբենական դասաւորութեամբ ձեռագիր բառարանները 27-ն են, որոնցից 5-ը՝ թիւ 536, 2295, 3286, 6097, 8533, ունեն տարբերութիւններ¹⁶: Սկսւում են Պարտ, աւարտուում Գիծք) յենաբառերով հոմանիչային շարքերով: Հոմանիչային շարքերի թիւը 136-140¹⁷ է՝ ընդգրկելով 3-47 բառ. բառերի ընդհանուր քանակը՝ 1014-1573:

Բառերի ոչ այբբենական դասաւորութեամբ XVII դ. վկայուած բառարաններում կան հոմանիչային շարքեր, որոնք արձանագրուած չեն Աստուածագան յենաբառով, բառերի կոպիտ այբբենական դասաւորութեամբ ձեռագիր բառարաններում: Դրանք Մերձ, Միշտ, Յախտումախօս, Յարձակումն, Նահատակել, Նեմգօղ, Վրիպել, Տեսանաղ յենաբառերով հոմանիչային շարքերն են: Թէեւ Հարկ է նշել, որ դրանք առկայ են Անհաս յենաբառով XIII-XVI դդ. վկայուած ձեռագիր բառարաններում¹⁸:

XVII դ. վկայուած բառարաններից թիւ 843 եւ 9992-ը բառերի կոպիտ այբբենական դասաւորութեամբ են: Առաջինն անաւարտ է. ընդհատուում է 289ա էջում դատարկ բառով (հոմանիչային շարքերի թիւն է 130, բառերի ընդհանուր քանակը՝ 1437): Թիւ 9992-ը աւարտուում է Գիծ յենաբառով հոմանիչային շարքով. այս բառարանում առանձնացուած են խոշոր եւ Հաստատում, Խազմ եւ Հակատել յենաբառերով հոմանիչային շարքերը (հոմանիչային շարքերի թիւն է 144, բառերի ընդհանուր քանակը՝ 1544):

Բառերի կոպիտ այբբենական դասաւորութեամբ թիւ 3450 բառարանն էլ անաւարտ է. ընդհատուում է Պոռնիկ յենաբառով հոմանիչային շարքով. (հոմանիչա-

յին շարքերի թիւն է 107, բառերի ընդհանուր քանակը՝ 1100):

Թիւ 9166 ձեռագիր բառարանը եւս բառերի կոպիտ այբբենական դասաւորութեամբ է. չեն առանձնացուած խոշոր եւ Հաստատում, Զգել եւ Համոզել յենաբառերով հոմանիչային շարքերը. տրոհուած են Խազմ-ն ու Խակատել-ը. հոմանիչային շարքերի թիւն է 133, բառերի ընդհանուր քանակը՝ 1623:

Թիւ 566(II) բառարանը սկսւում է Անկերացօղ, աւարտուում Քահանայ յենաբառերով հոմանիչային շարքերով. հոմանիչային շարքերի թիւն է 127, բառերի ընդհանուր քանակը՝ 1572:

XVII դ. վկայուած բառերի կոպիտ այբբենական դասաւորութեամբ ձեռագիր բառարանների համեմատութեամբ թիւ 566(II)-ում առկայ են Գահերէց, Մերձ¹⁹, Միշտ*, Յախտումախօս*, Նահատակել*, Նեմգօղ*, Ուրախանալ, Չնչիմ, Տեսանօղ*, Յասնուլ, Յնծալ, Իիծեալ, Քահանայ յենաբառերով հոմանիչային շարքերը: Այս բառարաններում չկան բառերի կոպիտ այբբենական դասաւորութեամբ ձեռագիր բառարանում արձանագրուած Զգօն, Զղջանալ, Թափեալ, Ծամել, Կաղալ, Կոճուպել, Կապերտ, Հանճար, Հասում, Համբակ, Ծաղակեր, Ծուայտեալ, Պոռնիկ, Պարիլ, Սիգալ, Վիթխարի, Տարտողական, Իիւթ, Փոփոխել յենաբառերով հոմանիչային շարքերը: Հոմանիչային շարքերից մի քանիսի յենաբառն էլ փոխուած է, այսպէս՝ Անկերացօղ (Ամեղել-ի փոխարէն), Կատափել (Հարկանել-ի փոխարէն), Ռազմ (Խազմ), Յարել (Շարել):

Թիւ 566(I) եւ 3110, 6762 բառարանները սկսւում են Ագանիլ եւ աւարտուում համապատասխանաբար Օրիորդ, Օրհնել յենաբառերով հոմանիչային շարքերով: Բառերի կոպիտ այբբենական դասաւորութեամբ արդէն նշուած բառարանների համեմատութեամբ սրանցում կան նոր հոմանիչային շարքեր. այդ է վկայում նաեւ հո-

մանիչային շարքերի թիւը (թիւ 566 605, թիւ 3110 606, թիւ 6762 624): Նախորդ դարերից վկայուած ձեռագիր բառարաններում առկայ եւ այս բառարաններում արձանագրուած (պահպանուած) հոմանիչային շարքերը հիմնականում ունեն նոր յենաբառեր. այսպէս՝ Թուրմ յենաբառը փոխարինուել է Խոնաւ-ով, Զանխուլ-ը՝ Ծածուկ-ով, Արբանեակ-ը՝ Ծառայ-ով, Հատու-ն՝ Կարճ-ով, Անհաս-ը՝ Հարուստ-ով, Խաւար-ը՝ Մութ-ով; Կապարճ-ը՝ Նետ-ով, Փանաքի-ն՝ Նուաստ-ով, Ծամբուշ-ը՝ Յիմար-ով, Յախտումախօս-ը՝ Ծատախօս-ով, Սպանդ-ը՝ Ողջակէզ-ով, Խազմ-ը՝ Պատերազմ-ով, Լուտալ-ը՝ Պարսաւել-ով, Նուազ/ղ-ը՝ Սակաւ-ով եւ այլն: Կան տրոհուած եւ մի քանի շարքերով ներկայացուած հոմանիչային շարքեր. այսպէս՝ Անջատել յենաբառով հոմանիչային շարքը ներկայացուած է Բաժանել, Փորել, Բակտել, Բերել, Բերթել, Նմանութիւն-ը՝ Նման, Տիպ, Օրինակ, Հայցել-ը՝ Խնդրել եւ Բննել, Ծագ-ը՝ Վախճան, Ծայր, Երգ-ը՝ Երգել, Տաղ, Բնար, Ծիրեալ-ը՝ Նիհար եւ Հիծեալ, Զայն-ը՝ Զայն եւ Զայնք զանազան կենդանեաց եւ անկենդանեաց, Սուրբ-ը՝ Մաքուր եւ Սուրբ շարքերով, իսկ Տեմչալ, Բարքել, Պիտալ յենաբառերի փոխարէն արձանագրուած է միայն Ցանկալ-ը:

Թիւ 6762-ում պահպանուել է 20 յենաբառով մասամբ փոփոխուած հոմանիչային շարք՝ Ասել, Բոնադատել, Գութ, Եզերք, Զղջանալ, Լոյս, Խոնարհ, Ծամել, Համոզել, Հաշտ, Հաստատում, Զայն, Պատել, Պատրասակել, Պարտ, Պարունակել, Սուկ, Սուրբ, Տարակուսել, Բետոր, եւ ձեռագրերից մի քանիսում հանդիպող Իիւթ եւ Փոխել յենաբառերով հոմանիչային շարքերը:

Թիւ 3110 եւ 6762 բառարաններում առկայ Աղեղ, Ասպարեզ, Այց առնել, Ամաչեցուցանել, Ախքատանց, Բանական, Բանդարցուցանել, Ախքատանց, Բանական, Բանդարցուցանել, Բնակարանաց տեսակք, Բառնալի, Բասկել, Բարձր, Գայթակղել, Զարմանալի, Խղճել, ըիլ, Բարձր, Գայթակղել, Զարմանալի, Խղճել, Ծառ, Կուրք, Կրպակ, Կոխել, Համա-Ծածկել, Ծառ, Կուրք, Կրպակ, Կոխել, Համա-

րել, Հետիոտն, Յատակ, Նաւալար, Որայ, Վնասել, Տափարակ, Յնցել, Օգուել յենաբառերով հոմանիչային շարքերը չկան թիւ 566 (I) բառարանում: Թիւ 566 (I) եւ 6762 ձեռագիր բառարաններում առկայ Կցորդ, Կոխ, Հեր, Հուր, Ծաղել, Յարել, Յղանալ, Մերկացուցանել, Ծաղկապել, Ծարադրեալ, Ուրախանալ, Պատիժ, Ջորի, Սարսել, Սերմն, Սերմանել, Վայրապար, Վարանել, Վարսաիրել, Վիրապ, Վիշտ, Վիճել, Վստահել, Տաղտկանալ, Տանջել, Տան մասունք, Տանակ, Տունկ, Տունել, Ցանց, Փքանալ, Օրինակ յենաբառերով հոմանիչային շարքերը չեն արձանագրուած թիւ 3110 ձեռագիր բառարանում:

Թիւ 566 (I) եւ 3110 բառարաններում արձանագրուած իշխանութիւն, Լսել յենաբառերով հոմանիչային շարքերը չկան թիւ 6762 ձեռագիր բառարանում:

Միայն թիւ 566(I) բառարանում են առկայ Սոնանել, Օձտել, Օձտօղ, Օղերձ, Օղի, Օրիովդ, Օրիորդ, թիւ 3110-ում՝ Երկան, Ծոխ, Ծշմարտել, Ցու, Ցուպ, Բրտնել, միայն թիւ 6762-ում Ցեխ յենաբառերով հոմանիչային շարքերը:

Այսպիսին է XII-XVIII դդ.-ից վկայուած հոմանիչների ձեռագիր բառարանների տեսակների եւ կազմութեան պատկերը:

ՃԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Հ. Ամալեան, Միջնադարեան Հայաստանի բառարանագրական յուշարձանները (X-XV դդ.), Երևան, 1966, էջ 124:
- 2 Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Եր., հտ. Ա, 1965, հտ. Բ, 1970:
- 3 Թիւ 8198 ձեռագրում կան բառերի ոչ այբբենաթիւ կան (էջ 54ա-59բ) եւ կոպիտ այբբենական (էջ 64ա-68ա) դասաւորութեամբ բառարաններ: Վերջինս վերագրուած է «Բառք նորավարձ». վերջինս վերագրուած է «Բառք նորավարձ». սկսում է Անհաս, աւարտում Բաշամիտ յենաբառերով հոմանիչային շարքերով: Ձեռագիր բառերով համեմատուել է բառերի այբբենական դասաւորութիւն ունեցող միւս ձեռագրերի հետ, ինչն էլ թոյլ է տալիս այն համարել «Հանդէս...»-ի բառարաններից մէկը: Այսուհետեւ թիւ 8198 ձեռագրի բառարանները կը նշուեն հետեւեալ ձեւով:

- ոչ այբբենականը՝ 8198 (I), կոպիտ այբբենականը՝ 8198 (II):
- 4 Ձեռագրահամարների աւելորդ կրկնութիւնից խուսափելու համար դրանք կը տրուեն ստորեւ հարկ է նշել միայն, որ թիւ 2291 եւ 2431 ձեռագրերում էլ առկայ է 2-ական բառարան: Թիւ 2291-ում՝ «Հանդէս բանաստեղծաց փաղանու-նաբար ստորոգիլ նորավարժիցն սակս» (էջ 316ա-325ա) եւ «Այս բառք գեղջուկք որ կարի պի-տոյ է վարժասիրաց. ներխոհեմից» (էջ 344ա-347ա): Թիւ 2431 ձեռագրում՝ «Հանդէս բանաս-տեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավար-ժիցն սակս բառ է գեղջուկ» նոյն վերնագրով (էջ 265բ-282ա եւ էջ 282ա-298ա)՝ բառերի ոչ այբբե-նական եւ կոպիտ այբբենական դասաւորու-թեամբ: Այսուհետեւ այս ձեռագրերի առաջին բառարանները կը նշուեն համապատասխանա-բար 2291 (I) եւ 2431 (I), իսկ երկրորդները՝ 2291 (II) եւ 2431 (II) ձեռով:
 - 5 Այս ձեռագրում նոյնպէս 2 բառարան կայ. «Նշա-նաքումն նոյնանշան բառից ըստ դասաւորու-թեանց մերոց տառիս» (էջ 234բ-279ա) եւ «Հան-դէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս բառ է գեղջուկ» (էջ 279բ-300ա) վերնագրերով:
 - 6 Հ. Ամալեան, *ճշ. աշխ.*, էջ 124:
 - 7 Ստորեւ ներկայացուող ձեռագրերի՝ բառերի այբբենական եւ ոչ այբբենական դասաւորու-թեամբ բառարանները տարբերակուած են, ասել է՝ նոյն վերնագրով առանձնացուած են բառերի ոչ այբբենական դասաւորութեամբ (ինչպէս՝ 2-րդ եւ 4.ա. վերնագրերի դէպքում) եւ բառերի այբբենական դասաւորութեամբ բառարանները (ինչպէս՝ 3-րդ, 3.ա. եւ 3.գ. վերնագրերի դէպ-քում):
 - 8 Ընդունուած եզրերից պայմանականօրէն օգտա-գործուած է *յենաբառք*, քանի որ դրանք ձեռագիր բառարաններում փոփոխուած են. մի բառարանի յենաբառք կարող է մէկ այլ բառարանում յենա-բառ չլինել (հմմտ. թիւ 530, 5596, 5919, 7117 բա-ռարաններում՝ *Դատար* եւ միւս բառարաննե-րում՝ *Տէր* յենաբառերով, թիւ 5596, 2372-ում՝ *Պա-տիլ* եւ թիւ 4612, 3937-ում՝ *Ծարիլ*, թիւ 4612-ում՝ *Մշտնջենատր* եւ միւս ձեռագիր բառարան-ներում՝ *Միշտ* յենաբառերով հոմանիշային շար-քերը:
 - 9 Աստղանիշով առանձնացուածներն ունեն տար-բերութիւններ. թիւ 266, 532, 538, 3197, 7250 ձե-ռագիր բառարաններն ասարտուած են *Արքա-նեակ* յենաբառով հոմանիշային շարքով. բացա-կայում է *Գիծք* յենաբառով հոմանիշային շարքը: Թիւ 3937-ն ասարտուած է *Բժիշկ* յենաբառով հո-մանիշային շարքով. թիւ 8198 ձեռագրի մասին արդէն նշուել է: Թիւ 5925 բառարանն ասարտ-

- ուած է *Բնատրել* յենաբառով հոմանիշային շար-քով (յաջորդում է *Քաջամիտ*-ին), որն էլ *Բնատ-րեայ* յենաբառով առկայ է նոյն բառարանի այբ-բենական դասաւորութեամբ բառերի շարքում: Թիւ 2335 բառարանը սկսուած է *Ապարանք*, ա-ւարտում՝ *Բնատրել* յենաբառերով հոմանիշա-յին շարքերով. այն, ի տարբերութիւն նախորդ ձեռագրի, չի կրկնուած: Թիւ 5126-ը սկսուած է *Աս-տուածագան*, ասարտում՝ *Փոփոխել* յենաբառե-րով հոմանիշային շարքերով:
- 10 Այս իրողութիւնը հետաքրքիր է, քանի որ թիւ 4149 եւ 5925 բառարանները բառերի կոպիտ այբբենական դասաւորութեամբ են, իսկ թիւ 2731 եւ 5596-ը՝ ոչ այբբենական: Ուրեմն գրիչներից ո-մանք երեւի թէ ձեռքի տակ ունեցել են 2 տիպի ձեռագիր բառարաններն էլ:
 - 11 Թիւ 7117 բառարանում չկան *Կարապետ*, *Ջայն*, *Կիրք*, *Տեսանաղ*, *Վտանգ*, *Հանդերձեայ(ք)*, *Գեր ունակ*, *Ամեղել*, *Եզերք*, *Ջանխոյ*, *Իրք*, *Լուտալ*, *Դուռել*, *Ծամբուշ*, *Ջգան*, *Մուրկ* յենաբառերով հոմանիշային շարքերը:
 - 12 *Ժառանկ. յետմնաց(ք)* հոմանիշային շարքն առ-կայ է թիւ 4149, 5925, 8198 (II) բառարաններում. թիւ 8106-ում *յետմնաց*-ն արձանագրուած է *Ժա-մանակ* յենաբառով հոմանիշային շարքում:
 - 13 Թիւ 5925 բառարանում *Հակաճառք. հակա-դարձք* հոմանիշային շարքն առկայ է նաեւ *Խազմ* յենաբառով հոմանիշային շարքում. միւս-ներում *Խազմ* յենաբառով հոմանիշային շարք չկայ:
 - 14 Թիւ 4149, 8106, 8198 (II) բառարաններում չկան *Ապարանք*, *Առիշեղ*, *Գիծ*, *Խոշոր*, *Հաստատուն* (առկա է թիւ 8198 (II)-ում), *Հատու*, *Սիգալ*, *Տե-սանաղ*, *Փոխել* յենաբառերով հոմանիշային շարքերը. թիւ 4149-ում *Լոյս*-ը տրուած է *Արե-գակ*, *Տէր*-ը՝ *Դատար*, *Լեզուագարութիւն(ք)*-ը՝ *Յիմարել* (նաեւ թիւ 8106, 8198 (II)-ում), *Ծամել*-ը՝ *Տրորել*, *Կոճուպել*-ը՝ *Ջղջանալ*, *Սպանդ*-ը՝ *Ծեն-ճերք* յենաբառերով հոմանիշային շարքերում: Թիւ 5126 եւ 2335-ում չկան *Հակաճառք*, *Համ-բար*, թիւ 5126-ում՝ նաեւ *Տեսանաղ* յենաբառե-րով հոմանիշային շարքերը: Թիւ 5126-ում առանձնացուած է *Արդակ*-ը, *Հաս-տատուն*-ը արձանագրուած է *Խոշոր* յենաբառով հոմանիշային շարքում: Թիւ 5925 ձեռագիր բա-ռարանում առկայ են *Ապարանք*, *Առիշեղել*, *Գիծ*, *Լոյս*, *Ծամել*, *Հաստատուն*, *Հատու*, *Սիգալ*, *Տե-սանաղ* յենաբառերով հոմանիշային շարքերը:
 - 15 Աստղանիշով առանձնացուածներն ունեն տար-բերութիւններ. թիւ 268-ը սկսուած է *Աստուածագ-գեաց* յենաբառով հոմանիշային շարքով, որում չկայ *աստուածագան*-ը: Թիւ 2291 (II) բառարա-նը սկսուած է *Անկումն* եւ ասարտում *Փաղանգա-մայն* յենաբառերով հոմանիշային շարքերով:

- Սա այբբենական դասաւորութեամբ յենաբառե-րից կազմուած (բացառեալ օ, ֆ, ք տառերը. ա-ով կայ 3 հոմանիշային շարք) մէկական հո-մանիշային շարքի ցանկ է, որը, ինչպէս նշուած է վերնագրում, «...կարի պիտոյ է վարժասիրաց. ներխոհեմից»: Բառացանկի հոմանիշային շար-քերի թիւը 36 է, բառերի ընդհանուր քանակը՝ 514: Բառերի կոպիտ այբբենական դասաւորու-թեամբ ձեռագիր բառարանների համեմատու-թեամբ յենաբառերն այստեղ փոփոխուած են. ա) յենաբառ է ձեռագիր բառարանների հոմանի-շային շարքում առկայ բառերից մէկը, ինչպէս՝ *Անկումն*, *Անպատկառ*, *Ընչաւետ*, *Կաթուղիկէ*, *Մեկնել*, *Ոգել*, *Պատուիրանագանց*, *Վկայութիւն*. բ) հոմանիշային շարքը տրոհուած է եւ ներկա-յացուած երկու-երեք հոմանիշային շարքերով. *Հոյակապ*-ը՝ *Ընչաւետ* եւ *Թաթաղուն*, *Ամեղել*-ը՝ *Ամեղել*, *Անպատկառ* եւ *Պատուիրանագանց*, *Ծագ(ք)*-ը՝ *Անկումն* եւ *Յպատրութիւն* հոմանի-շային շարքերով. գ) առանձնացուած են նոր յե-նաբառեր՝ *Գեղգեղել*, *Դեկնուս*, *Յանգել*, *Չարա-բարոյ*, *Ռահվար*, *Փաղանգամայն*, որոնցից *Ռահվար* յենաբառով հոմանիշային շարք ընդ-հանրապէս չկայ ձեռագիր բառարաններում: Թիւ 2431 (I) եւ 3170 բառարաններն ասարտուած են համապատասխանաբար *Փանաքի* եւ *Իիւթ* յենաբառերով հոմանիշային շարքերով: Առաջի-նում չկան *Առաջօք*, *Ամեղել*, *Անպարհ*, *Առիշեղ*, *Ծուայտեայ* (առկայ է *Պոռնիկ*-ում), *Պահել*, *Տէր*, *Տարակուել*, *Իիւթ* յենաբառերով հոմանիշային շարքերը: Այս բառարանի հոմանիշային շարքե-րի թիւը 122 է, բառերի ընդհանուր քանակը՝ 1408: Թիւ 3261-ում չկայ *Վիթխարի* յենաբառով հոմանիշային շարքը:
- 16 Թիւ 536 բառարանն անասարտ է. ընդհատուած է *Ջայն* յենաբառով հոմանիշային շարքով (հող-մա... էջ 166բ): Հոմանիշային շարքերի թիւը 67 է, բառերի ընդհանուր քանակը՝ 1037: Թիւ 2295 բա-ռարանն ասարտուած է *Արքանեակ* յենաբառով հոմանիշային շարքով. չկայ *Գիծ(ք)* յենաբառով հոմանիշային շարքը: Թիւ 3286-ը անվերնագիր

- է. սկսում է *Պարտ*, ասարտում *Բժիշկ* յենաբա-ռերով հոմանիշային շարքերով, ինչպէս արդէն նշուած, XIV դ. վկայուած թիւ 3937 ձեռագիր բա-ռարանը, սակայն, ի տարբերութիւն վերջինի, 16 հոմանիշի փոխարէն *Բժիշկ* յենաբառով հոմա-նիշային շարքն ընդգրկում է 42-ը: Հոմանիշային շարքերի թիւը 142 է, բառերի ընդհանուր քանա-կը՝ 1573: Թիւ 6097 բառարանը *Գիծ* յենաբառով հոմանիշային շարքից յետոյ ունի երկու-երեք բառով բացատրուած 16 բառայօդուած. ընդհա-նուր պատկերացում կազմելու համար բերենք մի քանի նմոյշ՝
- Ազդեար. գօրատր.
 - ...Կաթնօգին. ըղձալի կամ ցանկալի.
 - Անշրպետ. բացատ կամ միջոց.
 - Ալէլուիա. օրհնեցէք կամ գովեցէք զՏէր.
 - Ակաղձել. դիզել.
 - ...Գուցէ. արդեօք կամ ո՞վ գիտէ.
 - ...Անդրվար. որ յալլմէլայլմէ վարէ կամ տանէիտուն... (էջ 287ա):

- Թիւ 8533 բառարանին արդէն անդրադարձ եղել է:
- 17 Հոմանիշային շարքերի թուի տատանումը պայ-մանաւորուած է ոչ միայն դրանց առկայութեամբ եւ բացակայութեամբ, այլեւ այն հանգամանքով, որ բառարաններից մի քանիսում հոմանիշային շարքերը տրոհուած-առանձնացուած են. ինչ-պէս՝ թիւ 3200-ում առկայ են *Խոշոր* եւ *Հաստա-տուն*, *Խազմ* եւ *Հակառել* (նաեւ թիւ 2295-ում), *Վտանգ* եւ *Տխրութիւն*, *Դուռել*, եւ *Վերապարել*, թիւ 516-ում՝ *Բիծ* եւ *Ծրդեայ* յենաբառերով հոմա-նիշային շարքեր:
 - 18 Թիւ 4149, 8106, 8198 (II) բառարաններում չկան *Տեսանաղ* եւ թիւ 2335-ում՝ *Նենգօղ* յենաբառե-րով հոմանիշային շարքերը:
 - 19 Աստղանիշերով առանձնացուածները, ինչպէս արդէն նշուել է, չկան XVII դ. վկայուած եւ բա-ռերի կոպիտ այբբենական դասաւորութեամբ բառարաններում:

ԵՐԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ Ս. ԳՐԵԻ ՀԱՅԵՐԷՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հայր Յարութիւն Պատկեան

Թարգմանութիւն մը որքան ալ կատարեալ ըլլայ, կը զգացնէ միշտ բնագիրին ազդեցութիւնը:

Աստուածաշունչի հայերէն թարգմանութիւնը, հակառակ անոր որ մեզի կը ներկայանայ կանոնաւոր, միատարր, աւարտուն եւ վայելուչ, օտուտած ազնուութեամբ, զօրութեամբ, փայլով, պերճութեամբ եւ գիտէնիւթին համաձայն ամէն ձեւ առնել՝ ընծայելով մեզի հայերէնի ամէնէն կատարեալ եւ չքնադ արտայայտութիւններէն մին, իր մէջ որոշակի կը կրէ ոչ-հայկական ոճաբանութիւններ կամ քերականական ձեւեր:

Մանրակրկիտ քննութենէ վերջ կարելի է դասաւորել զանոնք կարեւորութեան կարգով ա. եբրայաբանութիւն, բ. ասորաբանութիւն, գ. յունաբանութիւն եւ դ. լատինական ազդեցութիւն: Վերջին երկուքը գլխաւորապէս Նոր Կտակարանին մէջ, որ ինչպէս ծանօթ է, շարադրուած է յունախօս Հռոմէական կայսրութեան մէջ:

Ներկայ աշխատութիւնը երկիւղած փորձ մըն է ներկայացնելու եբրայաբանութիւններ՝ ըլլայ ոճական, ըլլայ քերականական, որոնց կը հանդիպենք Ս. Գրքի հայերէն թարգմանութեան մէջ:

Աշխատութիւն մը՝ ծնունդ առած դպրոցական գրասեղաններուն վրայ եւ հետագայ պրպտումներով ճոխացած՝ յաւակնութիւնը չունի ամբողջական կամ անսխալ ըլլալու, ջանք մըն է պարզ դասաւորելու եւ քննական լոյսի տակ նկատելու տարիներու ընթացքին լսուած ճշմարտութիւններ. բնականաբար հայերէնի գեղեցկութիւնը նկատուած որոշ ոճաբանութիւններ հոս տարբեր լոյսի տակ

պիտի ներկայանան, որովհետեւ շատ անգամ անոնք ուրիշ բան չեն եթէ ոչ եբրայեցերէնի բառացի թարգմանութիւն:

Սակայն հոս կրնայ ծագիլ դժուարին հարց մը. մեր գրաւոր թարգմանութիւնը սկսած ըլլալով Աստուածաշունչին թարգմանութիւնով անհնարին պիտի ըլլար կարենալ օտարամուտ տարրերը հայկականէն զատորոշել, չունենալով բաղդատութեան եզր, հետեւաբար այս անդրադարձութիւնները կրնային յաւակնուտ եւ դիւրամերժ նկատուիլ իրաւացիօրէն:

Այս էական առարկութեան լուծումը կարելի է զանազան եղանակներով տալ:

Նախ եւ առաջ ներկայացուելիք բացատրութիւնները եբրայեցերէն լեզուին մէջ յատուկ եւ աւօրեայ գործածութեան սահմանուած, բնական, միշտ կրկնուող, մէկ խօսքով սեմական մտայնութեան պտուղ են:

Երկրորդ՝ հայ թարգմանիչը ստէպ միեւնոյն բացատրութիւնը երկու ձեւերով ալ կը գործածէ. այսինքն թէ ենթարկուած եբրայեցերէնի՝ բառացի թարգմանութեամբ, հպատակելով հոլովումներուն կամ գործածուած նմանութիւններուն որ հայերէն շատ իմաստ չունին, եւ թէ՛ ազատ, տալով մեզի իմաստը, ճշգրիտ, բայց առանց կաշկանդուելու բնագիրին դարձուածքներէն: Այս պարագային եթէ նոյնիսկ չկարենայինք առաջիններուն համար եբրայաբանութիւն ըսել, որովհետեւ բծախնդիր առարկող մը միշտ կրնար բաղդատութեան եզր մը պահանջել, ունինք սակայն բացատրութեան նոր ձեւ մը, որ եբրայեցերէն չէ, այլ հայերէն, թէ շարադրութեամբ, թէ մտայնութեամբ:

Հուսկ ուրեմն երբ անցնինք նկատելու Յունարէն եւ Լատիներէն թարգմանութիւնները, այս բոլոր անդրադարձութիւնները դրական հիմ մը կը սկսին ստանալ:

Առաջին նկատելիք կարելոր կէտը այն է որ այս զոյգ թարգմանութիւններն ալ գրեթէ նոյնութեամբ ենթարկուած են եբրայական ազդեցութեան որքան հայերէնը, երբեմն ալ աւելի, ինչպէս քիչ յետոյ պիտի տեսնենք:

Երկրորդը, որ ամենակարեւորն է մեր հարցին մէջ, դասական գրականութեան մը գոյութիւնն է: Արդարեւ երկու լեզուներն ալ Ս. Գրքի թարգմանութիւնը կանխող ճոխ գրականութիւն մը ունին, ոսկեղէն շրջաններ տեսած:

Արդ, երբ նկատի ունենանք որ ոչ մէկ դասական գրիչ, Աստուածաշունչի թարգմանութիւններէն առաջ, սիրած կամ գործածած է բառեր, բացատրութիւններ, պատկերներ եւ քերականական ձեւեր որ մենք «եբրայաբանութիւն» կը կոչենք եւ երկրորդ՝ միայն Ս. Գրքի թարգմանութեան մէջ մուտք կը գործեն անոնք առաջին անգամ, կամ անոնց ստէպ գործածութիւնը կը յայտնուի հոն, կրնանք անվարան հետեւեցնել թէ օտարամուտ են, եբրայաբանութիւն են:

Նիւթէն դուրս է թէեւ հոս խօսիլ յունարէնի կրած ազդեցութիւններու մասին, սակայն որոշ լուսաբանութիւն կրնայ ըլլալ մեզի համար նկատիլը թէ ինչպէս, մասնաւորապէս Նոր Կտակարանը ուղղուած էր հռոմէական կայսրութեան մէջ բնակող յունախօս հրեաներու առ հասարակ, հետեւաբար զերծ չէին կրնար մնալ սեմական մտայնութենէ. մանաւանդ երբ նկատի ունենանք որ ստեղծուած էին ծիսական, կրօնական եւ ընկերական նոր պահանջներ որոնց արտայայտութեան համար յունարէնը կը ներմուծէ 2.000 ոչ դասական նոր բառեր. շատ մը ուրիշ բառեր կը փոխեն իրենց դասական իմաստը ստա-

նալու համար նոր նշանակութիւն, այսպէս *ἐξιδωλον* – ինքնիրմէջ «պատկեր» նշանակող, Ս. Գիրքին մէջ կը դառնայ «կուռք», կամ *λειτουργία* – հասարակաց ծառայութիւն (քաղաքական իմաստով) կը դառնայ «Հոգեւոր պաշտամունք» եւ այլն...: Դասականին անծանօթ՝ նոր բառեր կը ձեւանան բարդութեամբ, օրինակ՝ *ἄνθρωπάροσκος*, կամ կ'որդեգրուին եբրայեցերէն բառեր ինչպէս որ են, եւ հուսկ կը գործածուին յունարէն բառեր՝ սեմական իմաստով, ինչպէս քիչ վերջ պիտի տեսնենք հայերէնին մէջ ալ:

Տրուած համառօտ բայց ճշգրիտ ծանօթութիւններով, գրական հիմերու վրայ դնելէ վերջ մեր վարկածը, անցնինք քննելու հարցը ուղղակի օրինակներով, քաղուած միայն Ս. Գիրքէն, ջանալով միաժամանակ տալ յունարէնի եւ լատիներէնի համապատասխան օրինակները համառօտակի:

1. Եբրայական ոճաբանութիւններ:

ա. Եբրայեցերէնը համադրական լեզու մըն է, ենթակարգեալ շաղկապումներու առատ գործածութեամբ:

«Եւ» շաղկապը նախադասութիւնները կը միացնէ ստէպ, նոյնքան երբ կարելի էր զանց ընել. այսպէս Մատթէոսի մէջ 250 պարագաներ կը ներկայանան, Մարկոսի մէջ 400, Ղուկասի մէջ մօտ 300, Յովհաննէսի մէջ 100:

բ. Պատկերալից բացատրութիւններով կամ անսովոր (մեզի համար) դարձուածքներով արտայայտուելը կը կազմեն եբրայեցերէնի գլխաւոր յատկանիշներէն մին. օրինակներով խօսինք.

- «Աճճ իմ», *anima mea*, ή ψυχή μου, փոխանակ անձնական դերանունին.
- կեցցէ անձն իմ վասն քո (Ծնն. ԺԹ 20).

- Օրհնեսցէ զքեզ անձն իմ (Ծնն. Իէ 4).
- Օրհնեսցէ զիս անձն քո (Ծնն. Իէ 19).
- Խռովեցաւ անձն նորա (Ծնն. ԽԱ 8).
- Երթ ցոյց զանձն քո քահանային (Մտթ. Ը 4).
- Տրտում է անձն իմ... (Մրկ. ԺԴ 34).
- Ապրեցո՛ւ զանձն քո (Մրկ. ԺԵ 30) եւն եւն....:

«Հոգի իմ», Spiritus meus, ή ψυχή μου, նոյնպէս անձնական դերանունի իմաստով.

- Յնծացաւ Հոգի իմ յԱստուած փրկիչ իմ (Ղուկ. Ա 47).
- Հոգին իմ կայ յաղօթս (Ա Կորն. ԺԴ 14).
- Տէր ընդունելի Հոգւոյ իմոյ (Սղմ. ԾԳ 6).
- Ծարաւեցաւ առ քեզ Հոգի իմ (Սղմ. ԿԲ 2).
- Տառապէր յիս Հոգի իմ (Սղմ. ՀԶ 7) եւն....:

«Ձեռք կամ բազուկ Տեառն», Manus Dei, (Domini). Χείρ Κυρίου փոխանակ «Աստուծոյ զօրութիւն»ին.

- Ձեռն Տեառն էր ընդ նմա (Ղուկ. Ա 66).
- Ո՛չ ձեռն իմ արար զայս ամենայն (Գործ. է 50).
- Էր ձեռն Տեառն ընդ նոսա (Գործ. ԺԱ 21).
- Ի ձեռն յարութեան Յիսուսի Քրիստոսի. եւն... (Ա Պետ. Ա 3).
- Քո է բազուկ եւ քո է զօրութիւն (Սղմ. ԶԸ 14).
- Ջբազուկս հզօրաց խոնարհեցուցէ (Ես. ԻԵ 8).
- Բազուկ Տեառն ում յայտնեցաւ (Ես. ԾԳ 1).
- Արար զօրութիւն բազկաւ իւրով (Ղուկ. Ա 51).

- Խորտակեցից զբազուկս նորա հզօրս (Եզեկ. Լ 22).

- Ջօրացուցից զբազուկ արքային (Եզեկ. Լ 24, 25) եւն....:

գ. Երբայեցերէնի մէջ իմաստին ուժգնութիւնը սաստկացնելու համար ստէպ բային կը միացուի համապատասխան դոյականը. այսպէս՝

- Ցանկանալով ցանկացայ. - Desiderio desideravi. - επιθυμία έπεθύμησα. (Ղուկ. ԻԲ 15).
- Որում նմանութեան նմանեցուցից զնա (Ղուկ. ԺԳ 18).
- Ասա ցնա, կելով կեցցես (Դ Թագ. Ը 10).
- Կելով կեցցէ (Եզեկ. ԺԸ 17, 9, 28: ԼԳ 13) եւն...
- Ցանկացան ցանկութիւն (Թիւ. ԺԱ 4).
- Ցանկայ... զցանկութիւն չարեաց (Առակ. ԻԱ 26).
- Որ հարկանէ ... մահու մեռցի (Ելք. ԻԱ 15)անթիւ...
- Խնդրելով խնդրեաց Մովսէս (Ղեւտ. Ժ 16).
- Խնդիր մի խնդրեմ ի քէն (Գ Թագ. Ա 16).
- Բարկացի սրտմտութեամբ Տէր... (ԲՕր. է 4).
- Եղեւ բարկութիւն սրտմտութեան Տեառն (Թիւ. ԺԲ 9).
- Ծանիջիք զսրտմտութիւն բարկութեան (Թիւ. ԺԴ 34).
- Դադարեաց Տէր ի սրտմտութենէ բարկութեան իւրոյ (Յես. է 26).
- Ամէն ամէն ասեմ ձեզ (Յովհ. Ա 51) եւն...

Բանաստեղծօրէն ըսուած, Յովհ.ի մէջ 25 անգամ:

դ. Գոյականը կը կրկնուի իմաստը ընդհանրացնելու համար.

- Յիշատակ ազգաց յազգս (in generationem et generationem) (Ելք. Գ 15).
- Ընդ Ամաղեկայ յազգաց յազգս (Ելք. Ժէ 16).
- Յիշատակ լինին յազգս ազգս (Եսթ. Թ 28).
- Յաւիտեանս յաւիտենից (նէեմի Թ 5: Սղմ. Ի 5, ԶԸ 53, ձԻ 48).
- յամենայն ազգս յաւիտենից յաւիտեանս (saeculi saeculorum, του αιφώνος των αιφώνων (Եփ. Գ 21)):

2. Բառական երբայաբանութիւններ:

Գործածուած են երբայեցերէն բառեր հայերէն տարրադարձութեամբ, այսպէս՝

- «Աբբա» (Մրկ. ԺԴ 36: Հռոմ. Ը 15: Գաղ. Դ 6).
- «Ռաբբի» ... կոչել ի մարդկանէ ռաբբի, ռաբբի (Մտթ. ԻԳ 7).
- «Ռաբբի, բարուք է մեզ աստ լինել (Մրկ. Թ 4).
- «Կեփաս» Դու կոչեսցիս Կեփաս (Յովհ. Ա 42).
- Երեւեցաւ Կեփայի եւ ապա... (Ա Կոր. ԺԵ 5).
- Յակոբոս եւ Կեփաս եւ Յովհ. (Գաղ. Բ 9).
- «Գեհենն» Պարտաւոր լիցի ի Գեհենն հրոյն (Մտթ. Ե 22).
- Ամենայն մարմինդ քո անկանիցի ի Գեհենն (Մտթ. Ե 29).

- «Սատանայ» Սատանայ կացցէ ընդ աջմէ նորա (Ա Մակ. ձԸ 6).
- Փորձել ի Սատանայէ (Մտթ. Դ 1).

- Երթ յետս իմ Սատանայ (Մրկ. Ը 33): Կան նաեւ հայերէն բառեր սեմական իմաստով. այսպէս՝

- «Եղբայր» իբրեւ ոեւէ արեւակից.
- Ահա մայր նորա եւ եղբարք նորա (Մտթ. ԺԲ 46).
- Ահա մայր քո եւ եղբարք քո (Մտթ. ԺԲ 47).
- Գան եղբարքն եւ մայր նորա (Մրկ. Գ 31).
- զՅակոբոս զեղբայրն Տեառն (Գաղ. Ա 19) եւն...

«Փայտ» Խաչի իմաստով.

- Բեւեռեալ ի փայտի սպանէք (Գործ. Բ 23).
- Սպանէք կախեալ զփայտէ. - Suspendentes in ligno. - κρεμάσαντες εφπιφξύλου. (Գործ. Ե 30).
- Ջոր եւ սպանին կապեալ զփայտէ (Գործ. Ժ 39).

3. Երբայական բացատրութիւններ:

- «Ծաշակել զմահ» - մեռնիլ Որք ոչ ճաշակեսցեն զմահ. - Non gustabunt mortem. - μη γεύσονται θανάτου. (Մտթ. ԺԶ 28).
- Որք մի՛ ճաշակեսցեն զմահ (Մրկ. Ը 39).
- Մի՛ ճաշակեսցէ զմահ ի յաւիտեան (Յովհ. Ը 52).
- «Նստել ընդ աջմէ» Բնութեան նմանակցութիւն կը նշանակէ հրեաների քով, իշխելու տիրելու հաւասարութիւն:
 - Նստաւ ընդ աջմէ նորա (Գ Թագ. Բ 19).
 - Ջի նստէր ընդ աջմէ Թագաւորին (Ա Եզր. Դ 29).
 - Նիստ ընդ աջմէ իմմէ (Մտթ. ԻԲ 44: Սղմ. ԺԵ 8, ԽԴ 10, Ղ 7, ձԸ 6, 31, ձԹ

1, 5: Մրկ. Ժ 37, ԺԲ 36, ԺԴ 62, ԺԶ, Ե՛ 19: Ղուկ. Ի 42, ԻԲ 69, Գործ. Բ 34, Է 55) եւ այլն...

«Առնել զօրէնս» կատարել օրէնքը (Գաղ. 2 2):

Հայերէնի մէջ այնքան խորթ է թէեւ այս բացատրութիւնը, սակայն երբայեցեբէն է, լատիններէնը կը գործածէ „facere legem”.

- Ոյք առնեն զօրէնս քո (Նէեմ. Ա 5).
- Առնել զօրէնս Տեառն Աստուծոյ քո (Ա Մնաց. ԻԲ 12)
- Առնել զամենայն բանս օրինացս... (Բ Օր. ԻԸ 58, ԼԲ 46).
- Առնել զամենայն պատգամս օրինացս (Բ Օր. ԻԹ 29).

Կայ նաեւ «Գնալ յօրէնս» (Սղմ. ՃԺԸ 1) = Համաձայն:

- «Գիտել» ամուսնական իմաստով.
- Քանզի զայր ոչ գիտեմ. - Quoniam virum non cognosco. - εφπει ανδρα ουφγινωσκω. (Ղուկ. Ա 34).
- Որ զայր ոչ գիտեն (Ծնն. ԺԹ 5, 8: ԺԴ 16).
- Չոր այր ոչ գիտէր (Ծնն. ԺԴ 16).
- Որ գիտիցէ զանկողինս... (Դատ. ԻԱ 11, 12).
- Ոչ գիտաց զանկողինս յանցանաց (Իմստ. Գ 13).

- «Դրունք դժոխոց»
- Կրնայ նշանակել թէ՛ մահուան դոռը.
- Մերձեալսն ի դրուսնս դժոխոց (Գ Մակ. Ե 28).
- Մտեալ իսկ էին ի դրուսնս դժոխոց (Գ Մակ. Զ 22).

եւ թէ՛ սատանայ կամ սատանայի գորութիւնը.

- Դրունք դժոխոց զնա մի յաղթած. (Մտթ. ԺԶ 18):

- «Պտուղ որովայնի»
- Fructus ventris lumborum, ὁ καρπὸς τῆς κοιλιᾶς σου (Ղուկ. Ա 47).
- Ի պտղոյ որովայնէ քումմէ նստուցից (Սղմ. ՃԼԱ 11).
- Չի որդեակ պտուղ որովայնի... (Առակ. ԼԱ 2).
- Օրհնեալ է պտուղ որովայնի քո (Ղուկ. Ա 42).

«Բանալ զբերան».

Պատկերալից բացատրութիւն «խօսիլ»-ի Համազօր.

- Բացեալ զբերան իւր ուսուցանէր. - Aperiens os suum. - καὶ ἀνοι ξας τὸ στόμα αὐτοῦ. (Մտթ. Ե 2).
- Բացից առաւօք զբերան իմ. - Aperiam in parabolis os meum. - Ἀνοίξω εὐ παραβολαῖς τὸ στόμα μου. (Մտթ. ԺԳ 35).
- Եբաց Փիլիպպոս զբերան իւր (Գործ. Ը 35).
- Մերձ էր Պողոս բանալ զբերան իւր (Գործ. ԺԸ 14, Ժ 34: Եփ. Զ 19: Դատ. ԺԱ 35, 36: Եսթ. ԺԴ 10: Բ Մակ. Զ 30: Սղմ. ԻԱ 14, ԼԴ 21, ԼԸ 10, ՀԷ 2: Առակ. ԼԱ 8: Սիր. ԻԹ 31, ԼԹ 7: Յոբ ԼԳ 2, ԼԵ 16: Ես. Ե 14: Դան. Գ 25, 33. Ժ 16: Եզեկ. Գ 2, 27: Յայտ. ԺԳ 6 - «Եբաց զբերան իւր»):

«Գօտիք պնդեալ» արթուն եւ պատրաստ ըլլալու իմաստով.

- Եղիցին գօտիք ձեր պնդեալ - Sint lumbi vestri praecincti. - Ἔστωσαν ἰμῶν αἱ ὀσφύες περιεζωσμένοι (Ղուկ. ԺԲ 35).
- Գօտիք ձեր ընդ մէջս (Ելք. ԺԲ 11).
- Ա՛՞՞ գօտի ընդ մէջ (Դ Թագ. Դ 29).
- Գօտի ածեալ պաշտեա՛ զիս (Ղուկ. ԺԷ 8).
- Անձամբ անձին գօտի ածէիր (Յովհ. ԻԱ 18):

Քերականական երբայաբանութիւններ:

ա) «եւ եղեւ...»
et factum st et..., και εγένετο και... կը գործածուի դիմաւոր բայով, Հայերէնի ինչպէս նաեւ լատիններէն եւ յունարէնի մէջ կարելի էր բոլորովին զանց ընել առանց իմաստին վնասելու:

- եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս (Մտթ. ԺԹ 1).
- եւ եղեւ նմա ի շաբաթուն անցանել (Մրկ. Բ 23).
- եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ (Ղուկ. Բ 1).

բ) «ի» առաւել «աներեւոյթ»-ը բային
Ստէպ կը գործածուի գոյգ Կտակարաններուն մէջն ալ «մինչդեռ» «իբրեւ»-ի իմաստով. cum + աներեւոյթ, εν τω + աներեւոյթ.

- եւ եղեւ ի քահանայանալն նորա... - Factum est autem cum sacerdotio fungeretur - Ἐγένετο δὲ ἐν τῷ ἱερατεύειν αὐτὸν (Ղուկ. Ա 8).
- յելանելն ձեր յեղիպտոսէ (Յես. Բ 10).
- Ի յամել փեսային (Մտթ. ԻԵ 5).
- յելանելն նոցա յերուսաղէմ (Ղուկ. Բ 42).
- Ի դարձուցանել զթիկունս իւր (Ա Թագ. Ժ 9).
- Ի գնալն նորա ի Սիկելակ (Ա Մնաց. ԺԲ 20):

գ) Անցեալ դերբայներու ոչ անհրաժեշտ գործածութիւն, երբայեցեբէնի յատուկ:

- Բացեալ զբերան իւր (ստէպ) - Aperiens os suum. - ἀνοίξας τὸ στόμα αὐτοῦ. (Մտթ. Ե 2).
- Ելեալ զնաց, egressus ibat, ἐξελθὼν ἐπορεύθη.
- Ելեալ խնդրեցից... (Առակ. ԻԳ 33).

- Ելեալ զնացին յերամակն խոզից (Մտթ. Ը 32).
- Ելեալ ածեցեալ տայր պտուղ (Մրկ. Դ 8).
- Ելեալ շրջէին ընդ քաղաքս (Ղուկ. Թ 6):

դ) Ստէպ կը գործածուի նախդրին Հայցական փոխանակ պարզ ստորոգելի.

- Եղիլիք ինձ յուստերս եւ ի դստերս - Et ero vobis in patrem, et vos eretis mihi in filios et filias, dici Dominus. - καὶ ἔσομαι ἰμῖν εἰς πατέρα, και ἰμεῖς εἔσεσθε μοε εἰς υἱοὺς και θυγατέρας... (Բ Կոր. Զ 18).
- Արար Աստուած զմարդն ի պատկեր իւր (Ծնն. Ա 27).
- Եղիցին երկոքեան ի մարմին մի (Մտթ. ԺԹ 5: Մրկ. Ժ 8: Եփ. Ե 31: Յուդիթ ԺԴ 6: Սիր. Լ 14)... զի եղէ Իսրայէլի ի Հայր (Երեմ. ԼԱ 9).
- Ես եղէց քեզ ի Հայր... (Բ Կոր. Զ 18).
- Առից զձեզ ինձ ի ժողովուրդ (Ելք. Զ 7).
- Եղիցուք քեզ ի ծառայս (Ա Թագ. ԺԷ 9):

ե) «Որդի»

կը գործածուի գոյականի սեռականին հետ, փոխանակ Համապատասխան ածականի:

- ... Բայց որդին կորստեան. - Nemo ex eis periit nisi filius perditionis. - οὐδεις ἐξ αὐτῶν... εἰ μὴ οἱ υἱοὶ τῆς ἀπωλείας. (Յովհ. ԺԷ 12).
- Ո՛չ դուք որդիք կորստեան էք (Ես. ԾԷ 4).
- առնէք զնա որդի գեհենի (Մտթ. ԻԳ 15):
- Եթէ իցէ անդ որդի ողջունի (Ղուկ. Ժ 6).
- զի որդիք աշխարհիս այսոքիկ (Ղուկ. ԺԶ 8).



- զի որդիք լուսոյ եղիջիք (շատ) (Յովհ. ԺԲ 36) եւն:

զ) Երբայց երէնի մէջ ածականի գործածութիւն չըլլալով: նոյնպէս բոլոր ածականները կը ձեւանան գոյականին սեռականէն որուն հայ թարգմանիչը ստէպ կ'ենթարկուի:

- Որ է նոցա հանդէս կորստեան. - Quae illis est causa perditionis.

- ἦτις ἐστὶν αὐτοῖς ἔνδειξις ἀπωλείας. (Փիլ. Ա 28).

- Խաւար խստութեան (խիստ) ի տարակուս. (Ես. Ե 30).

- այր իմաստուն, աթոռ հանճարոյ (Առ. ԺԲ 23).

- Հոգի գիտութեան եւ աստուածաշատութեան (Ես ԺԱ 2).

- որ ունիցի զկերպարանս աստուածապաշտութեան (Բ Տիմ. Գ 5).

- Ոչինչ գործ չարութեան ի նոսա (Եսթ. ԺԶ 15).

- Հոգի շնորհաց եւ գթութեան (Զաք. ԺԲ 10).

- Օր խռովութեան եւ կորստեան (Ես. ԻԲ 5).

- Մածուցանիցեն հերձուածս կորստեան (Բ Պետ. Բ 1).

է) Երբայց երէնը բաղդատական եւ գերադրական աստիճաններ չունի եւ անոնց փոխարէն կը գործածէ դրական աստիճանը: Հայերէնը թէեւ շատ անգամ կը գործածէ բաղդատական ձեւը (օր. լաւագոյն), բայց ընդհանրապէս կը մնայ բնագրին հարազատ. այսպէս՝

- Լաւ էր նմա եթէ չէր իսկ ծնեալ. - Bonum erat (meglius) ei, si non esset natus. - καλὸν αὐτῷ - փոխանակ κάλιον. (Մրկ. ԺԴ 21).

- Լաւ էր թէ մեռեալ էաք (Մնն. ԻԹ 19, Ելք. ԺԶ 3).

- զի լաւ էր մեզ յեզիպտոս... (Թիւ. ԺԱ 18).

- Լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց (Մտթ. Ե 30).

- Ոչ է աշակերտ լաւ քան զվարդապետ իւր (Ղուկ. Զ 40).

Մտթ. (ԺԹ 24) եւ Մրկ. (Ժ 25) կը գործածեն «Դիւրին է մալխոյ...» մինչ Ղուկաս կ'ըսէ «Դիւրագոյն է մալխոյ ընդ...» (ԺԸ 25).

Զինչ դիւրին է, ասել... (Մրկ. Բ 9).

- Դիւրին իցէ երկնից եւ երկրի... (Ղուկ. ԺԶ 17).

- Մեծ է պատիժ իմ քան զթողուլդ (Մնն. Դ 13).

- Մեծ է Տէր քան զամենայն աստուածս (Մնն. ԺԸ 11).

- Փոքրիկն յարքայութեան երկնից մեծ է... (Մտթ. ԺԱ 11).

- Զի մեծ քան զՅովնան է աստ (Մտթ. ԺԲ 41, 42 եւն...).

- Հայր իմ մեծ է քան զիս (Յովհ. ԺԴ 28) եւն եւն...

ը) «Ոչինչ» եւ «Ոչ ոք»

Այս ժխտական ձեւերը, չըլլալով երբայց երէնի մէջ, կը գործածուին զանազան դարձուածքներ մերձաւոր այս իմաստներուն.

- Ոչ ամենեքեան բաւական են. - Non omnes capiunt verbum. - փոխանակ „Nemo". - οὐ πάντες χωροῦσιν τὸν λόγον τοῦτον. (Մտթ. ԺԹ 11).

- Ոչ տկարացի առ յԱստուծոյ ամենայն բան (= ոչինչ) (Ղուկ. Ա 37).

- Ոչ գոյ պակասութիւն ամենայն բանի (Դատ. ԺԸ 10).

- Ամենայն բան ոչ թագչիցի... (Բ Թագ. ԺԸ 13).

- Մի վրիպեցի բան մի ի բանից (Եսթ. Զ 10):

թ) «Որ»

Երբայց երէնի մէջ «որ» յարաբերական դերանունը չհոլովուելով, անձնական դերանունը կը հոլովուի: Հայ ինչպէս նախ յոյն եւ լատին հեղինակները անձնականէն զատ կը հոլովեն նախ յարաբերական դերանունը, քանի որ իրենց լեզուն կը թոյլատրէ, աւելի ճիշտ՝ կը պահանջէ:

- Որում չեմ բաւական խոնարհել լուծանել զխրացս կօշկաց Նորա. - Cuius non sum dignus procumbens solvere corrigiam calccamentorum eius.

- οὐ οὐκ εἰμὶ ἰκανὸς κύψας λῦσαι τὸν ἰμάντα τῶν ὑποδημάτων αὐτοῦ. (Մրկ. Ա 7).

- Որոյ դուստր իւր նեղեալ էր յայսոյ (Մրկ. Է 25).

- յորում այս պիղծ գոյր ի նմա (Մրկ. Ա 23).

- Որոյ հեծանոցն ի ձեռին Իւրում (Մտթ. Գ 12).

Այս ձեւը ստէպ գործածուած է Հին Կտակարանին մէջ, իսկ Նորին մէջ տասէն աւելի անգամներ:

ծ) «մի»

Քանակական այս թիւը ստէպ կը գործածուի իբրեւ անորոշ յօդ (ոմն-ի տեղ), քանի որ երբայց երէնը զուրկ է «ոմն» է: Հայերէնը սակայն շատ աւելի յաճախակի «ոմն» կը նախընտրէ, օր. (Ղուկ. ԻԲ 56) եւն...

«մի» «ոմն»-ի իմաստով.

- Մատուցեալ դպիր մի սսէ ցնա. - Accedeus unus (quidam) seriba, ail illi.

- Προσελθὼν εἷς γραμματεὺς εἶπε - ναὐτῷ. (Մտթ. Ը 19).

- Մատեալ առ նա աղախին մի (Մտթ. ԻԶ 69).

- Գայ աղախին մի քահանայապետին (Մրկ. ԺԴ 66).

- Մատեալ աղախին մի ունկն դնել (Գործ. ԺԲ 13).

- Ղուկաս համապատասխան հատուածին մէջ կը գործածէ ոմն. «աղախին ոմն» (Ղուկ. ԻԲ 56):

ժա) «Եթէ»

«Եթէ ստէպ կը գործածուի երկու Կտակարաններուն մէջ ալ, փոխանակ «արդեօք»ի:

- Տէր եթէ սակաւք իցեն որ... - Domine, si paucisunt... (փոխան. num) - Κύριε, εἰ ὀλιγοί... (փոխան. ἄρα μή) (Ղուկ. ԺԳ 23).

- Տէր, եթէ ի ժամանակի աստ... (Գործ. Ա 6).

- ...եթէ զհոգին սուրբ ընկալարո՞ւք (Գործ. ԺԹ 2).

- ... եթէ յաւելցո՞ւք մարտնչիլ ի պատիր (Դատ. Ի 23) եւն...

Միւս կողմէ սակայն բոլորովին անտեսուած է «արդեօք»-ը գործածուած 30-է աւելի անգամներ. այսպէս՝

- Կերա՞ր արդեօք ի նմանէ (Մնն. Գ 11).

- Զէի արդեօք արժանի համբուրել (Մնն. ԼԱ 28) եւն...

ժբ) «ի (սուր...»

Նախդրիւ հայցական գործածուած գործիականի իմաստով.

- Սպանին ի սուր (սրով) սուսերի (Մնն. ԼԴ 26).

- Անկան ամենեքեան ի սուր սուսերի (Յես. Ը 24).

- (Ա Եզր. Ը 78: Բ Եզր. Թ 7: Յուդիթ Ը 18: Ա Մակ. - բազմաթիւ են: Բ Մակ. ԺԳ 21: Սղմ. Է 62, 64: Սիր. ԻԶ 27: Ես. ԺԳ 15, ԼԷ 7, ԿԵ 12, ԿԶ 16: Ովսէ: Ղուկ. ԻԱ 24) եւն...

- Եկի ի մարմին անարատ (Իմաս. Ը 20).

- ո՞չ յանուն քո մարգարէացաք (Մտթ. Է 22).

- Որ ընդունի զմարգ. յանուն մարգ. (Մտթ. Ժ 41, 42. ԺԸ 5, 20. ԻԱ 9. ԻԸ 19 - մկրտեցիք յանուն)
- Ի նմանութիւն որթու խոտակերի (Սղմ. ձԵ 20).
- Ի նմանութիւն տաճարի (Սղմ. ձԽԳ 12).
- Դրօշեաց ի նմանութիւն պատկերի (Ես. ԽԴ 13).
- Իբրեւ ի նմանութիւն որդւոյ մարդոյ (Դան. Ժ 16).
- Ի պատկեր իւրոյ բարերար... (Իմաս. Բ 23).
- Ի նոյն պատկեր նորոգիմք (Բ Կոր. Գ 18):

ժգ) «Եւ»

Չանազան տեղեր վերջաւորութեան ուժ կը ստանայ, զի, բայց, յայնժամ-ի եւն... իմաստով:

- Հասեալ է ժամ եւ որդի մարդոյ մատնի ... փոխանակ զի-ի
- *Ecce appropinquavit hora, et Filius hominis tradetur...* փոխանակ "ui"-ի. *καὶ ὁ υἱὸς τοῦ ἀνθρώπου* փոխանակ *iva*. (Մտթ. ԻԶ 45).
- Իբրեւ լցան աւուրք ութ ... եւ կոչեցաւ անուն նորա (Ղուկ. Բ 21).
- Կամեցայ գալ առ քեզ ... եւ խաբանեաց զմեզ սատանայ (Ա Թես. Բ 18).

Մինչ Հայերէնը կ'ըսէ «զի երթայց նախ թաղեցից» (Մտթ. Ը 21), յունարէն ու լատիներէնը կը թարգմանին „*καὶ*“-„*et*“ով:

ժդ) Սեմական լեզուներու գլխաւոր յատկանիշներէն մին է անձնական դերանունի յաճախակի գործածութիւնը փոխանակ տէր-բայի:

Նոր Կտակարանին մէջ, օրինակի համար 300-է աւելի անգամներ կը հանդիպինք նախադասութիւններու ուր անձնական դերանուններու գործածութիւնը

ստեպ կը կրկնուի մի քանի տողի մէջ. առնէնք ոեւէ հատուած մը.

«Եհարց զնա Պիղատոս եւ ասէ. Դո՞ւ ես թագաւորն Հրէից. նա պատասխանի ետ նմա եւ ասէ. դու ասես, եւ չարախօսէին զնմանէ յոյժ քահանայապետքն եւ նա ոչ ինչ տայր պատասխանի» - „*Et interrogavit eum Pilatus Tu es rex Iudaeorum? Et ille respondens, ail illi: Tu dicis. Et accusabant eum summi sacerdotes in multis*” - „*Καὶ ἐπηρώτησεν αὐτον ὁ Πιλάτος σὺ εἶ ὁ Βασιλεὺς τῶν Ἰουδαίων; ὁ δὲ ἀποκριθεὶς αὐτῷ λέγει σὺ λένεις. καὶ κατηγοροῦν αὐτοῦ οἱ ἀρχιερεῖς πολλά*” (Մրկ. ԺԵ 2-3):

Եւ նման շատ հատուածներ ուր կարելի էլ գործածել տէր-բայի կամ բուրրովին զանց ընել:

Հուսկ երկու խօսք մըն ալ լատիներէնի եւ յունարէնի Հայերէնէն ունեցած քանի մը մանր տարբերակներու մասին:

ա. - Լատիներէն եւ Յունարէն շատ անգամ կ'ենթարկուին երրայեցերէնի դարձուածքային անկատարին (*loustructio periphrastica*) մինչ Հայ թարգմանիչը կը պահէ միշտ կանոնաւոր անկատարը. այսպէս մինչ մենք կ'ըսենք. - Իբրեւ իշխանութեամբ ուսուցանէր (Մտթ. Է 29), լատիներէնը կ'ըսէ.

Erat enim docens eos... փոխան. *docebat*.

Նոյնպէս յունարէնը.

- *ἦν γὰρ διδάσκων αὐτοὺς ὡς ἐξουσ...*
- *Erat enim docens eos quasi pot.* (Mc. I, 22).
- *ἦν γὰρ διδάσκων αὐτοὺς ὡς ἐξουσίαν...*
- *Eram apud vos in templo docens* (Mc. XIV, 49).
- *κάθ ἡμέραν ἤμην διδάσκιοῦν*

- Ուսուցանէր եւ ասէր... - *Clamabat ergo Jesus... docens et dicens...* (Յովհ. Է 28).

Հաւագոյն պիտի ըլլար ըսել *et docebat dicens...* եւն... եւն...

բ. Յունարէնը վաթսուէն անգամէն աւելի փոխանակ կոչականի գործածած է ուղղականը յօդով, խղճմտօրէն թարգմանելով երրայեցերէնի յօդը, որ միացած կը մնայ բառին: (Տալիթա - Տը յօդ է). այսպէս ունին 302 պարագայ, օր.

- *τὸ κοράσιον, σοὶ λέγω, ἔγειρε...* աղջիկ դու, քեզ ասես, արի'... (Մրկ. Ե 42).
- *Ἔλ, այսդ պիղծ, ի մարդոյ այսի . 'ἐξέλθε τὸ πνεῦμα τὸ ἀνάθαρτον...* (Մրկ. Ե 8).
- *Κί'ν դու, ո՞ւր ես'... ἡγουνή, ποῦ εἶσιν* (Յովհ. Ը 10).

- Աբբա՛ Հայր... 'Αββᾶ ὁ Πατήρ (Մրկ. ԺԴ 36).

- Այո՛ Հայր, զի այսպէս հաճոյ... *ναί, ὁ Πατήρ, ὅτι οὕτως εὐδοκία...* (Մտթ. ԺԱ 26).

գ. Այնտեղ, ուր Հայերէնը նախըրի Հայցական կը գործածէ (ի սուր, յանուն, ի պատկեր)... լատիներէն եւ յունարէն նախըրի տրական կը դնեն.

- *Nonne in nomine tuo propheta..., οὐ τῷ σῷ ὀνόματι ἐπραφητεύσαμεν* (Mt. 7, 22).
- *In nullo re potest exire, nisi in oratione...* *ἐν οὐδενὶ δύναται ἐξελθεῖν... ἐν προσευχῇ.*
- *Πεῖ ἰερεῖς ἐլանէ... ἐթէ ոչ աղօթիւք եւ պահօք* (Մրկ. Թ 28):

Անդրանիկ Կարապետեան

Գեղարուեստական խօսքի մէջ մի շարք արտայայտչամիջոցներ ձևաւորուում են շարահիւսական կրկնութեամբ: Կրկնաբերական արտայայտչամիջոցները, որոնք մեծ թիւ են կազմում, լիցքաւորում են խօսքը՝ այն հարստացնելով յուզարտայայտչական տարբեր նրբերանգներով: Նման արտայայտչամիջոցներից մէկը յարակրկնութիւնն է:

Յարակրկնութիւնը կամ անոմալիզը (անաֆորա) կրկնաբերութեան արուեստի ամենապարզ եւ հնագոյն դրսեւորումն է, որ յատկորոշւում է չափածոյում բանաստեղծական տան կամ ամբողջ բանաստեղծութեան հարեւան տողերի, իսկ արձակում՝ կից նախադասութիւնների սկզբում միեւնոյն բառի կամ շարահիւսական աւելի ծաւալուն միաւորի կրկնութեամբ: Ինչ խօսք, չափածոյ եւ արձակ խօսքերում յարակրկնութիւնն արտայայտուում է տարբեր յաճախականութեամբ. չափածոյին աւելի շատ է ուղեկցում: Երկու դէպքում էլ շարահիւսական միաւորների նոյնասկիզբային կրկնութիւնն ուժեղացնում է խօսքի ազդեցութիւնը՝ հիմնական թեմային տարրը պահելով ընթերցողի ուշադրութեան կենտրոնում:

Յարակրկնութիւնը հանդէս է գալիս բազում փոփոխակներով. դրա հետեւողական կիրառմամբ յատկորոշուող բանաստեղծութիւնների մօտ հանդիպում են նաեւ անհետեւողականութեան արտայայտութիւններ, երբ միեւնոյն չափածոյ խօսքի ոչ բոլոր տողերն են կառուցւում յարակրկնութեան սկզբունքով: Բայց տաղանդաւոր բանաստեղծների կողմից յարակրկնութեան միջարկուած շարադասութեամբ կիրառումն էլ յաճախ լաւա-

գոյնս ծառայում է խօսքի գեղագիտական պահանջներին: Այսպէս՝

Մէկ իմ յոյսը գայիսոցն է իմ բազկի,
Մէկ անոյս եմ ու մոլոր:
Մէկ լեռ պատռող յոյս է թում ինձ Արփան
Վաղուայ ծովով Սեւանի,
Մէկ անոյս է թում սարն էլ իմ Սիփան,
Ծով արցունքով իմ վանի:
Մէկ ասում եմ՝ փշրեմ քնարն իմ ցաւի,
Երգեմ խինդը խելագար,
Մէկ էլ տեսար՝ լացն եմ վանայ մեր ծովի,
Ողջ մի դար եմ, մի աշխարհ:
Մէկ ինձ անայում, եօթը անայում երգերիս՝
Մէկ հանճար եմ, մէկ՝ անճար,
Ա՛յս, ի՞նչ ասեմ, երբ արցունքն է վերքերիս
Խոստովանանքն իմ անչար... (ՅԾ, 3, 193):

Երբեմն յարակրկնութեան շարք են կազմում միեւնոյն բառի քերականական ձևերը: Սա բառի մասնակի կրկնութիւն է, հետեւաբար նաեւ՝ մասնակի յարակրկնութիւն: Նման յարակրկնութեան դէպքում բնականաբար տարբեր է լինում կրկնութեան շարքի անդամների շարահիւսական գործառոյթը. ինչպէս՝

Փողոցները երկա՛ր,
Ու ձանձրալի, աշնան անձրեւների անան,
Փողոցներ, որ կան,
Փողոցների անկան,
Փողոցները՝ դաժա՛ւ, անհրապոյր, չարկամ,-
Որքա՛ւ, որքա՛ւ, որքա՛ւ անհատը եմ հիմա
(ԵԶՊԲ, 312):

Մասնակի է նաեւ յարակրկնութեան այն շարքը, որի անդամները կազմուած են նոյնահիմքութեան սկզբունքով՝ միեւնոյն արմատից կամ հիմքից բաղադրուած բա-

ռերի նոյնասկիզբային արուեստաւոր գործածութեամբ. ինչպէս՝

Կանգնել էր դաշտում հասկը ցորենի
Աստուածավայել իր շշուկներով,
Իր մեծութիւնն էր տանում՝ երբեմնի
Աստուածարձակ երկիւղներն ի վեր,
Եւ աստուծային բեխիկներն ի վար
Հողին ու քարին
Օրհնութիւններ ու սարսուռ էր շաղում
(ՀՄԲԵ, 145-146):

Մենք յարակրկնութեան դրսեւորումների տարբերակման կարեւորագոյն հիմունք ենք դիտում կրկնութեան շարքի անդամների շարահիւսական գործառոյթը, քանի որ կրկնութեան այս ձևի շատ իւրայատկութիւններ պայմանաւորուած են կրկնուող բառի շարահիւսական կիրառութեամբ: Եւ ըստ շարահիւսական գործառոյթի՝ տարբերակում են յարակրկնութեան հետեւեալ դրսեւորումները՝ ենթակայ յարակրկնութիւն, ստորոգեալ յարակրկնութիւն, գոյականական անդամի լրացում (որոշիչ, յատկացուցիչ) յարակրկնութիւն, բայական անդամի լրացում (խնդիր, պարագայ) յարակրկնութիւն, անխաղասութեան անդամ չհանդիսացող լեզուամիատր յարակրկնութիւն, անխաղասութիւն յարակրկնութիւն եւ այլն: Կրկնութեան այս ձևերը հանդէս են բերում տարբեր առանձնայատկութիւններ, որոնց քննութիւնը կարեւոր է՝ հարցն իր համակարգային ամբողջականութեան մէջ ներկայացնելու համար:

Որպէս ժողովրդական լեզուամտածողութեանը բնորոշ արտայայտչամիջոց՝ յարակրկնութիւնը միտքը հանդիսաւոր ու ծաղկուն ոճով արտայայտելու նպատակով դեռ վաղ անցեալում երեւան է եկել մեր ժողովրդական ստեղծագործութիւններում, որտեղից եւ անցել է գեղարուեստական գրականութիւն: Իբրեւ խօսքի կառուցման ձև՝ այն իր հարուստ արտայայտութիւնն է գտել մեր գրաւոր խօսքի առաջնեկում՝ Աստուածաշնչի հայերէն թարգմանու-

թեան մէջ՝ պատճէնելով բնագրի նոյն իրակութիւնը: Այստեղ յարակրկնութիւնն արտայայտուում է կից պարբերութիւնները նոյն բառով կամ բաղադրիչ նախադասութեամբ սկսելով, որի հետեւանքով խօսքն օժտուում է հռետորական շնչով ու հանդիսաւորութեամբ, ուժեղանում է խօսքի ներքին լարումը, կարեւորում է կրկնուող բառի իմաստը կամ բաղադրիչ նախադասութեան բովանդակութիւնը հաղորդման մէջ, եւ, որ խիստ կարեւոր է, արձակ խօսքը կը շարժուի: Այս տեսակէտից խորհրդանշական է Սուրբ գրքի սկիզբը: «Գիրք ծննդոցի» առաջին հատուածի՝ ստեղծագործութեան պատմութեան եօթ պարբերութիւնները (2-8-րդ) սկսւում են միեւնոյն Աստուած ասաց նախադասութեամբ՝ հաւաստելով ամբողջ գրքի՝ Աստուծոյ պատգամներ լինելը: Եւ եթէ նկատի ունենանք նաեւ այն, որ 1-ին եւ 9-րդ պարբերութիւնների սկզբի նախադասութիւններում էլ յիշատակուում է Աստուած բառը՝ որպէս գործող անձի անուն (ի սկզբանէ Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը..., Աստուած տեսաւ, որ...), ապա կարող ենք փաստել, որ Աստուածաշնչի սկիզբն ամբողջովին յարակրկնութեան սկզբունքով է շարադրուած:

ա. ԵՆԹԱԿԱՅ ՅԱՐԱԿՐԿՆՈՒԹԻՒՆ

Աւելի յաճախ յարակրկնութեան շարք է կազմում նախադասութեան ենթական՝ իր ամենատարբեր դրսեւորումներով: Նման կրկնութիւնն անուանում ենք ենթակայ յարակրկնութիւն: Սա, իբրեւ լեզուական արտայայտչամիջոց, երեւան է հանում ոճական տարբեր իւրայատկութիւններ՝ պայմանաւորուած կրկնուող ենթականի բառական արտայայտութեամբ, տուեալ շարահիւսական կառուցի կառուցուածքային առանձնայատկութիւններով:

Յարակրկնութեամբ հանդէս են գալիս գոյականով, դերանուամբ եւ փոխանուն

բառերով արտայայտուած ենթակաները: Բոլոր դէպքերում ենթական յարակրկնութեամբ կառուցուած խօսքում տրամաբանական շեշտն ու կշռոյթը կրող միաւորը կրկնուող ենթական է: Գոյական ենթական յարակրկնութիւն կազմելիս բանատող-նախադասութիւններից մէկը կարող է լինել ամբողջական, միւսը՝ թերի՝ ստորոգեալի լրիւ կամ մասնակի զեղչմամբ, բայց դա չի խաթարում յարակրկնութեան ներդաշնակութիւնը. ինչպէս՝

Մայրս՝ մշտավառ գթութեան կանթեղ,
Մայրս՝ քայլող մում՝ մշտագթութեան,
Մայրս՝ գթութեան ծով էր խելափէտ,
Երեկ՝ ծով, այսօր՝ մի բուռ գերեզման,
Էլ չեմ գտնելու մօրս ոչ մի տեղ,
Աշխարհում խիղճը թաղուեց յաւիտեան
(ՅԾՀՄ, 221):

Յարակրկնութեան բազմանդամ շարքի երկու-երեք անդամներ կարող են լինել ենթական, իսկ մէկ անդամն էլ կարող է հանդէս գալ այլ կիրառութեամբ. ինչպէս՝

Դաշտերը միայն գրաւում են քեզ.
Դաշտերը կանաչ, գոհարը ցողի:
Դաշտերի միգում կորցրել եմ ես
Մի հին, երկրային բերկրանքի ուղի (ԵԶՊԲ, 247):

Աւելի յաճախ բանաստեղծական տունը կառուցուած է միջարկուող յարակրկնութեան երկու տարբեր շարքերի զուգորդմամբ. ինչպէս՝

Մի կմախք տանում էր մէջքին մագութի երկաթեայ աման,
Մի ուրիշը՝ հսկայ մի հաշուիչ, որ նման էր փայտեայ քնարի,
Մի կմախք, շալակին դրած, մի դոյլ էր տանում իր համար,
Մի ուրիշը պահել էր գլխին ոսկեզօծ նժար վիթխարի (ԵԶՊԲ, 497):

Այստեղ յարակրկնութեան երկու շարքերի անդամները յատկորոշուած են արտայայտութեան եւ բովանդակութեան

պլանների անհամասեռութեամբ. ընդհանուր ենթակաները ձեռով նոյնն են, իսկ նշանակեալներով՝ տարբեր, ուստի համանուն ենթականեր են եւ կազմում են համանուն ենթական յարակրկնութիւններ:

Յարակրկնութիւնն աւելի յաճախ ձեւաւորուած է դերանուն ենթականի կրկնութեամբ: Դերանուն ենթական յարակրկնութիւնը երեւան է գալիս մի շարք տարբերակներով եւ գոյական ենթականի համեմատութեամբ աւելի ճկուն է բազմանդամ շարք կազմելու առումով: Շատ յաճախ դերանուն ենթական յարակրկնութիւն է կազմում չափածոյ երկկազմ բարդ համադասական կապակցութեան մէջ. ինչպէս՝

Դու բողբոջ ես մի հին ծառի,
Դու մի կանաչ-կանաչ տերեւ,
Ուրախ կանչն ես դու ծիծաղի,
Դու մի ծիլ ես՝ վրան արեւ (ԳԱԲՊ, 40):

Դերանուն ենթական յարակրկնութիւն է կազմում անհանգոյց համադասական նախադասութեան մէջ, որ կարելի է դիտել նաեւ միակազմ կառուցուածք: Յարակրկնութեան արուեստի այս ձեւի կիրառումը պահանջում է մեծ վարպետութիւն, բանաստեղծական բացառիկ շնորհ: Խօսքարուեստի այս ինքնատիպ ձեւին յաճախ է դիմում Հ. Սահեանը: Այսպէս, օրինակ, նրա «Պարոյր Սեւակին» բանաստեղծութիւնը կառուցուած է այս սկզբունքով:

Դու մատչելի, մարդամօտ,
Դու եւ անառիկ,
Մարգի համեմ, լանջի խոտ,
Բարձունքի ծաղիկ:

Դու մի բանակ, դու մի զօրք,
Դու մի տոհմի շիւղ,
Դու հրթիռի հրացոյլք
Ու երդիկի ծովս... (ՀՄ, 2, 152):

Անդէմ անուանական միակազմ նախադասութիւններից բաղադրուած բանաստեղծութիւնը յաճախ կառուցուած է են-

թականի երկշարք յարակրկնութեան սկզբունքով. ենթական հանդէս է գալիս տողերի սկզբում եւ հատածից յետոյ: Ոճական այս հնարը յաճախ է կիրառում Հ. Սահեանը: Ահա աւսիկ այդ սկզբունքով գրուած «Մարդ» բանաստեղծութիւնը.

Դու հողածին, դու եւ աստուած,
Դու եւ յաղթող, դու եւ պարտուած,
Դու անտակ վիհ, դու եւ բարձունք,
Դու եւ ժպիտ, դու եւ արցունք:
Դու եւ ծովեր, դու եւ արցունք:
Դու եւ ամպրոպ, եւ ծիածան,
Դու Ծիր Կաթին, դու եւ վայրի
Մացառներում կորած կածան:
Դու տնակեաց ու թափառիկ,
Դու եւ կրակ, դու եւ ծաղիկ,
Խեղճ ու կրակ եւ անառիկ,
Դու բնութիւն անքննելի
Եւ բնութեան մի պատառիկ,
Դու հնութիւն հնամենի
Ու դեռ գալիք... (ՀՄ, 2, 57):

Այստեղ ենթականի երկշարք կրկնութիւնը պայմանաւորուած է անհանգոյց ստորոգեալների բառային ու խօսքային հականշութեամբ (Հողածին-աստուած, յաղթող-պարտուած, անտակ վիհ-բարձունք, ժպիտ-արցունք, ամպրոպ-ծիածան եւ այլն), որը յատկորոշում է միեւնոյն երկրորդ դէմքին ներհակ յատկանիշների վերագրումը տրամաբանական ստորոգմամբ: Գեղարուեստական պատկերները զուգադրուած եւ հակադրուած են ենթականի ներդաշնակ յարակրկնութեամբ:

Ամբողջ քառատող տունը ենթական յարակրկնութեան սկզբունքով կառուցուած լինելու դէպքում երբեմն առաջին երկու տողերում ենթական կապակցուած է անուանական ստորոգեալների, իսկ վերջին երկու տողերում՝ անհանգոյց անուանական ստորոգեալների հետ. ինչպէս՝

Ամէն ինչ հրաշք է իրական,
Ամէն ինչ քաղձանք է ու բարիք

Ամէն ինչ կանգուն ու թափանցիկ,
Ամէն ինչ տրոտող ու տիրական (ՀՄ, 2, 44):

Դերանուն ենթականի յարակրկնութեան իւրայատկութիւններից մէկն էլ այն է, որ յաճախ ծաւալուն չափածոյ խօսքի տողասկզբերում կրկնուող ենթական ամէն անգամ լրացուած է գոյականական անդամի լրացում ստորադաս նախադասութեամբ: Այս դէպքում կրկնուող դերանուն ենթական ձեռք է բերում գլխաւոր նախադասութիւնների շարահիւսական գործառոյթ, եւ նրա յարակրկնութիւնն, ըստ էութեան, բառ-գլխաւոր նախադասութեան յարակրկնութիւնն է՝ համապատասխան ստորադաս նախադասութիւնները խօսքի շղթայ բերելու նպատակով՝ գործող առարկան բազմակողմանիօրէն բնութագրելու համար: Այսպէս՝

Ես, որ տրտմում եմ մի ծաղկի համար,
Դողում եմ, երբ գեթ մի վարդ եմ քաղում,
Ես, որ մեղուի էլ վշտով՝ վշտահար,
Մի թիթեռի էլ մահով եմ դողում,
Ես, որ անէծք եմ ամէն մահի դէմ,
Ձեր կեանքի համար մօր պէս կ'աղօթեմ,
Ես, որ ամէնքից ցաւով տազնապում՝
Սփիւռք-հայրենիք կամուրջ եմ կապում,
Ես, որ ծով խղճի յորձանք եմ յաւէտ,
Թաղում եմ ամէն մի թաղուողի հետ:
Ես, որ իմ վիշտը խորունկ թաքցնում,
Աստղի էլ անտես ցաւն եմ հարցնում,
Ես, որ ցնծում եմ մի վարդ բացուելիս,
Ես, որ մրջնի էլ մահով եմ լալիս,
Երբ որ ես մեռնեմ, Աստուած իմ, տեսնես՝
Իմ վրայ կգա՞յ մէկը՝ մօրս պէս,
Իմ վրայ լացող մի ծով կը լինի՞ -
Թէ՞ քար է աշխարհն ու էլ մայր չունի
(ՅԾՅՄ, 234):

Դերանուն ենթական յարակրկնութեան մի տարատեսակ է անդէմ միակազմ նախադասութեան գերադաս անգամ դերանունան նոյնասկզբային կրկնութիւնը. ինչպէս՝

Քո մէջ ապրում է յոյսը չըմարող...
 Դո՛ւ, որպէս գալիք գարունների լուր,
 Դո՛ւ, որպէս սէրը՝ մահու դէմ՝ կարող-
 Ազատութեան ե՛րգ, կարկաչո՛ւն աղբիւր...
 (ՎՏԲ, 305):

Դերանուն ենթական յարակրկնու-
 թիւն է կազմում նաեւ իր որոշիչ լրացման
 հետ: Այս դէպքում յարակրկնութիւն
 պէտք է դիտել որոշիչ+ենթակայ կապակ-
 ցութիւնը: Սա բաղադրեալ յարակրկնու-
 թիւն է. *ինչպէս՝*

Այս բոլորը ճիշտ է, իհա՛րկէ,
 Այս բոլորը հզօր է ու նո՛ր... (ԵՉՊԲ, 145):

Երբեմն էլ բանաստեղծութիւնը բա-
 ղադրուած է յարակրկնութեան երկու եր-
 կանդամ շարքերից՝ միջարկուող շարադա-
 սութեամբ: Այսպէս, օրինակ. Հ. Սահեանի
 «Իմ երգածը սար է» բանաստեղծութիւնը
 կառուցուած է երկանդամ յարակրկնու-
 թեան եւ միանդամ վերջոյթի հետեւողա-
 կան կիրառմամբ:

Իմ երգածը սար է,
 Իմ երգածը ձոր է,
 Մէկն ասում է՝ չար է,
 Մէկն ասում է՝ չոր է:
 Իմ երգածը դար է,
 Իմ երգածը օր է,
 Մէկն ասում է՝ խառն է,
 Մէկն ասում է՝ խոր է:
 Իմ երգածը բախտ է,
 Իմ երգածը սիրտ է,
 Մէկն ասում է՝ բարդ է,
 Մէկն ասում է՝ բիրտ է:
 Իմ երգածը հիմն է,
 Իմ երգածը սիրտ է,
 Մէկն ասում է՝ բարդ է,
 Մէկն ասում է՝ բիրտ է:
 Իմ երգածը հիմն է,
 Իմ երգածը սիրտ է,
 Մէկն ասում է՝ հիմն է,
 Մէկն ասում է՝ հիմն է,
 Մէկն ասում է՝ հիմն է... (ՀՍ, 2, 55):

Այստեղ յարակրկնութեան գուգոր-
 գուող երկու շարքերից մէկը կողմնակի են-
 թակայ+բուն ենթակայ (իմ երգածը) կապակ-
 ցութիւնն է, իսկ միւսը՝ ենթակայ+ստորո-

գեալ (մէկն ասում է) կապակցութիւնը:
 Նմանապէս խօսքի կշռոյթային ներդաշ-
 նակութեան ապահովմանը նպաստում է
 նաեւ է հանգոյցի վերջոյթային կրկնու-
 թիւնը:

Ինչպէս երեւում է վկայակոչուած ո-
 ռոշ օրինակներից, ենթակայ յարակրկնու-
 թիւնը արտայայտում է նաեւ փոխանուն
 բառերով, իսկ այսպիսիք լինում են իմաս-
 տային-գործառական փոխանունութեամբ
 հանդէս եկող ամենատարբեր բառեր:
 Բերենք մէկ այլ օրինակ՝

Սիրտըս ցաւում է անցած գնացած
 Օրերիս համար.
 -Մէկը շշուկով պատմում է կամաց,
 Մէկը իմ հոգին տանջում է համատ
 (ՎՏԲ, 36):

բ. ՍՏՈՐՈԳԵԱԼ ՅԱՐԱԿՐԿՆՈՒԹԻՒՆ

Արդի հայերէնի չափածոյ խօսքում
 շատ յաճախադէպ է նաեւ ստորոգեալ
 յարակրկնութիւնը, որը ձեւաւորում է
 հարեւան բանաստեղծի սկզբում ստորո-
 գեալի կրկնութեամբ: Այս դէպքում խիստ
 ընդգծւում է ստորոգեալի բառական նշա-
 նակութիւնը, բանաստեղծութիւնը դառ-
 նում է ռիթմիկ ու երաժշտական, ուժեղա-
 նում են քնարական խօսքի յուզականու-
 թիւնն ու հոնտորական ուժգնութիւնը:

Ստորոգեալ յարակրկնութիւնը հան-
 դէս է գալիս շարահիւսական տարբեր կա-
 ուցուածքի նախադասութիւններում պայ-
 մանաւորելով վերջիններիս կառուցուած-
 քային ու իմաստային-ոճական տարբե-
 նոյթ իւրայատկութիւններ: Աւելի յաճախ
 ստորոգեալը յարակրկնութիւն է կազմում
 ընդհանուր ենթակայով բարդ համադա-
 սական նախադասութեան մէջ, որտեղ
 կրկնեալ եւ կրկնորդ ստորոգեալներն ի-
 րենց լրացումներով հանդէս են գալիս որ-
 պէս բարդ նախադասութեան բաղադրիչ-
 ներ: Օրինակ՝

Ծառս են լինում քաջ խմբերով անձնուէր,
 Ծառս են լինում տանջուողներով կիսամեռ,
 Ծառս են լինում անընկճելի ու արի
 Մինչեւ ճերմակ գլուխները լեռների
 (ՅԹԸԵ, 51):

Միաւորեալ նախադասութեան մէջ
 պարզ ստորոգեալի յարակրկնութիւնը եր-
 բեմն «ծառայում է իբրեւ թեմային տարր,
 որը բնաբանի ձեւով հեղինակն օգտագոր-
 ծում է խօսքը ընդարձակելու նոյն ուղ-
 դութեամբ եւ այդ հիմնական թեմային
 տարրը կրկնելով ուժեղացնում է խօսքի
 յուզարտայայտչական հնարաւորութիւն-
 ները» (1, 123). *ինչպէս՝*

Աղմկում է իմ սրտում ամէն գիշեր մի կա-
 րօս,
 Աղմկում է, որպէս խուլ ու հեռաւոր մի քա-
 մի,
 Աղմկում է մինչեւ լոյս, գանգատում է վա-
 րանոտ
 Ու ժամերն է հաշում իմ, վայրկեանները մի
 առ մի (ԵՉ, 1, 307):

Բանաստեղծական տան մէջ ստորո-
 գեալ յարակրկնութիւնն ունի անմիատարր
 արտայայտութիւն: Քանի որ բանաստեղ-
 ծական տան հիմնական տեսակը քառա-
 տողն է, ուստի անհրաժեշտ ենք համարում
 նախ անդրադառնալ այստեղ ստորոգեալի
 յարակրկնութեան արտայայտութեանը:
 Քառատող տան շրջանակներում ստորո-
 գեալ յարակրկնութիւնն արտայայտում է՝

ա) առաջին երկու տողերում՝
 Դարձաւ իր կըռուից իշխան Թաթուլը,
 Դարձաւ լաղթական իրեն գօրքի հետ,
 Սըրբեց, պատեանը դըրաւ կեռ թուրը,
 Յճծութեան ձայնից դողաց Թըմկաբերդ
 (ՅԹԸԵ, 252):

բ) վերջին երկու տողերում՝
 Թողի երկիրն իմ հայրենի,
 Անախ անցայ Արաք ու Հիմո,
 Տեսայ մարդիկ չորսզլխամի,
 Տեսայ հազար աղետ ու խիմդ (ՎՏԲ, 263):

գ) 2-րդ եւ 3-րդ տողերում՝
 Եւ էլաւ կիմը իր առաջ, սիրով փարուեց ու-
 սերին,
 Ասաց՝ երկմիտ, գիշերն ամբողջ ես տառա-
 պել եմ անքուն,
 Ասաց՝ հազար չար մտքերով աչքս յառած
 դոճերին,
 Սպասել եմ, թէ ե՞րբ արդեօք իմ սիրելին կը
 գայ տուն» (ԳՍԲՊ, 224):

դ) 1-ին եւ 3-րդ տողերում՝
 Օրօրում էր մայրս անքուն՝
 Օրօքքն անքուն բալիկիս,
 Օրօրում էր գիշերն ի բուն,
 Խլում քունը աչքերիս (ՅԾՀՄ, 92):

ե) 1-ին եւ 4-րդ տողերում՝
 Կանչում ես անվերջ
 Կապոյտ հեռուից,
 Ծշուկով անուշ
 Կանչում ես ինձ (ՎՏԲ, 92):

զ) 1-ին, 2-րդ եւ 3-րդ տողերում՝
 Եկան, կապեցին վերքերը իրենց,
 Եկան, սրբեցին արիւնն աչքերի,
 Եկան, թափ տուին փոշին ոտքերի
 Եւ կոնչացին զօրաւոր ու մեծ (ՌԴՊՎ, 291):

Որպէս կանոն՝ քառատող տան մէջ
 կրկնուող ստորոգեալն իրեն յաջորդող
 լրացումներով կազմում է մէկ բաղադրիչ
 նախադասութիւն՝ շարակարգուած բանաս-
 տեղծական մէկ տողում: Յաճախ բանաս-
 տեղծական տան առաջին երեք տողերը
 կազմում են ստորոգեալի յարակրկնու-
 թեամբ բաղադրիչ նախադասութիւններով,
 իսկ չորրորդ տողը այլ ստորոգեալով բա-
 ղադրիչ նախադասութիւն է, որը կատա-
 րում է անհրաժեշտ հետեւութիւն նախորդ
 բանաստեղծի հաղորդումից. *ինչպէս՝*

Կըտրեց ջրիկ աղբիւրներուն,
 Կըտրեց հոտիկ ծաղիկներուն,
 Կըտրեց ձեւիկ իմ ձագերուն,
 Ինչպէ՞ս չըլամ կուց-կուց արուն
 (ՅԹԸԵ, 44):

Ոչ տնային կամ աստրոֆիկ կառուցուածք ունեցող բանաստեղծութեան մէջ յաճախ երեւան է գալիս պարզ ստորագեալի հատոյթաւորուած յարակրկնութիւնը, երբ խօսքի շղթան, ըստ յարակրկնուող ստորագեալի արտայայտութեան, բաժանուած է մի քանի մասի. ստորագեալը կրկնուած է տողերի միջարկուածով: Նման յարակրկնութիւնը կարեւորուած է բայ-ստորագեալի բառական նշանակութիւնը՝ դրա գերակայութիւնը պահպանելով ողջ հաղորդման մէջ: Ահաւասիկ Թումանեանի «Աստղերի հետ» բանաստեղծութիւնը՝ գրուած այս սկզբունքով.

Էյ աստղեր, աստղեր,
Երկնքի աչքեր,
Որ այդպէս վառ-վառ,
Ժղպտում էք պայծառ.
Ժղպտում էիք դուք,
Երբ ես դեռ մանուկ
Աշխոյժ ու կայտառ
Ձեզ անան պայծառ,
Թըռվում էի
Ու ցաւ չուէի...
Ժղպտում էք այսօր,
Երբ թոյլ ու անգօր,
Կորած յոյսերիս
Կըսկիծն եմ լալիս...
Կը ժպտաք նաեւ
Ծիրիմիս վերեւ... (ՅԹԸԵ, 21):

Ոչ տնային բանաստեղծութեան մէջ յաճախ գուգորդուած են բայ-ստորագեալների յարակրկնութեան երկու շարքեր, որոնցից մէկը, այնուամենայնիւ, գերակայում է հաղորդման մէջ՝ ունենալով աւելի մեծ ներգործութիւն. ինչպէս՝

Թողի երկիրն իմ հայրենի,
Անահ անցայ Արար ու Հիւնր,
Տեսայ մարդիկ չորսգլխանի,
Տեսայ հազար աղետ ու խիւնդ:
Հասայ միգնէ Զիւնումաչիւն,

Հասայ միգնէ Ծովը Ծերմակ,
Տեսայ երկրի ծայրը վերջիւն
Եւ դրախտի դուռը կրակ:
Հազար անգամ ծագեց արեւ
Եւ մայր մտաւ հազար անգամ,
Տեսայ ծառեր հըրատերեւ,
Տեսայ ակունքն արեգական
Եւ փերիներ քնքուշ ու սեւ,
Աչքերը՝ բոց, իրենք՝ խաւար,
Եւ փերիներ տեսայ թեթեւ
Փրփուրի պէս Գերմակ ու վառ... (ՎՏ, 2, 35):

Պարզ ստորագեալը յարակրկնութիւն է կազմում նաեւ դերանուն ենթակայի հետ: Այս դէպքում հաւասարապէս ընդգծուած է թէ՛ ստորագուող յատկանիշը եւ թէ՛ այդ յատկանիշը կրող առարկան. ինչպէս՝

Դու վառուել ես օրերի մէջ ու հրում,
Դու վառուել ես կարմրավառ այս օրերում,
Դու վառուել ես ծաղիկները ու հեռում
(ԵԶ, 1, 160):

Նմանապէս ստորագեալը յարակրկնութեան շարք է կազմում իր պարագայ կամ խնդիր լրացման հետ. ինչպէս՝

Երթամ սարերը իմ բոյն Ծիրակի,
Ալազեազ իջնեմ կոունկից առաջ,
Երթամ սարերը՝ ձիւն-ձնծաղիկի,
Ձորերը բերեմ գարունը կանաչ (ՅԾՀՄ, 87):

Երբեմն էլ ստորագեալը կրկնուած է կոչականի հետ: Ընդ որում՝ վերջինս կարող է կրկնուել նոյնութեամբ կամ բառական այլ արտայայտութեամբ: Ոճական նկատառումով այն կարող է գործածուել նաեւ մէկ անգամ՝ վերջին կամ նախավերջին տողում՝ իբրեւ թարմատար՝ գունազարդելով խօսքը. ինչպէս՝

Չգաս ձիով
- Ե՛տ դառ, ե՛տ, իզի՛թ,
Չգաս ջորով,
- Ե՛տ դառ, աճիրա՛ւ,

Կտրի՛ճ, ոչ էլ
Կարօտած յարիդ
Գաս յետեւակ» (ՎԴ, 2, 160):
Աչքը ջուր դառաւ» (ՅԹԸԵ, 19):

Ստորագեալ յարակրկնութիւնը կարող է առդրուել նաեւ տարբեր կոչականների: Այս դէպքում կրկնեալ եւ կրկնորդ ստորագեալները յորդոր են արտայայտում՝ ուղղուած դիմուող անձանց կամ առարկաներին. ինչպէս՝

Քնէք, մարդիկ, ծառ ու ծաղիկ,
Քնէք, հովեր, հաւք ու ծաղիկ,
Երբ արթուն է խիղճն աշխարհի,
Դուք երազներ տեսէք բարի (ՀՄԴԾ, 44):

Յաճախ ստորագեալի տեւական յարակրկնութիւնը կանխորոշում է այնպիսի չափածոյ բարդ ստորագասական կապակցութեան ձեւաւորումը, որ սկսուած է առաջադաս պարագայ երկրորդական նախադասութեամբ, որին հետեւում է կրկնեալ ստորագեալն իր յաջորդական կրկնորդներով, որոնք հանդէս են գալիս գերադաս նախադասութիւնների գործառոյթով՝ լրացուած նոյնաբնոյթ ստորագաս նախադասութիւններով: Այս սկզբունքով է կառուցուած, օրինակ, Յովհ. Շիրազի «Երբ գրկում ես...» էքսպրոմտը.

Երբ գրկում ես գարնան մի ծիլ իմ որդուն,
Գիտե՛ս, որ ողջ գարուններդ ես դու գրկում...
Գիտե՛ս, որ սուրբ մանկութիւնս է ետ գալիս,
Գիտե՛ս, որ էլ գլխիդ ձիւնը չի լալիս,
Գիտե՛ս, որ քո թեքումս ծառն է բողբոջում,
Գիտե՛ս, մա՛յր իմ, որ գալիքն է քեզ կանչում,
Երբ գրկում ես գարնան մի ծիլ իմ ձագին,
Գիտե՛ս, որ դու կամրջում ես գալիքին,
Գիտե՛ս, որ իմ դառնացածն է քաղցրանում,
Մանուկ յոյսն է Մասիսն ի վեր բարձրանում
(ՅԾ, 3, 278):

Ինչպէս տեսնում ենք, յարակրկնութեան շարքն այստեղ բաւական երկար է: Խօսքի թուարկման շղթայի ընդհատումը կանխելու եւ յարակրկնութեան թեմային տարրի հետագայ շարունակումն ապահովելու համար բանաստեղծը առաջադաս երկրորդական նախադասութիւնը, որն ընդհանուր է գիտես ստորագեալի յարակրկնութեան շարքի ու դրան լրացնող ստորագաս նախադասութիւնների համար, կրկնել է՝ որպէս բանաստեղծական տան 7-րդ տող՝ ընդամէնը ուղիղ խնդրի տարբերութեամբ (որդուն - ձագին): Եւ իրօք, երբ գրկում ես գարնան մի ծիլ իմ ձագին կրկնորդ ստորագաս նախադասութիւնը շղթայում է իրեն նախորդող եւ յաջորդող բանաստեղծերն իրար՝ ապահովելով յարակրկնուող ստորագեալի ու իր ստորագաս նախադասութիւնների թուարկուող շարքերի կշռոյթային ներդաշնակութիւնը: Նոյն կրկնորդ ստորագաս նախադասութիւնը նաեւ երկակի լրացական կապի մէջ է իրեն նախորդող բաղադրիչ նախադասութեան (Գիտես, մա՛յր իմ, որ գալիքն է քեզ կանչում) եւ յաջորդող բաղադրիչ նախադասութիւնների (Գիտես, որ դու կամրջում ես գալիքին, Գիտես, որ իմ դառնացածն է քաղցրանում...) հետ:

Ստորագեալ մասնակի յարակրկնութիւնն է գործառուում՝

ա) երբ առաջին տողասկզբում ստորագեալը արտայայտուած է զուգադրական բայով, որի առաջադաս բաղադրիչը յաջորդ տողում (տողերում) կրկնուած է ինքնուրոյն ստորագեալի գործառոյթով. ինչպէս՝

-Եկէ՛ք խորտակե՛ք այս կապանքները, որ մարդիկ դրին,
- Եկէ՛ք, ձեր սրտում ես կը հրդեհեմ հատուցումի տեւդ... (ՎՏԲ, 368):

բ) երբ յարակրկնութեան շարքի առաջին անգամը բայական բաղադրեալ ստորագեալ է, իսկ երկրորդը նախորդ ստորագեալի հետ:

գեալի եղանակիչ բայն է՝ պարզ ստորոգեալի գործառնյթով եւ համադաս ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնների ուղեկցութեամբ. ինչպէս՝

Թէ հնար լինէր աշխարհ գալ նորից,
Կուզէի ծնունդ նոյն ու մօրից...
Կուզէի, որ նոյն գարնանամուտի
Լոյսի թրթիռը աչքերս բանար,
Ականջներս մէջ նոյն թռչունների
Կապոյտ ծիւծիւղ կաթեր երդիկից,
Եւ նոյն երկինքը երդիկից կաթեր
Բարուրիս վրայ (ՀՍ, 2, 162-163):

գ) երբ պիտի կամ պէտք է հարկադրական եղանակիչը հանդէս է գալիս տողակցքի կրկնութեամբ՝ տարբեր բայերի հետ առգրութեամբ կազմելով պարզ ստորագեալներ կամ ընդհանրական դիմաւոր միակազմ նախադասութիւնների գերադասանդամներ. ինչպէս՝

Պիտի բանաս սիրտըդ բորբոք ամէն սրտի
դէմ,
Պիտի լինես միշտ հրահրում եւ միշտ լուսեղէն» (ՎՏԲ, 417):
Պէտք է տոկալ ու գթալ,
Պէտք է այրուել ու սիրել
Եւ անկում համբերել,
Պէտք է անվերջ հաւատալ (Ա. տ., 348):

Ստորագեալ յարակրկնութիւնը ձեւաւորուում է նաեւ միադիմի բայերի կրկնութեամբ, երբ ամէն մի կրկնութիւն լրացուում է ենթակայ ստորադաս նախադասութեամբ: Նման ստորագեալ յարակրկնութիւն է կազմում թում է, երեւում է, մնում է եւ նման մի քանի այլ բայերի նոյնասկիզբային ներդաշնակ կրկնութիւնը: Ընդ որում՝ ամէն բանատող մէկ նախադասութիւն է՝ բաղադրուած անենթակայ գլխաւոր եւ ենթակայ երկրորդական նախադասութիւններից. ինչպէս՝

Թում է՝ լսում եմ ես քո շունչը,
Թում է՝ ինձ մօտ ես դու էլի,
Թում է՝ քո ամէն մի շունչը

Իջնում է խաղաղ այս տողերից (ԳՍԲՊ, 42):

Երբեմն էլ առաջին երկու բանատողերում գերադաս ու ստորադաս նախադասութիւնները կապակցուում են շարայարութեամբ, իսկ յաջորդ երկու բանատողերում՝ թէ շաղկապով. ինչպէս՝

Թուաց՝ ամպերն են բացխուփիկ խաղում,
Թուաց՝ երկինքն է կապոյտ ծիծաղում,
Թուաց, թէ շոգը յանկարծ կտորրուեց,
Թուաց, թէ մի հին երդում կատարուեց (ՊՍ, 4, 20):

Նոյն թում է ստորագեալը կազմում է նաեւ միջարկուող յարակրկնութիւն. ինչպէս՝

Թում է՝ տեսնում է զանգակ աղբիրները,
Ձորերը, դաշտերը գուարթ,
Թում է՝ զգում է իր մօր համբոյրները,
Տեսնում է հայեացքը հանդարտ (ԳՍԲՊ, 297):

Հարկ է նշել, որ պարզ ստորագեալի յարակրկնութիւնից չի տարբերուում անորոշ դիմաւոր միակազմ նախադասութեան բայական գերադաս անդամի յարակրկնութիւնը: Այսպէս՝

Նայում ես այսօրուայ օրին,
Ծիկնում, ամաչում ես,
Նայում ես ընկնող խնձորին,
Տխրում, հառաչում ես (ՀՍՍԲ, 48):

Պարզ ստորագեալի համեմատութեամբ անուանական բաղադրեալ ստորագեալը յարակրկնութեամբ աւելի քիչ է հանդէս գալիս: Երբեմն երկտողեայ տներով բանաստեղծութիւնը կառուցուում է անուանական ստորագեալի յարակրկնութեամբ: Կրկնուող ստորագեալի ստորագելին թուարկման վերջում որոշային կիրառութեամբ ամփոփում է թուարկման շարքը: Նման յարակրկնութիւնը միտուած է շեշտելու տարբեր առարկաների՝ նոյն յատկանիշներով օժտուած լինելը: Եւ այս կառուցուածքում ուժեղ է հեղինակի գնահատողական-վերա-

բերմունքային տարրի դրսեւորումը: Այսպէս՝

Նոյնն է կարօտս հիմա՝ անսփոփ ու որբ.
Նոյնն է աշխարհը վառուող ու արեւը բորբ:

Նոյնն է երկինքը կապոյտ ու լճակը ջիգը -
Եւ չի փոխուել իմ սրտում, իմ հոգում - ոչինչ:

Նոյնն է սերը՝ կրակուած իմ սրտում հիմա՝
Նոյն կարօտը անսփոփ ու անուր - Մահ (ԵԶՊԲ, 262):

Այստեղ կրկնուող նոյնն է անուանական ստորագեալի կապակցումը տարբեր ենթակաների հետ ձեւաւորել է տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասութիւններ: Անուանական ստորագեալի յարակրկնութիւնը կազմում է նաեւ ընդհանուր ենթակայով բարդ համադասական նախադասութիւն: Այս դէպքում, որպէս կանոն, ընդհանուր ենթական ընկնում է կրկնեալ եւ կրկնորդ ստորագեալների միջեւ. ինչպէս՝

Ուղղամիտ էին աստուածները հին,
Ուղղամիտ էին
Պարզ դերձակի պէս... (ՊՍ, 4, 246):

գ. ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՍԻ ԼՐԱՅՈՒՄ ՅԱՐԱԿՐԿՆՈՒԹԻՒՆ

Չափածոյ խօսքում յարակրկնութիւն են կազմում նաեւ գոյականական անդամի լրացումներից որոշիչն ու յատկացուցիչը՝ հանդէս բերելով տողակցքում կրկնուելու տարբեր իւրայատկութիւններ: Որոշիչ եւ յատկացուցիչ յարակրկնութիւնները երբեմն էլ երեւան են գալիս միաժամանակ, միեւնոյն համատեքստում, որի հետեւանքով պատկերները խտանում են, ուժեղանում են խօսքի գեղարուեստական շունչն ու ներգործութեան թափը, մանաւանդ երբ հեղինակը դիմում է նախադասութեան կառուցման միակազմ ձեւին՝ փաստարկելով տարբեր առարկաների կողմից միեւ-

նոյն յատկանիշների կրումը: Եւ որոշիչ ու յատկացուցիչ յարակրկնութիւնները դառնում են թուարկումը նոյն յատկանիշն ուղղակիօրէն կամ փոխաբերաբար կրող տարբեր առարկաների, որոնք իրենց ներքին կապերով ու առնչութիւններով մի ամբողջ համակարգ են կազմում՝ դառնալով հեղինակի գեղագիտական ըմբռնումների դրսեւորումը: Աւելացնենք, որ յարակրկնութիւն-որոշիչը այս դէպքում նաեւ հանդէս է գալիս որպէս մակդիր, մանաւանդ երբ լինում է փոխաբերական նշանակութեամբ եւ յուզարտայայտչական երանգով: Խօսքի կառուցման այս ձեւին յաճախ է դիմում Հ. Սահեանը: Այսպէս՝

Իմքարակոտ,
Իմքարքարոտ,
Քարէ սարսուռ,
Քարէ կարկուտ:
Քարէ ծաղիկ,
Քարէ մրմուռ,
Քարէ ալիք
Եւ քարէ դուռ:
Քարէ մի վանք,
Քարէ մի տուն...
Քարէ ճախրանք,
Քարէ միտում:
Դու պարզ ու բարդ
Ու դու անար...
Քարէ դրախտ,
Դրախտի քար... (ՀՍԴԾ, 28):

Այստեղ հեղինակը յատկացուցիչ ու որոշիչ յարակրկնութիւններին վարպետօրէն գուգորդել է յանգաւորման եւ եզրափակիչ խաչակերպի (Քարէ դրախտ-Դրախտի քար) արուեստաւոր կիրառումը՝ ապահովելով խօսքի բարձր պատկերաւորութիւն եւ արտայայտչականութիւն:

1) ՈՐՈՇԻՉ ՅԱՐԱԿՐԿՆՈՒԹԻՒՆ

Որոշիչ յարակրկնութիւնը շատ աւելի յաճախադէպ է: Խօսքարուեստի վարպետ-

ները դիմում են յարակրկնութեան այս ձե-
ւին, երբ ցանկանում են ընդգծել տարբեր
առարկաներ բնութագրող նոյն որակական
կամ վերաբերական յատկանիշը: Այս դէպ-
քում յարակրկնութեան շարքի որոշիչները
բնականաբար առդրուում են տարբեր որո-
շեալներին: Ակնյայտ է նաեւ, որ, ի տարբե-
րութիւն իր սովորական լայն գործածու-
թեան, որոշիչը յարակրկնութեամբ ոչ միշտ
է հանդէս գալիս: Որոշիչ յարակրկնութիւ-
նը մասնաւորապէս արտայայտուում է՝

ա) գոյականով՝

Ինչպէ՞ս են մարդիկ անծաղիկ մնում
Քար քաղաքներում՝ առանց բնութեան
Քար քաղաքների ազատ գնդանում
Հիւանդ եմ՝ աշնան ջրերի նման (ՅԾ, 3,
385):

բ) ածականով՝

Սարալանջերն ի վեր
Կանաչ արտեր էին:
Կանաչ արտեր էին -
Կանաչ ամպեր էին (ՀՄ, 2, 350):

գ) թուականով՝

Հագա՛ր եղունգ ու ճիրան,
Հագա՛ր մագիլ էր խրուել
Նրա փխրում կողերում (ՊՄ, 4, 135):

դ) դերանուամբ՝

Ժամանակները խառն են խրթին.
Ինչ-որ տազնապ է ամպն իր հետ տանում,
Ինչ-որ նարսուռ կայ անտառի շուրթին,
Ինչ-որ խորհուրդ կայ, որ չեմ հասկանում
(ՀՄՔԵ, 6):

ե) կապի ու խնդրի կապակցութեամբ՝

Թէ՞ անտարբեր են աստղերն էլ բոլոր
Աչքերի նման քո երկնակապոյտ,
Աչքերի նման քո խորհրդաւոր,
Աչքերիդ նման յաւիտեան անգութ
(ՅԾ, 3, 376):

Յաճախ որոշիչ յարակրկնութեան
շարքի անդամներն ունենում են երանգա-
յին տարբերութիւն. կրկնեալ որոշիչը լի-

նում է բացականչական երանգով, կրկնոր-
դը՝ պատմողական եւ այլն. ինչպէս՝

Ուրի՛շ երազ էր նրան յուզել,

Ուրի՛շ ցնորք մի, սէր հնագոյն -

Եւ հարազատ էր նրա հոգում

Միայն այդ հինը (ԵԶՊԲ, 161):

Որոշիչ յարակրկնութիւնն արտա-
յայտուում է նաեւ բանաստեղծական այլ
տողերի միջարկումով՝ ապահովելով տա-
րածուող կշռոյթ. ինչպէս՝

Օխում աղբիւրից ջուր է առել

Կոյս սափորով լուռ ու մունջ,

Օխոյը ծաղկից ծաղիկ քաղել,

Կապել սիրոյ ծաղկեփունջ (ՅԹԸԵ, 166):

Բանաստեղծական խօսքում որոշիչ
յարակրկնութիւնը երեւան է գալիս նաեւ
երկշարք, սակաւադէպ էլ եռաշարք ձեւով:
Նման կրկնութիւնը Պ. Պօղոսեանը դիտում
է այլ արտայայտչամիջոց՝ բաժանում (տե՛ս
3, էջ 170-171): Իրականում սա նոյն
յարակրկնութիւնն է՝ բանաստեղծական
տողերի հատոյթաւորուած հաւասար հա-
տուածների սկզբում արտայայտուած:
Քանի որ բազմաշարք յարակրկնութիւնը
որոշակիօրէն ապահովում է նաեւ խօսքի
բարեհնչիւնութիւնն ու մեղեդայնութիւնը,
այդ պատճառով էլ այն աւելի շատ հան-
դիպում է գուսանական պոեզիայում: Այս-
պէս, օրինակ, գուսան Աշոտի «էն մեծ սա-
րը» երգը ամբողջովին կառուցուած է ե-
ռաշարք եւ երկշարք յարակրկնութեան
սկզբունքով: Գուսանը երգի քսան բանա-
տողերից 16-ը բաժանել է երեք, իսկ 4-ը՝
երկու հատոյթի եւ իւրաքանչիւր հատոյ-
թային հատուած սկսում է էն (այն) որոշի-
չով՝ ստեղծելով երկշարք ու եռաշարք յա-
րակրկնութիւնների զուգորդման մի հրա-
շալի օրինակ.

էն մեծ սարը էն սուրբ վայրն է էն սիրոյ,
էն լանջում են էն սէրն առել, էն գառ-վառ,
էն ցօղիկ էր, էն շողիկ էր, էն լուսոյ,
էն մանեակ էր, էն գոհար էր, էն մարմար:

էն քնար էր, էն երգ լար էր, էն դալար,
էն իմ բառն էր, էն իմ կեանքն էր, էն դալար:

էն ծաղկունքը, էն բուրմունքը, էն յայլան
էն իմ սիրոյ էն թէժ հուրն է էն վատման,
էն եկել էր, էն ներկել էր էն գարնան,
էն արեւ էր, էն անձրեւ էր, էն վարար:

էն հովիւր, էն սրինգը, էն ձայնը,
էն իմ սիրոյ, էն բիրակն էր, էն զանգը,
էն կրակը, էն սոխակը, էն վանքը,
էն իմ աչքն էր, իմ սրինգը, էն արար:

էն գուսան էր, էն մուսայ էր քո սիրոյ,
էն ակունք էր, էն մասունք էր քո սիրոյ,
էն չքացաւ, էն ո՞ր անցաւ քո սիրով,
էն ինձ շանթեց, էն ինձ բանտեց էն ամառ:
էն քնար էր, էն երգ լար էր էն դալար,
էն իմ բառն էր, էն իմ կեանքն էր էն դալար
(ԳԱՍԿ, 161):

Միայն չափածոյ խօսքը կարող է
հանդուրժել մէկ փոքր հաղորդման մէջ ո-
րոշիչ 56 անգամ արուեստաւոր կրկնուելը
մեղեդայնութեան ապահովման նպատա-
կով:

2) ՅԱՏԿԱՅՈՒԹԻՉ ՅԱՐԱԿՐԿՆՈՒԹԻՒՆ

Յատկացուցիչ յարակրկնութիւնը, որ
համեմատաբար քիչ է հանդիպում, երեւան
է գալիս այն դէպքում, երբ չափածոյ խօս-
քի հեղինակը ցանկանում է հետեւողակա-
նօրէն շեշտել միեւնոյն ստացականութեան
կամ պատկանելութեան վերաբերելը տար-
բեր առարկաներին: Եւ քանի որ այս ի-
մաստն առաւել խոր արտայայտուում է
անձնական դերանուան սեռական հոլո-
վում, ուստի յատկացուցիչ յարակրկնու-
թիւն կազմում է աւելի շատ այս քերական-
ական ձեւը: Երբեմն ամբողջ բանաստեղ-
ծական տունը կառուցուում է դերանուն
յատկացուցիչ յարակրկնութեամբ. ինչպէս՝

Քո քաղցր վիշտը, սի՛րտ իմ մե՛նաւոր,
Քո վիշտն է փոռած անհուն աշխարհում,
Քո սէրն է վառուած ե՛ր պայծառ, ե՛ր խոր,
Քո խենթ կարօտն է ամէն տեղ լոռում
(ՎՏԲ, 113):

Երբ յատկացուցիչ հետ կրկնուում է
նաեւ յատկացեալը, յարակրկնութիւն է
կազմում յատկացուցիչ+յատկացեալ կա-
պակցութիւնը, եւ այս դէպքում հաւասար-
ապէս ընդգծուում է նաեւ յատկացեալը.
Ինչպէս՝

Քո ժպիտն են ես տեսնում արեւի հոգում,
Քո ժպիտը վարդագոյն - իրիկուայ միգում
(ԵԶՊԲ, 262):

Երբեմն էլ յարակրկնութեան շարք է
կազմում յատկացուցիչ+յատկացուցիչ յատ-
կացեալ կապակցութիւնը՝ առդրուելով
տարբեր լրացեալներին. ինչպէս՝

Մեր դրախտի դաշտերն է՛նտեղ՝
մեր դրախտի ծովի ափին,
մեր դրախտի քաջ տերն է՛նտեղ՝
բարձր բերդի ձորի ափին... (ՌԴՊՎ, 348):

Յատկացուցիչ յարակրկնութեան շար-
քը շատ յաճախ պայմանաւորում է յատ-
կացեալների նշանակեալ առարկաների
համասեռ, ներդաշնակ թուարկումը, որը
փակուում է պարբերութեան սկզբի նախա-
դասութեան եզրափակիչ կրկնութեամբ:
Այսպէս՝

Գարուն էր: Ամառ եկաւ,
Ձագ հանեց ձորում կաքաւ,
Իսկ հայը գրկուեց ձագից,
Իր պոռթկան թոնրի տաքից,
Իր մօրից, հօրից, եարից,
Իր բնից ու աշխարհից.
- Գարուն ա, ձուն ա արել... (ՊՄ, 4, 185):

Յարակրկնութեան շարքը ծաւալուն
չլինելու եւ այլ բանաստեղծի միջարկու-
մով արտայայտուելու դէպքում ստացա-
կանութեան շեշտադրումը թուլանում է.
Ինչպէս՝

Քո «Մթնածորում» թախիծ է ծորում
Ու կարօտ՝ մանկուք հարազատ ձորի,-
Աշխատի՛ր, սակայն, որ մուք այդ ձորում
Քո պայծառ ուղի՞ն անդարձ չկորի (ԵՉՊԲ,
441):

**դ. ԲԱՅԱԿԱՆ ԱՆՂԱՍԻ ԼՐԱՑՈՒՄ
ՅԱՐԱԿՐԿՆՈՒԹԻՒՆ**

Բայական անդամի լրացումներից
պարագաները յարակրկնութիւն են կազ-
մում յաճախ, իսկ խնդիր յարակրկնութիւ-
նը խիստ սակաւ է հանդիպում: Տողասկզ-
բում կրկնուող պարագաների տրամաբա-
նական շեշտադրումը համեմատաբար ու-
ժեղ է:

Յարակրկնութիւն են կազմում մաս-
նաւորապէս հետեւեալ պարագաները.

ա) տեղի պարագան՝

Այնտեղ բոլորն են քնած,
այնտեղ արթումն աչք չկայ,
այնտեղ քնած է անգամ
անքուն մայրը աղջկայ (ՌԴՊՎ, 212):

Տեղի պարագայ յարակրկնութիւնն
արտայայտում է նաեւ մէկտողեայ կամ
երկտողեայ միջարկումով. ինչպէս՝

Այստեղ մի վսեմ խորհուրդ է ապրում՝
Ծանր վեհութեամբ իշած երկնքից,
Այստեղ սրբագան մի շունչ է բուրում,
Մեզ վեր է տանում աշխարհի կեանքից
(ՅԹԸԵ, 40):

Երբեմն տողասկզբում կրկնուող տեղի
պարագան ստանում է նախադաս յատկա-
ցուցիչ լրացում, եւ յարակրկնութիւն է
կազմում յատկացուցիչ+տեղի պարագայ կա-
պակցութիւնը. ինչպէս՝

Նոր օր է բացում ազգերի համար,-
Իմ հայրենիքում տիրում է գիշեր,
Իմ հայրենիքում անթափանց խաւար.
-Չարթէ՛ք, վե՛ր ելէք, կեանքանի ուժեր (ՎՏԲ,
339):

բ) ժամանակի պարագան, որը կրկն-
ւում է թէ՛ կից տողերում եւ թէ՛ այլ բա-
նատողերի միջարկումով՝ երկու դէպքում
էլ ստեղծելով հաւասար կշռոյթ. ինչպէս՝

Յաճախ նա առել է քեզ իր գիրկը,
Երգել ես, ճիւղից ճիւղ մագլցել,
Յաճախ դու քո սիրած, տխուր գիրքը
կարդացել ես, իսկ նա՛ խոյլ լացել (ԳՍԲՊ,
53):

Ժամանակի պարագան յարակրկնու-
թիւն է կազմում նաեւ բազմակի ստորո-
գեալների կրկնուող պիտի եղանակիչի
հետ. ինչպէս՝

Այսուհետեւ, ինձ հաւատա՛յ,
Է՛լ չպիտի ես խառնընտեմ ո՛չ իմ գործին.
Է՛լ չպիտի այսուհետեւ
Հակումն կեանքի աղտ-աղարտի ծանրու-
թեան տակ (ՊՍ, 2, 155):

Յարակրկնութիւն ժամանակի պարա-
գան երբեմն էլ արտայայտում է ընդար-
ձակ բառակապակցութեամբ՝ գրաւելով
բանատողերի մեծ մասը. ինչպէս՝

Եւ եօթն անգամ եօթը ամիս շարեցին,
Եւ եօթն անգամ եօթը ամիս բարձրացաւ,
Եւ սիւները կուռ կամարներ պահեցին,
Եւ գմբէթը դէպի երկինք խոյացաւ
(ԳՍԲՊ, 244):

գ) ձեւի պարագան՝

Տատասկների,
Քարերի մէջ,
Քամիների,
Արեւի մէջ,
Ձիւների մէջ,
Ծոգ ու տոթի
Այսպէս մեռակ,
Այսպէս ոտի,
Այսպէս խոնարհ,
Այսպէս ըմբոստ,
Այսպէս փխրում,
Այսպէս շիտակ,
Այսպէս խրթին

Ու այսպէս պարզ
Կանգնել է նա
Երկնքի տակ... (ՎԴԱՄ, 141):
դ) միասնութեան պարագան՝
Իրար հետ կեանքի երգն ենք լսում,
Իրար հետ ամէն օր մինչեւ լոյս
Թովչական երազներ ենք հիստում
Ու դիտումս շրջումս - արշալոյս...
(ՎՏԲ, 190):

ե) պատճառի պարագան՝

Այս պաղ աշխարհում ես տեսայ միայն տա-
նապանքի լաց,
Եղբայրների տեղ ես հանդիպեցի չար ո-
տխների.
- Եւ դորա համար իմ դէմքը երբեք զուարթ
չծպտաց,
- Եւ դորա համար դահիճ խոհերի ես դար-
ձայ գերի... (ՎՏ, 2, 136) եւ այլն:

Ինչպէս նշեցինք, խնդիր յարակրկ-
նութիւնն աւելի քիչ է հանդիպում՝ պայ-
մանաւորուած խնդիր լրացումների ընդ-
գծման եւ յուզարտայայտչական լիցքա-
ւորման հնարաւորութիւնների սահմանա-
փակութեամբ: Այսպէս, օրինակ, հետեւեալ
քառատողում ուղիղ խնդիր յարակրկնու-
թեան մէջ իշխում է թոյլ շեշտադրումը.

Ընկերներ ունէի ես,
Ընկերներ բակ ու թաղի,
Ընկերներ ամէն տեսակ
Խենթութեան, խինդ ու խաղի (ՀՍՔԵ, 89):

Իսկ ահա յանգման խնդիր յարակրկ-
նութեան հետեւեալ օրինակում գերակա-
յում է պարզ թուարկումը.

Քեզ ժպտում է արեւը: - Քեզ կեանքը
Թում է արեան պէս տաք:
Քեզ թովում է աշխատանքը,
Քեզ թովում է այս յա՛նգոյ անգամ (ԵՉՊԲ,
455):

Յաճախ անուանական անդէմ միա-
կազմ նախադասութիւններից բաղադրուած
չափածոյ խօսքը կառուցւում է յանգման

խնդիր յարակրկնութեան սկզբունքով.
ինչպէս՝

Ինձ վախենալու խիզախութիւնը,
Ինձ տառապանքի ուրախութիւնը,
Ինձ այս կածանի մտերմութիւնը,
Ինձ հողի հանդէպ այս ջերմութիւնը:
Ինձ այս քարափի ընկերութիւնը,
Ինձ երգի տաժանքն ու ջերմութիւնը...
Մնացածը՝ ձեզ,
Ձեզ՝ այս աշխարհն ու այս տէրութիւնը (ՀՍ,
2, 121):

**ե. ՆԱԽԱՂԱՍՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԿԻՑ
ՍԻԱՒՈՐ ՅԱՐԱԿՐԿՆՈՒԹԻՒՆ**

Գեղարուեստական խօսքում յարա-
կրկնութիւն են կազմում նաեւ նախադա-
սութեան յարակից միաւորները, որոնց
նոյնասկիզբային կրկնութիւնը եւս ծառա-
յում է խօսքի գեղագիտական պահանջնե-
րին, մասնաւորապէս նրա կշռոյթային
ներդաշնակութեան ապահովմանը: Յարա-
կրկնութիւն կազմում են աւելի յաճախ
շաղկապները եւ սակաւադէպ վերաբերա-
կանները, ձայնարկութիւններն ու կոչա-
կանները:

ԸՂԱԿԱՊ ՅԱՐԱԿՐԿՆՈՒԹԻՒՆ

Շաղկապների, յատկապէս եւ-ի յարա-
կրկնութեան կիրառումը գեղարուեստա-
կան ու հրապարակախօսական ոճերի խօս-
քերում ունի դարերի պատմութիւն, մա-
նաւանդ որ ոճական այս երեւոյթի աւան-
դոյթը հայերէնին է անցել Աստուածաշն-
չից: Այստեղ հարեւան պարբերութիւննե-
րը յաճախ են սկսում եւ շաղկապով, որով
արձակ խօսքն իր կշռոյթով մօտենում է
չափածոյին: Աստուածաշնչեան եւ-ի պարզ
յարակրկնութեան ազդեցութեամբ, օրի-
նակ, Ա. Իսահակեանն իր «Լիլիթ» արձակ
բանաստեղծութեան մէջ եւ այլ գործերում
ոճաւորման նպատակով յաճախ է դիմում
հարեւան կամ միջարկուող պարբերու-

Թիւնները եւ-ով սկսելու ոճական հնարի կիրառմանը: Այսպէս՝ «Հին ամրոցը» զրոյցի 33 պարբերութիւններից 15-ը սկսում է եւ, իսկ 7-ը՝ իսկ շողկապով: Մասնաւորելով մեր խօսքը եւ շողկապի յարակրկնութեան վրայ՝ նշենք, որ այն ստացել է երկու կարգի դրսեւորում՝ ա) այդ շողկապով սկսուող պարբերութիւնները յաջորդում են իրար՝ կապուելով պարզ թուարկման յարաբերութեամբ, եւ բ) այդ կարգի պարբերութիւնները միմեանցից բաժանուում են այլ սկսուածք ունեցող պարբերութիւններով, եւ այս դէպքում միջանկեալ պարբերութիւնների հետ եւ-ով սկսուող պարբերութիւնը կապուում է յաւելական յարաբերութեամբ՝ կատարելով նախորդ հաղորդումից բխող եզրակացութիւն կամ այդ հաղորդման պատումը հարստացնելով բովանդակային մի կարեւոր նրբամաստով: Տեղի խնայողութեան համար բաւարարուենք միայն եւ-ով սկսուող՝ իրար յաջորդող պարբերութիւնների հատուածից մի փոքր մէջբերում կատարելով.

Եւ շեփորը մրկում էր եւ ժողովրդին կոչում իր մօտ...

Եւ որովհետեւ նա խօսում էր հրեղէն եւ անկեղծօրէն - նրա խօսքը կայծակի պէս ճեղքեց ու վառեց բոլորի սրտերը...

Եւ հազար-հազար տարիների բռնութեան խաւարը առաջին անգամ ցրուեց ժողովրդի հոգուց...

Եւ նորից այն ծիրանի դրօշակակիրը փչեց շեփորը... (ԱԻ, 3, 112-113):

Չնայած արձակ խօսքում շողկապի յարակրկնութիւնն ունի տարաբնոյթ դրսեւորումներ, այնուհանդերձ այն, իբրեւ ոճական երեւոյթ, մնում է որպէս չափածոյի իւրապատկութիւն, դիտուում է չափածոյին ուղեկցող յատկանիշ: Ընդհանրապէս շողկապ յարակրկնութիւնը բազմաշողկապութեան մի դրսեւորումն է, որը տուեալ դէպքում ունի երկակի՝ ոճական եւ քերականական նշանակութիւն. որպէս արտա-

յայտչամիջոց՝ այն ոճական, իսկ որպէս կապակցման միջոց՝ քերականական դեր է կատարում: Նշենք, որ չափածոյում էլ եւ շողկապը յարակրկնութիւն է կազմում, երբ հարեւան տողերի սկզբում կրկնուելիս ուժեղ շեշտ է կրում՝ ընդգծելով թուարկուող միաւորների նշանակութիւնը. ինչպէս՝

Եւ գլուխս էր գուրգուրում,

Սեղմում կրծքին իր մաշուած,

Եւ աչքերս էր համբուրում,

Եւ ձեռքերս մրոտուած,

Եւ կրկնում էր՝ «Գիծ ջան, գիծ»:

Եւ լալիս էր, եւ գգում,

Եւ դեռ մեր շուրջն ակնապիշ

Մարդիկ էին հաւաքում... (ՅԾՀՄ, 36):

Երբեմն էլ եւ-ի հետ կրկնում է նաեւ յաջորդող անդամը՝ ընդարձակելով յարակրկնութեան ծիրը. ինչպէս՝

Կրկին հնչում է թունաւոր լեզուդ

Եւ քո խօսքերի միզակները սուր,

Եւ քո համբոյրը, որպէս քաղցր սուտ -

Բախտ եմ խոստանում իզո՛ւր եւ իզո՛ւր...

(ՎՏԲ, 57):

Ծանօթութիւն: Այստեղ անհրաժեշտ ենք համարում վկայակոչել Վ. Առաքելեանի հետեւեալ դիտարկումը Ա. Իսահակեանի պոեզիայում եւ-ի յարակրկնութեան իւրապատկութիւններից մէկի մասին. «Երբեմն անաֆորական եւ-երը ուղղակի յաջորդում են իրար, բայց ոչ տրամաբանական կապակցութեան կամ թուարկման յաջորդականութեան բնական ընթացքով. յանկարծ փոխուում են բայի դէմքը, ժամանակը, եղանակը, ու թւում է, թէ եւ-ը մի տեսակ կամուրջ է՝ մի նիւթից միւսին թռչելու համար, որտեղ նա թողնում է եզրակացնող, ամփոփող նշանակութեան տպաւորութիւն:

Եւ գազանները թող ինձ յօշոտեն, վայրագ հողմերը շաչեն ինձ վրայ,

Եւ այսպէս միգնէ օրերիս վերջը, քարաւանս անդարձ գնայ ու գնայ...

(2, էջ 188):

Յարակրկնութիւն է կազմում նաեւ բայց հակասման շողկապը՝ միայնակ կամ որեւէ անդամի հետ. ինչպէս՝

Ծերմակ եմ լեռների գագաթները,

Դրսում նորից է ձմեռ ու ձիւն.

Բայց ո՞ւր եմ քո փայտե սահնակները,

Բայց ո՞ւր եմ խաղերդ փողոցում

(ԳՍԲՊ, 50):

Ո՛չ... ո՛չ կրկնադիր շողկապը կազմում է յարակրկնութիւն, երբ նրա բաղադրիչները նոյն շեշտադրումով հանդէս են գալիս հարեւան բանատողերի սկզբում. ինչպէս՝

Ո՛չ անձրեւ է գալիս,

Ո՛չ արեւ է անում,

Ո՛չ ամպրոպի հոտ կայ,

Ո՛չ երաշտի... (ՀՍ, 2, 27):

Ե՛լ...է՛լ համադասական շողկապը յարակրկնութիւն է կազմում յատկապէս այն դէպքում, երբ խօսքը համադաս հարցական նախադասութիւնների այնպիսի միաւորում է, որտեղ կրկնում է նաեւ էլ-ին առդրուած հարցում արտայայտող բառը. ինչպէս՝

Էլ ինչո՞ւ էիր այդքան թրթռում,-

Էլ ինչո՞ւ էիր դու քեզ քրքրում

Էլ ինչո՞ւ էիր ականջդ սրում... (ՀՍ, 2, 74):

Երբեմն էլ թէ՛...թէ՛ կրկնադիր շողկապը, դրուելով թուարկուող անդամներից առաջ, ստեղծում է տողասկզբի ու տողամիջի յարակրկնութեան շարքեր. ինչպէս՝

Ծամփաները ոլոր-մոլոր,

Թէ՛ մօտաւոր, թէ՛ հեռաւոր

Իրար ետնուց եկան հաւաս

Թէ՛ գեղազէտ, թէ՛ խառնութեամբ (Ա. Ի.):

Համադասական շողկապների յարակրկնութեան նման յաճախ հանդէս են գալիս նաեւ մէկ...մէկ եւ մերթ...մերթ զուգադրական շողկապական ձեւերը, որոնք, ինչ-

պէս նշել ենք, կապակցում են հանդիպարական, մասամբ էլ՝ միաւորական յարաբերութեամբ կառոյցներ: Քանի որ թէ՛ նախադասութեան կառուցուածքում եւ թէ՛ խօսքի մէջ հակադրութիւնը ենթադրում է հակադրուող եզրերի եւ դրանց ծաւալման հնարաւորութեան սահմանափակութիւն, ուստի բնական է, որ մէկ...մէկ եւ մերթ...մերթ ձեւերի յարակրկնութեամբ հանդէս գալը պէտք է քիչ կիրառական լինի: Մինչդեռ լեզուական փաստերը հակառակն են ապացուցում: Մեր տաղանդաւոր բանաստեղծները յաճախ այդ բառական ձեւերի յարակրկնութեան վիթխարի շարքեր են ստեղծում՝ համադրելով ու հակադրելով շարահիւսական տարբեր միաւորներ՝ իբրեւ նախադասութեան անդամների կամ նախադասութիւնների ոլորտում իրացուող համադրումների ու հակադրումների արտացոլում: Յիշեալ շողկապական ձեւերի յարակրկնութեանը յատկապէս շատ են դիմել Յովհ. Շիրազն ու Հ. Սահեանը: Իր «Ինքնբերանք համամարդկային» պոեմի 352 տողերում Շիրազը 394 անգամ գործածել է մերթ բառը՝ կազմելով բանատողային երկշարք յարակրկնութեան երկու մեծ շղթայ. 216 անգամ գործածել է որպէս տողասկզբի, 178 անգամ՝ տողամիջի յարակրկնութիւն: Այսպէս՝

Մերթ կանթեղ եւ խաւարաբուխ, մերթ՝ լուսածին խաւար,

Մերթ՝ ոգեխոյզ ասարառու, մերթ՝ ինքնագոհ ասար:

Մերթ՝ ելնում ես՝ դառնում թարթաւ, իջնում՝ դառնում Տրտու,

Մերթ ծիծաղի ծիածանն եւ, մերթ սեւ թուխպ եւ տրտում... (ՅԾ, 3, 357):

Նոյն սկզբունքով Շիրազը յաճախ է դիմում նաեւ մէկ...մէկ (էլ) զուգադրական շողկապական ձեւի յարակրկնութեանը՝ ապահովելով կշռոյթի հաւասարաչափ ու ներդաշնակ տարածումը. ինչպէս՝

4

Մէկ խաղաղու՛մ՝ հաւատում եմ իմ բախտին,

Իմ երգերին մշտատեւ,

Մէկ էլ տեսար՝ իմ յոյսերի դրախտին

Անյոյս դժոխքն իջաւ սեւ:

Մէկ թում եմ անհաճագէլի հրաբուխ՝

Ամենագոռ մի լեռան,

Մէկ էլ տեսար՝ ցնդեց խոյեանքս, ինչպէս ծուխ,

Ինչ ունէի՝ ողջ մեռան... (ԾԾ, 3, 192):

Նմանապէս յարակրկնութիւն է կազմում նաեւ ստորադասական շաղկապների, մասնաւորապէս որ-ի տողասկզբի կրկնութիւնը, մանաւանդ այն դէպքում, երբ միեւնոյն գլխաւոր նախադասութեանը կամ համադաս գլխաւոր նախադասութիւններին լրացնում են համաստորադաս նախադասութիւններ՝ կրկնուող որ-ով կապակցուող. ինչպէս՝

Ես լուռ կը թաղեմ իմ ցաւը միակ,
Զուարթ կը ժպտամ բախտաւորի պէս,-
Երբէք չեմ բանայ սրտիս մութը փակ,
Երբէք չեմ յայտնի իմ տանջանքը քեզ,

Որ պայծառ ժպտաս կեանքի երեսին,
Որ ոչ մի տրտուցք սիրտըդ չյուզէ,
Որ չմտորես իմ ցաւի մասին,
Որ քո թունաւոր խօսքը չը կասէ...
(ՎՏԲ, 52):

Այստեղ որ-ի յարակրկնութիւնն ապահովում է թուարկուող գլխաւոր եւ երկրորդական նախադասութիւնների շարահիւսական ու կշռոյթային ամբողջականութիւնը:

Երբեմն էլ միեւնոյն շարահիւսական կապակցութեան մէջ համատեղում են համադասական եւ ստորադասական շաղկապների ու շաղկապական բառերի յարակրկնական շարքերը՝ արտայայտելով իրար յաջորդող գործողութիւնների եւ մարդկային հոգեբանական վիճակների ներդաշնակ

փոփոխութիւնների առարկայական ընթացքը. ինչպէս՝

Մերթ հեռանում եմ

Ու մերթ՝ կուտակում,

Մէկ կուտում եմ

Ու մէկ՝ շիտակում,

Մերթ՝ ուրախ ճիչով, ասես կարօտով՝

Իրար են պարզում լիտիկ թելերը,

Ցուցադրում են, կարծես թէ դիտմամբ,

Փակ մարմինների բոլոր ձեւերը,

Որ... արեղայի սիրտը խոռվեմ,

Որ... արեղային անհուր խորովեմ,

Որ... Աստուած ու Աս կուտեն-խոռվեմ...
(ՊՍ, 4, 31-32):

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ ՅԱՐԱԿՐԿՆՈՒԹԻՒՆ

Շաղկապների համեմատութեամբ վերաբերականների յարակրկնութեան շարքը լինում է պակաս ծաւալուն: Ընդհանրապէս յարակրկնութեամբ ծաւալուելու վերաբերականների հնարաւորութիւնը սահմանափակ է: Օրինակ՝

Ինչո՞ւ է այսպէս սիրտըս մղկտում,
Այսպէս, Աոյեմբեր, քո հողմի Արման
Լալիս անդադար եւ աղէկտոր,
Կարծես Անդ լինի աշխարհն անսահման.
Կարծես ոչ մի տեղ չի գտնում դադար,
Կարծես ոչ ոքից չի տեսնում բարիք,
Քո հողմի Արման,- տարամերժ, օտար,
Օ՛, հանգստացէ՛ք,- հերի՛ք է, հերի՛ք...
(ՎՏԲ, 350):

Չնայած վերաբերմունք արտայայտող բառերն այնքան էլ հակուած չեն հանդէս գալու յարակրկնութեամբ, մանաւանդ որ դա նաեւ պահանջում է ասելիքն այդ ուղղութեամբ ծաւալելու իւրայատուկ տաղանդ ու վարպետութիւն, այնուհանդերձ մեր պոեզիայում որոշ ստեղծագործութիւններ ամբողջովին կառուցուած են վերաբերականների ու ձայնարկութիւնների յարակրկնութեան հետեւողական կիրառման սկզբունքով: Այսպէս, օրինակ, Հ. Սա-

հեանի բանաստեղծական հրաշագործութիւններից մէկի («Ախր ես ինչպէ՞ս վեր կենամ գնամ») 25 տողերից 15-ը սկսւում է ախր գղջական վերաբերականով.

Ախր ես ինչպէ՞ս վեր կեանքս գնամ,
Ախր ես ինչպէ՞ս ուրիշ տեղ մնամ:

Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,
Ախր ուրիշ տեղ հորովել չկայ,
Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում
Սեփական հոգին խորովել չկայ,
Ախր ուրիշ տեղ
Սեփական բախտից խոռվել չկայ:

Ախր ես ինչպէ՞ս վեր կեանքս գնամ,
Ախր ես ինչպէ՞ս ուրիշ տեղ մնամ:

Ախր ուրիշ տեղ
Հողի մէջ այսքան օրհնութիւն չկայ,
Այսքան վաստակած հոգնութիւն չկայ:
Ախր ուրիշ տեղ ձիւնի մէջ՝ արեւ
Եւ արեւի մէջ այսքան ձիւն չկայ:
Ախր ուրիշ տեղ տեղահան եղած,
Եկած ուտերով Արագած սարի
Ուտերին յեռուած Սասնայ տուն չկայ:
Ախր ուրիշ տեղ
Ամէն մի քարից, առուից, ակօսից,
Իմ աչքերով իմ աչքերին Աստու
Մանկութիւն չկայ...

Ախր ես ինչպէ՞ս վեր կեանքս գնամ,
Ախր ես ինչպէ՞ս ուրիշ տեղ մնամ,
Ախր ես ինչպէ՞ս ապրեմ առանց ինձ
(ՀՍ, 2, 22):

Երբեմն էլ միեւնոյն բանաստեղծական խօսքում համատեղում են վերաբերականի ու շաղկապի յարակրկնական շարքերը. բանաստեղծական տունը կամ հատուածը սկսւում ու վերջանում է նոյն վերաբերականի տողասկզբի կրկնութեամբ,

խակ դրանց միջակայքում գործառուում է շաղկապ յարակրկնութիւնը. ինչպէս՝
Թող հասցս դառնայ վշտի մի պատառ՝
Թէ կիսուած մնաս, իմ Հայաստանիկ,
Թէ գիրկդ չգամ որդիքդ թափառ,
Թէ չծովանաս, իմ գետ հայրենիք,
Թէ Մասիսդ, իբրեւ սպիտակ մի գառ,
Արագը չանցնի, չընկնիք գրկէ-գիրկ,
Թող կեանքս դառնայ այրուող անտառ՝
Մոխիրս բռնէ երկիր ու երկինք...
(ԾԾԼՄ, 146):

ԶԱՅՆԱՐԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՐԱԿՐԿՆՈՒԹԻՒՆ

Ձայնարկութիւնների արտայայտչական հնարաւորութիւնները շատ մեծ չեն, եւ նիւթական իմաստ ունեցող բառերի համեմատութեամբ սրանք աւելի սակաւ են հանդէս գալիս խօսքի գեղագիտական կողմին ծառայելու նպատակով: Համեմատաբար յաճախադէպ է ձայնարկութեան յարակրկնութեամբ հանդէս գալը: Սակայն յարակրկնութեան միւս դրսեւորումների համեմատութեամբ ձայնարկութիւն յարակրկնութիւնն էլ քիչ է հանդիպում: Ձայնարկութիւն յարակրկնութեան շարքը երեւան է գալիս մեծ մասամբ բանաստեղծական տան վերջին տողերում՝ իբրեւ նախորդ բանաստեղծի հաղորդումից արուած յուզական վերաբերմունքային հետեւութեան արտայայտութիւն. օրինակ՝

Դարդը սրտիս հասայ մեր տուն, տեսայ ծերունի,
Խեղճ մօրըս.
Ասի. - Նանի՛, ճամփորդ մարդ եմ, գիշերս
Ինձ հիր կ'ընդունե՞ս:
Ա՛յս, մերի՛կ ջան... վզովս ընկաւ, սրտիս
գրկեց ու լացեց,-
Ա՛յս, բալա՛ ջան, դարիք բալա՛, էդ դո՞ւն
ես... (ԱԻ, 2, 165):

ԿՈՉԱԿԱՆ ՅԱՐԱԿՐԿՆՈՒԹԻՒՆ

Յարակրկնութիւն է կազմում նաեւ կոչականը, երբ միայնակ կամ իրեն ուղեկ-

ցող ձայնարկութեան եւ կամ էլ իր որոշիչ ու յատկացուցիչ լրացումներէ հետ կրկնուում է բանաստեղծութեան հարեւան տողերի սկզբում: Կոչական յարակրկնութեան շարքի անդամները հանդէս են գալիս քառատող տան՝

ա) 1-ին եւ 3-րդ տողերի սկզբում՝

Հողմե՛ր, ինչո՞ւ էք այդպէս շարաւում Աղօթարանի լճերի վրայ:

Հողմե՛ր, թէ լինէք Աղօթարանում, Դուք մի խոսվէք լճերը նրա (ՀՍՍՐ, 25):

բ) 3-րդ եւ 4-րդ տողերի սկզբում՝

Իմ հիւանդ հոգին շատ է տառապել, Հոգնել է հոգիս հեշտասան սէրից, - Բոյր իմ, մի՛ ցանկայ այսօր ինձ խաբել, - Բոյր իմ, այս անգամ կարեկցանք բեր ինձ (ՎՏ, 2, 181):

Երբեմն էլ յարակրկնութիւն կազմող կրկնեալ եւ կրկնորդ կոչականների հետ կրկնուում է ստորոգեալը: Արդիւնքում ստացւում է կոչական+ստորոգեալ յարակրկնութիւնը. ինչպէս՝

Կրկնակի գալստեան գանգերն են ես լսում, Հատուցումն է գալիս - ես զգում եմ նորան, Բաղաքնե՛ր, գարթնում է ահաւոր մի ցաւում, Բաղաքնե՛ր, գարթնում են այն մարդիկ, որ մեռան (ՎՏՐ, 336):

գ. ՅԱՐԱԿՐԿՆՈՒԹԵԱՆ ԱՅԼ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐ

Բացի վերը նշուած ձեւերից, արդի գրական չափածոյում երեւան են գալիս յարակրկնութեան նաեւ այլ դրսեւորումներ, որոնցից նշելի են յատկապէս հետեւեալները.

1) Երկու տարբեր յարակրկնութիւնների համատեղումը: Յաճախ քառատող տան մէջ կամ ոչ տնային կառուցուածքով չափածոյ խօսքում աստիճանական շարադասութեամբ համատեղուում են մէկից աւելի յարակրկնական շարքեր. սկզբում հանդէս է

գալիս առաջին շարքն իր անդամներով, յետոյ՝ երկրորդը եւ այլն: Սա ստեղծում է արտայայտչական բազմերանգութիւն, նկարագրութիւնը դառնում է շարժուն ու տպաւորիչ: Ինչ խօսք, նախադասութեան ոչ բոլոր անդամների յարակրկնող շարքերը կարող են համատեղուել խօսքի միեւնոյն հատուածում: Բանաստեղծական խօսքում զուգորդուում են մասնաւորապէս՝

ա) երկու տարբեր ստորոգեալ յարակրկնութիւններ՝

Ծաղկել է նորից իմ այգին,
Սրտում իմ գարուն է արդէն,
Սիրում եմ այնքան քնքշագին,
Սիրում եմ, բայց ո՞ւմ - չըզիտեմ:

Դողում է սիրտըս նորբաց,
Նորբաց մի հուրվարդի պէս,
Ծրջում եմ սիրուց արբած,
Ծրջում ու երգում եմ ես... (ՎՏՐ, 250):

բ) ենթակայ եւ ստորոգեալ կամ ստորոգեալի եղանակիչ յարակրկնութիւնները, երբ առաջինը կապակցուում է այլ ստորոգեալների, իսկ երկրորդը՝ այլ ենթակայի կամ ենթակաների հետ. ինչպէս՝

Գարունը այնքա՛ն ծաղիկ է վառել,
Գարունը այնպէ՛ս պայծառ է կրկին,
- Ուզում եմ մէկին քնքշօրէն սիրել,
Ուզում եմ անուշ փայփայել մէկին (ՎՏՐ, 90):

գ) յատկացուցիչ եւ կոչական յարակրկնութիւնները՝

Ձեր շքեղ շէնքերի ծանրութեամբ սրտմաշուկ,
Ձեր ահեղ բերդերի համրութեամբ վերամբարձ,
Բաղաքնե՛ր, ձեր մէջ կայ դժոխքի մի շշուկ,
Բաղաքնե՛ր, ձեր բանտից արդեօք կա՞յ վերադարձ (ՎՏՐ, 336):

դ) ենթակայ եւ շաղկապ յարակրկնութիւնները՝

Դոյլը իջնում է զուարթ զնգոցով

Եւ արձագանգ է խորքերում տալիս,
Դոյլը ելնում է ծանր տնքոցով,
Եւ պատերն ի վար արցունք է լալիս (ՎԴԱՄ, 16):

2) Երկու տարբեր անդամներով յարակրկնութիւն: Երբեմն էլ յարակրկնութիւն են կազմում նախադասութեան մէկից աւելի անդամներ, որոնք կարող են լինել լրացում-լրացեալներ, եւ այս դէպքում յարակրկնութիւն է կազմում տուեալ բառակապակցութիւնը, կամ կարող են այդպիսին չլինել, եւ այս դէպքում էլ յարակրկնութիւն են կազմում այդ անդամներն առանձին-առանձին: Երկու դէպքում էլ առկայ է երկշարք յարակրկնութիւնը: Միեւնոյն բանաստեղծական տան մէջ յարակրկնութիւն են կազմում մասնաւորապէս՝

ա) ենթական եւ ստորոգեալը՝

Ես սիրում եմ արտները ոսկի
Եւ դաշտերը պայծառ,
Ես սիրում եմ խորհուրդն այն խօսքի,
Որ չասիր ու անցար (ՎՏՐ, 157):

բ) յատկացուցիչը եւ ենթական՝

Մի այլ երկրային երաժշտութեան
Ելելէջների պչրանքն եմ յիշում,
Քո շարժումները աղօթք եմ շարժում,
Քո շարժումները ե՛ր կան, ե՛ր չըկան (ՎՏՐ, 60):

գ) ենթական եւ ուղիղ խնդիրը՝

Դու ինձ չես տեսնում լուսէ երագում,
Դու ինձ չես լսում ձմռան փոթորկում... (ՎՏՐ, 72):

դ) ենթական եւ ժամանակի պարագան՝

Դու դեռ չես մեռել իմ հիւանդ սրտում,
Դու դեռ ապրում ես երագի նըման... (ՎՏՐ, 54):

ե) ստորոգեալը եւ ուղիղ խնդիրը՝

Տա՛ր ինձ, քարաւան, իժերին յանձնիր, թաղիր հեգ սիրտս աւագների տակ,

Տա՛ր ինձ, ազատիր իշխանութիւնից, ազատիր նըրա հովանոց վայրագ... (ԱԻ, 2, 69):

Ծանօթութիւն: Նմանապէս յարակրկնութեան շարք են կազմում նաեւ անդէմ միակազմ նախադասութեան բայական գերադաս անդամն ու իր ուղիղ խնդիրը. ինչպէս՝

Մտնել հոգուդ մէջ, խառնել ամէն ինչ,
Քեզ նորից անել հեգ ու հպատակ,
Եւ արցունք տեսնել աչքերին քո ջիւջ,
Եւ արցունք տեսնել ձեռքերին իմ տաք (ՎԴԱՄ, 194):

զ) յատկացուցիչը եւ որեւէ խնդիր (միջոցի, սահմանափակման, անջատման) լրացում՝

Ասա՛ղ, սիրոյ աչքը ծարաւ,
Իմ սիրով էլ չլիացաւ.
Եւ սիրոյ քաղցն այս աշխարհի
Իմ սիրով էլ չփարատուց (ՌԴՊՎ, 169):

3) Բաղադրիչ նախադասութիւն յարակրկնութիւն: Բանաստեղծական կից կամ հարեւան տողերի առաջնամասում կրկնուում են նաեւ բաղադրիչ նախադասութիւններ: Սա առկայ է այն դէպքում, երբ բանաստեղծական տողը բարդ նախադասութիւն է, եւ նրա նախադաս բաղադրիչ նախադասութիւնը նոյնութեամբ կամ մասնակի փոփոխութեամբ կրկնուում է յաջորդ տողի (տողերի) նոյն հատուածում: Որպէս կանոն, կրկնող բաղադրիչ նախադասութեան վերջը համընկնում է տուեալ տողի հատածին կամ առաջին հատածին, երբ տողն ունի երկու հատած եւ բաժանուում է երեք հաւասար մասերի: Այս դէպքում յարակրկնութիւնը նաեւ ապահովում է հաստատուն հատածի գոյութիւնը տուեալ չափածոյ խօսքում:

Յարակրկնութիւն է կազմում՝

ա) աւելի յաճախ բարդ ստորադասական կապակցութեան գլխաւոր նախադասութիւնը. ինչպէս՝



Ես կ'ուզէի, որ քո սրտում մնար մի սուրբ յիշատակ,

-Որ ես վհատ չմնայի կէտ ճամփին...

Ես կ'ուզէի, որ քո կրծքում ճոճապէս ծնուէր մի փափագ,

-Որ տիրաբար հրդեհել է իմ հոգին... (ՎՏ, 2, 154):

Այստեղ չնայած յարակրկնութեան շարքի երկու անդամների սահմանները գլխաւոր նախադասութեան ծիրից դուրս են եկել՝ ընդգրկելով նաեւ ստորադասական շղկապն ու դրան յաջորդող յատկացուցիչը (որ քո), այնուհանդերձ, բուն յարակրկնութիւնը գլխաւոր նախադասութեան կրկնութիւնն է: Բացի այդ, բերուած օրինակում յարակրկնութիւն է կազմում նաեւ 2-րդ եւ 4-րդ տողերում շարակարգուած ստորադաս նախադասութիւնների որ շղկապը:

Գլխաւոր նախադասութիւն յարակրկնութեամբ բարդ ստորադասական կապակցութիւնը լինում է նաեւ շարայարական կառուցուածքի. ինչպէս՝

Ինձ մօտ արի՛ ձուածեղ անեմ...

Ինձ մօտ արի՛ բլիթ տամ... (ՅԹԸԵ, 155):

բ) սակաւադէպ բարդ համադասական նախադասութեան առաջին բաղադրիչը՝ մեծ մասամբ այլ բանատողերի միջարկումով. ինչպէս՝

Ծա՛տ եմ լացել,- իմ աչքերէն

Քունը վաղուց է թռել.

Ծա՛տ եմ լացել, եա՛ր, քու սէրէն

Սիրտս խոր վէրք է դառել (ԱԻ, 2, 7):

Ոչ տնային կառուցուածքի չափածոյ խօսքում երբեմն համատեղում են նախադաս բաղադրիչ նախադասութեան ենթակայի ու յաջորդ բարդ համադասական նախադասութեան առաջին բաղադրիչի յարակրկնութիւնները եւ նոյն կամ յաջորդ տողի մէկ այլ բառի վերջոյթային կրկնութիւնը, որով ուժեղանում է խօսքի թափը,

եւ նրան հաղորդում է արտասովոր սլացք. ինչպէս՝

Այիքներն ափին գարկում եմ՝ մեռնում,

Գետը չի կանգնում, կանչում է՝ առաջ,

Այիքներն անթիւ զոհեր են դառնում,

Գետը չի կանգնում, գոչում է՝ առաջ,

Ծակատագիրն է կոկորդը բռնում՝

Գետը չի կանգնում, ճչում է՝ առաջ,

Բիր ոսկէ ալիք մեռնում՝ չեմ յառնում,

Արծաթ գետն յաւերժ թռչում է առաջ... (ՅԾ, 3, 200):

գ) մէջբերուող նախադասութեամբ կապակցութեան հեղինակի խօսքը: Ինքնատիպ յարակրկնութիւն է կազմում, երբ քառատող տան մէջ երկու տարբեր հեղինակային խօսքեր արտայայտում են միջարկուած կրկնութեամբ. ինչպէս՝

Դու ասիր՝ Գայել, հասկանալ, ու սուզուել, ու դառնալ անէ.-

Նա աւսաց՝ լինել, կատարել, Գերծծել հուրեր ու շողեր:

Դու ասիր՝ ամփոփել ամբողջը, հաշտընել ու խաղաղ լինել.-

Նա աւսաց՝ ամբողջի՛ն տիրանալ, որպէսզի ամբողջը - փոխել (ԵՉՊԲ, 354):

4) Նախադասութիւն յարակրկնութիւն: Յարակրկնութիւն է կազմում նաեւ ինքնուրոյն նախադասութիւնը, երբ բանաստեղծական նախադաս տողը կազմուած է երկու ինքնուրոյն նախադասութիւններից, որոնցից առաջինը նոյնութեամբ կամ մասնակի փոփոխութեամբ կրկնում է յաջորդ տողում կամ տողերում. ինչպէս՝

Ես գալիս եմ ահա: - Նայեցէ՛ք, Գայեցէ՛ք:

Ես գալիս եմ ահա - դարերից...

Ու բերել եմ ինձ հետ երազները իմ սեզ

Ու երգերը ցնդած օրերի... (ԵՉՊԲ, 311):

Յարակրկնութեան կրկնեալ ու կրկնորդ նախադասութիւնները յաճախ էլ չափածոյ խօսքի երկար շղթայում հանդէս են գալիս իրարից շատ հեռու, այլ բանատողերի միջարկումով: Նման յարակրկնու-

թիւնը նաեւ կապակցական դեր է կատարում՝ խօսքի տարբեր հատուածներ իմաստով եւ քերականորէն կապելով իրար: Կրկնութեան այս ձեւը շատ աւելի բնորոշ է Ջարենցի լեզուին ու ոճին: Այսպէս՝ մեծ բանաստեղծն իր գործերից մէկում կիրառել է նախադասութեան յարակրկնութեան երկու շարք՝ մէկը երկանդամ, միւսը՝ բազմանդամ: Բանաստեղծութիւնը սկսւում է «Երկիւնը գորշ է: Պղտոր Նեւան» տողով, որը 11-րդ տողում արտայայտում է «Երկիւնը գորշ է: - Այնտեղ, հեռուն» ձեւով: Այսինքն՝ բանաստեղծը տողերը բաժանել է երկու մասի. հատածի ձախ կողմում ստեղծել է ինքնուրոյն նախադասութիւն յարակրկնութիւն (Երկիւնը գորշ է), որի նպատակը ընթերցողի յիշողութեան մէջ անօրգանական բնութեան չտրամադրող հոգեբանական վիճակը մտապահելն է, բնութեան հետ մարդկային տրամադրութեան ներդաշնակութեան գաղափարի հաստատումը: Նոյն բանաստեղծութեան մէջ երկրորդ յարակրկնութիւնն արտայայտում է Աճում է ահը նախադասութեան կրկնութեամբ: Սա ամբողջ խօսքի շղթայում հանդէս է գալիս մէկ որպէս տողի կէսը զբաղեցնող ինքնուրոյն նախադասութիւն (Աճում է ահը: - Ձմեռային...), մէկ որպէս ամբողջական տող-նախադասութիւն: Այս նախադասութիւնը գործածուել է 11 անգամ, որից 3 անգամ՝ որպէս տողի կէսը զբաղեցնող ինքնուրոյն նախադասութիւն, 7 անգամ՝ որպէս ամբողջ տողը զբաղեցնող ինքնուրոյն նախադասութիւն, իսկ մէկ անգամ՝ որպէս տողի մի մասը զբաղեցնող նախադասութիւն, որին հետեւում է բաղադատութեան եզրը (Աճում է ահը, ինչպէս փորձանք): Նշենք, որ յարակրկնութեան շարքի անդամները հանդէս են եկել անհաւասար թուով տողերի միջարկումով, բայց բոլոր կրկնութիւնների նպատակը մէկն է՝ նկարագրութեանը հաղորդել յուզարտայայտչական լիցք, շօշափելի դարձ-

նել ցարի պալատը սողոսկած երկիւղը: Ապստամբների մօտալուտ յաղթանակի հաւանականութեան թուացողութիւնը խորացրել է երկիւղը արքունական պալատում: Եւ Աճում է ահը նախադասութեան պարբերական կրկնութիւնը պալատում ստեղծուած բարոյահոգեբանական ծանր վիճակն է ներկայացնում: Տուեալ հոգեբանական վիճակն աւելի է խորանում, երբ Աճում է ահը նախադասութիւնը միջարկում է Նստել է ահը, Ընչում է ահը համանիշ նախադասութիւններով, իսկ բանաստեղծութիւնը Աճում է ահը նախադասութիւն-տողով աւարտելն արդէն կատարեալ է դարձնում պալատի ներսում սարսափի ու վախի գերակայող դառնալը:

Ամփոփենք: Յարակրկնութիւնն արտայայտում է բառական կամ շարահիւսական տարբեր միաւորների կրկնութեամբ եւ գեղարուեստական խօսքում երեւան է գալիս տարաբնոյթ իրացումներով՝ ապահովելով բանաստեղծական պատումի պատկերաւորութիւնը, արտայայտչականութիւնն ու ցանկալի ներգործութիւնը:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. Վ. Առաքելեան, Կրկնութեան արուեստի մի քանի առանձնատկութիւնների մասին, ՍԳ, Երեւան, 1961, թիւ 1:
2. Վ. Առաքելեան, Ա. Իսահակեանի պոեզիայի բառապաշարի ոճաբանական առանձնատկութիւնները, Երեւան, 1954:
3. Պ. Պողոսեան, խօսքի մշակոյթի եւ ոճագիտութեան հիմունքներ, գիրք 2-րդ, Երեւան, 1991:

ՀԱՍՍՈՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Ա - Աստուածաշունչ, Էջմիածին, 1994:
- ԱԻ - Ա. Իսահակեան, Երկերի ժողովածոյ, հտ. 1-4, Երեւան, 1973-1975:
- ԳԱՍԿ - Գ. Աշոտ, Սիրոյ կրակներ, Երեւան, 1971:

ԳՍԲՊ - Գ. Մարեան, *Բանաստեղծություններ եւ պոեմներ*, Երևան, 1982:

Ե2 - Ե. Չարենց, *Երկերի ժողովածո*, հտ. 1, Երևան, 1962:

Ե2ՊԲ - Ե. Չարենց, *Պոեմներ, բանաստեղծություններ*, Երևան, 1984:

ՅԹԸԵ - Յովհ. Թումանյան, *Ընտիր երկեր*, Երևան, 1978:

ՅԾ - Յովհ. Ծիրազ, *Քնար Հայաստանի*, հտ. 1, Երևան, 1958, հտ. 3, Երևան, 1974:

ՅԾՀՄ - Յովհ. Ծիրազ, *Յուշարձան մայրիկիս*, Երևան, 1979:

ՀՍ - Հ. Սահեան, *Երկերի ժողովածո*, հտ. 1-2, Երևան, 1984:

ՀՍԴԾ - Հ. Սահեան, *Դաղձի ծաղիկ*, Երևան, 1986:

ՀՍՍԲ - Հ. Սահեան, *Սեզամ, բացուի՛ր*, Երևան, 1972:

ՀՍԲԵ - Հ. Սահեան, *Քարտիկների երգը*, Երևան, 1968:

Ա.տ. - *Առյճ տեղում*:

ՊՍ - Պ. Սեալ, *Երկերի ժողովածո*, հտ. 1-5, Երևան, 1972-1974:

ՌԴՊՎ - Ռ. Դաույեան, *Պղնձե վարդ*, Երևան, 1983:

ՍԳ - «Սովետական գրականություն» (ամսագիր)

ՎԴԱՄ - Վ. Դարթեան, *Անկէզ մորեմի*, Երևան, 1972:

ՎՏ - Վ. Տէրեան, *Երկերի ժողովածո*, հտ. 2, Երևան, 1961:

ՎՏԲ - Վ. Տէրեան, *Բանաստեղծություններ*, Երևան, 1985:

ՍԵՐԻՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՏՈՒԱԾԱԲԱԺԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ ԶՈՒԱՐԹՆՈՑԻ ՏԱԾԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԳԼՈՒԽԸ

Ալեքսան Ծակոբեան

Զուարթնոցի տաճարի կառուցման եւ օծման ժամանակին նուիրուած մեր վերջին աշխատանքը պատրաստելիս¹ պարզ դարձաւ, որ Սեբիոս եպիսկոպոսի² պատմական երկի առկայ հրատարակութիւնները ինչ-ինչ տեղերում չեն նպաստում է դարի սկզբնօրինակը հնարաւորինս պատկերացնելուն, ուստի խնդիր է առաջանում վերստին անդրադառնալ մեզ Հասած ձեռագրական թէկուզ եւ սուղ նիւթի գնահատմանը բնագրագիտութեան այսօրուայ պահանջներին համապատասխան: Ստորեկը փորձենք ներկայացնել հրատարակիչների թոյլ տուած սխալները եւ դրան զուգահեռ՝ պատմիչի բնագրի նախնական վիճակի մասին մեր պատկերացումները՝ վերջինները կիրառելով Զուարթնոցի տաճարի կառուցման մասին հատուածի իբրեւ գլուխ գնահատման օրինակի վրայ:

Ուսումնասիրողները լաւ գիտեն, որ ներկայումս յայտնի է երկի միայն մէկ ամբողջական մայր գրչագիր՝ ՄՄ թիւ 2639 (վերջին հրատարակութիւններում նշանակուած Ա տառանիշով), ընդօրինակուած Գրիգոր երէցի կողմից (տուեալ հատուածը) 1672 թ. Բաղէշի Սուրբ Յովհաննէս Մկրտչի (Ամրդու) վանքում. նրանից ժիւ դարում բազմաթիւ արտագրութիւններ են կատարուել, որոնք հեղինակային սկզբնօրինակի վերականգնման համար որեւէ նշանակութիւն չունեն³: Առաջին, 1851 թ. կոստանդնուպոլսեան հրատարակութեան աշխատասիրող Թադէոս Միհրդատեանցի ձեռքի տակ եղել է վերջին իմաստով չափազանց կարեւոր մի գրչագիր (վերջին հրատարակութիւններում նշանակուած Հ տառանիշով եւ, ցաւօք, ներկայումս կո-

րած), որը յիշատակարան չունէր, սակայն թողնում էր ժՁ դարի ընդօրինակութեան տպաւորութիւն («Օրինակի միոյն չգոյր յիշատակարան, եւ էր թերի, որ էր բոլոր գրով հին թուղթ բամբակեայ. եւ թուի թէ ի վեշտասաներորդ դարու գրեալ իցէ, բայց ամենայն մասամբ մաքուր գրութիւն ի հմուտ գրչէ...»)⁴: Անցած մէկուկէս դարի ընթացքում այլ ամբողջական ինքնուրոյն գրչագրեր չեն յայտնաբերուել:

1979 թ. հրատարակութիւնը պատրաստելիս Գեւորգ Աբգարեանին յաջողուել է աւելացնել միայն մի քանի հատուածական ընդօրինակութիւններ, զարգացած միջնադարի (ըստ աշխատասիրողի՝ ժՁ դարի) բոլորգրով մի ձեռագրի մէկ թերթանոց շատ կարեւոր պատառիկ (ՄՄ թիւ 1343), Սեբիոսի բնագրին նմանուող երկու նախագատութիւն ՄՄ թիւ 1898 գրչագրի (ժԳ դար) 253ր էջում եւ ժԹ դարի շղագրով մի պակասաւոր գրչագրի՝ ներկայումս Մաշտոցի անուան Մատենադարանի Երիցեանի ֆոնդում պահուող վերջին մէկուկէս տետրակները՝ բնագրի շուրջ քառորդ մասով⁵: Միանգամից նշենք, որ աշխատասիրողը չի փորձել մինչեւ վերջ ճշտել վերջինիս տեղը գրչագրերի ճիւղագրութեան մէջ, թէպէտ մի քանի համընկնող տարբերակների հիման վրայ (իրականում դրանք բազմաթիւ են) արդարացիօրէն ենթադրել է, որ հաւանաբար այդ պատառիկը եւ Թադէոս Միհրդատեանցի օգտագործած, ներկայումս կորած հնագոյն գրչագիրը (Հ) «բխում են մի ընդհանուր ձեռագրից»⁶:

Ստեփանոս Մալխասեանցի աշխատասիրութեամբ 1939 թ. հրատարակուած

ԳՍԲՊ - Գ. Մարեան, *Բանաստեղծություններ եւ պոեմներ*, Երևան, 1982:

Ե2 - Ե. Չարենց, *Երկերի ժողովածո*, հտ. 1, Երևան, 1962:

Ե2ՊԲ - Ե. Չարենց, *Պոեմներ, բանաստեղծություններ*, Երևան, 1984:

ՅԹԸԵ - Յովհ. Թումանյան, *Ընտիր երկեր*, Երևան, 1978:

ՅԾ - Յովհ. Ծիրազ, *Քնար Հայաստանի*, հտ. 1, Երևան, 1958, հտ. 3, Երևան, 1974:

ՅԾՀՄ - Յովհ. Ծիրազ, *Յուշարձան մայրիկիս*, Երևան, 1979:

ՀՍ - Հ. Սահեան, *Երկերի ժողովածո*, հտ. 1-2, Երևան, 1984:

ՀՍԴԾ - Հ. Սահեան, *Դաղձի ծաղիկ*, Երևան, 1986:

ՀՍՍԲ - Հ. Սահեան, *Սեզամ, բացուի՛ր*, Երևան, 1972:

ՀՍԲԵ - Հ. Սահեան, *Քարասիների երգը*, Երևան, 1968:

Ա.տ. - *Առյճ տեղում*:

ՊՍ - Պ. Սեալ, *Երկերի ժողովածո*, հտ. 1-5, Երևան, 1972-1974:

ՌԴՊՎ - Ռ. Դաւոյեան, *Պղնձէ վարդ*, Երևան, 1983:

ՍԳ - «Սովետական գրականություն» (ամսագիր)

ՎԴԱՄ - Վ. Դարթեան, *Անկէզ մորեմի*, Երևան, 1972:

ՎՏ - Վ. Տէրեան, *Երկերի ժողովածո*, հտ. 2, Երևան, 1961:

ՎՏԲ - Վ. Տէրեան, *Բանաստեղծություններ*, Երևան, 1985:

ՍԵՐԻՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՏՈՒԱԾԱԲԱԺԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ ԶՈՒԱՐԹՆՈՑԻ ՏԱԾԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԳԼՈՒԽԸ

Ալեքսան Ծակոբեան

Զուարթնոցի տաճարի կառուցման եւ օծման ժամանակին նուիրուած մեր վերջին աշխատանքը պատրաստելիս¹ պարզ դարձաւ, որ Սեբիոս եպիսկոպոսի² պատմական երկի առկայ հրատարակութիւնները ինչ-ինչ տեղերում չեն նպաստում է դարի սկզբնօրինակը հնարաւորինս պատկերացնելուն, ուստի խնդիր է առաջանում վերստին անդրադառնալ մեզ Հասած ձեռագրական թէկուզ եւ սուղ նիւթի գնահատմանը բնագրագիտութեան այսօրուայ պահանջներին համապատասխան: Ստորեկը փորձենք ներկայացնել հրատարակիչների թոյլ տուած սխալները եւ դրան զուգահեռ՝ պատմիչի բնագրի նախնական վիճակի մասին մեր պատկերացումները՝ վերջինները կիրառելով Զուարթնոցի տաճարի կառուցման մասին հատուածի իբրեւ գլուխ գնահատման օրինակի վրայ:

Ուսումնասիրողները լաւ գիտեն, որ ներկայումս յայտնի է երկի միայն մէկ ամբողջական մայր գրչագիր՝ ՄՄ թիւ 2639 (վերջին հրատարակութիւններում նշանակուած Ա տառանիշով), ընդօրինակուած Գրիգոր երէցի կողմից (տուեալ հատուածը) 1672 թ. Բաղէշի Սուրբ Յովհաննէս Մկրտչի (Ամրդու) վանքում. նրանից ժթ դարում բազմաթիւ արտագրութիւններ են կատարուել, որոնք հեղինակային սկզբնօրինակի վերականգնման համար որեւէ նշանակութիւն չունեն³: Առաջին, 1851 թ. կոստանդնուպոլսեան հրատարակութեան աշխատասիրող Թադէոս Միհրդատեանցի ձեռքի տակ եղել է վերջին իմաստով չափազանց կարեւոր մի գրչագիր (վերջին հրատարակութիւններում նշանակուած Հ տառանիշով եւ, ցաւօք, ներկայումս կո-

րած), որը յիշատակարան չունէր, սակայն թողնում էր ժԶ դարի ընդօրինակութեան տպաւորութիւն («Օրինակի միոյն չգոյր յիշատակարան, եւ էր թերի, որ էր բոլոր գրով հին թուղթ բամբակեայ. եւ թուի թէ ի վեշտասաներորդ դարու գրեալ իցէ, բայց ամենայն մասամբ մաքուր գրութիւն ի հմուտ գրչէ...»)⁴: Անցած մէկուկէս դարի ընթացքում այլ ամբողջական ինքնուրոյն գրչագրեր չեն յայտնաբերուել:

1979 թ. հրատարակութիւնը պատրաստելիս Գեւորգ Աբգարեանին յաջողուել է աւելացնել միայն մի քանի հատուածական ընդօրինակութիւններ, զարգացած միջնադարի (ըստ աշխատասիրողի՝ ժԶ դարի) բոլորգրով մի ձեռագրի մէկ թերթանոց շատ կարեւոր պատառիկ (ՄՄ թիւ 1343), Սեբիոսի բնագրին նմանուող երկու նախագասութիւն ՄՄ թիւ 1898 գրչագրի (ժԳ դար) 253ր էջում եւ ժԹ դարի շղագրով մի պակասաւոր գրչագրի՝ ներկայումս Մաշտոցի անուան Մատենադարանի Երիցեանի ֆոնդում պահուող վերջին մէկուկէս տետրակները՝ բնագրի շուրջ քառորդ մասով⁵: Միանգամից նշենք, որ աշխատասիրողը չի փորձել մինչեւ վերջ ճշտել վերջինիս տեղը գրչագրերի ճիւղագրութեան մէջ, թէպէտ մի քանի համընկնող տարբերակների հիման վրայ (իրականում դրանք բազմաթիւ են) արդարացիօրէն ենթադրել է, որ հաւանաբար այդ պատառիկը եւ Թադէոս Միհրդատեանցի օգտագործած, ներկայումս կորած հնագոյն գրչագիրը (Հ) «բխում են մի ընդհանուր ձեռագրից»⁶:

Ստեփանոս Մալխասեանցի աշխատասիրութեամբ 1939 թ. հրատարակուած

բնագիրը հասկանալի չտրված էր ժԹ դարի՝ Թադէոս Միհրդատեանցի եւ նրանից գոնէ դէպի լաւը քիչ տարբերուող, 1879 թ. Քերովբէ Պատկանեանի պատրաստած⁷ բնագրերի թերիները: Նախ եւ առաջ այն հիմնուած էր պահպանուած միակ ամբողջական ձեւագրի վրայ (Ա), որի ընթերցումները համեմատուած էին գլխաւորապէս Թ. Միհրդատեանցի նշած միւս հնագոյն (ցաւօք, ցայսօր չյայտնաբերուած) գրչագրի (Ը) ընթերցումների հետ, արդարացիօրէն անտեսելով (ցաւօք, ոչ լրիւ հետեւողականօրէն) Ա-ից ժԹ դարի ընդօրինակութիւնները՝ ընթերցողին միայն շփոթութիւնների մէջ գցող տարբերումները: Աշխատասիրողը նախորդող աշխատանքներում եւ հրատարակութեան ընդարձակ առաջաբանում միանշանակօրէն ապացուցել էր, որ մեզ հասած բնագրի սկզբի մասը հնարաւոր չէ առանձնացնել մնացեալից ո՛չ որպէս առկայ ձեւագրերում բացակայող Ա եւ Բ դպրութիւններ, ո՛չ էլ որպէս այլ հեղինակի («Անանունի») ստեղծագործութիւն, որն իբրեւ թէ հետագայ գրիչների շփոթութեան արդիւնքում է միացուել Սեբիոսի բնագրին⁸: Նա համարէն նկատել է նաեւ բազմաթիւ գրչական խաթարումներ (մասամբ յայտնաբերուած նախորդ աղբիւրագիտական հետազոտութիւններում), ձեւագրական թերթերի տեղաշարժից կամ կորստից առաջ եկած խախտումներ եւ կատարել արդարացուած վերականգնումներ:

Ստեփանոս Մալխասեանցը իրաւացիօրէն իբրեւ մեծ հաւանականութեամբ հեղինակային սկզբնօրինակին հարազատ է գնահատել Ա գրչագրում որոշ պարբերութիւնների՝ կարմիր թանաքով գրուած սկզբնատառերից շատերին նախորդող եւ պատուոյ նշանի տակ պահպանուած Ե, Է, ԺԱ-ԻԶ եւ ԻԹ-ԼԲ գլխահամարները (ճշգրիտ կը լինէր ասել՝ հաջողաբար համարները)⁹: Ի դէպ, յաւելենք, որ Թ. Միհրդատեանցի բառերին վստահելու դէպքում պէտք է համարենք, որ այդպիսի գլխահա-

մարներ են եղել նաեւ նրա ձեռքի տակ եղած Լ գրչագրի սկզբնամասում: Օրինակ, Ա գրչագրում հատուածահամար չունեցող, բայց Ստ. Մալխասեանցի կողմից արդարացիօրէն (յետհաշուարկի հիման վրայ) «Գ» գլխահամարով օժտուած հատուածը Թ. Միհրդատեանցը կոչել է «Դպրութիւն Բ», ընդ որում՝ վերջին տառի վրայ նշան է դրել ու ծանօթագրել հետեւեալ կերպ. «Ի բնագրին էր ԳԼՈՒԽ Գ. մեք եղաք ԴՊՐՈՒԹԻՒՆ Բ»¹⁰: Քանի որ Ա-ն այդտեղ գլխահամար չունի, ենթադրելի է, որ այդպիսին չի ունեցել նաեւ նրանից ժԹ դարում ընդօրինակուած՝ Թ. Միհրդատեանցի ձեռքի տակ եղած երկրորդ օրինակը (ինքն այն համարում էր առաջին՝ իբրեւ ամբողջական), իսկ դրանից հետեւում է, որ «ի բնագրին էր ԳԼՈՒԽ Գ» ասածը վերաբերում է հրատարակչի ունեցած «միւս օրինակին», այսինքն՝ Լ-ին: Նոյն կերպ Ա գրչագրում բացակայում է Ե եւ Է գլխահամարներով հատուածների միջեւ ընկած եւ յետհաշուարկով, բնականաբար, իբրեւ «Զ» վերականգնուող հատուածահամարը: Նրա փոխարէն Թ. Միհրդատեանցն ունի «Դպրութիւն Գ» եւ դրա նոյնատիպ ծանօթագրութիւն. «Ի բնագրին էր ԳԼՈՒԽ Զ. մեք եղաք...»¹¹: Ուրեմն այստեղ էլ հնագոյն Լ գրչագիրը, հաւանաբար, ունեցել է գլխահամար, այն է՝ Զ: Նշուածի հիման վրայ Ստեփանոս Մալխասեանցը հաւաստիօրէն վերականգնել է ենթադրաբար Սեբիոսի հէնց սկզբնօրինակին յանգող առաջին երեքուկէս տասնեակ հատուածաբաժանումները իրենց գլխահամարներով (նշենք միայն, որ լրիւ ճշգրտութեան համար անհրաժեշտ էր դրանց՝ ձեւագրերում չհանդիպող «գլուխ» անուանումները վերցնել քառակուսի փակագծերի մէջ):

Վերջին առումով թերեւս անհասկանալի է միայն «Ը» գլխահամարի տեղադրումը «Եւ եղեւ յետ մահուանն Խոսրովայ...» նախագասութիւնից առաջ՝ առանց գլխահամարի թողնելով քիչ վերեւ՝ «Մա-

տեան ժամանակեան. պատմութիւն թագաւորական» գլխագիրը¹²: Ի դէպ, երկի ամբողջական բովանդակութիւնը ճիշտ պատկերացնելուց յետոյ պարզ է դառնում նաեւ, որ անկախ հետագայ (թէկուզ եւ, ամենայն հաւանականութեամբ, վաղ) գրիչների ընկալումներից ու ձեւաւորումներից, իբրեւ Սեբիոս հեղինակի դրած գլխագիր պէտք է վերականգնել այդ հատուածի ողջ առաջին՝ յանգերով շարադրուած պարբերութիւնը՝ «Մատեան ժամանակեան, պատմութիւն թագաւորական, վէպ արիական, ... զարթուցանել զկործանումն ի վերայ ամենայն երկրի», որին հետեւում է պատմիչի գրելաոճին շատ բնորոշ «Եւ արդ, ես ճառեցից...» հատուածակիզբը:

Բնագրագիտական հետեւողականութեան իմաստով Ստեփանոս Մալխասեանցի պատրաստած բնագրի գլխաւոր թերութիւնն այն է, որ հետեւելով անգամ 1851 թուականի համար անհասկանալի՝ գլուխների վերնագրեր յօրինելու Թադէոս Միհրդատեանցի գործելակերպին («քանի որ նրանք ոչ մի վնաս չունին, այլ դիւրութիւն [°] են տալիս ընթերցողին [պատմավէպի° - Ա. Յ.]»)՝ աշխատասիրողը զարմանալիօրէն «յարմար» (°) է համարել դրանց փոխարէն յօրինել նոր վերնագրեր, իբրեւ թէ՛ աւելի բովանդակալից: Ընդ որում, եթէ Թ. Միհրդատեանցը, որպէս կանոն, լրացնում էր հնագոյն գրչագրերի պահպանած վերնագրերը (ընդամէնը 15), ապա Ստ. Մալխասեանցը անարդարացիօրէն դրանց մեծ մասն ընդհանրապէս հանել է բնագրից եւ իջեցրել տողատակ, ընդ որում բացարձակապէս առանց մեկնաբանութեան. «բնագրի վերնագրերը միշտ ցոյց են ցուցնել բազմաթիւների մէջ [°]»¹³: Նա նաեւ չի նկատել Ա գրչագրի ԻԴ գլխի վերնագիրը, (որը գրիչը սկզբում հաւանաբար վրիպել էր իր տեղում, բայց յետոյ տեղադրել վերեւ լուսանցքում՝ «Գտանել մասն ի խաչափայտէն»)՝¹⁴, այդ պատճա-

ռով յօրինել է նորը՝ առանց տողատակում ծանօթագրելու¹⁵:

Տեղին նշենք, որ մեծ հաւանականութեամբ իր իսկական տեղից հեռացած եւ գրիչների անուշադրութեան հետեւանքով լուսանցքում յայտնուած գլխագիր պէտք է համարուի նաեւ Ա գրչագրի 505ա երեսի աջ լուսանցքում, ԺԲ գլխի բնագրի միջին մասի կողքին, վերեւից ու ներքեւից պատուոյ նշանի մէջ առնուած «ԶԴ[ա]ն[ի]էլ մ[ար]գ[ա]ր[է]ին շն[ո]րհ ոչ կ[ա]ր[ա]ցին տ[ա]նել» չորստողանոց գրառումը, որի փոխարէն նոր գլխագրեր են ստեղծել Ե՛ւ Թ. Միհրդատեանցը, Ե՛ւ Ստ. Մալխասեանցը: Իրականում Ա-ի գրիչը նոյն ձեւաւորումով է ընդօրինակել նաեւ իր վերջին գլխահամարով (ԼԲ) հատուածին յաջորդող կարմիր սկզբնատառով սկսուող գլխի (ուրեմն, իրօք՝ ԼԳ) երկտողանոց «վերնագրակերպ նշումը»՝ «Առ տ[է]ր Կոմիտ[ա]ս», որը նախորդից տարբերուած է միայն լուսանցքում սկզբնատառի կողքին լինելով, բայց այդ պատճառով բոլոր հրատարակիչների կողմից գնահատուել ու վերարտադրուել է (եւ իրաւացիօրէն) իբրեւ հատուածի գլխագիր: Եթէ մեր ենթադրութիւնը ճիշտ է, ապա, թերեւս, արդարացուած կը լինի բովանդակութիւնից ելնելով նաեւ համարել, որ այդ գլխագրի սկզբում Սեբիոսի բնօրինակն ունեցել է հետագայում կորսուած «Եթէ որպէս» բառերը («Եթէ որպէս] գԴանիէլ մարգարէին շնորհ...»): Հաւանաբար, գրիչներից մէկն արտագրութեան ժամանակ բաց է թողել դրանք՝ վերջում զարգագրով նկարելու նպատակով, եւ յետոյ մոռացել է դա անել (գիտենք, որ այդ կարգի վրիպումը մեր մատենագրութեան բազմաթիւ երկերի գլխագրերի եւ բուն վերնագրերի կորստի գլխաւոր պատճառն է եղել): Իսկ լուսանցքում ձեւաւորուած գլխագրերի առիթով ընդհանրապէս պէտք է նկատի ունենալ, որ յատկապէս վաղ միջնադարի հեղինակների համար լուսանցքը շատ դէպքերում գրադաշտի մի

սովորական մասի (սիւնակներից մէկի) նշանակութիւնն է ունեցել¹⁶:

Ստեփանոս Մալխասեանցի ներկայացրած գլխաբաժանման հետ կապուած որոշակի խնդիր կայ երկի երկրորդ մասում, որտեղ ձեռագրերի աւանդած հատուածահամարներ չունենք: Ճիշտ է, Ա գրչագրի 533ա էջի լուսանցքում պահպանուած է «ՀԲ» համարը, որը դրուած է «Բ» սկզբնատառը կարմրացուած «Բայց ասպետ ոչ կարաց նուաճել...» բառերով սկսուող պարբերութիւնից առաջ, նոյն ձեւի պատուոյ նշանի տակ, ինչ որ երկի առաջին կէսի Ե-ԼԲ գլուխների դէպքում պահպանուածները, սակայն հրատարակչներից ոչ ոք դա բաւարար չի համարել նոր գլուխ ստեղծելու համար¹⁷: Պատճառն արդարացի է. Ա-ի վերջին՝ ԼԲ գլխահամարից մինչեւ այդ հատուածը կարմիր գլխատառերի թիւը ոչ թէ 40 է, այլ ընդամէնը՝ 13: Մեր կարծիքով «ՀԲ» թուահամարն աւելի մեծ հաւանականութեամբ՝ գրչական շփոթի արդիւնք պէտք է համարուի: Թւում է, թէ մի վաղ գրչագրի ընդօրինակող սխալմամբ կարմրացրած զարդատառով է ներկայացրել նախադասութեան սկզբի «Բ»-ն¹⁸, ապա, նկատելով սխալը եւ ցանկանալով նշել դրա մասին, լուսանցքում նկարել է վրիպակի կայծակաձեւ, երկաթագիր «Հ»-ին շատ նման նշանը, որից յետոյ գրել վրիպած «Բ»-ն՝ պատուոյ նշանի տակ (նոր զարդատառ նկարելու փոխարէն): Հետագայ մի գրիչ սխալմամբ ընկալել է առաջին նշանն իբրեւ «Հ» եւ պատուոյ նշանը տարածել է երկու տառերի վրայ՝ իբրեւ հատուածահամարի, որպիսիք արտագրել էր երկի առաջին կէսում:

Բոլոր դէպքերում, Ստեփանոս Մալխասեանցի համար (իբրեւ բազմահմուտ բնագրագէտի) առաւել արդարացուած կը լինէր ոչ թէ հետեւել Թադէոս Միհրդատեանցի ճաշակով արուած գլխաբաժանմանը (եւ միայն յօրինել նոր գլխագրեր),

այլ յատուկ քննարկման առարկայ դարձնել Ա-ում կարմիր սկզբնատառերով նշուած եւ միաժամանակ Սեբիոս հեղինակի մտայղացման մէջ գլուխ եղած լինելու հաւանականութիւնն ներշնչող հատուածները: Դրանից յետոյ միայն երկի երկրորդ կէսի գլխաբաժանման ստացուած վերականգնումը (առաջացած բոլոր գլխահամարներն, իհարկէ, վերցնելով քառակուսի փակագծերի մէջ) կարող էր յաւակնել որոշակի համապատասխանութեան է դարի սկզբնօրինակի հետ:

Այդպիսի վերականգնումն, իհարկէ, նոյնպէս մեծ չափով պայմանական կը լինէր այն հասկանալի պատճառով, որ այսօր հնարաւոր չէ ճշտել՝ արդեօք կարմիր գլխատառով կամ մէկ այլ ձեւով նշուած հատուածաբաժանում չի եղել Սեբիոսի բնագրի երկրորդ կէսում դեռեւս Քերովբէ Պատկանեանի, Յոզէֆ Մարկուարտի եւ հայր ներսէս Ակինեանի կողմից նկատուած յայտնի կորստի տեղում¹⁹: Վերջինիս մասին լաւ գիտենք պատմիչի Ե գլխի բովանդակութեան ցանկի նմանուող խոստաբանութեան կամ նախադրութեան մէջ ասուած՝ «զղիմելն Հերակլի ի կողմանս հիւսիսոյ առ արքայն Թէտալացոց. գլուղարկումն անհուն բազմութեանն ազգաց» արտայայտութիւնից, որպիսի բովանդակութեամբ շարադրանքի միայն մի փոքրիկ (մի քանի տողանոց) կտորն է պահպանուել առկայ ձեռագրերում, այն էլ՝ իր նախնական տեղից թերթերի շփոթի պատճառով տեղաշարժուած եւ յայտնուած Սմբատ Բագրատունու մահուան մասին պատմող գլխի վերջում («Ապա ապստամբեալ զնացին ի ծառայութիւն մեծին իսաքանայ [Ս Աքանայ²⁰]՝ արքայի կողմանցն հիւսիսոյ, ի ձեռն ձենաստանն ձեպետըխոյ [Մ ձեպետխոյ] այնորիկ, հրամանաւ թագաւորին իւրեանց իսաքանայ: Եւ ելեալ ընդ Պահորակն [=Պահակն] ձորայ զաւրաւք բազմութեան՝ զնացին յաւանականութիւն թագաւորին Յունաց»²¹: Ընդ ո-

րում, նախորդ աղբիւրագէտները, այդ թւում՝ հրատարակիչներ Ստեփանոս Մալխասեանցը եւ Գեւորգ Աբգարեանը, որոնք իրաւացիօրէն առանձնացրել են հիւսիսային խաքանի մասին տողերը Սմբատ Բագրատունու մահուան նկարագրութիւնից, լրջօրէն չեն փորձել գտնել թէպէտ ակնյայտ, սակայն առկայ ձեռագրերում հետքերը բաւականին խառնած պակասի իրական տեղը:

Օգտագործելով առիթը՝ նշենք, որ մեր կարծիքով, այդ տեղը; ամենայն հաւանականութեամբ, մեզ հասած բնագրի ԼԶ գլխի (ըստ Ստ. Մալխասեանցի գլխակարգութեան) վերջից երրորդ եւ երկրորդ պարբերութիւնների միջեւ է: Առկայ ձեռագրերը այդ պարբերութիւններից առաջինում յայտնում են Հերակլ կայսեր կողմից 624-625 թթ. Հայաստանում, Ատրպատականում, Աղուանքում եւ Հիւսիսային Ասորիքում Ծափր Վարազի ընդհանուր հրամանատարութեամբ իրանական զօրքերի դէմ վարած յաջող գործողութիւններից յետոյ կայսրութեան տարածքը վերադառնալու մասին (պարբերութեան վերջին նախադասութիւնը՝ «Բայց զի յաւանալ էր զաւրն՝ խորհեցաւ բազում գաւառս ընդ մէջ արկանել, զի հանգիցէ զաւրն եւ կազմիցի եւ զնացեալ ի կողմանս Ասիացոց՝ անդ սփռեալ դադարեցին», վերաբերում է ոչ թէ նախորդ նախադասութեան մէջ վերջինը յիշատակուող Շահր Վարազին²², այլ դրանից առաջ յիշատակուած Հերակլին՝ «Իսկ Երակլոս առ զաւար եւ զկապուտ բանակի նոցա ... եւ երթեալ հասանէ ի կողմանս Կեսարացոց»²³, իսկ յաջորդ պարբերութիւնում կայսեր դէմ յանկարծակի ի յայտ է գալիս 627 թ. երկրորդ կէսին Սասանեան հիմնական զօրաբանակի գլխաւոր հրամանատար Ռոմվեհաւը²⁴: Ընդ որում, շարադրանքի ուշադիր քննութիւնից երեւում է («Յայնժամ առեալ Երակլի զզաւրս իւր՝ դարձաւ յերկիրն Հայոց ... երթեալ թափեցաւ ի Գոգո-

վիտ գաւառ. եւ Ռոմիկ Վահագնայ [=Ռոմվեհանայ] եւ զարուս Պարսից կարծեցեալ զնոսա փախստական զնալ...»), որ այդ հրամանատարի ու այդ զօրաբանակի մասին գրողը քիչ վերեւ արդէն ասել է, եւ ընթերցողը գիտի, թէ ում մասին է խօսքը:

625-627 թթ. միջակայքի մասին մանրամասն տեղեկութիւններ պահպանուել են այլ հայկական եւ բիւզանդական աղբիւրներում, մասնաւորապէս՝ Ժ դարի վերջի պատմիչ Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից» երկում բառացի արտագրութեամբ պահպանուած Անանուն Կաղանկատուացու «Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց եւ պէս պէս անցից տիեզերահեծ տազնապին» վերտառութիւնը կրող, 630-632 թթ. միջակայքում շարադրուած գրուածքում²⁵ եւ Թ դարի յոյն ժամանակագիր Թէոփանէս Խոստովանողի մօտ: Այդ սկզբնաղբիւրների բաւական մանրամասն տեղեկութիւններից գիտենք, որ հէնց 625 թ. վերջից մինչեւ 627 թ. սեպտեմբեր են տեղի ունեցել. ա) բիւզանդական Անդրէ զօրավարի 625 թ. դեսպանազնացութիւնը Հիւսիսկովկասեան խազարների մօտ եւ կայսեր հետ բանակցելու նպատակով վերջիններիս ոչ մեծ զօրաջոկատի հասնելը Բիւզանդիա (ճեղքելով Չողի ամրութիւնները, ապա Կուրի ափերով, Վրաց ու Եգիպոս աշխարհներով եւ Սեւ ծովով)²⁶; բ) խազարների մեծ զօրաբանակի 626 թ. ներխուժումն Աղուանք եւ Ատրպատական²⁷; գ) Տփղիսի անյաջող պաշարումը բիւզանդացիների ու խազարների կողմից 627 թ. առաջին կէսին²⁸ եւ Հիւսիսկովկասցիների իշխանին յետ ուղարկելուց յետոյ, նրանից վերջրած 40 հազարանոց օգնական ուժերի հետ միասին կայսեր զօրքի՝ Պարսկաստանի կենտրոնական շրջաններ ներխուժելը Հայաստանով, Ատրպատականով ու Ասորեստանով 627 թ. օգոստոս-սեպտեմբերին²⁹: Երկու հեղինակներն էլ Ռոմվեհանին³⁰ առաջին անգամ յիշատակում են

այս աշխան ժամանակահատվածում՝ իբրև խորհրդակցի կողմից մի կերպ հաջողությամբ եւ Հիւսիսային Միջագետք ուղարկուած զօրքի հրամանատար (որն ի վերջոյ ջախջախիչ պարտութիւն կրեց եւ սպանուեց Նինուէի ճակատամարտում)³¹: Թէպէտ աւելի հաւանական է թուում Սեբիոսի պահպանած տեղեկատուութիւնը, ըստ որի՝ Ռոմ-վեհանի բանակը շարժուած էր Հերակլին գողգընթաց Հայաստանի գաւառներից սկսած:

Այսպիսով, կարելի է ամփոփել, որ մի վաղ գրչագրում թերթերի կորստի եւ շփոթի արդիւնքում այլ տեղում յայտնուած ձեպետուխ-ձեպետխոյի (Ձեբուի³²) զօրքերի եւ հիւսիսի խաքանի մասին փոքրիկ հատուածի հետ միասին Սեբիոսի երկի պայմանական ԼԶ գլխի վերջին երեք պարբերութիւններին նախորդել են ինչ-որ տեղեկութիւններ թիւրքիւտների ընդարձակ տափաստանային խաքանութեան մէջ տեղի ունեցած ներքին ընդհարումների («Ապա ապստամբեալ գնացին ի ծառայութիւն մեծին ինքանայ...» եւ այլն), ինչպէս նաեւ, հաւանաբար՝ բիւզանդա-խաղարական դաշնակցութեան հաստատման, 626-627 թթ. նրանց համատեղ ռազմական գործողութիւնների եւ Վիրքից դէպի Միջագետք շարժուած Հերակլ կայսեր դէմ խորհրդով Ապրուէզի կողմից Ռոմ-վեհանի գլխաւորութեամբ պարսկական զօրաբանակի ուղարկման մասին: Իհարկէ, այսպիսի ընդարձակ բովանդակութեամբ հատուածի վերականգնումից յետոյ աւելի հաւանական է ենթադրել, որ այդ հատուածը հեղինակային սկզբնօրինակում նաեւ կարող էր բաղկացած լինել մէկ եւ աւելի գլուխներից (սակայն ո՛չ այնքան աւելի, որպէսզի Ա գրչագրի ներկայացրած «ՀԲ» թուահամարը հնարաւոր լինի համարել «Բայց ասպետ ոչ կարաց նուաճել...» հատուածի՝ Սեբիոսի նշած գլխահամար): Բոլոր դէպքերում, այլեւս միանշանակ պարզ է, որ քանի դեռ քննարկուած պա-

կասի բնագիրը չի յայտնաբերուել, գոնէ այդ հատուածին յաջորդող գլխահամարների վերականգնումը կարող է լինել միայն պայմանական, այսինքն՝ առանց հեղինակային սկզբնօրինակին համընկնելու հաւանութեան³²:

Կատարուած վերլուծութիւնից յետոյ կրկնենք, որ Ա գրչագրի ունեցած վերջին ԼԲ գլխահամարին յաջորդող՝ կարմիր սկզբնատառերով եւ գրչական ձեւաւորման այլ միջոցներով առանձնացուած հատուածների վերականգնումը՝ իբրեւ երկի առաջին կէսի գլուխներին համարժէք բաժանումների, ենթակայ է քննական վերանայման: Այդ դէպքում, հակառակ Թադէոս Միհրդատեանի նախասիրութեան (հետագայում ընդունուած Ստեփանոս Մալխասեանցի եւ Գեւորգ Աբգարեանի կողմից), իբրեւ առանձին գլխաբաժանումներ վերականգնուելու անկասկած կը յաւակնեն եւս մի քանի՝ կարմիր սկզբնատառերով հատուածներ՝ Ստեփանոս Մալխասեանցի ԼԶ գլխի չորրորդ պարբերութեամբ («Եւ եղեւ յամի ԼԴ-երորդի խորհրդով արքայի՝ գրէ առ Երակղոս հրովարտակ՝ այսպէս») սկսուողից մինչեւ երկի աւարտական հինգ պարբերութիւնների կտորը («Ի նմին ամի ի բաց կացին Հայք ի ծառայութենէ Իսմայելացւոցն...» եւ այլն), որը յաջորդում է Իսմայելացիների մասին Սեբիոսի հերթական անէծքախառն խոհերի հատուածին (Գեւորգ Աբգարեանի կողմից այն անիրաւացիօրէն, իբրեւ երկի աւարտական յիշատակարան, իր տեղից հանուելու բնագրի վերջ է տարուել) եւ Ա գրչագրում նրանից առանձնացուած է ոչ թէ կարմիր սկզբնատառով, այլ լուսանցքում դրուած խաչանշանով³³:

Աւարտելով Ստեփանոս Մալխասեանցի պատրաստած բնագրի քննարկումը՝ նշենք, որ նրանից չորս տասնամեակ անց իրականացուած Գեւորգ Աբգարեանի հրատարակութիւնը, փաստօրէն, էական

նպաստ չի բերել Սեբիոսի երկի բնագրագիտական աւելի խոր ընկալմանը: Թէպէտ աշխատասիրողը մեծացրել է օգտագործուած ձեւագրերի, պատառիկային ու հատուածական կտորների եւ բազմաբնոյթ ծանօթագրութիւնների քանակը, սակայն, կրկնելով իր նախորդի գլխաւոր բնագրագիտական թերութիւնները, թոյլ է տուել նաեւ իր ժամանակի համար ընդհանրապէս անհասկանալի եւ ընթերցողին միայն շփոթութեան մէջ գցող սխալներ: Մասնաւորապէս չեն կարող ընդունելի համարուել. ա) Ա եւ Է գրչագրերում պահպանուած «Ե» եւ «Է» գլխահամարներն անտեսելը, ինչպէս նաեւ վաղմիջնադարեան հեղինակի աւանդած բովանդակութեան համարժէք գնահատման փոխարէն սեփական նախասիրութիւնների հիման վրայ «Մննդաբանութիւն ազգի՛ն Մամիկոնէից» եւ «Թագաւորք Հայոց, Պարսից եւ Յունաց» գլուխներ առանձնացնելով՝ երկի առաջին կէսի միւս գլխահամարները (ձեւագրերում պահպանուած մինչեւ ԼԲ) անթոյլատրելիօրէն ի դերեւ հանելը³⁴; բ) Ա գրչագրի (այդպէս՝ նաեւ ՄՄ թիւ 1343 պատառիկի) պահպանած կարմրացուած գլխատառերի մի մասի մասին գոնէ տողատակում չնշելը; գ) երկի նախավերջին պարբերութիւններից մէկը իբրեւ Սեբիոսի աւարտակաճ յիշատակագրութիւն գնահատելուց յետոյ իր՝ ձեւագրերով աւանդուած տեղից թեթեւօրէն հանելն ու բնագրի աւարտ տանելը: Ըստ այդմ, Սեբիոսի տեղեկութիւններն օգտագործող մասնագէտը ստիպուած է այլ դէպքերում աւելորդ ուշադրութիւն դրսեւորել հրատարակութիւնների տողատակերում նշուած կամ վրիպած ձեւագրական նիւթի նկատմամբ³⁵: Քննարկենք նշուած երեք սխալները:

Նախ. Ա գրչագրի լուսանցքներում պահպանուած գլխահամարներին անուշադիր վերաբերուելը փաստօրէն շարունակուած է նախորդ հրատարակիչների բնագրագիտօրէն անթոյլատրելի վերաբեր-

մունքը մեզ հասած հնագոյն ամբողջական գրչագրի պահպանած կոնկրետ գլխագրերի, իսկ հատուածներից շատերի դէպքում՝ նրանց բացակայութեան փաստի նկատմամբ (ինչպէս նշեցինք, Թ. Միհրդատեանցը եւ Ստ. Մալխասեանցը փաստօրէն զբաղուել են պատմավէպին բնորոշ գլխագրեր յօրինելով): Իրականում, եթէ միջնադարեան հեղինակի (տուեալ դէպքում՝ Սեբիոսի) ինքնուրոյն ձեւագրերի աւանդած գլխագրերը համառօտ են կամ իրենց բացակայութեամբ չեն համապատասխանում մերօրեայ աշխատասիրողի սպասելիքներին, առանց յատուկ ապացոյցների՝ չի կարելի դա հէնց այնպէս հանել շարադրող պատմիչի մտայղացումների՝ անպայման ընկալման (վերականգնման) ենթակայ շրջանակից (ճիշտ նոյնպէս, ինչպէս որ սկզբնօրինակի վերականգնմանը խնամքով վերաբերուող աշխատասիրողը կամայականօրէն չի փոխի գրչագրերի աւանդած հազուադէպ բառերը կամ իւրօրինակ քերականական ձեւերը):

Մի տեղում Գեւորգ Աբգարեանը նաեւ սխալմամբ հաշուել է, իբրեւ թէ Ա գրչագրում Սեբիոսի՝ նրա պատկերացրած սկզբնամասից (գլուխ Ե. իր մօտ՝ է) մինչեւ իր կարծիքով առաջին պահպանուած գլխահամարը (ԺԱ. իր մօտ՝ գլուխ ԺԳ) կարմրացուած գլխատառերով սկսուող հատուածների թիւը 10 է, եւ դրա հիման վրայ ենթադրել, թէ դրանք եղել են սկզբնօրինակի Ա-Ժ գլուխները (բարեբախտաբար, հրատարակուած բնագրում նման վերականգնում չկատարելով)³⁶: Իրականում, սակայն, նմանատիպ հատուածների թիւը 13 է (ըստ «Մատենագիրք Հայոց»-ի համարակալուած նախադասութիւնների՝ է.3, է.7, Ը.7, Ը.15, Ը.25, Ը.27, Թ.3, Ժ.01, Ժ.7, ԺԱ.7, ԺԱ.33, ԺԱ.36, ԺԲ.5)³⁷: Աւելացնենք, որ այդ կարմիր գլխատառերով սկսուող հատուածներից ոչ բոլորը կարող են յաւակնել յանգելու է դարի պատմիչի մտայղացած համարակա-

լուած գլուխներին (որոնց գլխահամարները մեզ հասած Ա եւ Հ ինքնուրոյն գրչագրերում այս կամ այն պատճառով կորսուել են). թէպէտ նոյն տեղում աշխատասիրողը պնդում է, իբրեւ թէ կանոնաւոր համարակալուած ԺԱ-ի՛ն հատուածներում «չի հանդիպում ոչ մի անհամապատասխանութիւն հատուածների եւ թուանշանների միջեւ», սակայն իրականում այդպիսի չհամարակալուած, բայց կարմիր սկզբնատառերով հատուածներ կան 4 հաւտ (ըստ «Մատենագիրք Հայոց»-ի համարակալուած նախադասութիւնների՝ ԻԷ.13, ԻԸ.38, ԼԱ.19, ԼԲ.21)³⁸: Այսպիսով հասկանալի է, որ միջնադարեան հեղինակի աւանդած բովանդակութեան համարժէք գնահատման դէպքում աշխատասիրողը չպէտք է թոյլ տար իրեն սեփական նախասիրութիւնների հիման վրայ երկի այս՝ իրօք բաւականին կանոնաւոր գլխահամարներ պահպանած (այդ թուում նաեւ Ե եւ Է³⁹) առաջին կէսում աւելացնելու հերթականութիւնը խախտող երկու գլուխներ:

Երկրորդ. կարմրացուած գլխատառերի մասին վերը նշուած ոչ լրիւ ճիշտ կարծիքն արտայայտելով՝ Գեղորգ Աբգարեանը գոնէ պէտք է տողատակում նշէր դրանց ոչ թէ մի մասը, այլ բոլորը (Ստեփանոս Մալխասեանցն ընդհանրապէս չի նշել դրանք բնագրի տողատակում)⁴⁰՝ օգնելով ընթերցողին ինքնուրոյն փորձելու վերականգնել է դարի սկզբնօրինակը: Փոխարէնը հետաքրքիր է, որ Թադէոս Միհրդատեանցը կէսից աւելի դէպքերում կարմիր սկզբնատառով սկսուող պարբերութիւններից առաջ արդարացիօրէն տող է բաց թողել: Ընդամէնը մէկ դէպքում, «Վասն Հայոց կաթաղիկոսին⁴⁰ Ներսիսի» գլխի (ԽԷ՝ ըստ Ստ. Մալխասեանցի գլխակարգութեան) երկրորդ կէսում, տող է բաց թողնուած այնպիսի պարբերութիւնից առաջ, ուր Ա-ն կարմիր գլխատառ չունի («Եւ սաստիկ ստիպով փութացուցանէին զարքայ ի Կոստանդնուպալիս...» եւ այլն),

ընդ որում, երկու կարճ պարբերութիւն անց, ուր Ա-ում կարմիր գլխատառ կայ («Իսկ Թէոդորոս Ռշտունեաց տէր դարանակալ եղեւ յԱղթամար կղզի...» եւ այլն), Թ. Միհրդատեանցի մօտ տող բաց չի թողնուած: Եթէ այս փաստը պատահականութիւն չհամարենք, ապա կարող ենք ենթադրել, որ կարմիր գլխատառերով կամ մէկ այլ ձեւով ուրոյն հատուածաբաժանում է ունեցել նաեւ ներկայումս կորած Հ գրչագիրը (այդ դէպքում էլ աւելի ուշադիր պէտք է լինենք Թ. Միհրդատեանցի թէկուզ եւ չծանօթագրուած ընթերցումների նկատմամբ):

Եւ երրորդ. իր երկի աւարտական հատուածում, Զուարթնոցի կառուցումն աւարտին հասցնելու Ներսէս կաթողիկոսի ջանքերի մասին նշումից յետոյ Սեբիոսը շարադրում է արաբների մասին իր խոհերի (իրականում՝ հինկտակարանեան օրինակներով համեմուտած փնովման) մի ծաւալուն հատուած, որը, տարաբախտաբար, Գեղորգ Աբգարեանի կողմից ընկալուել է իբրեւ երկի հեղինակային յիշատակարան եւ հանուել ու տարուել բնագրի վերջ⁴¹: Սակայն, մի կողմ դնելով բանասէրի անյաջող թարգմանութիւնը, պատմիչի խօսքի սկիզբը պէտք է հասկանալ այսպէս. «Արդ՝ թէպէտ եւ [=չնայած] վայրապար [=պարզ ու հասարակ] զրուցեալ տողեցից [=պատմելու (զրուցեալ տողելու) էի] զբանս ի կարգի պատմութեանս [=իմ պատմութեան հետ-թակաճութեամբ⁴²] ըստ անհանճար խորհրդոյ մտացս իմոյ⁴³, եւ ոչ ըստ արժանաւոր շնորհի գիտութեան. այլ սակայն անդր հայեցեալ ի կարգս ուսումնասիրացն՝ եւ [=նաեւ] հաստատեցից [=կը հաստատեմ] մարգարէական բարբառովն...»: Եթէ սրան աւելացնենք այն, որ Ա գրչագրում հատուածից առաջ մեծ խաչանշան է դրուած (իսկ Թ. Միհրդատեանի հրատարակութիւնում՝ տող է բաց թողած), որը, ինչպէս բնագրի նախորդ մասերում կարմիր գլխատառերն էին, հատուածաբաժանում (գլխաբա-

ժանում) է ցոյց տալիս (նոյն հաւանականութեամբ՝ Հէնց հեղինակային), ապա պարզ կը դառնայ, որ «Իսմայելի որդիների» մասին «խոհերը» հեղինակի սիւժետային մտայղացման իմաստով վերաբերում է ոչ թէ ամբողջ երկին (իբրեւ աւարտական յիշատակարան), այլ նախ՝ այն լաջորդող, մէկ պարբերութիւն անց գրուած նախադասութեանը (պարզապէս՝ նրա համար նախաբան լինելով), ուր պատմում է, իրօք, անէծքի արժանի արաբական վայրենագործութիւնների մասին (1775 պատանդների կոտորածը), իսկ յետոյ՝ մի քանի պարբերութիւն անց այն ընդարձակ հատուածին (բազմացած ամիրապետերի երկպառակչական կոիւնների ու դրանց հանգուցալուծման մասին), որով աւարտուում է Սեբիոսի բնագիրը:

Վերջում աւելացնենք, որ արդէն որեւէ հիմքից զրկուած է իբրեւ թէ Ասողիկից օգտուած «Անանունի» հիմնաւորապէս մերժուած վարկածը արհեստական ապացոյցներով վերակենդանացնելը (բարեբախտաբար, բնագիրը դեռ չի նետուել Գեղորգ Աբգարեանի կողմից եւ տպագրուել է նոյն ձեւով): Այն օրինակները, որ բերել է աշխատասիրողը ցոյց տալու համար պատմիչի սկզբնական հատուածի «Երկակի կանոնի» եւ հետագայի իբրեւ թէ բուն երկի տեղեկութիւնների միջեւ եղած հակասութիւնները, երբեմն զարմանք են առաջացնում⁴⁴: Նկատի ունենք նախ եւ առաջ խորով Ապրուէզի մահից յետոյ Սասանեան գահին մի քանի տարում իրար փոխարինած նրա սերունդների սեբիոսեան թուարկման մէջ հակասութիւն տեսնելը: Բաւական է մի փոքր ուշադիր դիտարկել այլ հայկական կամ օտարալեզու աղբիւրներում այդ ժամանակաշրջանի մասին եղած հաւաստի վկայութիւնների սակաւութիւնն ու հակասականութիւնը, եւ պարզ կը դառնայ, որ միայն ժամանակակից գրողը կարող էր յայտնել այն (ըստ Գ. Աբգա-

րեանի՝ իբրեւ թէ հակասական) տուեալները, որ գտնուած ենք «Երկակի կանոնում»:

Միւս կողմից, ուշադիր ընթերցողն առանց մեծ ջանքի կը գտնի բազմաթիւ եզակի կապեր երկի սկզբի եւ հետագայ կտորների միջեւ: Մէկ օրինակ. «Երկակի կանոնի» նախավերջին պարբերութիւնն աւարտուում է՝ «Յագկերտ՝ Ի, Կոստանդիս Ս Կոստանդինի» ԺԱ. արքայն Իսմայելի՝ [Ժ]Թ», բառերով (վերջին թուականի մէջ «Ժ»-ի բացակայութեան մասին յատուկ կը խօսենք ստորեւ): Արդ՝ Մահմեդի մահուանից յետոյ, Աբու Բաքր ամիրապետի իշխանութեան գալու ժամանակից՝ 632 թուականից, տարիների հաշուարկը (632+19=651 թ.), ինչպէս ցոյց ենք տուել մեր վերջին աշխատանքում, մի իւրօրինակ տոմարական համակարգ է, որը բնորոշ է միմիայն Սեբիոսին (նմանատիպ համակարգ է արձանագրուած նաեւ Ղեւոնդի մօտ եւ Մովսէս Դասխուրանցու կողմից օգտագործուած Թ դարի առաջին կէսում, Նիկողայոս Աղոնցի ճշգրիտ հաշուարկներով՝ 842-847 թթ. միջեւ ստեղծուած⁴⁵ մի ժամանակագրական երկում, սակայն դրանցում ինչ-որ սխալի արդիւնքում Աբու Բաքրի առաջին տարի է համարուում Հայոց ՀԵ, այսինքն՝ 626/627 թուականը)⁴⁶: ԺԱ դարի սկզբին շարադրուած Ստեփանոս Ասողիկի «Տիեզերական պատմութեան» մէջ այն գոյութիւն չունի⁴⁷, հետեւաբար ոչ մի խօսք չի կարող լինել իբրեւ թէ նրանից օգտուած Անանուն հեղինակի մասին, այն էլ ԺԲ դարի:

Փորձենք այժմ անդրադառնալ Սեբիոսի երկի աւարտման ժամանակի ճշտմանը: Վերջին թուագրումը, որ տալիս է պատմիչը, դա Թէոդորոս Ռշտունու մահուանից յետոյ Տայքից Դուրինի կաթողիկոսարան վերադարձած Ներսէսի հալածական կեանքի վեցերորդ տարուայ նշումն է («Եւ ապա յետ վեցերորդի [Ա Զ-երորդի] ա-

մի հալածանացն դարձաւ անդրէն ի տեղի լի տեղիս իւր եւ հաստատեցաւ յաթոռ կաթողիկոսութեան», որը թուագրուած է 657/658 թուականով⁴⁸: Այդ պարբերութիւնից առաջ Սեբիոսը միայն յայտնում է «եւ ունէր [հասկանալ՝ «ստացաւ», «ձեռք բերեց»] (Թէոդորոսի մահից յետոյ) - Ա. Յ.] զիշխանութիւն Հայոց աշխարհիս Համազասպ Մամիկոնէից տէրն, որդի Դաւթի, այր առաքինի յամենայն դէմս», որը վերաբերում է Ռշտունեաց իշխանի վախճանի տարուայ, այսինքն՝ 656 թ. վերջերին: Սակայն կաթողիկոսի վերադարձի ժամանակի մասին ասուածի ոճը՝ «ամիցէս մեռաւ Ռշտունեաց տէրն, դադարեաց ասպատակ Տաճկին, եւ ապա յետ վեցերորդի ամի հալածանացն...», ստիպում է մտածել, որ պատմիչն արդէն իր նախորդ տարուայ նկարագրութիւնից (ձմռան վերջին բիւզանդացիների ակտիւացումից մինչեւ Թէոդորոսի մահն ու Համազասպի իշխանութիւնը) անցում է կատարել առնուազն յաջորդ տարուան, այսինքն՝ 657 թուականին⁴⁹:

Այդ հարցում ուսումնասիրողի առջեւ հակառակ խնդիր է կանգնում. ներսէս Շինողի՝ Կոստանդ կայսեր հետ Պոլիս եւ այնտեղից Տայք մեկնելու ժամանակից (այսինքն՝ 653 թ. սկզբից) հաշուած մինչեւ 657 թուականը իրականում զգալիորէն պակաս է (մէկ տարի եւ աւելի), քան բնագրի նշած 6 տարին: Ուստի դեռ անհրաժեշտ է ընտրութիւն կատարել, թէ ի՞նչ է մեր առջեւ՝ մի վաղ գրչական վրիպակ (օրինակ՝ «հինգերորդի ամի» փոխանակ «վեցերորդի ամի»), թէ՞ պատմողական ոճի արդիւնքում (այսինքն՝ երբ բացարձակ ճշգրտութիւն չի պահանջուում) Սեբիոսի թոյլ տուած ինչ-որ կարգի թուաբանական սխալ (նիկողայոս Ադոնցը եւ էդուարդ Դանիելեանը մէկ այլ հնարաւոր լուծում են առաջարկել, ըստ որի՝ պատմիչի նշած 6 տարին անհրաժեշտ է հաշուել ոչ թէ 653-ից, այլ այն՝ աւելի վաղ ժամկէտից,

երբ ենթադրաբար Թէոդորոս Ռշտունու հետ տարածայնութիւնների պատճառով ներսէսը հեռացել էր Տայք⁵⁰. Սեբիոսից յայտնի է, որ նա 652 թ. Կարին հասած կայսեր մօտ եկաւ «ի Տայոց»): Թերեւս, դժուար է միայն մտածել (թէպէտ տեսականօրէն դա բացառուած չէ), որ իր երկի այս աւարտական կտորներում չափազանց կանոնաւոր շարադրանք մատուցող պատմիչը ինչ-որ պատճառով որոշել է ոչինչ չյայտնել արանքում բաց թողած տարիներից մէկի մասին:

Տեղին նշենք, որ Թէոփանէս Խոստովանողի մօտ այս ժամանակահատուածին վերաբերող թուագրումները իրական ժամանակագրութիւնից յետ են մնում 1-2 տարի: Այսպէս, Կոստանդ Բ-ի 14-րդ (654-655 թթ.) եւ աշխարհաստեղծման 6147 (655) թուականի տակ բիւզանդացի ժամանակագիրը դնում է իրականում 656 թ. յունիսին տեղի ունեցած Օսման խալիֆայի սպանութիւնը («Այդ տարին էթրիբացիք սպանեցին արաբների առաջնորդ Օթմանին... Այդ առթիւ արաբների մէջ յուզումներ առաջացան. անապատում ապրողները Ալիին... էին ուզում... իսկ Ասորիքում եւ Եգիպտոսում ապրողները՝ Մուսալիան: Յաղթեց Մուաւիան եւ իշխեց 24 տարի»)⁵¹: 656 թ. տակ (աշխարհաստեղծման՝ 6148, Կոստասի՝ 15-րդ, Մուսալիանի՝ 1-ին տարի) նա նկարագրում է Ալի ամիրապետի բանակի առաջին մեծ պարտութիւնը Բարբալիսոսի մօտ, որն իրականում տեղի է ունեցել 657-ին: 657-ի տակ (աշխարհաստեղծման՝ 6149, Կոստասի՝ 16-րդ տարի) յիշատակում է կայսեր արշաւանքը բալկանեան սլաւոնների դէմ, որն իրականում վերաբերում է 658 թուականին: 658-ի տակ է դրուում (աշխարհաստեղծման՝ 6150, Կոստասի՝ 17-րդ տարի) արաբ-բիւզանդական զինադադարի պայմանագրի կնքումը («Այդ տարի Մուսալիանի առաջարկութեամբ Հոռոմայեցիների եւ արաբների միջեւ հաշտութիւն կնքուեց: Պատճառը

արաբների մէջ բռնկուած ապստամբութիւնն էր... արաբները Հոռոմայեցիներին վճարելու էին օրական հազար դահեկան, մէկ ձի եւ մէկ ստրուկ», որը այլ աղբիւրների տեղեկութիւնների հիման վրայ աւելի ճիշտ է վերագրել 659 թուականին⁵²: Եւ վերջապէս, 659-ի տակ (աշխարհաստեղծման՝ 6151, Կոստասի՝ 18-րդ, Մուսալիանի՝ 4-րդ տարի) նշում է Ալի ամիրապետի մահուան մասին («Երբ արաբները Սապֆիում էին գտնուում, սպանուեց Պարսկաստանի [՝] Ալի: Այդպիսով Մուսալիան դարձաւ միառեւակ թագաւոր, հաստատուեց Դամասկոսում, որտեղ եւ կենտրոնացրեց զրամական գանձերը»), որն իրականում տեղի է ունեցել 661 թ.⁵³:

Տայքից ներսէս կաթողիկոսի վերադարձի նշումից յետոյ Սեբիոսը շարադրում է «Իսմայելի որդիների» մասին հինկտակարանեան օրինակներով համեմուած իր «խոհերի» ծաւալուն հատուածը (որը Գեորգ Աբգարեանը անիրաւացիօրէն հանել է իր տեղից ու տարել բնագրի վերջ), որից յետոյ յայտնում. «Ի միմ ամի ի բաց կացին Հայք ի ծառայութեանէ Իսմայելացուցն եւ հնազանդեցան անդրէն ի ծառայութիւն թագաւորին Յունաց: Եւ արար արքայ Կոստանդին զՄամիկոնէից տէր զՀամազասպ կիւրապաղատ լի կորապաղատ, եւ ետ նմա՝ գահոյս արծաթիս եւ զիշխանութիւն աշխարհին Հայոց եւ պատիւս այլոց իշխանացն եւ գանձս գաւրացն»⁵⁴: Ըստ պատմիչի հաղորդած միւս մանրամասների՝ հայերի քաղաքական կողմնորոշման փոփոխութեանն ի պատասխան՝ արաբները սպանում են պատանդ տարուածների մեծ մասին՝ 1775 մարդու, խալիփայութեան ենթակայութիւնը մերժելուն չեն կարողանում համաձայնել Մուշեղ Մամիկոնեանը (որի 4 որդիները պատանդ էին Ասորիքում) եւ ուրիշ իշխաններ՝ անունով չնշուած, որոնք ձեռքաւալուում են (ըստ երեւոյթին՝ հէնց Համազասպ Հայոց իշխանի կողմից) ու թողնում կայ-

սեր հայեցողութեանը (վերջինս միւսներին ազատ է արձակում, սակայն Մուշեղին պահանջում է իր մօտ ուղարկել), իսկ արաբական նոր սպառնալիքների պատճառով «հապճեպ երթեկեկով» Յունաց թագաւորին հնազանդուելը տեղի է ունենում «հանդերձ միաբանութեամբ իշխանացն եւ զաւրացն Ադուանից եւ իշխանացն լի իշխանս» աշխարհին Սիւնեաց՝ հանդերձ աշխարհաւն իւրեանց...»⁵⁵:

Դրանից յետոյ Սեբիոսը շարադրում է իր երկի վերջին հատուածը՝ արաբական զօրքերի միջեւ սկսուած երկպառակչական պատերազմների մասին, առանց որեւէ նոր թուագրում նշելու («Արդ՝ առաքեաց Աստուած խոռովութիւն ի մէջ բանակացն որդուցն Իսմայելի...» եւ այլն)⁵⁶, եւ մենք պէտք է մտածենք, որ խօսքը միեւնոյն ժամանակի՝ 656-657 թթ. մասին է: Ազդեցութեամբ այդ հատուածը խաչանշանով առանձնացուած է նախորդող բնագրից, ինչը թոյլ է տալիս ենթադրել, որ հեղինակի մտայղացման մէջ դա, հաւանաբար, հէնց առանձին հատուած է եղել: Շեշտենք նաեւ, որ հաշուի առնելով երկի աւարտման հանգամանքը՝ պատմիչի շարադրած փաստերը (յաճախ եզակի՝ մեզ հասած տարաբնու վկայութիւնների շրջանակում) չեն կարող զնահատուել այլ կերպ, քան Արաբական խալիփայութեան իրադարձութիւնների՝ հարեւան երկրում (Հայաստանում) թողած անմիջական տպաւորութիւնների տակ ստեղծուած ամենահաւաստի պատկերը՝ առանց հետագայ պատկերացումների ոգով «վերամշակման»: Մնացեալ աղբիւրները կարող են օգնել միայն հայ հեղինակի վկայութիւնների ժամանակագրութիւնը ճշգրտելու խնդրում:

Ըստ Սեբիոսի՝ արաբական զօրքերը սկզբում իրար դէմ են դուրս գալիս չորս մասի բաժանուած. «մասն մի՝ այն, որ ի Հնդկաց կողմանէն, մասն մի՝ այն, որ ունին զԱսորեստանն եւ զկողմանս հիւսիսոյ,

մասն մի՛ այն, որ յԵգիպտոս եւ ի կողմանս Թէտալացոց, մասն մի՛ ի կողմանս Տաճկաց եւ յԱսկարոն [Ե յԱսկարան] կոչեցեալ տեղոջ. եւ սկսան կռուել ընդ իրեարս...»⁵⁷: Դրանցից վերջին երկուսը մի պահ դաշնակցում են («այն, որ յԵգիպտոս եւ որ ի կողմանս Տաճկաց»), սպանում իրենց «Թագաւորին» եւ ուրիշին հռչակում («եւ այլ Թագաւոր նստուցին»): Այստեղ պատմիչի մօտ ի յայտ է գալիս Մուսուսիան. «Իսկ այն իշխանն, որ ի կողմանս Ասորեստանի էր՝ Մաւիաս անուն, իշխան նոցա, որ էր երկրորդ թագաւորին իւրեանց, իբրեւ ետես զեղեալսն, միաբանեալ զգաւրս իւր՝ զնաց եւ նա յանապատն եւ սպան զայն եւս արքայ, զոր նոքայն նստուցեալ էին: Եւ ետ մարտ ընդ գաւրացն, որ ի Տաճկաց կողմանէ, եւ եհար զնոսա կոտորմամբ մեծաւ եւ դարձաւ անդրէն յաղթութեամբ յԱսորեստան» (ընդ որում՝ ճիշտ կը լինի ուշադիր լինել այն հանգամանքի նկատմամբ, որ Սեբիոսն օգտագործում է «իշխան», «երկրորդ Թագաւորին իւրեանց» եզրերը՝ դեռեւս ոչինչ չասելով նրա այլ յաւանդութիւնների մասին): Շարունակութեան մէջ պատմիչը պարզաբանում է տալիս վերը նշուած դաշինքի երկրորդ մասում՝ Եգիպտոսում կատարուած դէպքերի վերաբերեալ. «Իսկ այն գաւրն, որ յԵգիպտոս, միաբանեալ ընդ թագաւորին Յունաց՝ եւ [Նաեւ] արար հաշտութիւն եւ միադրեցաւ. եւ բազմութիւն գաւրաց՝ իբրեւ հնգետասան հազարաց, հաւատացին ի Քրիստոս եւ մկրտեցան»: Դրանից յետոյ, կարծեք, աւարտելով պատերազմի մի փուլի նկարագրութիւնը՝ Սեբիոսը գրում է ռազմական գործողութիւնների էլ աւելի թեթեւման մասին («եւ սաստկացաւ արիւն կոտորածին անհուն բազմութեանց ի մէջ բանակացն իսմայելի, եւ գործ պատերազմին տազնապէր զնոսա՝ զմիմեանս սատակելով: Եւ ոչ կարէին դադարել փոքր մի ի սրոյն եւ ի գերութենէն եւ ի սաստիկ պատերազմացն, որ ի ծովու եւ ի ցամաքի»):

Ահա այստեղ նորից ի յայտ է գալիս Մուսուսիան, սակայն արդէն Թագաւոր հռչակուելու եւ խաղաղութիւն հաստատելու համար («մինչեւ գաւրացաւ Մուսուս եւ յաղթեաց ամենեցուն: Եւ հնազանդեցուցեալ ընդ ինքեամբ՝ եւ [=նաեւ] Թագաւոր է ի վերայ կալուածոյ [Ե կալուածոց] որդւոցն իսմայելի եւ առնէ խաղաղութիւն ընդ ամենեսին»), որի յիշատակութեամբ էլ աւարտում է Սեբիոսի շարադրանքը:

Դէպքերին ժամանակակից եւ առնուազն ակնջալուր հայ պատմիչի այս վերջին վկայութիւնների համադրումը այլ աղբիւրներից յայտնի եւ ժամանակագրական հաստատումներ ունեցող տեղեկութիւնների հետ թոյլ է տալիս նկատել երկու կարեւոր հանգամանք: Նախ՝ որ հեղինակի պատկերացմամբ՝ Մուսուսիան ամիրապետութեան մրցավազքի մէջ մտել է ոչ միանգամից (ինչպէս որ ներկայանում է, օրինակ, Թէոփանէս Խոստովանողի մօտ), այլ ինչ-ինչ իրադարձութիւններից յետոյ, եւ պէտք է ենթադրել, որ, ամենայն հաւանականութեամբ, նախորդ Օսման ամիրապետի օրինական ժառանգորդ ու վերջին «ուղղահաւատ» խալիփայ Ալիին նա սկզբում հաւատարիմ է եղել («...էր երկրորդ թագաւորին իւրեանց»)⁵⁸: Եւ երկրորդ՝ Սեբիոսը չգիտի իր վերջին նախադասութեան հերոսի գլխաւոր հակառակորդին՝ Ալի ամիրապետին, 661 թ. վերջնականապէս պարտութեան մատնելու եւ սպանելու մասին (փոխարէնը՝ «հնազանդեցուցեալ ընդ ինքեամբ»), սակայն չնայած դրան գրում է Մուսուսիան անվերապահ յաղթանակի («յաղթեաց ամենեցուն»), ապա աւարական բոլոր տիրոջներում («ի վերայ կալուածոյ որդւոցն իսմայելի») «Թագաւորելու» եւ բոլորի հետ խաղաղութիւն հաստատելու մասին («առնէ խաղաղութիւն ընդ ամենեսին»): Ակնյայտ է, որ այդպէս հնարաւոր էր գրել միայն այնպիսի մի պահի, երբ նախկին փոխարքայի իրականում ոչ վերջնական յաղթանակը, այնուհաս...

մենայնիւ, կարող էր գոնէ ինչ-որ չափով բաւարար լինել Հայաստանում ստեղծագործող պատմիչի համար արձանագրելու արարների երկպառակչական պատերազմների (թէպէտ իրականում՝ ծաւալուն ռազմական գործողութիւնների) աւարտը, Մուսուսի տիրակալութիւնը եւ «ընդ ամենեսին» խաղաղութեան հաստատումը: Եթէ յիշենք, որ Թէոփանէս Խոստովանողի հաղորդումների համաձայն՝ Բարբալիսոսի մօտ Մուսուսիայից Ալիի կրած առաջին մեծ պարտութիւնից (657 թ.) 2 տարի անց եւ նրա սպանուելու նախորդ տարում «Մուսուսիայի առաջարկութեամբ հռոմայեցիների եւ արաբների միջեւ հաշտութիւն կնքուեց», ապա դժուար է նկատել, որ հէնց այդ պայմանագրի կնքման անմիջականօրէն յաջորդած ժամանակը, այսինքն՝ 659 թ. թուականն է այն յարմար պահը, երբ Բիւզանդիային վերստին հնազանդութիւն յայտնած ու խաղաղ շինարարութեամբ նախորդ տարիների ծանր վերքերն ամոքելուն լծուած Հայաստանում կարող էր առաջանալ Մուսուսի տիրակալութեան եւ խաղաղութեան վերջնական հաստատման տպաւորութիւնը⁵⁹:

Այսպիսով, Սեբիոսի երկի մեզ հասած վերջին տողերը վերաբերում են 658-659 թթ. իրադարձութիւններին: Այդ վերջին տուեալների ենթադրած պահի եւ պատմիչի՝ մէկ էլ առաջ նշած վերջին թուագրման (Ներսէս կաթողիկոսի «Հալածանքների» վեցերորդ եւ Բիւզանդիային հնազանդութիւն յայտնելու «առաջին» տարին՝ 657 կամ 658 թ.) միջեւ ընկած մէկ տարուց քիչ աւելի ժամանակը, ըստ էութեան, այնքան մեծ է, որպէսզի երկու ժամկէտների միջեւ թուագրման այլ նշման բացակայութիւնը մեծ կասկած առաջացնի: Սակայն մեզ համար կարեւոր է այն, որ այդպիսի նշման բացակայութիւնը լրիւ անհակասական ու ամբողջութեամբ հասկանալի կը դառնայ հէնց այն դէպքում, եթէ համարենք, որ վերջին թուագրումից («Ի միմ ամի ի բաց

կացին Հայք...») շուրջ մէկ տարի անց է կատարուել ոչ միայն երկի վերջին նախադասութեան մէջ նշուած իրադարձութիւնը, այլ նաեւ այդ նոյն վերջին նախադասութեան գրառումը: Այս դէպքում է միայն, որ իր երկի շարադրանքը շատ վաղուց սկսած⁶⁰ եւ (ի բարբախտութիւն մեր ժամանակների աղբիւրագէտի) նրա շարունակմանը պարբերաբար վերադարձած Սեբիոս պատմիչը եթէ ցանկանար նոր թուագրում նշել, ապա դա լինելու էր իր ապրած ընթացիկ տարուայ նշումը, այսինքն՝ պարզապէս մի աւարտական յիշատակագրութիւն, որպիսին չունենք ո՛չ երկի վերջում, ո՛չ էլ միջնամասի որեւէ հատուածում:

Քննարկուած հանգամանքները բաւարար հիմք են թուում ամփոփելու, որ Սեբիոսն իր երկի վերջին մասերը շարադրել է ոչ թէ 661 թ., ինչպէս աւանդաբար ընդունուած էր գրականութեան մէջ⁶¹, այլ ամենայն հաւանականութեամբ՝ 659 թ. առաջին կէսին (659 թ. կնքուած Բիւզանդա-արաբական հաշտութեան պայմանագրին անմիջապէս յաջորդած ժամանակահատուածում), իսկ շարադրանքի դադարումը հեղինակի կողմից, ամենայն հաւանականութեամբ, ծրագրուած էր եղել: Հէնց այդ պատճառով է, որ մեզ հասած բնագիրը ծանօթ էէ աւելի ուշ իրադարձութիւններին, մասնաւորապէս՝ 660 թ. գարնան սկզբին տեղի ունեցած Զուարթնոցի տաճարի օժման արարողութեանը եւ Ալի ամիրապետի նկատմամբ Մուսուսի 661 թ. վերջնական յաղթանակին⁶²:

* * *

Սակայն արդեօ՞ք երկի շարադրման մտայնացումը եւ սկիզբը եւս վերաբերում են 650-ական թթ. վերջերին, թէ՞ հիմքեր կան խօսելու Սեբիոսի աշխատանքը մի քանի փուլերով կատարուած լինելու մասին: Որքան մեզ յայտնի է, վերջին տարբերակը լուրջ քննութեան առարկայ չի

դարձուել աղբիւրագէտները կողմից, թէպէտ ժԹ դարի կէսերին Հ. Յովսէփ Գաթրճեանը, իսկ Հետագայում Հ. Ներսէս Ակիւնեանը, որոշ չափով ընկալել են, որ պատմիչի նախնական մտայղացումը վերաբերում է աւելի վաղ ժամանակի: Նրանցից առաջինը Վիեննայում լոյս տեսնող «Եւրոպա» շաբաթաթերթում 1852 թ. հրատարակուած իր յօդուածում ամփոփում էր. «Սեբէոսն ալ կ'երեւայ, թէ բուն աս դէպքէս [Հերակլ կայսեր կողմից խաչափայտը վերադարձնելը - Ա. Յ.] շարժեալ ըլլայ գրելու իր պատմութիւնը եւ պատմութիւն ի Հերակլ անուանելու, բայց միանգամ սկսելէն ետեւ, ինչպէս բնականաբար կը պատահի, յառաջ ու վերջն ալ շատ յարակից բաներ շարեր է»⁶³: Իսկ, ըստ Հ. Ներսէս Ակիւնեանի ամփոփման, «Սեբէոսի նախնական ծրագրին համաձայն՝ պատմութիւնը պիտի ընդգրկէր Խոսրով Ապրուէզի թագաւորութեան... եւ անոր յաջորդող իբր քսանամեայ շրջանը, այսինքն թէ ինչպէս Սասանեան պետութիւնը... տեսաւ իր օրհասը (652): Այս թուականը երկիցս կը շեշտուի Սեբէոսի պատմութեան մէջ...: Կը կարծեմ, թէ Սեբէոս միանգամ Արաբացոց արշաւանքներն յիշատակելէ ետքը կարեւոր տեսած է շարունակել անոնց պատմութիւնը մինչեւ Մաւրաւս, ուստի նա գրած ըլլալու է իւր պատմութիւնը յընթացս 652-661 տարիներու»⁶⁴: Միւս ուսումնասիրողները, առանց խնդրի մէջ որեւէ չափով խորանալու՝ դիտարկել են Սեբէոսի Պատմութիւնն իբրեւ մէկ ամբողջական մտայղացման արդիւնք. օրինակ, ըստ Գեղորգ Աբգարեանի ամփոփման՝ «Գիրքը գրուել է առաջաբանի հետ միասին, միանգամից: Ընդհատումներով կամ երկրորդ հեղինակի մասնակցութեամբ գրուած լինելու մասին որեւէ նշան «Սեբէոսի Պատմութիւնում» չկայ»⁶⁵:

Իրականում անհրաժեշտ է աւելի լուրջ նշանակութիւն տալ այն հանգամանքին, որ պատմիչի նախնական մտայ-

ղացման շրջանակները իր իսկ կողմից ճշգրտօրէն ներկայացուած են երկի Ե գլխի խոստաբանութիւն-նախադրութեան մէջ: Իսկ նրա աւարտական արտայայտութիւնները ժամանակով շատ հեռու են (չուրջ 2 տասնամեակով) Սեբէոսի մեզ հասած բնագրի նկարագրած վերջին իրադարձութիւններից: Կարծէք ապագայ գլուխների վերնագրերից բաղկացած⁶⁶ այդ խոստաբանութեան վերջում, բիւզանդա-պարսկական երկարատեւ պատերազմի աւարտին եւ երուսաղէմեան խաչի վերադարձին («գղարձ աստուածեան խաչին ի քաղաքն սուրբ») վերաբերող նշումից յետոյ կարդում ենք. «Յետ այսորիկ, զարթոցեալ անհուն բարկութիւն՝ եւ [=նաեւ] զվերջին աղէտս հինին [Ա հնին], որ ի կողմանս հարաւոյ, եւ թէ որպէս յանկարծօրէն շարժեցան բանակքն իսմայելի եւ, ի վայրկեան ժամանակի վանելով զգաւրութիւն թագաւորացն երկոցունցն [Ն երկոցունցն] կալան յեզիպտոսէ մինչեւ յայսկոյս գետոյն մեծի Եփրատայ եւ ցսահման Հայաստանեայց, եւ յեզերէ ծովուն Արեւմտից մինչեւ ի դուռն թագաւորութեանն Պարսից, զամենայն քաղաքս Միջագետաց Ասորոց, եւ զՏիւբոն, եւ զՎեհ Արտաշիր, եւ զՄարանդ, եւ [Ն չիք եւ] զՀամադան [Ն զՀամատան], մինչեւ ց Գանձակ քաղաք եւ ց Հրատն մեծ, որ յԱտրպատական գաւառի - զայս ամենայն կամեցայ ի ձեռն գրոյս այսորիկ կարճառաւտի [և] [Ն կարճառաւտ] վիպասանել»⁶⁷: Դժուար չէ նկատել, որ Սեբէոսի թուարկած այս իրադարձութիւններն աւարտուում են այն ժամանակով, երբ արաբները Պաղեստինից, Եզիպտոսից ու Ասորիքից յետոյ նուաճել էին Միջագետքն ու Ատրպատականը, այսինքն՝ Սասանեան Իրանի միայն արեւմտեան մասերը՝ Տիգրոն մայրաքաղաքով հանդերձ, որը համապատասխանում է 640-ական թթ. առաջին տարիներին:

Ուշագիւր քննութիւնից երեւում է, որ խոստաբանութիւնում թուարկուած արա-

բական նուաճումները չափազանց նման արտայայտութիւններով նկարագրուած են երկի երեք գլուխներում՝ Խ-ԽԲ (ըստ Ստ. Մալխասեանցի գլխաբաժանման), որոնցից առաջինը Սեբէոսի կողմից օժտուած է եղել «Բարձուն Սասանականին, որ կալաւ զիշխանութիւնն Շիւթ ամ [Ն ամս Շիւթ], եւ մուտ որդւոցն իսմայելի յաշխարհս Հայոց», իսկ երկրորդը՝ «Վասն Հրէիցն [Ն Հրէից] եւ չար խորհրդոց նոցա» վերտառութիւններով: Դրանցից առաջինը սկսում է արաբական ցեղերի միաւորման եւ Մահմեդ մարգարէի մասին՝ այլ աղբիւրներում բացակայող բաւականին ուշագրաւ մանրամասներ պարունակող պատմութեամբ, ապա նկարագրում են բիւզանդացիների պարտութիւնները Եզիպտոսում, Պաղեստինում ու Ասորիքում՝ աւարտելով խոստաբանութեան բանաձեւումներին նման (համտ. օրինակ՝ «ի վայրկեան ժամանակի ... կալան»)՝ «Եւ յալան թոթափել կալան ի վերջնոյ ծովուն մինչեւ ցեզր գետոյն մեծի Եփրատայ [Ն Եփրատայ] եւ յայնմ կողմն գետոյն՝ զՈւրհայ եւ զԱմնայն քաղաքս Միջագետաց» ամփոփմամբ, որից յետոյ, նոյն խոստաբանութեան հերթականութիւնը պահպանելով, անցում է կատարում մայրաքաղաք Տիգրոնի ու նրա շրջակայքի նուաճմանը Կադեսիայի (ըստ պատմիչի՝ մօտակայ Հերթիճան գիւղի) ճակատամարտի արդիւնքում⁶⁸: Դրանից յետոյ գլխի երկրորդ կէտում Սեբէոսը նշում է «երանելի» Հերակլ կայսեր մահուան ու նրա վերջին ցանկութեան մասին՝ Ափրիկէի աքսորից վերադարձնել ու նախկին պատիւներում հաստատել Հայոց իշխան Վարազտիրոց Բագրատունուն՝ Սմբատ Վրկանից մարզպանի որդուն, որը ինչ-որ պատճառներով չի կատարում. «Մեռաւ Երակոս եւ թագաւորեաց որդի նորա Կոստանդին. եւ ոչ ոք ընտրեցաւ զաւրավար աշխարհին Հայոց, քանզի անմիաբան լեալ իշխանացն՝ մեկնեցան ի միմեանց»⁶⁹:

Շարունակութեան մէջ նկարագրուած է 641 թ. երկրորդ կէսին տեղի ունեցած արաբական ներխուժումը Հայաստան Ձորապահակի լեռնանցքով, Տարաւն-Բզնունիս-Աղիովիտ-Կոգովիտ երթուղով, Դուին հասնելն ու այն գրաւելը Տրէ ամսի 20-ին (հոկտեմբերի 6)⁷⁰, ապա աւարառուների դէպի Ասորեստան յետդարձի ճանապարհին գերիններին ազատագրելու Թէոդորոս Ռշտունի իշխանի անյաջող փորձը, որից յետոյ ամփոփում է ողջ հատուածի սիւժէն. «Եւ եղեւ այս յամս Եզրի կաթաղիկոսի [Ն կաթողիկոսի]: Իսկ ի ձեռն այնր պատերազմի ի կայսերէ հրաման հասեալ զաւրավարութեանն Թէոդորոսի Ռշտունեաց տեառն՝ հանդերձ պատրկութեան պատուով: Այս ամենայն լինի ի ձեռն կաթաղիկոսին Ներսէսի [Ն կաթողիկոսի Ներսիսի], որ յաջորդեցաւ ի նմին ամի յաթոն կաթաղիկոսութեան [Ն կաթողիկոսութեան] փոխանակ Եզրի կաթաղիկոսի [Ն կաթողիկոսի]»⁷¹:

Գլխի վերջին հատուածում (հրատարակութիւններում՝ 2 պարբերութիւն՝ «Բայց յորժամ ելին յարեւելք որդիքն իսմայելի...» եւ այլն, որոնցից առաջինն Ա գրչագրում սկսում է կարմիր գլխատառով եւ այդպիսով հեղինակային մտայղացման մէջ առանձին գլուխ լինելու հաւանականութիւն է ցուցադրում) դարձեալ խոստաբանութեան եզրաբանութեամբ (համտ. «այլ իբրեւ յաղթեցին պատերազմաւք՝ վանեալ գերկոսից թագաւորութիւնն, կալան յԵզիպտոսէ մինչեւ ցլեառն մեծ Տորոս, եւ ի ծովէն Արեւմտից մինչեւ ցՄարս եւ Խուժաստան...») նկարագրում է արաբների արքունական բանակի յայտնի ծովային յարձակումները Բահրեյնից դէպի Սասանեան Իրանի հարաւային նահանգները («ի Պարսս եւ ի Սակաստան [Ն Սագաստան. =Սէխստան], եւ ի Սընտ եւ ի Սրման [=Կրման], յաշխարհն Տուրան [=Կուրան] եւ Մակուրան [Ն ի Մակուրան], մինչեւ ի սահմանս Հնդկաց»), որոնք ԺԲ դարի ա-

րաբազիր պատմիչ Իբն ալ-Բալխիի մօտ պահպանուած վաղ աւանդոյթի համաձայն (Սայֆ Իբն Օմարի տեղեկութիւնների հիման վրայ)՝ թուագրուում են 639-641 թուականներով⁷²: Շարադրանքի վերջում (երկրորդ պարբերութեան մէջ) Սեբիոսը նշում է իր բանաւոր աղբիւրը. «Ձայս լուաք յարանց գերեւոց ի Խուժաստան Տաճկաստանէ, որոց ինքեան իսկ ականատես եղեալ՝ պատմեցին մեզ զայս բան»⁷³:

Յաջորդում է ԽԱ գլուխը («Վասն Հրէիցն եւ չար խորհրդոց նոցա»), ուր պատմում է Երուսաղէմում մի խումբ հրէաների կողմից սուտ ամբաստանութեան միջոցով արաբ իշխանի ձեռքով քրիստոնեաների դէմ հալածանքներ հրահրելու ի վերջոյ անյաջողութեան մատնուած փորձի մասին՝ առաջին դէմքով իր մտքերը շարադրել սիրող Սեբիոսին բնորոշ մուտքով. «Ասացից եւ զՀրէիցն զապստամբողացն զխորհուրդսն...»⁷⁴: Թ դարի բիւզանդացի ժամանակագիր Թէոփանէս Խոստովանողը եւս նշում է Կոստանդ Բ-ի երկրորդ տարում (մօտաւորապէս 642 թ. սեպտեմբերից - 643-ի սեպտեմբեր)⁷⁵ Երուսաղէմում հրէաների կազմակերպած սաղարանքների մասին («Այդ տարի Օմարն սկսեց Երուսաղէմի տաճարի կառուցումը, բայց չէնքը կանգուն չէր մնում... Նա ուզեց պատճառն իմանալ, եւ հրէաներն ասացին. «Քանի Զիթենեաց լեռան տաճարի վրայ եղող խաչը ցած չէք առել, չէնքը կանգուն չի մնայ»: Դրա վրայ այնտեղից ցած առան խաչը, որով նրանց չէնքը կանգուն մնաց: Այդ առթիւ քրիստոսատեացները այլ բազում խաչեր էլ ցած առան») ⁷⁶: Թէպէտ երկու պատմութիւնների մանրամասները լրիւ չեն համընկնում, այնուամենայնիւ, ակնյայտ է, որ Թէոփանէսի եւ Սեբիոսի մօտ խօսքը միեւնոյն երուսաղէմեան դէպքերի մասին է, հետեւաբար, վերջինիս պատմածը եւս պէտք է վերագրուի Կոստանդ Բ-ի գահակալութեան սկզբին եւ ոչ ուշ, քան 642 թուականին:

Իրականում Սեբիոսը նշում է Կոստանդի գահ բարձրանալը յաջորդ գլխի (ըստ Ստ. Մալխասեանցի՝ ԽԲ⁷⁷) սկզբում. «Եւ եղեւ ի մահուանն Երակլի թագաւորեաց Կոստանդին՝ որդի նորա: Եւ կարգէ ի վերայ զաւրաց իւրոց զաւրավարս զՎաղենտիանոսն [Ս զՎաղէտիանոսն]... Եւ սակաւ ինչ աւուրս թագաւորեալ Կոստանդին, դաւեալ ի Մարտինեայ մաւրէ [=մաւրուէ] իւրմէ, ի կնոջէն Երակլի՝ մեռանէր: Եւ թագաւորէ Երակլոս՝ որդի Երակլեայ, որ ի Մաւրինեայ [=Մարտինեայ] Աւգոստեայ, քանզի Կոստանդին էր յառաջին կնոջէն [Ս կնոջէն]: [Եւ]⁷⁸ Վաղենտինի (գործեցեալ իրս) գնայ ի վերայ նորա զաւուր իւրով ի Կոստանդինուպոլիս [Մ Կոստանդնուպոլիս], եւ կալեալ զՄարտինէ՝ կտրէ զլեզու նորա եւ ապա սպանանէ զնա հանդերձ երկու որդուովք նորա: Եւ նստուցանէ թագաւոր զԿոստաս՝ զորդի Կոստանդինի, եւ անուանէ յանուն Հօրն իւրոյ «Կոստանդին...»⁷⁹: Դրան յաջորդում է Սասանեանների դէմ արաբների եւս մի յաղթանակի մասին պարբերութիւն («Եւ եղեւ յառաջնումն ամի Կոստանդեայ [Ս Կոստանդինեայ] թագաւորին Յունաց եւ յամի տասներորդի Յազկերտի արքային Պարսից՝ գումարեցան զաւրքն Պարսից ընդ Իսմայելի ԿՌ արանց վառելոց սպառազինաց. եւ Իսմայելացոցն ճակատեցան ընդդէմ նոցա ԽՌ արանց սուսերամերկաց: Եւ բախեցին [Մ բաղխեցին] զմիմեանս պատերազմաւ ի Մարսս գաւառի...»⁸⁰), որում ուսումնասիրողներն իրաւացիօրէն տեսնում են 642 թուականի գարնանը (այսինքն՝ Կոստանդ Բ-ի, իրօք, առաջին տարում) տեղի ունեցած Նեհաւենդի յայտնի ճակատամարտի նկարագրութիւնը⁸¹:

Սեբիոսի յաջորդ պարբերութիւնը Ա գրչագրում սկսւում է կարմիր գլխատառով («Բայց զահագին աղէտս հէնին Իսմայելի, որ բորբոքեաց հրդեհեալ զծով եւ զցամաք, ո՞վ կարիցէ պատմել...» եւ այլն) եւ նոյնպէս հեղինակային մտայղացման

մէջ առանձին գլուխ լինելու հաւանակաւորութիւն ցուցադրում: Իր բովանդակութեամբ այն մի ընդարձակ զեղում է արաբների ու նրանց պատմական դերի մասին, որում հեղինակը, բաւական մանրամասն յղելով Դանիէլի մարգարէութեանը («Բայց երանելին Դանիէլ կանխաւ գուշակէ մարգարէութիւնն զայսպիսի նեղութիւնս, որ եհաս ի վերայ երկրի...» եւ այլն), Իսմայելեան տէրութիւնը յայտարարում է մարդկութեանը սպառնացող 4 բարբարոսական թագաւորութիւններից վերջինը («...Այս չորս⁸² յարուցեալ ի հարաւոյ կողմանէ՝ Իսմայելեան թագաւորութիւնն, որպէս հրեշտակապետն մեկնէ, եթէ՝ «Գազանն չորրորդ թագաւորութեանն [Ս թագաւորութիւնն, Ե թագաւորութեանն]» կացցէ, որ առաւել իցէ, քան զամենայն թագաւորութիւնս, եւ կերիցէ զամենայն երկիր ... եւ զկնի նորա յարիցէ այլ, որ առաւել է չարեաւք, քան զամենայն առաջինսն», եւ որ ի կարգին է») ⁸³: Մինչեւ երկի աւարտը այս թեման արծարծուում է եւս երկու անգամ: Առաջինը Դաւանութեան ընդարձակ թղթին յաջորդող գլխում է (ըստ Ստ. Մալխասեանցի գլխաբաժանման՝ ԽԵ), որն սկսւում է «Ճառեցից դարձեալ զըուցելով զբանս ըստ չարիս հասելոյ ի վերայ մեր ժամանակի» հեղինակային մուտքով, կարմիր գլխատառերով սկսւող նրա երեք հատուածներից առաջինի մեծ մասում (վերջում՝ «...զոր ասաց մարգարէն, եթէ՝ «Որպէս մրրիկ ի հարաւոյ ընթացի, յանապատէ գնացեալ յահեղ տեղոջէ»... Եւ կատարեցաւ ասացեալն, թէ՝ «Գազանն չորրորդ՝ չորրորդ թագաւորութիւն կացցէ ի վերայ երկրի ... որ արար անապատ զամենայն երկիր») ⁸⁴: Իսկ երկրորդը երկի նախավերջին հատուածներից մէկում է (որը Գեւորգ Աբգարեանի հրատարակութիւնում անիրաւացիօրէն տարուել է ամենավերջը), արաբների ամենածանր վայրենագործութիւնների նկարագրութիւնից առաջ (ըստ Ստ. Մալխասեանցի գլխաբաժանման՝

գլուխ Ծ), որի աւարտն է. «Ձորմէ գոչէ [Ս կոչէ] մարգարէն Դանիէլ, եթէ՝ «Գազանն չորրորդ՝ ահեղ եւ զարմանալի եւ հզար յոյժ, ժանիք նորա երկաթիք, եւ մազիլք նորա պղնձիք [Ս պղնձիք]. ուտէր եւ մանրէր, եւ զմնացեալսն առ ոտն կոտորէր», եւ այլն եւս: Եւս ապա [յ]կս⁸⁵ բանիցն ասէ. «Մերձ է աւր կորստեան նոցա, հասեալ է պատրաստութեամբ Տէր ի վերայ նոցա»: Որ եւ այս եւս կատարեսցի ի ժամանակի իւրում»⁸⁶:

Արդ, ուշադիր համադրումից երեւում է, որ վերը բերուած զեղումների երեք հատուածները ցուցադրում են շարադրման ոճի մեծ նմանութիւն եւ, միաժամանակ, ոճական տեսանկիւնից ակնյայտօրէն տարբերում են արաբների մասին Սեբիոսի առաջին մեծ անդրադարձի հատուածից Խ գլխի սկզբում (տե՛ս վերեւում): Այնտեղ եւս պատմիչը համեմուտ է իր խօսքը հինկտակարանային օրինակներով, սակայն ե՛ւ ողջ խօսքը, ե՛ւ այդ օրինակները (ի դէպ՝ այլ գրքերից), համեմատաբար աւելի դրական շարադրանք են պարունակում եւ էպպէս աւելի զուրկ են այն բացասական կրքերից, որոնք ուղղակի յորդում են յաջորդող կտորներում եւ Դանիէլ մարգարէից քաղուած զուգորդութիւններում: Կարծում ենք, որ դա Հնարաւոր է բաւարար հիմք համարել ենթադրելու, որ ԽԲ գլխի կարմիր գլխատառերով սկսւող 5 հատուածներից առաջինով աւարտուում է Սեբիոսի նախնական մտայղացման (640-ական թուականների սկիզբ) շարադրանքը, իսկ յաջորդ հատուածից սկսւող բնագիրը («Բայց զահագին աղէտս հէնին Իսմայելի...» եւ այլն) հեղինակի կողմից գրուել է որոշակի ժամանակ անց եւ իբրեւ արդիւնք երկի շարունակման նոր մտայղացման:

Քննենք այդ ենթադրութիւնը հաստատող այլ փաստեր: Վերը նշուած ԽԲ գլխի կարմիր սկզբնատառով յաջորդ (եր-

րորդ) Հատուածի առաջին պարբերութիւնը վերաբերում է Կոստանդ Բ-ի դէմ նրա նախկին հովանաւորներից մէկի՝ Վաղենտինի գործարարի անյաջող ապստամբութեան նկարագրութեանը եւ սկսւում է թուագրում պարունակող հետեւեալ արտայայտութեամբ. «Եւ եղեւ յերկրորդում ամի Կոստանդի թոռին երանելոյն Երակլի, խորհէր Վաղենտինի ի միտս իւր ճարտարութեամբ խաբել զսինկղիտոսն [Ա զսնկղիտոսն]...»⁸⁷ եւ այլն): Անհրաժեշտ է միանգամից նշել, որ յիշատակուած «յերկրորդում ամի Կոստանդի» (642 թ. սեպտեմբեր - 643-ի սեպտեմբեր) բառերի փոխարէն մէկ շնչով շարադրող հեղինակի մօտ աւելի սպասելի կը լինէր «ամի ամ» ձեւակերպումը (ինչպէս որ ունենք երկի ուրիշ մասերում), քանի որ մէկ պարբերութիւն առաջ գրուել էր նոյն կայսեր առաջին տարուայ մասին («Եւ եղեւ յառաջում ամի Կոստանդեայ թագաւորին Յունաց...»): Սակայն բացի դրանից կարեւոր է այն, որ Սեբիոսի նկարագրած այս հեղաշրջման փորձը եւ Վաղենտինոսի վախճանն իրականում վերաբերում են մէկ-երկու տարի աւելի ուշ ժամանակի: «Վաղենտինոս պատրիկի» նոյն անյաջող ապստամբութիւնը Թէոփանէս խոստովանողը թուագրում է Կոստաս կայսեր երրորդ տարով (այն էլ՝ հաշուած ոչ թէ 641 թ. սեպտեմբերին սկսուած Հերակլեոսի հետ կայսերակցութեանից, ինչպէս որ ուրիշ դէպքերում է, այլ 642 թ. յունուարին Կոստասի միանձնեայ դահակալութեան սկզբից), այսինքն՝ 644 թ.: Ընդ որում, դա պէտք է համարել պատմական իրականութեանը լրիւ համապատասխանող թուագրութիւն, քանի որ նոյն տարուայ համար ժամանակագիրը ինչ-որ մի սկզբնաղբիւրի ճշգրիտ վկայութիւն է ունեցել «Դիոս [=նոյեմբեր] ամի հինգին, շաբաթուայ վեցերորդ օրը, ժամը իննին» տեղի ունեցած արեւի խաւարման մասին⁸⁸: Ըստ տիեզերագիտական աղիւսակների՝ արեւի խաւարումը եղել է

644 թ. նոյեմբերի 5-ին, ուրբաթ (ըստ այսմ՝ Թէոփանէսի տուեալ աղբիւրում շաբաթուայ առաջին օր է համարուել նախորդ կիրակին), Գրիգորիոս ժամը 11 անց 9,7 րոպէին⁸⁹:

Աւելացնենք, որ նշուած ժամանակագրական սխալը պարունակող պարբերութիւնից յետոյ եւ նոյն սիւթէի շարունակութեան մէջ Սեբիոսը յիշատակում է իր յաջորդ թուականը, որը համապատասխանում է 645-646 թթ. ժամանակամիջոցին (Վաղենտինին փոխարինած Թէոդորոս զօրավարի յորդորներով Կոստանդ կայսրը աֆրիկեան աքսորից մայրաքաղաք է վերադարձնում Վարազտիրոց Բագրատունուն, Վահան խորխոռունուն եւ այլոց «յամին հինգերորդի թագաւորութեան իւրոյ»)՝⁹⁰: Իսկ այս սխալաշատութեան հանգամանքի եւ նախորդող հատուածում նկարագրուած իրադարձութիւնների (ԽԲ գլխի սկզբը) իրական ժամանակագրութեանը ճշգրիտ համապատասխանելու փաստի միջեւ հակասութիւնը յուշում է, որ ամենայն հաւանականութեամբ, հատուածներից առաջինը շարադրուած է դէպքերի թարմ տպագրութեան տակ (պայմանականօրէն՝ 642 թ. կէսերին), իսկ երկրորդը՝ դրանցից բաւականին ժամանակ անց:

Թւում է, թէ Սեբիոսի շարադրանքի առաջին փուլի նշանները մնացել են նաեւ Ե-է դարերի Սասանեան արքաների ու բիւզանդական կայսրերի զուգադիր ցանկը («երկակի կանոնաւ») ներկայացնող Դ գլխի վերջում: Այստեղ գրչագրերը տալիս են հետեւեալ բնագիրը. «Յամի իններորդի [Մ 2-երորդի] Պարսից արքայի Յագկերտի վախճանի երանելին Երակլէս, եւ թագաւորէն որդիք նորա Կոստանդին եւ Երակղակ: Ի [Ա չիք Ի] նմին ամի մեռաւ Կոստանդին՝ դաւեալ ի մաւրէն, եւ թագաւորէ Երակղակ: Դարձեալ փոխեցաւ Երակղակ, եւ թագաւորէ Կոստաս՝ որդի Կոստանդեայ, որ կոչեցաւ յանուն հաւր իւրոյ Կոստանդին.

Յագկերտ Ժ-երորդ [Ա Յագկերտի Ժ-երորդի]. Կոստաս՝ զառաջինն: Եւ թագաւորեաց Յագկերտ ի վերայ աշխարհիս [Մ աշխարհին] Պարսից ամս Ի: Յագկերտ՝ Ի. Կոստանդիս [Մ Կոստանդին]՝ ԺԱ. արքայն Իսմայելի՝ [Ժ]Թ: Յերկոտասան ամի Կոստանդի եւ ի Ի-երորդ ամի Իսմայելացւոց տէրութեանն բարձաւ տէրութիւնն Պարսից, որ կալաւ ՇԼԲ ամ»⁹¹: Ինչպէս երեւում է առաջին հայեացքից, շարադրանքն այստեղ հասցուած է մինչեւ 651 կամ 652 թ. տեղի ունեցած Սասանեան պետութեան վերջնական կործանումը:

Սակայն, միաժամանակ, չի կարող ուշադրութիւն չգրաւել այն հանգամանքը, որ այդ դէպքում անհրաժեշտ է ուղղել մեր կողմից ընդգծուած երկու թուերի «վրիպումները»: Դրանցից առաջինը Իսմայելի արքայի «Թ» տարին է՝ փոխանակ Յագկերտի ու Կոստանդի նշուած տարիների հետ համաձայնութեան համար թուաբանօրէն պահանջուող եւ երկի ԽԶ գլխի սկզբում արձանագրուած («Ի քսաներորդի ամի [Ա չիք ամի] Յագկերտի արքային Պարսից, ի մետասան ամի Կոստասի կայսեր... եւ յամին ԺԹ-երորդի Իսմայելացւոց տէրութեանն»⁹²) ԺԹ-ի: Իսկ երկրորդը՝ Սասանեան պետութեան գոյութեան ՇԼԲ տարիների «Լ» տասնաւորն է՝ փոխանակ երկի Խ գլխի վերտառութեան մէջ («Բարձումն Սասանականին, որ կալաւ զիշխանութիւնն ՇԽԲ ամ...») եւ ԽԶ գլխի առաջին պարբերութեան վերջում («բարձաւ տէրութիւնն Պարսից եւ ազգին Սասանայ, որ կալան զթագաւորութիւնն ամս ՇԽԲ») արձանագրուած Խ-ի: Թւում է, թէ համադրելով այս փաստը Ե գլխի խոստաբանութեան աւարտի ենթադրած պատմական պահին համապատասխանող Խ-ԽԲ (առաջին հատուած) գլուխների շարադրանքի՝ յաջորդող կտորներից ոճական առումով տարբերուելու հանգամանքի հետ՝ կարելի է հաւանական համարել այն տարբերակը, որ Դ գլխի վերը բերուած բնագրի աւարտական

երկու նախադասութիւնների սկզբնական շարադրանքը կատարուել է նոյն 641-642 թթ. ժամանակամիջոցում (այդպիսով արձանագրելով Յագկերտի՝ Ժ, Կոստանդի՝ Ա, «Իսմայելի Ամո արքայի»՝ Թ եւ տէրութեան արեւմտեան ու կենտրոնական մասերը կորցրած Սասանեանների թագաւորութեան ՇԼԲ տարիները), սակայն հետագայում ձեռնարկելով երկի շարունակումը՝ Սեբիոսը վերընթացել է նախկինում իր շարադրածը եւ տողերի մէջ խաչանշաններ դնելով կամ պարզապէս սխալ բառերը ջնջելու եղանակով ուղղումներ ու աւելացումներ է կատարել, ընդ որում՝ հին բնագրի ինչ-որ նշաններ մնացել ու ընդօրինակուել են հետագայ գրիչների կողմից: Աւելացնենք, որ թերեւս պատմիչի աչքից վրիպած հին բնագրի մնացորդներից կարելի է համարել նաեւ «աշխարհիս (Պարսից)» եւ «Կոստանդիս» բառերի մէջ մինչեւ Ա գրչագիրը պահպանուած «ս» յօդերը, որոնք սկզբնական բնագրում հեղինակի ներկայ ժամանակի նշումներ են եղել:

Այսպիսով, կարելի է ամփոփել, որ Սեբիոսի երկը մտայղացուել եւ սկսել է շարադրուել 641-642 թթ.: Իր սկզբնական ծաւալով այն, հաւանաբար, չի ընդօրինակուել աշակերտ գրիչների կողմից, ինչպէս որ սովորաբար արուում էր, եւ շրջանառութեան մէջ չի դրուել (յամենայն դէպս, այդպիսի ընդօրինակութիւն չի հասել ո՛չ մեզ, ո՛չ էլ հետագայ պատմիչներին): Իսկ տարիներ անց հեղինակը վերսկսել է շարադրանքը՝ շարունակելով իր կիսատ թողած տեղից եւ առաջին սիւթէ դարձնելով Կոստանդ Բ-ի դէմ նրա գործարար Վաղենտինոսի ապստամբութիւնը (ըստ Սեբիոսի մօտ ինչ-որ չափով խաթարուած յիշողութիւնների կամ հետագայ որեւէ գրչի վրիպակի՝ կայսեր երկրորդ տարում), որին հետեւել են Վարազտիրոց իշխանի վերադարձն աքսորից եւ փախուստը դէպի հայրենի Տայք: Աւելին, թւում է, թէ հիմքեր կան ենթադրելու, որ առաջին անգամ

պատմիչը ձեռնարկել է երկի շարունակմանը ոչ թէ 658-659 թթ. (ինչպէս պարզաբանուեց վերելում), այլ աւելի վաղ՝ թերեւս, բիւզանդացիների կողմից պարտադրուող միակամութեան դաւանական բանաձեւն ընդունելու պահանջի մերժման առիթով 650 թ. երկրորդ կէսին տեղի ունեցած Դուլինի եկեղեցական ժողովից յետոյ եւ այդ ժողովում մշակուած ընդարձակ Դաւանութեան թուղթն իր շարադրած պատմական երկի մէջ ընդգրկելու մտայնութեամբ⁹³: Այս դէպքում մնացեալ հանգամանքների քննութիւնը թողնելով հետագայ բանասիրական պրպտումների նշենք միայն այն փաստը, որ Դաւանութեան թղթին յաջորդող գլուխներում անսովոր ձեւով կտրուկ փոխուած է պատմիչի նախկին ընդգծուած դրական վերաբերմունքը իր երկու գլխաւոր հերոսների՝ 652 թ. սկզբներին արաբների հետ դաշնակցութեան մէջ մտած Հայոց իշխան Թէոդորոս Ռշտունու եւ նոյն տարուայ երկրորդ կէսում բիւզանդացիների հետ դաւանական միասնութեան հասնելու գաղափարին անցած Ներսէս Տայեցի կաթողիկոսի նկատմամբ:

Ըստ այսմ կարելի է ենթադրել, որ 658 թ. կամ յաջորդ տարուայ սկզբում երրորդ անգամ իր ստեղծագործութեան շարունակմանը վերադարձած պատմիչը սկսել է շարադրանքը ԽԵ գլխի (ըստ Ստ. Մալխասեանցի գլխաբաժանման) առաջին եւ չափազանց բնորոշ նախադասութեամբ. «Ճառեցից դարձեալ՝ զրուցելով զբանս ըստ չարիս հասելոյ ի վերայ մեր ժամանակի, վասն պատառման առագաստին հին հաւատոյ եւ շնչել ի մեզ մահաբեր խորշակին...»⁹⁴: Աւելացնենք, որ ամենայն հաւանականութեամբ, հէնց շարադրանքի այս երրորդ փուլի սկզբում է Սեբիոսը վերընթերցել նախկինում գրածը եւ կատարել իր երկի Դ գլխի աւարտական երկու նախադասութիւնների լրացում-ուղղումները:

Վերջապէս նշենք նաեւ, որ Սեբիոսի երկի փուլային շարադրման հանգամանքի պարզաբանումից յետոյ, թերեւս, ամբողջութեամբ հասկանալի է դառնում, թէ ինչու է պատմութիւնը կոչուել Հերակլ կայսեր անունով, ինչպէս որ այն գիտեն հետագայ պատմիչները ժ դարից սկսած: Թէ՛ ժամանակակիցների, թէ՛ հետագայ սերունդների վրայ մեծ տպաւորութիւն թողած այդ կայսեր՝ 641 թ. մարտին տեղի ունեցած վախճանի մասին լուրից, թերեւս, անմիջապէս յետոյ մտայնացած (կամ, որ տուեալ դէպքում նոյնն է, պատմական երկ գրելու իր աւելի վաղ մտադրութիւնն իրագործել սկսած) եւ ենթադրաբար շուրջ մէկ տարուայ ընթացքում դրա շարադրանքն աւարտած պատմիչի համար կարելի է արդէն լիովին բնական համարել Հերակլի անունը այդ երկի՝ մեզ գոնէ ամբողջ ծաւալով չհասած վերնագրում⁹⁵ յիշատակելը: Դժուար է հաշուել, որ երկի այդպիսի ծաւալի մէջ Հերակլ կայսեր ժամանակներին վերաբերում էր շարադրանքի երրորդ մասից աւելին (Ստ. Մալխասեանցի հրատարակութեան մէջ՝ գլուխ ԻԹ-Խ, այսինքն՝ ընդամէնը 114 էջերի մէջ՝ էջ 72-110):

Դասական հայագէտների ընդհանուր առմամբ ընդունելի կարծիքով (դեռեւս Յովսէփ Գաթրճեանից մինչեւ Հայր Ներսէս Ակիւնեան եւ Հայր Պողոս Անանեան)՝ Հերակլի մեծ հեղինակութիւնը կարող էր հիմք լինել, որպէսզի Սեբիոսը նրա անունով կոչէր իր երկը նաեւ վերջինիս ամբողջ ծաւալի ընդգրկմամբ: Սակայն թուում է, թէ պատմիչի ստեղծագործութեան փուլերի պարզաբանումից յետոյ (իսկ դրանց գումարային միջակայքը մէկուկէս տասնամակից աւելի է կազմում) արդարացուած է դառնում այն հարցադրումը՝ թէ արդեօ՞ք հէնց ինքը՝ Սեբիոսը չի հետագայում «խոտանել» իր սկզբնական մտայնացման վերտառութիւնը (աւելի մեծ հաւանականութեամբ՝ վերջին փուլում, այսինքն՝ 659 թ. դրան անդրադարձած պատմիչի):

հին): Զուտ վարկածային հարցադրման ձեւով եւ պայմանականօրէն վերանայով մեզ հասած աղբիւրագիտական տեղեկութիւնների կոնկրետ չափից, թերեւս, հնարաւոր է ենթադրել, որ պատմիչը կարող էր գծիկով կամ մէկ այլ նշանով ջնջել իր երկի նոր ընդգրկմանն արդէն ոչ այնքան յարիր, վաղուց գրուած ու «հնացած» վերտառութիւնը (Հերակլի անունն յիշատակութեամբ) եւ միաժամանակ չգրել նորը՝ թողնելով դա ամենավերջում անելու համար. այդ դէպքում գրիչներից ոմանք կարող էին նկատել ու հաշուի առնել նախօրինակի ջնջումը՝ անգամ տարածելով դա վերնագրի մնացեալ, այդ թուում՝ հեղինակի անունը պարունակող բառերի վրայ (այդպէս՝ մեզ հասած հնագոյն գրչագրերի պարագայում), իսկ ուրիշ գրիչներ կարող էին չնկատել կամ հաշուի չառնել վերնագրի ջնջման նշանները եւ պահպանել ու հասցնել այն մինչեւ Ուխտանէս, Ասողիկ, Մխիթար Անեցի, Կիրակոս Գանձակեցի, Մխիթար Այրիվանեցի եւ այլն⁹⁶:

Յաւարտս՝ սոյն աշխատանքի տարբեր մասերում առիթ եղաւ նշելու, թէ, ըստ ամենայնի, իր աշխատանքի միայն առաջին կէսում գլուխների հերթական համարներ աւանդած Սեբիոս պատմիչի ստեղծագործութեան մնացեալ մասում առանց գլխահամարների ու գլխագրերի թողնուած հատուածներից (Հայր Ներսէս Ակիւնեանը անուանում է դրանք «հատուածներ») որո՞նք են կարող գնահատուել իբրեւ պայմանականօրէն նոյնարժէք գլուխներ (եւնելով բովանդակութեան փոփոխութիւնից, նոր թեմայի կարեւորութիւնից եւ այլն): Ի վերջոյ, նմանատիպ քննութիւն պէտք է կատարել հեղինակային ԼԲ համարը կրող գլխին յաջորդող բոլոր հատուածների համար: Այստեղ, որպէս օրինակ, համառօտ անդրադարձ կը կատարենք Զուարթնոցի շինարարութեան ձեռնարկի մասին պատմող ոչ մեծ հատուածին, որը, սակայն, մեծ հաւանականութեամբ, կարող է առանձին

գլուխ համարուել⁹⁷: «Յայնմ ժամանակի, — գրում է Սեբիոսը [վերը պարզաբանուած մօտեցման համաձայն՝ 650 թ. երկրորդ կէսին], — արկ ի միտս իւր կաթողիկոսն [Մ կաթողիկոսն] Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն, որ ի Վաղարշապատ քաղաքին՝ ի վերայ ճանապարհին, յորում, ասեն, ընդ յառաջ [Մ առաջ] եղեւ թագաւորն Տրդատ սրբոյն Գրիգորի: Շինեաց անդ եւ եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն, որոց երեւեալ ի տեսեան սրբոյն Գրիգորի բազմութիւն երկնաւոր զաւրացն: Եւ շինեաց եկեղեցին բարձր շինուածովք եւ չքնաղ զարմանալեալք, արժանի աստուածային պատուոյն, որում նուիրեացն: Ած ջուր եւ եբեր զգետոյն [Ա զգետոյն] եւ արկ ի գործ զամենայն վայրսն առապար, տնկեաց [Ա տնկեաց] այգիս եւ ծառատունկս. եւ շուրջանակի պատուարեաց զբնակութեամբն գեղեցկադիր յաւրինուածով բարձր պարսպաւ ի փառս Աստուծոյ»⁹⁸:

Հատուածի սկիզբը կազմող, կարմիր սկզբնատառով «Յայնմ ժամանակի...» բառերը, ինչպէս նշեցինք վերելում, եւս չորս դէպքում հատուածասկիզբ են հանդիսանում: Իսկ նրան յաջորդող կարմրացուած գլխատառով սկսուող հատուածը («Այլ ոչ դադարեաց վիշապն այն ապստամբ. այլ թէեւ աստուածամարտ լինել կամեցաւ յիւրոց խորամանկութենէ, այլ երկնէր յարուցանել հալածանս ի վերայ եկեղեցեացն Հայաստանեայց աշխարհին...» եւ այլն) պատմում է մի բոլորովին նոր սիւժէի մասին, որի մաս է կազմում նաեւ «Պատճէն պատասխանի թղթոյն ի Հայս՝ ի Հոռոմոց թագաւորէն Կոստանդինայ, զոր գրեցին Հայոց եպիսկոպոսունքն եւ կաթողիկոսն Ներսէս՝ հանդերձ նախարարաւքն եւ զաւրավարին Թէոդորոսի Ռշտունեաց տեառն» գլխագիրը պահպանած, քաղկեդոնականութեանը յարելու կայսերական հերթական առաջարկը մերժող նամակը, որը, բանասէրների կարծիքով, ինչ-ինչ պատճառ-

ներով չի աւարտուել (մաքրագրուել) եւ չի առաքուել Բիւզանդիա⁹⁹:

Տեղին նշենք, որ վերը բերուած Դաւանութեան թղթի գլխագրին յաջորդում է «[Ձ]ճշմարիտ եւ ուղղադաւան հաւատ նիկիական, աղաչեմ զքեզ, ընթերցի՛ր՝ որ զքրիստոնէական հաւատն ունիս» յորդորը, որը ուշ գրիչներին ու հրատարակիչներին կողմից սխալմամբ բաժանուել է երկու մասի, ընդ որում՝ առաջինը (մինչեւ «Նիկիական» բառը, առանց առջեւում անհրաժեշտ, մեր կողմից վերականգնուած «Ձ»-ի) ընկալուել է որպէս գլխագրի շարունակութիւն, իսկ երկրորդի վերջին միացուել է իրականում յաջորդող նամակի բնագրի սկզբին վերաբերող «Աստուածասէր» բառը (բացառութեամբ ենթադրաբար Հ-ի նախօրինակից արտագրուած ՄՄ Երիցեանի Ֆոնդի կիսատ գրչագրից, որը, բացի այդ, «Աղաչեմ զքեզ ... հաւատն ունիս» հատուածը երկու տողի բաժանելով՝ տեղադրել է գրագաշտի աջ անկիւնում՝ անկասկած կրկնելով իր մայր օրինակների նմանատիպ ձեւաւորումը): Մեր կարծիքով այդ յորդորը, ամենայն հաւանականութեամբ, անհրաժեշտ է վերագրել Հէնց Սեբիոսին բնորոշ հեղինակային միջարկութիւնների (իրադարձութիւնների շարադրանքի արանքում) ոճին, այլ ոչ թէ ինչ-որ մի գրչի նախաձեռնութեանը:

Արդ՝ նոր գիտաքննական հրատարակութիւն պատրաստելու դէպքում պէտք է նկատի ունենալ, որ Զուարթնոցի շինարարութեան ձեռնարկին Սեբիոս եպիսկոպոսն, ամենայն հաւանականութեամբ, մի առանձին գլուխ է նուիրել: Նշենք, որ այդպէս պատմիչն արել է նաեւ նախնական հնամաշ մատուռի տեղում Սուրբ Հռիփսիմէի եկեղեցու կառուցմանը նուիրուած հատուածի դէպքում (գլուխ ԼԵ), իսկ ինչ գլխի վերջում Վրկանի մարգպան Սմբատ Բագրատունու նախաձեռնութեամբ Դուրի Սուրբ Գրիգոր կաթողիկոսանիստ եկե-

ղեցու կառուցման մասին պատմող հատուածը («Արդ՝ խնդրէ նա հրաման յարքայէն շինել գեկեղեցի սրբոյն Գրիգորի, որ էր ի Դուրի քաղաքի...» եւ այլն) Ա գրչագրում սկսուում է կարմիր գլխատառով¹⁰⁰:

Տեղին նշենք, որ Ստ. Մալխասեանցի գլխաբաժանմամբ «ԼԵ» համարը կրող գլխի վերնագիրը՝ «Շինուան տաճարին Հռիփսիմեայ», ստեղծուած է Թադէոս Միհրապետեանցի կողմից: Իրականում, եթէ ենթադրենք, որ Սեբիոսն այստեղ ունեցել է գլխագիր (որը մեզ հասած ամբողջական ձեւագրերում կորել է), ապա գուցէ աւելի արդարացուած կը լինէր այն վերականգնել այս գլխի՝ ՄՄ թիւ 1912 գրչագրում (ժողովածոյ, 1220 թ., գրիչ՝ Մխիթար, թ. 175թ) առկայ հատուածական արտագրութեան վերտառութիւնից՝ «Գիւտ նշխարաց սրբոյն Հռիփսիմեայ», որը նաեւ աւելի համապատասխան է գլխի բովանդակութեան մեծ մասին (եկեղեցու կառուցման մասին այստեղ խօսուում է միայն նախավերջին պարբերութեան մէջ՝ «Շինեաց գեկեղեցին, եւ գերանելին եթող ի բացեայ վասն գիջութեան որմոցն, մինչեւ ցամաքել կրոյն. ապա ամփոփեցաւ ի կայանս իւր»): Նոյն հատուածական արտագրութեան տարբերակը փոքր տարբերութեանով պահպանուել է ՄՄ թիւ 993 գրչագրում (ժողովածոյ, 1456 թ.), աւելի ընդարձակ վերտառութեամբ՝ «Յաղագս գիւտի նշխարաց սրբոյն Հռիփսիմեայ կուսին», որը թերեւս մի գրագէտ ընդօրինակողի նախաձեռնութեան արդիւնք է: Սոյն հատուածների բաղդատական հրատարակութիւնն իրականացրել է Գեւորգ Աբգարեանը «Էջմիածին» հանդէսում, ապա՝ Սեբիոսի իր հրատարակութեան է. յաւելուածում, ցաւօք, այդտեղ չտալով գոնէ Ա գրչագրի ընթերցումների բաղդատութիւնը:

Տեղին նշենք նաեւ, որ քննարկուած գլխի վերջին արտայայտութիւնը («Վերացոյց եւ զփայտայարկս սրբոյ կաթողի-

կէին. նորոգեաց եւ զխախուտ որմոյն. շինեաց զքարայարկսն: Այս եղև յամս Յովհաննական վանաց երիցու սրբոյ կաթողիկէին») շատ է յիշեցնում Հայոց վանքերի քթթուկ-տոհմամատեաններից մեր տարբեր պատմիչների քաղած նմանաոճ տեղեկութիւնները՝ ստիպելով մտածել, թէ արդեօ՞ք չի եղել այդպիսի մի սկզբնաղբիւր նաեւ Սեբիոսի ձեռքի տակ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Տե՛ս Ա. Յակոբեան, Հայ-բիւզանդական յարաբերութիւնները Լ՝ դարի կէսերին եւ Զուարթնոցի տաճարի կառուցման ժամանակը, «Մերձատր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», հտ. XXIV, Երեւան, 2005, էջ 365-425:
- 2 Հ. Ներսէս Ակիմեանի կողմից կատարուած աղբիրագիտական եւ ձեռագրական ցուցի մանրամասն եւ անհերքելի քննութիւնը ցոյց է տալիս, որ անհրաժեշտ է, անկախ տասնամեակների աւանդոյթի ծանրութիւնից, հետեւելով ուսումնասիրողի յորդորին՝ վերադառնալ Լ. դարի հայ եպիսկոպոս-պատմիչի Սեբիոս անուանաձեռն օգտագործմանը (հմմտ. Հ. Ն. Ակիմեան, Սեբիոս եպիսկոպոս Բագրատունեաց եւ իւր Պատմութիւնն ի Հերակղ, «Մատենագրական հետազոտութիւններ», հտ. Բ, Վիեննա, 1924, էջ 21-25): Իր քննական հրատարակութեան առաջաբանում Ստեփանոս Մալխասեանցն, այնուամենայնիւ, նախապատուութիւնը տալով Սեբիոս անուանաձեռն (Սեբիոսի եպիսկոպոսի Պատմութիւն, Չորրորդ տպագրութիւն, բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանի եւ ծանօթագրութեամբ ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երեւան, 1939, էջ 22), բացի աւանդոյթի ուժից նշում էր նաեւ «Հայոց կանոնագրքում» ներառուած Դուրի ժողովի կանոնների բնագրում դրա առկայութիւնը (հմմտ. Կանոնագիրք Հայոց, Բ, Աշխատասիրութեամբ Վ. Յակոբեանի, Երեւան, 1971, էջ 214): Սակայն «Մատենագիրք Հայոց» շարքի Լ՝ դարի երկհատորեակի համար Ներսէս Տայեցու այդ կանոնների գիտաքննական բնագիրը կազմելիս (Անթիլիաս, 2005, էջ 569-570) մեր կողմից պարզաբանուեց, որ Բագրեանցի եպիսկոպոսի Սեբիոս անուանաձեռն տալիս եւ ոչ թէ առանձին գրչագրեր (որոնք նշում էր Ն. Ակիմեանը), այլ «կանոնագրքի» մեզ հասած երկու հաւասարագոր ձեռագրախմբերից պայմանականօրէն Բ անուանուածի գոյգ եմֆազների բոլոր գրչագրերը՝ բացառութեամբ մէկի (Վ. Յակոբեանի տառանջերով՝ գրչագրեր akimps եւ beqg. ըստ այսմ՝ դա է եղել Բ ձեռագրախմբի՝ Ժ. կարում գրուած մայր օրինակի ընթերցումը): Կա-

րելի է աւելացնել, որ գրիչների համար պէտք է, որ սովորական լինէր Սեբիոս անուանաձեռն փոխարէն Սեբէոս արտագրելը՝ Մատթէոս, Թադէոս, Բարդուղիմէոս հանրայայտ անունների վերջաւորութեան զուգորդութեամբ, այնինչ՝ հակառակը կարող էր տեղի ունենալ միայն պատահական շփոթութեան արդիւնքում, որը հնարաւոր չէ փաստարկել:

- 3 Սեբիոսի գրչագրերի համաժողով Գլխագրութիւնը եւ ճիւղագրութեան քննութիւնը տե՛ս Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն, Չորրորդ տպագրութիւն... ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երեւան, 1939, էջ Ը-ԺԵ; Հ. Ն. Ակիմեան, Սեբիոս եպիսկոպոս Բագրատունեաց եւ իւր Պատմութիւնն ի Հերակղ, էջ 10-12; Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրութեամբ Գ. Վ. Աբգարեանի, էջ 12-19, 25-43:
- 4 Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակղ, Ընծայեալ ի լոյս (Թադէոս Միհրոյատ Միհրոյատեանցի) ի Կոստանդնուպոլիս, 1851, էջ Ժ: Աշխատասիրողի օգտագործած երկրորդ ձեռագիրը ԺԹ դ. առաջին կէտում կատարուած արտագրութիւն էր Ա-ից: Սոյն հրատարակութեան ընթերցումներն այսուհետեւ նշանակում ենք Մ տառանիշով: Այստեղ եւ այնուհետեւ մէջբերումներում ընդգծուած է մեր կողմից:
- 5 Պատմութիւն Սեբէոսի, էջ 7, 10-11, 41-43:
- 6 Տե՛ս Պատմութիւն Սեբէոսի, էջ 310, ծան. 493: Գետրոգ Աբգարեանն այդ գրչագիրը նշանակել է Երից. ձեռով. մենք ստորեւ նշում ենք այն Ե տառանիշով:
- 7 Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակղ եւ սկիզբն Գորագիտ Պատմութեան Մխիթարայ Անեցոյ, ի լոյս ած Ք[երովբէ] Պ[ատկանեան], Ս. Պետերբուրգ, 1879 (այս տպագրութեան Սեբիոսի հատուածը «Ղուկասեան մատենագրաց» շարքով վերահրատարակուել է Թիֆլիսում 1912 թ.): Աշխատասիրողն օգտագործել է Թ. Միհրոյատեանցի հրատարակութիւնը եւ Սանկտ Պետերբուրգի Արեւելեան ինստիտուտին պատկանող գրչագիրը, որը ԺԹ դ. առաջին կէտում կատարուած արտագրութիւն էր Ա-ից:
- 8 Ստ. Մալխասեանց, Սեբէոսի Պատմութիւնը եւ Մովսէս Սորենացի, Տիֆլիս, 1899; Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն, էջ 2Ե-2Զ: Ուսումնասիրողի պայցոյցները պատմիչի բնագրի ամբողջականութեան մասին լիովին ընդունուեցին աղբիրագրութեան կողմից (տե՛ս Հ. Ն. Ակիմեան, Սեբիոս եպիսկոպոս Բագրատունեաց..., Վիեննա, 1924; Ն. Արոնց, Պատմական ուսումնասիրութիւններ, Պարիս, 1948; Հ. Պ. Անանեան, Սեբէոսի Պատմութեան գրքի մասին քանի մը լուսաբանութիւններ, Վենետիկ-Ս. Ղազար, 1972; Մ. Գ. Գրիգորեան, Դիտողութիւններ եւ սրբագրութիւններ Սեբիոսի պատմագրոց բնագրին վերայ, Վիեննա, 1973 եւ ուրիշներ) եւ հիմք դարձան Սե-

բիոսի երկի բնագրագիտական հետազոտութեան խորացման համար: Ցատը, Գ. Աբգարեանի կողմից 1979 թ. նոր հրատարակութեան առաջաբանում, ծանօթագրութիւններում եւ յաւելուածներում իբրեւ թէ Ասողիկից օգտուած Անանի վարկածի վերակենդանացումը էապէս պատճառ հանդիսացաւ մեծաւորիս ուսումնասիրութիւնների արգելակման համար, գոնէ արեւելահայ բանասիրութեան մէջ:

- 9 *Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, էջ 27:
- 10 Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլեան, էջ 27:
- 11 *Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլեան*, էջ 37:
- 12 *Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, էջ 32 (72): Փակագծերում այստեղ եւ այսուհետեւ նշում ենք նաեւ 1979 թ. հրատարակութեան էջերը:
- 13 Գետրոգ Աբգարեանը եւս անարդարացիօրէն անեմացնում է ձեռագրերի պահպանած գլխագրերի արժեքը՝ անուանելով դրանք «վերնագրակերպ նշումներ» (*Պատմութիւն Սեբէոսի*, էջ 32):
- 14 Թերթ 511ա: Թաղէոս Միհրդատեանցը ճիշտ էր գկատել ու վերարտադրել այդ գլխագիրը:
- 15 Այդպէս անցել է նաեւ Գետրոգ Աբգարեանի հրատարակութեան մէջ (էջ 98, գլ. ԻԶ):
- 16 Օրինակ, իր ժամանակագրական երկը շարադրելիս, անընդհատ աչքի առջեւ ունենալով եւ մեծ ծաւալով օգտագործելով Եւսեբիոս Կեսարացու «Ժամանակագրութեան» Ե դարի թարգմանութեան անկասկած բազմասիւնակ բնագիրը, լուսանցքները էապէս իբրեւ գրադաշտ է օգտագործել Սեբէոսի կրտսեր ժամանակակից Փիլոն Տիրակացին (տե՛ս մեր պատրաստած նոր քննական բնագրում. «Մատենագիրք Հայոց», հտ. Ե, է. դար, էջ 926, ծան. 7):
- 17 Այդպէս՝ նաեւ Գետրոգ Աբգարեանը, չնայած նա թեթեւօրէն ենթադրել է, թէ «ՀԲ»-ն նախորդ «գլխահամարների մնացորդներից է» (էջ 311, ծան. 502): Ստեփանոս Մալխասեանցը ոչինչ չի ծանօթագրել, սակայն գուցէ եւ պատահական չէ, որ նրա պատրաստած բնագրում Ա-ի «ՀԲ» թուահամարը պարունակող գլուխը, որը (ինչպէս եւ թ. Միհրդատեանցի մօտ) սկսում է երկու կարմիր գլխատառ առաջ («Եւ եղեւ ի մահուանն Երակլի...»), կրում է խԲ գլխահամարը (ՆԲ>ՀԲ): Ի դէպ, Ա գրչագրում այս նախադասութեան սկզբի «Ե» տառը կարմիր չէ (թ. 531բ): Գրիչը կարմրացրել է երեք պարբերութիւն անց՝ «Բայց զահագին աղէտս հէճին Իսմայելի...» նախադասութեան առաջին «Բ»-ն (թ. 532ա) եւ յաջորդ պարբերութեան «Եւ եղեւ յերկրորդում ամի Կոստանդի...» նախադասութեան առաջին «Ե»-ն (թ. 532ա): Ըստ այդմ, թերեւս հնարատր է ենթադրել, որ Թաղէոս Միհրդատեանցի (որին հետեւել է Ստ. Մալխասեանցը) օգտագործած հնագոյն գրչագիրն է ունեցել հատուածաբա-

ժամանակ ինչ-որ նշում, այլ ոչ թէ հրատարակիչն առաջնորդուել է բովանդակութեան փոփոխութեան (հրէաների բանասիրութիւններից անցումը ժամանակագրական («ըստ կարգի») շարադրանքի) հանգամանքից ելնելով. ՄՄ Երիցեանի ֆոնդի պատահիկը, որը ենթադրաբար ընդօրինակուած է Հ-ի նախօրինակից, մեզ չի կարող օգնել, քանի որ նման նշումներ ընդհանրապէս չունի:

- 18 Միգուցէ պատահական չէ այն, որ Ա գրչագրում կարմրացումը ընդամենը 78 սկզբնատառերից 5-ը «Բայց» բառի «Բ»-ն է (2-ը երկի առաջին, 3-ը՝ երկրորդ կէտում): Այդ քանակը համեմատելի չէ, օրինակ, «Եւ եղեւ» հատուածակզբի յաճախութեան հետ (23), սակայն շատ չի զիջում այլ յաճախադէպ կարմրացրած սկզբնատառերով այնպիսի բառերի, ինչպէս՝ «Արդ» (տարբերակ՝ «Եւ արդ») 9, «Իսկ»՝ 6, «Յայնժամ»՝ 6, «Յայն ժամանակի»՝ 5: Ի դէպ, թերեւս թ. Միհրդատեանի ճաշակով է պայմանաւորուած այն, որ երկի երկրորդ մասի «Բայց»-ով հատուածակզբներից ոչ մէկը հրատարակութիւններում չի դարձուել գլխակիզբ:
- 19 Մանրամասն տե՛ս Հ. Ն. Ալիսեան, *Սեբիոս եպիսկոպոս Բագրատունեաց*, էջ 33:
- 20 Բնագրերի մէջ այստեղ եւ այսուհետեւ տալիս ենք քննական ընթերցումները՝ նաեւ կատարելով կէտադրութեան անհրաժեշտ փոփոխութիւններ:
- 21 *Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, ԻԷ, էջ (104):
- 22 Բնագրի՝ «եւ Ծահր վարազ գնաց զհետ նորա փութանակի» արտայայտութիւնը պէտք է ընդունել միմիայն իբրեւ կլոր փակագծի մէջ առուած:
- 23 Յիշենք, որ 625 թ. ռազմական կամպանիայի արտի մասին Թէոփանէս խոստովանողը յայտնում է. «Կայսրը, հաւաքելով իր զինուորներին [Մարոս գետի կամրջի յաղթական ճակատամարտից յետոյ], շարժուեց դէպի Սեբաստիա քաղաքը, անցաւ Ալիս գետը եւ բովանդակ ձմեռն այդ վայրում անցկացրեց» (տե՛ս Թէոփանէս *Խոստովանող, Ժամանակագրութիւն*, Թարգմանութիւն բնագրից, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Հ. Բարթիկեանի (Օտար աղբիրները Հայաստանի եւ հայերի մասին, 13, Բիզանդական աղբիրներ, Դ), Երեւան, 1983, էջ 27-28): Այսպիսով, ուշադիր ընթերցողի մօտ չպէտք է առաջանայ այն թիւր տպատրութիւնը, իբրեւ թէ յաջորդ պարբերութեան սկզբի համաձայն («Յայնժամ առեալ Երակլի զգալս իր...») Հերակլը, օգտուելով Ծահր վարազի՝ *Ասիացոց կողմերում լիճելուց*, հաւաքեց զօրքը եւ այլն:
- 24 Անուան ճշգրիտ *Ռոնվեհան*, ոչ թէ *Ռոն վեհան* ձեւի մասին տե՛ս Ն. Արդնց, *Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու*, աշխատասիրել, ծանօթագրել եւ ներածութիւնը գրել է Պ. Յովհաննիսեան:

նը, Վաղարշապատ-Ա. Էջմիածին, 2005, էջ 35, ծան. 1:

- 25 Այդ երկի մասին մանրամասն տե՛ս А. А. Акопян, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ереван, 1987, էջ 188-196; «Մատենագիրք Հայոց», հտ. Դ, է. դար, էջ 371-372 (էջ 375-414՝ քննական բնագիրը):
- 26 Անանուն Կաղանկատուացի, *Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց...*, «Մատենագիրք Հայոց», հտ. Դ, է. դար, Անթիլիաս, 2005, ԺԱ, էջ 381: Թուագրումը գլխի սկզբում է. «Ապա այնուհետեւ յամին երեսներորդի վեցերորդի խոսրովու եղ ի մտի իւրում կայսրն...»: Բանի որ Սասանեան արքայից արքաների տարիները հաշուում էին գրադաշտական տարեկզբից (նոր արքայի թագադրումը տեղի էր ունենում նաւասարդի առաջին օրը), խոսրով Ապրուելզի 36-րդ տարին ընկնում է 625 թ. մարտ ամսից մինչեւ 626-ի մարտը: Թէոփանէսը շատ համառօտ է յայտնում Հերակլի եւ Ջիեբէլ (Ջերու, Ջարգու) խաքանի յաջող բանակցութիւնների մասին. «Կայսրը [ձմեռուանից յետոյ իր զօրքի] ... երրորդ մասն էլ ինքը վերցնելով, շարժուեց դէպի Լազիկա, որտեղ նա դաշնակցելու կոչ արեց Արեւելքի թուրքերին, որոնց յազարներ են անուանում» (Թէոփանէս *Խոստովանող, Ժամանակագրութիւն*, էջ 28):
- 27 Անանուն Կաղանկատուացի, *Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց*, ԺԱ, էջ 382-384: Թուագրումը. «Իսկ ի մտանել ամին երեսներորդի եասներորդի նոյն ինքն խոսրովու [a չիք նոյն... խոսրովու] առաքեաց [bclr առաքէ] թագաւորն հիւսիսոյ զխոստացեալ զաւրն պատերազմող ... ընդ ամենայն սահմանս աշխարհիս Աղուանից եւ ընդ մասն ինչ Ատրպատակաւնու...»: խոսրով Ապրուելզի 37-րդ տարին ընկնում է 626 մարտ - 627 մարտ ժամանակահատուածում: Թէոփանէսը 626-ով է թուագրում (Հերակլիոսի 16-րդ տարին) ոչ միայն այդ ներխուժումը («Սազարները խաքանից յետոյ երկրորդ մարդը համարուող իրենց զօրավար Ջիեբէլի գլխատրութեամբ, կոտրելով Կասսից դռները, ներխուժեցին Պարսկաստան, Ատրպատական երկիրը»), այլեւ Տիդիսի մօտ դաշնակիցների հանդիպումը, որն իրականում (ըստ Անանուն Կաղանկատուացու) տեղի ունեցաւ յաջորդ տարուայ առաջին կէսին (Թէոփանէս *Խոստովանող, Ժամանակագրութիւն*, էջ 28):
- 28 Անանուն Կաղանկատուացի, *Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց*, ԺԲ, էջ 390-393: Թուագրումը. «Արդ՝ յամին [bcr ի յամին] երեսներորդի ութերորդի, որ ամ էր տագնապի եւ [a չիք եւ] աղէտի սպանմանն [bclr սպանման] խոսրովու, եկեալ նոյն ինքն, որ վերագոյնն ասացաք, որ էր նա Ջերու խաքան՝ ունելով ընդ իւր եւ զորդին իւր [Շաթ]...»: խոսրովի տիրակալութեան 38-րդ եւ վերջին տարին (սպանուեց 628-ի

փետրուարին) ընկնում էր 627 թ. մարտից մինչեւ 628-ի մարտ:

- 29 «Յայնժամ կարգէր յօրինէր նախանձախնդիր մեծ կայսրն Հերակլիոս, եթէ զինչ ինչ արժան է գործել. եւ ասէ ցայրն այն. «Դարձի՛ր դու... յամի յայսմիկ ի տեղի քո, զի ... անա ոչ կարէք տոկալ ի հասանել ամառնային տապախառն ջերմութեան աշխարհին Ատրեստանի, ուր է թագաւորանիստն Պարսից... Եւ ի գալ միս ամին ի նուազել ամսոցն ջերմութեան վաղվաղեցես ելանել այսրէն ... Եւ ես ոչ դադարեցից ոգորել ընդ թագաւորին Պարսից...» (Անանուն Կաղանկատուացի, *Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց*, ԺԲ, էջ 391-392): Ծարուանկութիւնն արդէն ՊԱ մի վաղ ձեռագրի թերթերի ետեւառաջութեան հետեւանքով յայտնուել է ԺԱ գլխաբաժնի վերջին մասում. «Իսկ կայսրն առեալ զգալս իւր՝ դիմեաց ի կողմանս Պարսից, եւ համառեալ պնդեալ՝ հասանել ջանայր ի դուռն Պարսից արքային: ...» (էջ 384-385): Ըստ Թէոփանէսի համառօտ տուեալների՝ «Ջիեբէլը, որպէս դաշնակից, քառասուն հազար քաջ զինուորներ ընտրելով եւ յանձնելով կայսր, իր երկիրը վերադարձաւ: Կայսրը, առնելով նրանց, շարժուեց խոսրովի վրայ» (Թէոփանէս *Խոստովանող, Ժամանակագրութիւն*, էջ 29): Իսկ յաջորդ հատուածում, արդէն թուագրելով «Հոռմէացիների Հերակլիոս կայսեր 31-ամեայ թագաւորութեան 17-րդ» տարով՝ Ժամանակագիրը պատմում է բաւական մանրամասնօրէն. «Այդ տարուայ սեպտեմբեր ամսին Հերակլիոսը թուրքերի հետ միասին ներխուժեց Պարսկաստան...» (էջ 30):
- 30 Թէոփանէսին նրա անունը հասել է *Հրազատես* ձեւով (Թէոփանէս *Խոստովանող, Ժամանակագրութիւն*, էջ 30-33): Անանուն Կաղանկատուացու միակ յիշատակութեան մէջ (Անանուն Կաղանկատուացի, *Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց*, ԺԱ, էջ 384) առկա ձեռագրերը տալիս են *Ռոնվեհ* ձեւը՝ փոխանակ Սեբիոսի մօտ երկու անգամ արձանագրուած *Ռոնվեհան* ընթերցման (մէկ անգամ էլ՝ *Ռոնիկ վահան*), սակայն քանի որ յաջորդում է «անուանէր» բառը («եւ փոխէր այլ անուն նմա՛ Ռոնվեհ անուանէր»), ապա անելի հաւանական է ենթադրել, թէ բնօրինակում եղել է «Ռոնվեհան անուանէր», եւ մի վաղ գրիչ է վրիպել կրկնուող «ան» տառախմբերից մէկը:
- 31 Անանուն Կաղանկատուացի, *Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց*, ԺԱ, էջ 385: Թէոփանէս *Խոստովանող, Ժամանակագրութիւն*, էջ 30-33: Վերջինս անելի մանրամասն է նկարագրում ճակատամարտը եւ նշում օրը՝ 627 թ. «դեկտեմբերի 12-ին, շաբաթ օրը» (իւրօք, 627 թ. այդ օրը շաբաթ էր. հմմտ. Հ. Ս. Բաղալեան, *Օրացոյցի պատմութիւն*, Երեւան, 1970, էջ 437):

32 Ըստ այդմ՝ յաջորդող բոլոր գլխահամարները քննական բնագրում պետք է ներկայացունեն քառակուսի փակագծերի մեջ: Բոլոր դեպքերում նշենք, որ միայն տեսականորեն հնարարող չէ բացառել հակառակ տարբերակը, այն է՝ մեր կողմից վերականգնուած կորուստի ողջ բովանդակությունը կարող էր շարադրուած լինել նաեւ առանց որեւէ հատուածաբաժանման:

33 Այդպիսի խաչանշան Ա գրչագրում կայ եւս մէկ հատ՝ քիչ ներքեւ, ըստ Ստեփանոս Մալխասեանցի տողատման՝ վերջից երկրորդ պարբերության («Արդ՝ առաքեաց Աստուած խոսկութիւն ի մէջ բանակացն որդոցն Իսմայելի...») առջեւում:

34 Այդ է պատճառը, որ սոյն աշխատանքում Սեբիոսի երկի յղումները կատարուած են Ստ. Մալխասեանցի գլխահամարներով ու էջերով (այլ ընթերցողների յարմարութեան համար՝ փակագծում նշելով նաեւ 1979 թ. հրատարակութեան էջերը):

35 Վերջերս լոյս տեսաւ երկի նոր աշխարհաբար թարգմանությունը՝ գրաբար բնագրի վերատպութեամբ հանդերձ (Սեբեոս, Պատմություն, Արեւելահայերէն թարգմանությունը, առաջաբանը եւ ծանօթագրությունները՝ Գ. Խաչատրեանի եւ Վ. Եղիազարեանի, Երեւան, 2004): Թարգմանիչներն ուղղել են Գեորգ Աբգարեանի տպագրութեան վրիպակները, աւելացրել որոշ ծանօթագրություններ, սակայն նպատակ չեն դրել եւ չեն լուծել որեւէ բնագրագիտական խնդիր: Ցաւօք, 1979 թ. հրատարակութեան պարզ արտատպությունն ընդգրկուեց նաեւ «Մատենագիրք Հայոց»-ի է դարի երկհատորեակում (Անթիլիաս, 2005, էջ 449-565)՝ իհարկէ, շարքի մնացեալ բարեմասնությունների կիրառմամբ:

36 Պատմություն Սեբեոսի, Յատկութեան Բ, էջ 389-390:

37 Սեբեոս, Պատմություն, «Մատենագիրք Հայոց», հտ. Դ, էջ 468-482: Ա գրչագրի համապատասխան էջերը կարելի է գտնել՝ ըստ Գեորգ Աբգարեանի հրատարակութեան լուսանցքներում դրանց նշումների (թ. 496ա - 502գ):

38 Սեբեոս, Պատմություն, «Մատենագիրք Հայոց», հտ. Դ, էջ 498-506: ՄՄ Ձեռ. 2639, թ. 511բ - 515բ:

39 Դրանց մասին Գեորգ Աբգարեանը անարդարացիօրէն պնդում է. «Այս «Ե»-ն իմաստ չունի եւ ակնյայտ վրիպակի տպատրություն է գործում...» (Պատմություն Սեբեոսի, ծան.117, էջ 224), «Այս խորով, որ կոչեցաւ բառերի դիմաց լուսանցքում կարմիր թանաքով գրուած է է տառը, որի նշանակությունը ձեռագրում յայտնի չէ...» (Պատմություն Սեբեոսի, էջ 69, տողատակ 13): Մնացեալ բռնագրօսիկ բացատրությունները բաց ենք թողնում. աշխատասիրողը չի նշել անգամ, որ Ստ. Մալխասեանցի կազմած քննական բնագրում այդ թուանշանները մեկնաբանուած են (եւ

ամենայն իրաւացիութեամբ)՝ իբրեւ համապատասխան գլուխների հերթական համարներ:

40 Կաթողիկոս ձեռը տալիս են մեզ հասած միակամբողջական գրչագիրը (Ա) եւ ԺՁ դարի մէկ թերթանի արժէքաւոր պատահիկը (ՄՄ, թիւ 1343), ուստի, մեծ հաւանականութեամբ, հենց այն է յանգում Սեբիոսի ինքնագրին:

41 Պատմություն Սեբեոսի, էջ 175-176, 364-365, ծան. 661:

42 Գեորգ Աբգարեանին ի թիւս այլ հանգամանքների («տողեցից» եւ «հաստատեցից» բառերի երկրորդ ապստոսի ձեւի միօրինակ ընկալումը եւ այլն) շփոթութեան մէջ է գցել նաեւ այստեղ եւ քիչ յետոյ հանդիպող երկու «կարգ» բառերի իմաստները նոյնացնելը: Իրականում՝ առաջին դեպքում բառը նշանակում է «շարակարգություն», «հերթականություն», իսկ միւսում՝ «կարգ», «տվորություն» (բայց՝ ո՛չ «ուսումնասիրողների», այլ՝ «վարդապետական ուսմունքը սիրող-ունեցողների», «գիտակների»):

43 Ա գրչագրից կատարուած ուշ արտագրություններում եւ Թ. Միհրդատեանցից սկսած՝ բոլոր հրատարակություններում՝ իմոց փոխանակ Ա գրչագրի իմոյ ընթերցման, որը վերաբերում է ոչ թէ նախորդող «մտաց», այլ դրանից առաջ գրուած «խորհրդոյ» բառին:

44 Այդ «ապացույցների» ամենից մանրամասն քննությունը տես հայր Պողոս Անանեանի մօտ (Հ. Պ. Անանեան, Սեբեոսի Պատմութեան գրքի մասին քանի մը լուսաբանություններ, Վեներտիկ - Ս. Ղազար, 1972):

45 Ն. Աղոնց, Բնություն Մովսէս Կաղանկատուացու, էջ 120:

46 Մանրամասն տես Ա. Յակոբեան, Հայ-բիզանդական յարաբերությունները է դարի կեսերին եւ Ջուարթնոցի տաճարի կառուցման ժամանակը, էջ 373:

47 Տես Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմություն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, Բ, էջ 86:

48 Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն, Ծ, էջ 154 (175):

49 Մանրամասն տես Ա. Յակոբեան, Հայ-բիզանդական յարաբերությունները է դարի կեսերին եւ Ջուարթնոցի տաճարի կառուցման ժամանակը, էջ 383-386:

50 Ըստ Նիկողայոս Աղոնցի՝ Ներսէսի հալածական տարիների հաշուարկը պետք է սկսել 652 թ. հայ-արաբական դաշինքի կնքման ժամանակից (Ն. Աղոնց, Բնություն Մովսէս Կաղանկատուացու, էջ 60, ծան. 1), իսկ Էդուարդ Դանիէլեանի կարծիքով՝ Դուրի ժողովից յետոյ՝ մօտաւորապէս 650 թուականից (Է. Լ. Դանիէլեան, Հայաստանի քաղաքական պատմությունը եւ Հայ առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Երեւան, 2000, էջ 222, 234, ծան. 36):

51 Թեոփանէս Խոստովանող, Ժամանակագրություն, էջ 57:

52 Դա մասնաւորապէս յստակ երեւում է Ժ դարի պատմիչ Մովսէս Դասխուրանցու կողմից իր «Պատմություն Աղուանից»-ում բառացի արտագրութեամբ ընդգրկած «684 թ. պատմություն» պայմանական անունով յայտնի երկի ժամանակագրական տեղեկությունների քննությունից (մանրամասն տես Ա. Յակոբեան, Հայ-բիզանդական յարաբերությունները է դարի կեսերին եւ Ջուարթնոցի տաճարի կառուցման ժամանակը, էջ 386, 416-417, ծան. 80-81):

53 Թեոփանէս Խոստովանող, Ժամանակագրություն, էջ 58-59: Մանրամասն տես Ա. Յակոբեան, Հայ-բիզանդական յարաբերությունները է դարի կեսերին եւ Ջուարթնոցի տաճարի կառուցման ժամանակը, էջ 386, ծան. 81: Աւելացնենք, որ նոյնը շարունակուած է յաջորդ մի քանի տարիների համար. օրինակ, շուրջ երկու տարուայ շեղում է պարունակում Թեոփանէսի նկարագրությունը Կոստանդ կայսեր՝ Կոստանդնուպոլսից Սիրակուզ տեղափոխուելու մասին, որը թուագրուած է նրա 20-րդ եւ աշխարհաստեղծման 6153 տարուանով, այսինքն՝ 661-ով, այնինչ իրականում տեղի է ունեցել 663 թ. յուլիսի 17-ին (տես G. Ostrogórsky, History of the Byzantine State, Translated from the German by Joan Hussey, New Brunswick, 1969, էջ 122), իսկ դրանից երեք տարի անց (աշխարհաստեղծման 6156, Կոստասի 23-րդ տարի), այսինքն՝ 664 թ. համար ասում է, որ «Այդ տարի պահոց շփոթում եղաւ» (Թեոփանէս Խոստովանող, Ժամանակագրություն, էջ 60), այնինչ աստղագիտական հաշուարկներով՝ ծնագատիկները եղել է յաջորդ՝ 665 թուականին (ծնագատիկների ցանկը տես Ա. Աբրահամեան, Հայոց գիր եւ գրչություն, Երեւան, 1973, էջ 148):

54 Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն, Ծ, էջ 154 (175):

55 Նոյն տեղում: Մինչքի վերաբերեալ պատմիչի հաղորդած կարեւոր տեղեկութեան մանրամասն քննությունը տես Ա. Յակոբեան, Հայ-բիզանդական յարաբերությունները է դարի կեսերին եւ Ջուարթնոցի տաճարի կառուցման ժամանակը, էջ 389:

56 Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն, Ծ, էջ 154 (175):

57 Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն, Ծ, էջ 176:

58 Ընդհանուր առմամբ այդպէս է պատկերուած վիճակը նաեւ արաբական աղբիւրներում:

59 Նշենք, որ Թեոփանէս Խոստովանողի եւ Սեբիոսի՝ Եգիպտոսին վերաբերող տեղեկությունների համադրումից երեւում է, որ Բիզանդիայի հետ Մուաւիայի յայտնի իմաստով «համագործակցություն» սկսուել էր 659 թ. պայմանագրի կնքումից աւելի վաղ՝ երկպառակչական պատերազմների

հենց սկզբնական փուլում (մանրամասն տես Ա. Յակոբեան, Հայ-բիզանդական յարաբերությունները է դարի կեսերին եւ Ջուարթնոցի տաճարի կառուցման ժամանակը, էջ 390-392):

60 Մանրամասն տես ստորեւ:

61 Հմմտ. օրինակ. Հ. Ն. Ակինեան, Սեբիոս եպիսկոպոս Բագրատունեաց, էջ 21-24, 53 (հեղինակը չի բացատրում նաեւ 660 թ. տարբերակը); Ա. Ն. Տէր-Ղեւոնդեան, Սեբեոսի երկը որպէս VII դարի Մերձատր Արեւելքի պատմութեան աղբիւր, ՊԲՀ, 1988, թիւ 1, էջ 122 (վերահրատարակուած՝ Ա. Տէր-Ղեւոնդեան, Զօդուածների ժողովածոյ, Երեւան, 2003, էջ 661); Պատմություն Սեբեոսի, էջ 236-237, ծան. 151:

62 Մանրամասն տես Ա. Յակոբեան, Հայ-բիզանդական յարաբերությունները է դարի կեսերին եւ Ջուարթնոցի տաճարի կառուցման ժամանակը, էջ 393-396:

63 Հ. Յ. Գաթրճեան, Սեբեոս եպիսկոպոս պատմագիր, «Երոպա», 1852, թիւ 21, էջ 82գ:

64 Հ. Ն. Ակինեան, Սեբիոս եպիսկոպոս Բագրատունեաց, էջ 54:

65 Պատմություն Սեբեոսի, էջ 237, ծան. 151:

66 Հմմտ. Հ. Պ. Անանեան, Սեբեոսի Պատմութեան գրքի մասին քանի մը լուսաբանություններ, Վեներտիկ-Ս. Ղազար, 1972, էջ 128 («Այս միւթերը, որ վերնագիրներ ըլլալու սահմանուած էին, ինչպէս եւ Եղիշէի յառաջաբանին մէջինները...»):

67 Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն, Ե, էջ 24 (65-66):

68 Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն, Խ, էջ 108 (136-137):

69 Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն, Խ, էջ 109 (137-138):

70 Այդ արշաւանքի ժամանակագրութեան վերջին քննությունը տես Ա. Յակոբեան, Հայ-բիզանդական յարաբերությունները է դարի կեսերին եւ Ջուարթնոցի տաճարի կառուցման ժամանակը, էջ 408-409, ծան. 37:

71 Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն, Խ, էջ 110-111 (139): Սկսած Թ. Միհրդատեանից՝ հրատարակիչները այս երեք նախադասությունը բաժանել են 3 պարբերութեան մէջ, որը միայն խանգարում է բովանդակությունը ճիշտ հասկանալուն: Իրականում արդարացուած է բերուած կտորն ընդունել իբրեւ մէկ առանձին պարբերություն:

72 Հմմտ. А. И. Колесников, Завоевание Ирана арабами (Иран при "праведных" халифах), Москва, 1982, էջ 121-122, 244, ծան. 281-284:

73 Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն, Խ, էջ 111 (139):

74 Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն, ԽԱ, էջ 111-112 (139-140):

75 Յայտնի է, որ, ըստ բիզանդական պատմիչների ժամանակագրական տեղեկությունների, Հերակլ

կայսրը վախճանուել է 641-ի մարտ ամսին, 4 ամիս թագաւորել է Գրա որդի Կոստանդին Գ-ն, ապա՝ 6 ամիս՝ վերջինիս խորթ եղբայր Հերակլեոնասը իր մօր՝ Մարտինէի հետ, որոնք տապալուել են սեւաստի կողմից (ըստ Սեբիոսի՝ Վաղենտին Արշակունի զօրավարի ամենաակտիվ մասնակցութեամբ)։ Կոստանդ Բ-ն 641 թ. սեպտեմբերին հռչակուել է իր հօրեղբայր Հերակլեոնասի կայսերակիցը, իսկ միայնակ սկսել է զահակալել 642 թ. յունուարից (տե՛ս Թէոփագէս Խոստովանող, *Ժամանակագրութիւն*, էջ 248-250, ծան. 316-318)։

76 Թէոփագէս Խոստովանող, *Ժամանակագրութիւն*, էջ 52։

77 Ա գրչագիրն այդտեղ հատուածաբաժանման նշան (կարմիր սկզբնատառ) չունի, սակայն պէտք է ենթադրել, որ Թ. Միհրդատեանցի հրատարակութիւնում նոր գլխի առկայութիւնը (որին հետեւել է Ստ. Մալխասեանցը) չի կարող պատահական լինել. առաջին հրատարակիչը բոլոր մնացեալ դէպքերում գլխաբաժանում է կատարել այն տեղերում, որտեղ Ա գրչագրում առկայ է կա՛մ գլխահամար, կա՛մ գլխագիր, կա՛մ կարմիր գլխատառ։ Սա միանում է այն փաստերին, որոնց հիման վրայ կարելի է մտածել, թէ հատուածաբաժանման նշաններ ունեցել է նաեւ Թ. Միհրդատեանցի ձեռքի տակ եղած Հ գրչագիրը (ներկայումս՝ կորած), ընդ որում՝ մի քանի տեղերում դրանք տարբերուել են Ա-ի հատուածաբաժանումից։

78 Վերականգնումը՝ Թ. Միհրդատեանցի, որն ընդունել են նաեւ հետագայ հրատարակիչները։ Յաջորդ «Վաղենտինի» բառից յետոյ պարտադիր չէ (հրատարակիչներին հետեւելով) «լուեալ» կամ մէկ ուրիշ բառ վերականգնել, քանի որ իմաստը հասկանալի դարձնելու համար բաւարար է յաջորդող երկու բառը կետադրական նշանի, այն է՝ կլոր փակագծերի մէջ վերցնելը։ Նախորդ նախադասութեան վերականգնումների մասին մանրամասն տե՛ս Գեորգ Աբգարեանի մօտ (*Պատմութիւն Սեբեոսի*, էջ 307-308, ծան. 483)։

79 *Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, ԽԲ, էջ 113 (140-141)։

80 *Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, ԽԲ, էջ 114 (141)։

81 Հմմտ. А. И. Колесников, *Завоевание Ирана арабами*, էջ 109-111։ Ըստ Քերովբէ Պատկանեանի՝ «Մարսս. չէ այս մեծ նահանգն Պարսից Մեդիա, զոր Հայք Մարս կոչեն, այլ զաւառ ինչ փոքրիկ մերձ ի Նեհաւենդ։ Կաղանկատուացին Բեկդաղ կոչէ զանուն տեղոյն մեծի պատերազմին ի մէջ տաճկաց եւ պարսից։ Ի Պատմ. Խոր. Բ.60. նոյնպէս յիշատակի սա. «Ի Մարսս ի Սոհունդ անուանեալ տեղոց» (*Պատմութիւն Սե-*

բեոսի եպիսկոպոսի ի Հերակլեոս..., Ի յոյս ամ Բ. Պ., Ս. Պետերբուրգ, 1879, էջ 202)։

82 Ենթադրելի է, թերեւս, որ հեղինակային սկզբնօրինակում կամ նրանից կատարուած մի վաղ արտագրութեան մէջ գրուած է եղել «Դ» (հաւանաբար՝ պատուոյ նշանի տակ)՝ որպէս «չորրորդ», իսկ յաջորդ ընթացիկներում այն սխալ է մեկնաբանել եւ արտագրել է «չորս»։

83 *Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, ԽԲ, էջ 114-115 (141-142)։ Հմմտ. Դանիէլ, է.4-7, 23-24։

84 *Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, ԽԵ, էջ 137-138 (162)։ Հմմտ. Եսայի, ԻԱ.1, Դանիէլ, է.23։

85 Վերականգնումը Աբրահամ Ջամիլեանի եւ Գեորգ Աբգարեանի (տե՛ս *Պատմութիւն Սեբեոսի*, էջ 367, ծան. 671)։ Նախորդող բառերի (ըստ Ա եւ Ե գրչագրերի) փոփոխութիւնը («սրբագրելը» ըստ Ստ. Մալխասեանցի եւ Գ. Աբգարեանի) պէտք է համարել անելորդ։

86 *Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, Ծ, էջ 154-155 (176-177)։ Հմմտ. Դանիէլ, է.7, *Երեմիա*, ԽԶ.21։

87 *Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, ԽԲ, էջ 115 (142)։ «Վաղենտին» անուան արդարացուած վերականգնումը՝ Գեորգ Աբգարեանի։

88 Թէոփագէս Խոստովանող, *Ժամանակագրութիւն*, էջ 52, 250, ծան. 320-321։ Կարելի է յաւելել, որ ասորական պատմագրութեան մէջ ԺԳ դարի հեղինակ Դիոնիսիոս Թելմահարցու (Տելլ Մահրացու) մօտ պահպանուած մի տեղեկութեան համաձայն՝ «955 տարում [=643-644 թթ.] հռոմ զօրավար Վաղենտինոս պատրիկը եկաւ [Ասորիք]՝ կոռելու արաբների դէմ։ Ահաբեկուած նրանց ներկայութիւնից՝ նա փախաւ եւ թողեց իր հետ եղած բոլոր հարստութիւնները...» (*Chronique de Denis de Tell-Mahre*, Trad. par J. B. Chabot, Paris, 1895, էջ 7. թարգմանութիւնն ըստ Ա. Ն. Տէր-Ղեւոնդեան, *Սեբեոսի երկը որպէս VII դարի Մերձարտր Արեւելքի պատմութեան աղբիւր*, ՊԲՀ, 1988, թիւ 1, էջ 122 (վերահրատարակուած՝ Արամ Տէր-Ղեւոնդեան, *Յօդուածների ժողովածոյ*, Երեւան, 2003, էջ 661)։

89 Տե՛ս Հ. Ս. Բաղալեան, *Օրացոյցի պատմութիւն*, Երեւան, 1970, էջ 480։

90 *Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, ԽԲ, էջ 116 (143)։

91 *Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, Դ, էջ 22 (64)։ Այս բնագրից յետոյ Ա գրչագրում նշուած է յաջորդ գլխի ոճաւորում «Ե» գլխահամարը՝ առջեւում փոքրիկ ալիքաձեւ նշանագարով (թէպէտ Գեորգ Աբգարեանը չի ցանկացել այդ տառը գլխահամար համարել. տե՛ս *Պատմութիւն Սեբեոսի*, էջ 224, ծան. 117)։ Վերջինիս շատ նման է նօսրգիր արտագրութիւններում «աշխարհ» բառի համառօտման նշանը, եւ անկասկած դրա հետ շփոթի արդիւնքում է, որ Թաղէոս Միհրդա-

տեանի հրատարակութեան այս բնագիրն աւարտում է «ՇԼԲ ամ աշխարհի» բառերով։

92 *Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, ԽԶ, էջ 139 (163)։

93 *Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, ԽԴ, էջ 122-137 (148-161)։ Նշենք, որ ուսումնասիրողների միահամուտ համոզմամբ՝ Թուրթը մինչեւ վերջ չի մշակուել եւ հաւանաբար չի առաքուել Կոստանդ Բ-ին (ամենից մանրամասն տե՛ս *Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, էջ 191-192)։

94 *Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, ԽԵ, էջ 137 (161-162)։

95 Բոլոր դէպքերում, անձխտելի է, որ այդ վերնագիրը շատ անելի ընդարձակ պէտք է լինէր, քան Ուխտանէսի, Ասողիկի եւ մնացեալ պատմիչների մօտ համառօտ պահպանուած «Հերակլի պատմութիւն» բնորոշումը։

96 Կիրառական տեսակիւնից դա նշանակում է, որ քանի դէռ նշուած հարցադրումը չի հերքուել (կամ հաստատուել վերջնականապէս) Սեբեոսի երկը ճիշտ չի լինի անուանել (այդ թում՝ նոր հրատարակութիւններում) ենթադրաբար հեղինակի իսկ կողմից խոստանուած, թէկուզ եւ հետագայ պատմիչների կողմից ըստ այսմ պակաս տեղեկացուածութեան հետեւանքով որդեգրուած «Հերակլի պատմութիւն» տարբերակով։

97 Հմմտ. նաեւ Գեորգ Աբգարեանի արդարացի կարծիքը. «Սեբեոսի Պատմութեան» նախնական բնագրում այս բառերով սկսուող հատուածը մինչ

չեւ պարբերութեան վերջը կազմած է եղել առանձին գլուխ, կամ էլ ընթացիկներէն կողմից դիտուել է որպէս առանձին մաս։ Դա երեւում է նրանից, որ մեզ հասած հնագոյն պատահիկում (N 1343) հատուածն սկսող «Յայնմ» բառի առաջին «Յ» տառը չի գրուած եւ նրա համար բաց է թողնուած առանձին տեղ, որպէսզի հետագայում ձեռագիրը ծաղկողը կամ ինքը՝ գրիչը, կարմիր թանաքով գրի այդ գլխատառը» (*Պատմութիւն Սեբեոսի*, էջ 318, ծան. 528)։ Ցառօք, հրատարակիչներից ոչ ոք այդ գլխի առանձնացումը չի կատարել։

98 *Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, ԽԳ, էջ 120 (147)։

99 *Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, ԽԴ, էջ 122-137 (148-161)։

100 *Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, ԻԵ, էջ 65 (100), ԼԵ, էջ 88-89 (121)։ Թերեւս դա չպէտք է շփոթեցնի մեզ եւ կասկածել տայ, թէ Սեբեոսի սկզբնագրում այդտեղ գոցէ առանձին գլուխ է եղել, քանի որ երկի այս մասի գլխահամարները պահպանուած են։ Բնագրագիտական առումով անհրաժեշտ է մէկընդմիջտ արձանագրել, որ մեր ոչ բոլոր վաղ (եւ ոչ միայն՝ վաղ) հեղինակներն են պարտադիր համարել լրի միօրինակութեան (ստանդարտի) հասցնել իրենց գրուածքների բաժանումները գլուխների, հատուածների, պարբերութիւնների եւ այլն։